

ISSN 1620-2503

ԿԱՐԴԶԻԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՄՔՏԱՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՏԻՆԱԿԱՐԳՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

YARDZIK
1971-21-1971

N 13

2020



Սերգեյ Սևոբյանի
ՄԵՐ ՍԱՄՎԵԼԸ



էջ 1

Հասմիկ Հովհաննիսյան
ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ



էջ 4

Մամվել Կարապետյան
ՍԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

էջ 18

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ և ՇՋԱՆՇԱՆՆԵՐ



էջ 26

Րաֆֆի Բորթոյան
ՀՈՒՇԱՐՁԱՆԱԳԵՏ ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



էջ 27

Մամվել Կարապետյան
ՀՈՒՇԵՐ



էջ 37

Արթուր Թամոնազյան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԻՑ,
ՍԱՐ ՈՒ ՋՈՐԻՑ ԲԱՅԻ՝ ԻՆՁ ՈՐԻՑ
ՈՉ ՄԻ ԲՆՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՀԵՏԱԲԵՐՁՈՒՄ

էջ 84

Գազիկ Գինոսյան
ՆՐԱ ԿՐՈՆԸ, ՀԱԿԱՏՔՆ ՈՒ ՊԱՇՏԱՍՏՈՒՆՔԸ ՀԱՅՆ ԵՐ,
ՆՐԱ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՒԿՆ ԷԼ՝
ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ

էջ 92

Վերջաբանի փոխարեն

էջ 96



N 13

2020

ԽՆՐԱԳՐԱԿԱԾՄ

EDITORIAL BOARD

ԷՄՄԱ ԱԲՐԱԴԱՄՅԱՆ

EMMA ABRAHAMIAN

ՐԱՅՖԻ ԶՈՐԹՈՇՅԱՆ

RAFFI KORTOSHIAN

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

HASMIK HOVHANNISSIAN

ՀԱՄԱԿԱՐԳՑԱՅԻՆ ՁԵՎԱԿՈՐՈՒՄԵՐ
ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԼԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ԶՈՐԹՈՇՅԱՆ

Designers

ARMEN GEVORGIAN

LIANA

HOVHANNISSIAN-KORTOSHIAN

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՍԱՏԱՆՈՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՆԱՍԻՒՐՈՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ

RESEARCH ON ARMENIAN
ARCHITECTURE FOUNDATION

Engaged in informational Activity

ՎԿԱՅԱԿԱՆ N 03U089223

ՏՐԿԱԾ 13.10.2010

Certificate No. 03U089223

Given 13.10.2010

ՀԱՄԱՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՐԱՅՖԻ ԶՈՐԹՈՇՅԱՆ

Responsible for this issue

RAFFI KORTOSHIAN

ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԱՄՅԱՆ 24/4

Baghramian 24/4, Yerevan, RA

<http://www.armenianarchitecture.am>

<http://www.raa.am>

✉ raayer@sci.am, raatransfer@yahoo.com

☎ 010 62 16 25

© ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՆԱՍԻՒՐՈՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ

© Research on Armenian Architecture

ՄԵՐ ՍԱՄՎԵԼԸ

Ժանտագույժ բոթ ծավալվեց շուրջբոլորը. գարնան շենին անհավատալի էր՝ մի՞թե չկա այլևս իմ անուշ կրտսեր գաղափարակից ընկերը՝ Սամվելը...

Գլխապտո՛ւյտ, միտքս մթագնվո՛ւմ է, բառերս տկարանո՛ւմ են, լեզուս՝ պապանձվո՛ւմ... այս ի՛նչ տխմար անհեթեթություն է. մի՞թե կարող է չլինել Սամվելը՝ իմ վաղեմի բարեկամ Գևորգ Կարապետյանի որդին, այն Գևորգի, որի հետ ժամեր, օրեր էինք «անցկացնում» նրա հուրհրացող, վարակիչ ծիծաղի ներքո «Գրողների նկուղ»-ում, «Նկարիչների կոպեկանոց»-ում և այլն:

Մի՞թե էլ չի լույս էրանելու Սամվելի համեստ ու բարի ժպիտը, որը նա չէր խնայում պարզևել իր նման անխոնջ աշխատող, գործին նվիրված, արդարության սպասավոր մարդկանց... այն Սամվելի, ում գիտեի, շատ լավ գիտեի, ո՛չ, գիտեմ արդեն շուրջ քառասո՛ւմ տարի...

Հիշում եմ՝ ութսունականների սկիզբն էր, երբ Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման և օգտագործման գլխավոր վարչության խմբագիրն էի, մեզ մոտ աշխատելու եկավ շատ ջահել, գրեթե պատանի, բարձրահասակ, նիհարակազմ, շիկախարտյաշ, գանգրահեր մի երիտասարդ: Մոտեցավ ինձ ու հարցրեց մի տեսակ ամաչկոտ, համեստ ժպիտով.

– Ներեցեք, Դուք Մերգեյ Սկրտչյա՞նն եք:

Ասացի.

– Այո՛, իսկ դու պատահաբար հո Գևորգ Կարապետյանի տղա՞ն չես...

Փոքր-ինչ կարմրատակելով՝ նույնքան ամաչկոտ ժպիտով ասաց.

– Այո՛, իսկ Դուք ինչպե՞ս իմացաք...

– Քեզ նայելով..., – պատասխանեցի:

Եվ ահա այդպես այդ օրվանից ծայր առավ մեր ընկերությունը, որը տևեց մի ողջ դարաշրջան...

Այդպես անցնում էին օրեր, գլորվում էին ամիսներ, սուրում էին տարիներ, առհասարակ՝ կյանքում, սովորական աշխատանքում, իսկ իմ և նրա հարաբերությունները գնալով ամրանում էին, միս ու արյուն ստանում մեր անխոս հարազատության, մի տեսակ անտեսանելի մածուծաշաղախի ձեռամբ: Մեր շփումները, որոնք արտաքուստ գործնական էին, դիցուք, երբ նա դիմում էր ինձ մի որևէ հարց լուծելու, այս կամ այն երևույթի, հուշարձանի տեսակի, տեղանքի՝ գոյություն չունեցող նոր անուն, անվանում ստեղծելու կամ փաստի, իրողության նկարագիրը սահմանող եզրույթ «հորինելու» և այլ «կնճիռներ» հարթելու խնդրանքով, փաստորեն վերածվում էին մի յուրօրինակ «բարձրաձայն» խոկեղեն գրույցների, որոնք ընթանում էին զարմանալի փոխըմբռնման մթնոլորտ-աուրայում՝ մի բան, որ ինքնին բացառիկ էր իր էությանը հանդերձ, ուստի և՛ խիստ կարևոր... Սամվելն այդժամ սկսում էր ժպտալ իր անկրկնելի համեստ ամոթխածությամբ...

Ահա այդ ոգեղե՛ն երախտագիտությունն էր, որն ուղեկցվում էր միմիայն իրեն բնորոշ մեղմ քրթմնջոցով... Մենք հասկանում էինք իրար կես բառից, զգում,

ընթացում էինք իրարու, որովհետև ստահոգ էինք գրեթե «նույն» խնդիրներով, «նույն» հարցերի պատասխանները փնտրում և գտնում էինք, անպայման գտնում դրանք: Ինչպիսիք երանելի պահեր, ժամեր, օրեր էին, վերջապես՝ տարիներ, որոնց արարում էինք հենց մենք՝ ինքներս...

Տարիներն անցնում էին, և տարեցտարի աճում էր Սամվելն իր գիտելիքներով, իր կատարած գործերով..., մարդկային նկարագրով:

Մոտենում էին դժնդակ իննսունականները, որոնք «փուլ բերվեցին» մեր բոլորիս, մեր ազգի գլխին. ջարդուփշուր արվեց ամեն բան՝ մի գորեղ մշակույթ, մի վիթխարի գիտական աշխարհ, մի հզոր տնտեսություն: Ցիրուցան եղան հարյուր-հարյուրավոր գիտուն ու հմուտ մասնագետներ, բազում մարդիկ ճարահատյալ բռնեցին հայրենալքության ճամփան, իսկ մնացողներից շատ-շատերը կան խեղվեցին, կան չդիմանալով այդ կյանքին՝ վախճանվեցին... Սակայն կային նաև այն մարդիկ, ովքեր մնացին անվեհեր, անկոտրում՝ իրենց անելիքին, տեսականին, իրենց ուխտին հավատարիմ: Նրանք մաքառեցին ու մաքառում են առ այսօր: Հենց նրանցից էր իմ՝ մեր Սամվելը: Նա զարկ տվեց Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի գործունեությանը, որի հիմնաքարերն էր դրել մեկ այլ նվիրյալ՝ Գերմանիայում բնակվող իրանահայ, պայծառ հայասեր գիտնական-ճարտարապետ Արմեն Հախնազարյանը (թող լո՛ւյս իջնի նրա շիրիմին): Քարը քարին դնելով՝ Սամվելը տարիների ընթացքում հզորացրեց հիմնադրամը՝ ընդլայնելով աշխատակիցների կազմը, ծավալելով նրա ուսումնասիրական «հետաքրքրությունների» աշխարհագրությունը, բազմազանեցնելով ներկայացվող նյութի դիտարկման ասպեկտները և այլն, և այլն:

Այս ամենը նա անում էր հանգիստ և անտրտունջ, առանց ավելորդ, ցուցադրական աղմուկի (ինչպես հաճախ արել և անում են շատերը՝ իրենց անձերի շուրջը...), աշխատում ու տքնում անդուլ-անդադար, ինչպես ասում են՝ «գլուխը կախ, ճակատը՝ պարզ», արարում էր մի բացառիկ անբասիր անխոնջությամբ, որը բնորոշ էր մեն-միայն իրեն՝ Սամվել Կարապետյանին...

Հիշում եմ՝ 1976 թվականն էր. մի օր Գևորգի հետ նստած էինք «Օֆիկանոց»-ում: Նա հանեց գրպանից նորերս լույս տեսած իր բանաստեղծությունների՝ «Արև և հող» վերնագրով գրքույկը, որի տիտղոսաթերթին գրել էր. «Միրելի ընկերոջս՝ Սերգեյին՝ նրբազգաց և բազմաշնորհ մշակին և հիասքանչ մարդուն...»:

Արդ, ես բառացիորեն նույնությամբ վերահասցեագրում եմ ինձ ձոնված ավա՛գ ընկերոջս՝ Սամվելի հոր խոսքն իմ կրտսե՛ր ընկերոջը՝ Սամվելին՝ սուկ հավելելով՝ «մեր բոլորիս Սամվելին, որի անգուգական, լուսեղեն ժպիտը պիտի հավետ շողա և հայի ի վերուստ, որպեսզի մենք, ձեռք ձեռքի տված, կարողանանք շարունակել նրա «սրբազան գործը»...

Ուրեմն՝ «Օ՛ն, անդր, յառաջ...»:



Սամվել Կարապետյանը Հին Բայազետում (լուս.՝ Ա. Գևորգյանի, 2010 թ.)

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Արցախյան ազատամարտից մի քանի տարի հետո փողոցում մի անծանոթ մոտենում է Սամվել Կարապետյանին և ասում.

– Դուք ինձ չեք ճանաչում, բայց Ձեր պատճառով ես 5 տարի կռվել եմ Արցախում, որի համար շատ հպարտ եմ: Հիշո՞ւմ եք, 1983 թվականին Երևանի պետական համալսարանում Դուք ցուցադրում էիք Արցախի մասին սլայդներ: Հենց դա պատճառ եղավ, որ ճանաչեցի Արցախ աշխարհը, որտեղ երբեք չէի եղել և արյան կանչով գիտակցաբար դարձա նրա ազատագրության մասնակիցներից մեկը:

Ո՞վ էր հուշարձանագետ, հայրենագետ Սամվել Կարապետյանը...

Պարզ ու շիտակ, անկեղծ, միաժամանակ հախտուն, կեղծիք չհանդուրժող, ամեն բջիջով Հայրենիքով և Հայրենիքի պաշտամունքով ապրող հայորդի:

Մարդ-անհատականություն, մարդ-արժեհամակարգ, որն աշխարհ էր եկել մի առաքելությամբ՝ տոհմականչի ձայնը և աներկյուղ ոգին տեղ հասցնելու առաքելությամբ: Հենց ինքը դարձավ Նվիրյալ առաքյալն իր իսկ առաքելության:

Հայրենատեր հայորդի, որն ամբողջ կյանքը, կարողությունն ու առողջությունը նվիրեց պաշտելի Հայրենիքին՝ նրա յուրաքանչյուր հատվածում որոնելով հայկական հետքերը, ուսումնասիրելով և բացատրելով ու ցնցող տեղեկություններ հրամցնելով հայությանը:

Սամվել Կարապետյան... Կենդանության օրոք արդեն իսկ լեզենդ դարձած հայ ժողովրդի մեծություններից մեկը, որի վաղաժամ մահն իրավամբ ծանր հարված հասցրեց ողջ հայությանը և հայ գիտամշակութային կյանքին:

Սամվել Գևորգի Կարապետյանը ծնվել է 1961 թ. հուլիսի 30-ին Երևանում Վան-Վասպուրականի Արճեշ գավառի Բերդաղ գյուղից սերված Բաղդասար պապի գերդաստանում: Մանկուց փորձում էր ճանաչել իր արմատները՝ բերդաղցի և արունագրակցի պապերին հղելով բազմաթիվ, գուցե անպատասխան հարցեր, իսկ արդեն պատանեկության տարիներից՝ Մեծ Հայրենիքից մեզ բաժին հասած Հայաստանի ամեն սարն ու ձորը, քանդված վանքն ու կանգուն եկեղեցին, ամեն քարն ու թուփը:



Սամվել Կարապետյանը 5 ամսականում (լուս.՝ 1962 թ.), 3 տարեկանում (լուս.՝ 1964 թ.) և մոր՝ Վանուհի Գովհաննիսյանի հետ (լուս.՝ 1968 թ.)

1978 թվականին ավարտել է Երևանի Միսաք Մանուշյանի անվան թիվ 48 միջնակարգ դպրոցը: Դեռևս դպրոցական տարիներից էր սկսել ճամփորդությունները երբեմն դասընկերների հետ, երբեմն էլ՝ մեն-մենակ:

«Ութ տարեկանում բարձրացա Արագած և ուղղակի խենթացա այդ գեղեցկությամբ: Դա իմ առաջին արշավն էր, որ կանխորոշեց գործունեությանս հետագա ընթացքը»:

Դպրոցն ավարտելուց հետո, անսալով մոր հորդորներին, փորձում է ուսումը շարունակել Երևանի պետական համալսարանում, սակայն կտրվում է հենց «ՄՍՀՄ պատմություն» առարկայից: Ուսապարկի մեջ դնելով Մակար Բարխուտարյանցի «Արցախ» աշխատությունը՝ 17-ամյա պատանին 1978 թ. սկսում է իր առաջին ճամփորդությունը Հասատանից դուրս և առաջին անգամ՝ դեպի Արցախ աշխարհ, որն այն ժամանակ Ադրբեջանի կազմում էր:

Ո՞րն էր այն դրդիչ ուժը, որ 17-ամյա անփորձ պատանուն մղում էր առաջ: Ինքն էլ չգիտեր: Գուցե այն ի վերո՝ ստ էր տրված: Եվ նա ձեռնարկում է հայկական հուշարձանների ուսումնասիրության գործը:



Սամվել Կարապետյանը դասընկերների հետ Գեղարդում (ձախից աջ՝ Ս. Կ., Գաբրիել Շաշկինյան, Արմեն Քերոբյան, լուս.՝ 1977 թ.), Խոսրովի արգելոցում (լուս.՝ 1977 թ.), Գ. Շաշկինյանի հետ Օհանավանում (լուս.՝ 1979 թ.) և Վալտեր Զարյանի հետ Քարաշամբում (լուս.՝ 1980 թ.)



Սամվել Կարապետյանը եղբայրների՝ Հայկ Թորոսյանի և ազատամարտիկ Վահագն Կարապետյանի հետ Հավուց թառ եկեղեցում (լուս.՝ 1980-ական թթ.), ընկերների հետ Խոսրովի արգելոցում (ձախից առաջինը՝ Ս. Կ., երրորդը՝ Վ. Ջարյան, լուս.՝ 1980 թ.)



Սամվել Կարապետյանն Արցախի Մարտակերտի շրջանի Վանք գյուղի անտառներում, Ասկերանի շրջանի Բաղարա գյուղի հանդամասերում (լուսանկարները՝ 1980 թ.) և Մարտակերտի Չափար գյուղի Ղոզլու գյուղատեղիում (լուս.՝ 1983 թ.)

Մի ճանփորդության ժամանակ, երբ Սամվելը, սովետական Ադրբեջանի հայկական գյուղերից մեկի նախագահին ներկայանալով, խնդրում է ուղեկցողի հետ գնալ գյուղից դուրս գտնվող եկեղեցին նկարելու, նախագահը, դարակից մի թուրք հանելով, տալիս է հետևյալ պատասխանը.

– Տղա՛ ջան, այս՝ Բաքվից եկած նամակում գրված է, որ եթե մեկը փորձի լուսանկարել հուշարձանները, անմիջապես պետք է նրան հանձնել միլիցիայի բաժանմունք: Լսի՛ր, դու ինձնից ի՞նչ ես ուզում: Մյուս գյուղերում ոչ բոլոր նախագահներն ինձ նման կվարվեն: Թեև հայ եմ, բայց առանց տատանվելու քեզ կմատնեն: Չխաբվե՛ս հանկարծ...

Այդ թուպեից սկսած՝ արդեն իսկ հասկանում է, որ ճիշտ ուղու վրա է և ամեն գնով պիտի կատարի իր առաքելությունը:

1978-80 թթ. Սամվել Կարապետյանն աշխատել է Երևաննախագիծ ինստիտուտում՝ որպես բանվոր, 1980-1997 թթ.՝ ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գլխավոր վարչության (այժմ՝ գործակալություն) նախագծային գրասենյակում՝ որպես տեխնիկ, ավագ տեխնիկ, ճարտարապետ, ավագ ճարտարապետ:

1978 թ.-ից զուգահեռաբար սկսում է զբաղվել Արցախի (այդ թվում՝ Հյուսիսային Արցախի) հուշարձանների և բնակավայրերի պատմության ուսումնասիրությամբ: Առաջին ճանփորդությունը... ոտքով դեպի Արցախ, քանզի

«...Նախ փող չունեի տրանսպորտով գնալու, բացի այդ էլ՝ մտածում էի, որ հայկական լեռների ու ձորերի գեղեցկությունը վայելելով կգնամ ու այդպես էլ արեցի: Երբևէ կատարած ճանփորդություններիցս ամենից երկարը՝ 51 օր տևողությամբ, եղել է 1980 թվականին: Արշավս սկսեցի Իջևան քաղաքից ու Շամշադինի գյուղերն անցնելով՝ մտա Թոռուզի շրջան, այնուհետև Գետաբեկի, Շամխորի, Դաշկեսանի, Խանլարի, Շահումյանի և ի վերջո հասա Հաղորոթի շրջանի հարավային գյուղերը...: Ու սիրահարվեցի Արցախի թե՛ բնությանը և թե՛ մարդկանց»:



Սամվել Կարապետյանը Հյուսիսային Արցախի Թոռուզի շրջանի Կրզեն գյուղի գերեզմանոցի տապանագրերը (լուս.՝ Ռ. Աբգարյանի, 1984 թ.) և Խանլարի շրջանի Գետաշեն գյուղի Սրցունիս գյուղատեղիի եկեղեցու վիմագրերն ըմբերցելիս (լուս.՝ Յ. Բադալյանի, 1980-ական թթ.), Շամխորի շրջանի Գառնակեր գյուղի Գրեշտակապետաց (Ծաղկոց անապատ) վանքի մոտ (լուս.՝ 1980 թ.)

1984 թ.-ից ի վեր Սամվել Կարապետյանը սկսում է զբաղվել նաև Կուրի ձախափնյա շրջանների (Բուն Աղվանք) հուշարձանների և բնակավայրերի պատմության ուսումնասիրությամբ: Նա միակն է, որ ուսումնասիրության նպատակով շրջել է Կուրի ձախ ափին գտնվող հայաբնակ վայրերում և առաջին անգամ փաստագրել 1988 թ.-ից սկսած Երկիր մոլորակից օր օրի անհետացող հայկական հարյուրավոր պատմական հուշարձաններ.

«Բուն Աղվանք... իմ կարոտի երկրամասերից մեկը: Ամենաաղոտ պատկերացումներով առաջին անգամ անցնելով Կուր մեծ գետի ձախակողմը՝ ոտք դրեցի մի երկրամաս, որն ընդամենը մի քանի տարի անց հայության համար պետք է դառնար անցյալ...»

Ի՞նչ հասցրի տեսնել Բուն Աղվանքում 1984-1987 թվականներին: Դժվար է ասել, թե երկրամասով մեկ սփռված հայ մշակույթի բազմահազար հուշարձանների՝ ի վերջո ո՞ր մասն էր ինձ հաջողվել ուսումնասիրել, կամ արդյոք իրավունք ունե՞մ ուսումնասիրություն անվանելու այդ տարիների անփորձ և սկսնակի հետաքրքրություններս: Անվերջ ափսոսում եմ, որ այսօրվա փորձառությամբ չէ, որ այն օրերին թափառել եմ Բուն Աղվանքում, բայց մյուս կողմից մխիթարություն է, որ, այնուամենայնիվ, գոնե ինչ-որ բան թղթի վրա փրկվել է»:

1978-1987 թվականներին՝ մինչև Արցախյան ազատամարտի սկիզբը, տարիներ շարունակ բազում խոչընդոտներով լի, երբեմն շատ լավ, երբեմն բացառապես վատ պայմաններում, երբեմն նաև առանց ուղեկցի միմյանց հաջորդում էին հուշարձանագետի գիտարշավները: Սամվելը եղավ Բուն Աղվանքում, Հյուսիսային Արցախի գրեթե բոլոր բնակավայրերում: Եվ այդ ամենի համար, ավա՛ղ, շատ թանկ վճարեց. կորցրեց առողջությունը, իսկ մագաթափությունն արդեն իսկ խոսում էր ահռելի նյարդային լարվածու-



Սամվել Կարապետյանը Բուն Աղվանքի Իսմայիլիի շրջանի Վանք գյուղի «Ավերակ վանք» գյուղատեղիում վանքի Իշխանի հետ (լուս.՝ Վ. Զարյանի, 1984 թ.), Շամախու շրջանի Սատրասա գյուղի աղբյուրի մոտ գյուղացիների հետ, Խանիշեն գյուղի աղբյուրի մոտ և Դարաքարքանջ գյուղի գերեզմանոցում աշխատանքի պահին (լուս.՝ Գ. Բաղալյանի, 1986 թ.)

թյան մասին. չէ՞ որ համարյա ամեն ճամփորդության ժամանակ օրերով, երբեմն էլ շաբաթներով, մանավանդ Բուն Աղվանքում «հյուրընկալվում» էր «եղբայրական» Ադրբեջանի ազգային անվտանգության նկուղներում.

«Ադրբեջանում ՊԱԿ-ի այնպիսի ծառայություն չկար, որտեղ ես ներկայացված չլինեի: Միլիցիա չկար, որտեղ տարված չլինեի: Շաբաթներով ՊԱԿ-ի բանտախցերում եմ մնացել... Այդ երկրում լուսանկարչական սարքից սարսափում էին: Հրագեն տեսնելիս այնքան չէին վախենա, ինչքան վախենում էին լուսանկարչական սարքից»:

1978-1988 թվականների ընթացքում Սամվելը սովետական Ադրբեջանի տարածքում կատարել է մոտ 40 ճամփորդություն: Միայն Կուրի ձախ ափից և Հյուսիսային Արցախից ունի հարյուրավոր չափագրություններ, իսկ լուսանկարները բազմահազար են:



Սամվել Կարապետյանը Հյուսիսային Արցախի խանլարի շրջանի Կամո գյուղի եկեղեցու մոտ (լուս.՝ Յ. Բաղալյանի, 1986-87 թթ.), Շահումյանի շրջանի անտառներում, Բուզլուխ գյուղի համդամասում (լուս.՝ Վ. Չալիկյանի, 1987 թ.) և խանլարի շրջանի Գետաշեն գյուղի Մրցունիս գյուղատեղիի եկեղեցու մոտ (լուս.՝ Յ. Բաղալյանի, 1986-89 թթ.)

Աշխարհում, սակայն, միևնույն հետաքրքրությունը և նպատակն ունենալ մեկ նվիրյալ հայ՝ ճարտարապետ Արմեն Հախնազարյանը: Իրարից անկախ և առանց իրար ճանաչելու՝ երկու հայորդիները նույն աշխատանքն էին կատարում, մեկը՝ Թուրքիայում (Արևմտյան Հայաստան և Կիլիկիա), մյուսը՝ Վրաստանում և Ադրբեջանում: Երկուսն էլ «հայկական հուշարձանների որս» էին անում, փորձում ժամանակից առաջ ընկնել և փշուր-փշուր հավաքել ամեն թուփերի վանդալների ձեռքով հայոց Հայրենիքում ոչնչացվող հայկական արժեքները: Իր գործունեությամբ Արմեն Հախնազարյանն արդեն հասցրել էր թուրքական պետության համար կոչվել «անցանկալի անձ», և արգելվել էր նրա մուտքն այդ երկիր: Տարիներ հետո՝ 2015 թ., նույն բախտին արժանացավ նաև Սամվել Կարապետյանը, այս անգամ՝ «եղբայրական» Վրաստանում:



Սամվել Կարապետյանը և Արմեն Հախնազարյանը (1990-ական թթ.)

Օրերից մի օր նախախնամությունը պիտի ծանոթացներ երկու հայրենաձավեր անձնավորություններին:

Ծանոթանում են, և սկսած 1990 թ.-ից՝ Ա. Հախնազարյանն ու Ս. Կարապետյանը որոշում են համագործակցաբար շարունակել իրենց հույժ կարևոր աշխատանքը:

Այդ անբարենպաստ ժամանակներում այլևս չկարողանալով ոտք դնել Ադրբեջան՝ Սամվել Կարապետյանը 1990 թ.-ից անցնում է Վրաստան, Ջավախքից հասնում Բոլնիս, Մառնեուլ, Դմանիս, ինչպես նաև Ախալցխա և Կախեթ: Այստեղ ևս կռիվ է տալիս ժամանակի հետ, լուսանկարում դեռևս չոչնչացված հայկական հետքերը, կարդում արձանագրությունները, փշուր-փշուր ամբարում և թղթին հանձնում յուրաքանչյուր սրբազան մասունք:



Սամվել Կարապետյանը Բոլնիսի շրջանի Փոլադաուրի գյուղի մոտ գտնվող Շանշանների բերդի տարածքում և Բոլնիս-Խաչենի Սբ. Կիրակի վանքի մոտ (լուս.՝ Ս. Դարչինյանի, 1990-1992 թթ.)



Արմեն Գալստյանը, Սամվել Կարապետյանը և Էմմա Աբրահամյանը (լուս.՝ 2008 թ.)

Արցախյան ազատամարտի ժամանակ, երբ մեկը մյուսի հետևից ազատագրվում էին հայոց շրջանները, Սամվել Կարապետյանը, 1993 թ.-ից թողնելով դեպի Վրաստան կատարվող գիտարշավները, հաղթանակած զորքի հետևից մտնում է Արցախի տվյալ շրջանը, լուսանկարում այն ամենը, ինչ դեռևս չէր հռչակել թուրքը: Թանկ էր ամեն բույսերն ու շենքերը վերադարձնելու շուկաներ կային: Իսկ կյանքը: Ականապատված տարածքներով անցնելիս նրա աչքի առաջ շատերն էին պայթում, սակայն նա աներկյուղ առաջ էր գնում. չէ՞ որ առաքելություն ուներ:

Մինչև 1998 թ. հուշարձանագետի լուսանկարած կադրերի թիվը հասնում է մոտ 60000-ի:

Յուրա ու մութ տարիներին, երբ անհասանք և պատերազմող Հայաստանում մարդիկ տաքանալու համար այրում էին բացառապես ամեն ինչ, 1991 թվականից Սամվել Կարապետյանը սկսում է հայ մամուլի հավաքչական իր աշխատանքը՝



Սամվել Կարապետյանը Քաշաթաղի սարերում (լուս.՝ 1993-1994 թթ.)

տարբեր վայրերից կրակի ճիրաններից փորձելով փրկել տպագիր մամուլը: 1993 թ. հունվարից հավաքում է մաս օրվա հրատարակությունները՝ այն թաքուն երազանքով, որ մի օր կստեղծի հայ պարբերական մամուլի մասնավոր գրադարան: Արդյունքը...

1993 թ.-ից մինչև 2000-ական թվականների սկզբները հավաքվում է մոտ 60 անուն պարբերական, որը եզակի է հայ իրականության մեջ:

1998 թ. Հայաստանում պետական գրանցում ստանալուց հետո Սամվել Կարապետյանը ստանձնում է դեռևս 1978 թ. Գերմանիայում Արմեն Հախնազարյանի հիմնած Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության (հետագայում՝ հիմնադրամ) Երևանյան գրասենյակի տնօրենի պարտականությունները մինչև կյանքի վերջը:

2000 թ. փետրվարի 22-ին ՀՀԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն երջանկահիշատակ Լևոն Հախվերդյանի բարի կամեցողությամբ Արվեստի ինստիտուտի հարկաբաժնում (Բաղրամյան 24 գ) տեղի է ունենում ՀՃՈՒ հ/կ գրասենյակի բացումը:

Հայաստանի Հանրապետությունում հիմնադրամի պաշտոնականացումն ու գրասենյակի հիմնումը նոր հորիզոններ են բացում: Անվանի հուշարձանագետն օրավուր ծավալվող աշխատանքները պատշաճ մակարդակով առաջ տանելու նպատակով ներգրավում է մասնագետ նոր ուժերի, ինչպես մաս դրներ բացում սկսնակների համար: Ավելի քան երկու տասնամյակ նա ցանել էր հայրենաճանաչության սերմեր, այժմ բերքահավաքի ժամանակն էր.

«Եթե ուզում ես լավ բերք ունենալ, պիտի որակյալ սերմեր ցանես»:

Սկսվում են տասնամյակների ընթացքում կուտակված բազմաթիվ նեգատիվների, պոզիտիվների, լուսանկարների, չափագրությունների, քարտեզների և հարակից այլ նյութերի թվայնացման, մամուլից քաղված և արխիվային նյութերի մշակման աշխատանքները:



Սամվել Կարապետյանը ԳՃՈՒ (RAA) կազմակերպության ԱՄՆ-ի մասնաճյուղի ղեկավար Շահեն Գարությունյանի և կազմակերպության հիմնադիր-նախագահ Արմեն Գախնազարյանի հետ Գլենդել քաղաքում (լուս.՝ 2003 թ.)

Շուրջ տասը տարվա ընթացքում տեսանելի էին կատարված ահռելի աշխատանքները՝ բազմաթիվ գիտարշավներ դեպի Վրաստան, Արցախ, Արևմտյան Հայաստան, Իրան, Հնդկաստան, Հյուսիսային Կովկաս և այլուր: Իրար հետևից լույս են տեսնում Սամվել Կարապետյանի աշխատությունները, որոնք անխոնջ գիտնականի՝ ավելի քան 20 տարիների ուսումնասիրությունների արգասիքն են: Նա աշխատում էր բացառապես առանց հանգստի, նույնիսկ առանց իրեն խնայելու:

«Ինձ շատ են ասում՝ անդադար աշխատում ես, մի քիչ էլ հանգստացիր, բայց ախր չե՛մ հասկանում, որ աշխատելով եմ հանգստանում»:



ՎՐԱՍՏԱՆ. Սամվել Կարապետյանը գործընկերոջ՝ Սարգիս Դարչինյանի հետ Գորիի շրջանի Նադարբազի գյուղի Սբ. Սարգիս եկեղեցու մոտ (լուս.՝ Է. Աբրահամյանի, 2013 թ.), ընկերոջ՝ Դակոբ Ավետիսյանի հետ Ջավախքի Թմոջ գյուղի տարածքում (լուս.՝ Է. Աբրահամյանի, 2005 թ.)



ԱՐՑԱՍ. Սամվել Կարապետյանը եղբոր՝ Դայկ Թորոսյանի հետ Քարվաճառի եղջի գյուղի եկեղեցու մոտ (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)
 ԱՄ. ԴԱՅՎԱՍՏԱՆ. իր իսկ ստեղծած արշավախմբի հետ Ակոռիում՝ Ր. Քորթոյան, Է. Աբրահամյան, Ա. Գամբարձումյան (լուս.՝ Ա. Գակոբյանի, 2013 թ.)



ԻՐԱՆ. ԳՆՈՒ հիմնադրամի արշավախումբը Նոր Ջուղայի գերեզմանոցում (առաջին փուլով 2525 տապանաքար հաշվառելուց հետո) Իրանի եկեղեցիների կազմակերպության տնօրեն Շերլի Ավետյանի հետ (լուս.՝ 2010 թ.)
 ՀՆԴԿԱՍՏԱՆ. 12 քաղաքներում ուսումնասիրական աշխատանքներն ավարտելուց հետո Թաջ-Մահալում (լուս.՝ Ա. Գովսեփյանի, 2011 թ.)



Գրասենյակի աշխատակիցները Սամվել Կարապետյանի տանը «Չյուսիսային Արցախ» գրքի՝ ուսերեն հրատարակվելու առիթով (2018 թ.)

Ողջ կյանքի ընթացքում Սամվել Կարապետյանն արեց ամեն հնարավորն ու անհնարինը: Հեղինակ է երկու տասնյակի հասնող աշխատությունների և 1982-2016 թթ. տպագրված ավելի քան 385 հոդվածի: Իսկ հարցազրույցների և յուրաքանչյուր նոր աշխատությանը նվիրված հրապարակումների, մամլո ասուլիսների մասին կարելի է անվերջ գրել:

2007 թվականից սկսած՝ Սամվել Կարապետյանը հիմք է դնում Հայոց Հայրենիքին նվիրված հայրենաճանաչության դասախոսությունների շարքի և հարթակ ստեղծում իր հիմնադրած դպրոցի սաների համար.

«Հայրենիքն ակունքն է մարդուն տրված ազնվագույն և ամենից անկեղծ զգացումի՝ հայրենասիրության, որի խմորիչն էլ հայրենաճանաչությունն է: Այո՛, սիրելու համար պետք է ճանաչել, ուստի և Հայրենիքը սիրելու համար պայման է, որ անհատը լինի հայրենաճանաչ»:

Հետագա տարիներին Սամվել Կարապետյանը (հարց է ծագում՝ որտեղի՞ց էր գտնում այդ ժամանակը) աշխատակիցների հետ մասնակցում է կրթական տարբեր ծրագրերի՝ ուսուցողական և հայրենաճանաչության դասախոսություններով հանդես գալով ՀՀ-ի և Արցախի բազմաթիվ բնակավայրերի դպրոցներում, զորամասերում, աշակերտության և ուսանողության համար կազմակերպում արշավներ դեպի պատմական հուշարձաններ՝ անձամբ ուղեկցելով նրանց: Չէ՞ որ անվիճելի ճշմարտություն է, որ մարդը ճանաչողությամբ է կապվում, սիրում, նվիրվում հող Հայրենիքին: Հայրենասիրությունը երբևէ կոչերով չի սերմանվում, այլ միայն ու միայն ճանաչողությամբ:

2010 թ.-ից ՀՃՈՒ հիմնադրամը ստանում է պետական ֆինանսավորում: Սամվել Կարապետյանը սկսում է հրատարակել մի ամսագիր՝ «Վարձք» վերնագրով, որը յուրօրինակ է և եզակի իր տեսակով (2010-2016 թթ. ընթացքում լույս է տեսել ընդամենը 12 համար):

Մեծ հայորդու գործունեության թագն ու պսակը, սակայն, կազմում է «Հայաստանի պատմություն» գրքաշարը, որը նվիրված է Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակի ոգեկոչման 100-ամյակին: Գրքաշարի նպատակն է Հայաստանի պատմությունն առաջին անգամ ներկայացնել գավառ առ գավառ, յուրաքանչյուրը՝ գյուղ առ գյուղ:

Նա, ցավոք սրտի, հասցրեց լույս ընծայել ընդամենը չորս հատոր, որոնք արժեքավոր նախօրինակ են նրա գործը շարունակողների համար:

«Մեր գրասենյակը զինագործարան է: Մենք արկեր ենք արտադրում: Թնդանոթները պետության ձեռքին են, որոնք առանց մեր արկերի չեն կարող կրակել: Բոլոր ճակատներով պատերազմ է: Քարոզչական պատերազմ է, դիվանագիտական պատերազմ է: Այդ պատերազմի զենքերը մեր գրասենյակում են»:

Սամվել Կարապետյանը թեև արդեն վատառողջ էր, սակայն որոշել էր մեծ շուքով նշել հիմնադրամի՝ Երևանյան գրասենյակի բացման 20-ամյակը: Մեծ հուզմունքով էր սպասում այդ օրվան: Ավա՛ղ...

Ավա՛ղ, փետրվար ամիսը ծանր և կորստաբեր դարձավ ողջ հայության և հիմնադրամի աշխատակիցների համար: 2009 թ. փետրվարի 19-ին հավերժացավ Արմեն Հախնազարյանը, իսկ 2020 թ. փետրվարի 27-ին՝ Սամվել Կարապետյանը:

Ազգին նվիրյալ հայի մասին կարելի է անվերջ խոսել և անվերջ լռել: Գիտելիքների հզոր պաշար, կամք և եռանդ ունեցող մշակութային արժեքների պահապան, անչափելի ժառանգություն թողած մեծ գիտնական... Կարելի է անվերջ թվարկել, քանի որ տասնամյակներ մի քանի ինստիտուտի գործ է կատարել: Նման աշխատունակություն ունեթերևս միայն Հրաչյա Աճառյանը:

Մեծ հայորդու համար թանկ էր ամեն բուպեն, ամեն վայրկյանը, որը չէր ապրել հանուն պաշտելիքի: Իսկ պաշտամունքը մեկն էր՝ հայրենիքը:

«Ես պաշտամունք ունեմ՝ ՀԱՅՐԵՆԻՔՍ Է: ԻՆՉ ՈՒԺԵՂ ԵՄ՝ ՉԳՈՒՄ ԱՅՆՊ ՊԱՇՏԱՍՈՒՆՔՈՎ»:

Ուր էլ լինեք, ուր էլ գնար, ժողովուրդը սիրում էր նրան, իր ծոցից ելած գավակն էր համարում: Գարդմանա աշխարհում զարդանցի էր, Բանանցում՝ բանանցեցի, Ջավախքում՝ ջավախքցի, իսկ Արցախում բոլորն էին ճանաչում նրան: Աշխատակիցներով կամ երբեմն էլ մենակ նրան կարելի էր հանդիպել ամենուր: Հաճախ էին շրջապատում, տարբեր հարցերից խոսում, պատմում իրենց դարդ ու ցավից, գյուղից, եկեղեցուց, գերեզմանոցից, այս կամ այն խաչքարից:

Պարզ ու հասարակ էր, համեստ: Ազնվական կեցվածք ուներ: Ո՛չ կոչումների էր ձգտում, ո՛չ տիտղոսների: Որոշ մարդիկ չէին սիրում նրան ճշմարիտ խոսքի համար: Սակայն նա անաղմուկ և աննկատ շարունակում էր իր գործը: Հասկացողը հասկանում էր, գնահատողը՝ գնահատում:

«Վանքերի տղեն»... այսպես էին կնքել նրա անունը: Կա՞ առավել մեծ ուրախություն, երբ գնահատանքը տալիս է հասարակ ժողովուրդը: Ամենամեծ կոչումը նրա համար ժողովրդի սերն էր, հարգանքն ու համակրանքը:

Գնահատված էր Սամվել Կարապետյանը: Նրան շնորհված տիտղոսների և շքանշանների ցանկն աշխատությունների նման ևս կարելի է թվարկել:



Մամվել Կարապետյանն Ապրանքի Սբ. Դավիթ վանքում (լուս.՝ 2007 թ.) և Դսեղի Սիրուն խաչի մոտ (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2017 թ.)



Դսեղի Բարձրաքաչի Սբ. Գրիգոր վանքում (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2017 թ.), Վարազավանի Հախում գյուղատեղիում (լուս.՝ Ա. Հակոբյանի, 2012 թ.)



Գնիշիկ գյուղի խաչքարերով զերեզմանոցում (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

Մամվել Կարապետյանն այլևս մեզ հետ չէ: Անդառնալի է նրա կորուստը բոլորիս համար: Մակայն անմահ է նա: Նրա ազգանվեր գործունեությունը կհավերժի հայ ճարտարապետության երկնածիրում.

«Ամենքս էլ կյանքում ինչ-որ բան կիսատ ենք թողնում: Կարևորը պատգամն է սերունդներին, որ նրանք չընկրկեն և շարունակեն կռիվը...»:

Նրա կռիվը Հայրենիքը սիրելն էր ու ճանաչելը, նրա պատգամը հայրենատեր լինելն էր:



Խոսրովից սկսեց, Խոսրովով ավարտեց. Սամվել Կարապետյանը վերջին անգամ Հավուց թառում կնոջ՝ անձնվեր գործընկեր էմմա Աբրահամյանի հետ (լուս.՝ Ս. Դանիելյանի, 14.04.2019 թ.)



ԳԳ-ից դուրս վերջին գիտարշավը Սամվել Կարապետյանի մասնակցությամբ. Դարադադի Հուժի Սբ. Գևորգ վանքում սաների՝ Ր. Քորթյանի և Ա. Հակոբյանի հետ (լուս.՝ 30.09.2018 թ.)

Իսկ երազանքները... մե՛ծ երազանք ուներ. Վանա լճի ափին՝ իր կառուցած տան պատշգամբում, զինի խմել և նշել Հայրենիքի հերթական հաղթանակը:

Այս ամենից հետո մի պահ հարց է առաջանում. ի՞նչ կլիներ մեր վիճակը, եթե չծնվեր Ազգին նվիրված, Ազգի նվիրյալ Սամվել Կարապետյանը: Դեռևս ո՞ր հասած կլինեինք մեր մանրիկ քայլերով: Երևի մեր տարտամ հայացքը կուղղեինք երկինք և դատարկ տակառի պես էլի՛ կզնգայինք...

Եվ ականա երկրորդ հարցն է ծագում՝ տեսնելով սերունդներին թողած անչափելի ժառանգությունը. ինչպե՞ս է հասցրել նա այս ամենը... Մի՞թե մարդ կարող է...

Նա կարողացավ, քանզի ի վերուստ տրված առաքելություն ուներ...

Քո բացական միշտ ներկա կլինի՝ այսօր և դարեր:

Դարերինն են այն ամենը, ինչ արեց Սամվել Կարապետյանը, ինչ ժառանգություն թողեց հետագա սերունդներին՝ աշխատություններ, հողվածներ, մտորելու տեղիք տվող մտքեր, կարծիքներ, ինչպես նաև իրեն հատուկ աշխատելաճ, որը սովորեցրեց և պատգամ թողեց սաներին.

«Ես հիմա հասել եմ կյանքիս այն կետին, որ արված գործերի հաշվետվությունն եմ ներկայացնում: Ու եթե հանկարծ ինչ-ինչ պատճառներով չկարողանամ այն մինչև վերջ իրագործել, շարունակողները կան»:

Հանգչի՛ր խաղաղությամբ, ՄԵ՛Ճ ՈՒՄՈՒՑԻՉ, ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱ՛Լ ԿՈՍԻՏԱՍ...

Հասմիկ Հովհաննիսյան

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գրքեր

- 1989 թ.** Եղել է Հայաստանի ճարտարապետությանը նվիրված իտալական շարքի 19-րդ՝ «Ղարաբաղ» հատորի ("Documenti di Architecture Armena") համահեղինակներից մեկը:
- 1992 թ.** «Գետաշեն»,
- 1995 թ.** «Զավախքի խաչքարերը»,
- 1997 թ.** «Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը»,
- 1998 թ.** «Վրաց պետական քաղաքականությունը և հայ մշակույթի հուշարձանները»,
- 1999 թ.** «Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում» (նաև ռուսերեն՝ "Памятники армянской культуры в зоне Нагорного Карабаха", 2000 և անգլերեն՝ "Armenian Cultural Monuments in the Region of Karabagh", 2001),
- 2002 թ.** «Շուլավեր» (համահեղինակությամբ՝ Սանդուխտ Ասլանյանի),
- 2003 թ.** «Թիֆլիսի քաղաքագլուխները» (նաև ռուսերեն՝ "Мэры Тифлиса"),
- 2004 թ.** «Հյուսիսային Արցախ» (նաև անգլերեն՝ "Northern Artsakh", 2007),
«Կովկասյան քանդարանի հայկական հավաքածուն»,
«Հայերը Կախեթում»,
- 2006 թ.** «Զավախք» (նաև անգլերեն՝ "Javakh", 2011),
- 2008 թ.** «Ախալցխա»,
- 2009 թ.** «Արցախի կամուրջները»,
«Հայաստան» պատկերազարդ մեծադիր գիրք-ալբոմը (վերահրատարակվել է 2014 թ.),
- 2010 թ.** «Արցախի հրաշալիքները»,
«Արցախի հայ ճարտարապետության մահմեդական հուշարձանները»,
- 2011 թ.** «Անի-1050»,
«Հուշագրական ժառանգություն»,
- 2012 թ.** «Նախիջևան» քարտեզագիրք (նաև անգլերեն՝ "Nakhijevan: Atlas"),
«Թրիլիսիի Սբ. Նշան Սբ. Նիկողայոսի եկեղեցի» (նաև ռուսերեն՝ "Церковь Сурб Ншан Сурб Никогаяоса, Тбилиси" և անգլերեն՝ "Sourb Nshan Sourb Nikoghayosi Church, Tbilisi"),
- 2013 թ.** «Չեռնարկ հայրենատիրության»,
«Ոսկեպարի պատմական հուշարձանները»,
«Զիլիզայի պատմական հուշարձանները»,
- 2014 թ.** «Ակունք և Կաթնաղբյուր գյուղերի պատմական հուշարձանները»,
«Զառ և Սևաբերդ գյուղերի պատմական հուշարձանները»,
«Նորգյուղ և Մայակովսկի գյուղերի պատմական հուշարձանները»,
«Կոտայք գյուղի պատմական հուշարձանները»,
«Կապուտան գյուղի պատմական հուշարձանները»,
- 2015 թ.** «Առինջ գյուղի պատմական հուշարձանները»,
«Եղեռն՝ եղեռնից հետո, հ. Ա»,
- 2016 թ.** «Եղեռն՝ եղեռնից հետո» (համառոտ),
«Արցախ» քարտեզագիրք (նաև անգլերեն՝ "Artsakh: Atlas", 2016),
- 2017 թ.** «Ադրբեջանը քաղաքակրթությունից դուրս»,
- 2019 թ.** «Աղնջաձոր, Թառաթումբ, Քարագլուխ, Սալի գյուղերի պատմական հուշարձանները»,
հայերեն դեռևս անտիպ «Խոջիվանք» գրքի անգլերեն տարբերակը՝ "Khojivank":
- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԳՐՔԱՇԱՐ (ՈՒՂԵՑՈՒՅՑ-ՔԱՐՏԵԶՈՎ)**
- 2015 թ.** Ա. «Հայոց ձոր»,
- 2017 թ.** Բ. «Սալմաստ» (լույս է տեսել նաև անգլերեն՝ "Salmast", 2019),
- 2018 թ.** Գ. «Արծկե»,
- 2019 թ.** Դ. «Մռավականք»:

Հոդվածներ

1982 թ.

1. Մոխրենիսի «Օխտը դռնի» վանքը, «Էջմիածին», ԺԱ-ԺԲ, էջ 46-50 (համահեղինակներ՝ Շ. Մկրտչյան և Ռ. Աբգարյան):

1983 թ.

- 1. Բացառիկ հորինվածքով միջնադարյան հուշարձան, «Էջմիածին», Դ, էջ 58-61:
- 2. Արցախի որմնափակ խաչքարերը, «Էջմիածին», Ը, էջ 34-40:
- 3. Խաչածև գմբեթավոր երկու եկեղեցիներ Արցախ նահանգում, «ՊԲՀ», 1983, № 2-3, էջ 203-205:

1984 թ.

- 1. Ջրաբերդի անապատը, «Էջմիածին», Ե, էջ 50-53:
- 2. Խրիստոսի ձորահովտում գտնվող պատմաճարտարապետական հուշարձանները և դրանց նորահայտ արձանագրությունները, «ՊԲՀ», № 2, էջ 233-238:
- 3. Պարեցիք գետահովտի պատմաճարտարապետական հուշարձանները ըստ նորահայտ արձանագրությունների, «ԼՀԳ», № 8, էջ 75-86:
- 4. Ինը Մասանց անապատը ըստ նորահայտ վիճագրերի, «ՊԲՀ», № 4, էջ 237-238 (ընկերոջ՝ Արմեն Քերրոյանի անունով):

1985 թ.

- 1. 17-րդ դարի վանական երկու համալիր Արցախում, «ՊԲՀ», № 1, էջ 226-231:
- 2. Հայ մշակույթի հուշարձանները Շամախու Գարդման գավառում, «Էջմիածին», Ը, էջ 45-50:
- 3. Պատմական Խոշկաշենը և նրա հուշարձանները, «ԼՀԳ», № 10, էջ 76-80:

1986 թ.

- 1. Հաբերդի պատմաճարտարապետական հուշարձանները, «ԼՀԳ», № 5, էջ 86-89:
- 2. Ուրծ գավառի պատմությունից, «Արարատ» (չրջանային թերթ), № 125, 18 հոկտեմբերի, էջ 3:
- 3. Սակոաբերդի տեղադրության հարցի շուրջ, «Արարատ» (չրջանային թերթ), № 135, 13 նոյեմբերի, էջ 3:
- 4. Ամենահին թվագրությամբ նորահայտ խաչքարը, «Արարատ» (չրջանային թերթ), № 151, 20 դեկտեմբերի, էջ 3:
- 5. Վանքաշենը և հուշարձանները, «Էջմիածին», ԺԱ-ԺԲ, էջ 106-109:

1987 թ.

- 1. Ուրտեղ էր գտնվում Ուրծ գյուղաքաղաքը, «Արարատ», (չրջանային թերթ), № 3, 8 հունվարի, էջ 3-4:
- 2. Ջղուն գյուղի պատմությունից, «Արարատ» (չրջանային թերթ), № 5, 13 հունվարի, էջ 3:
- 3. Ոչնչացվում է սեփական մշակույթը, «Արարատ» (չրջանային թերթ), № 8, 20 հունվարի, էջ 3, № 11, № 20:
- 4. Մոռացված տեղանունների հետքերով, «Արարատ» (չրջանային թերթ), № 81, 7 հուլիսի, էջ 3:
- 5. Ամենահին թվագրությամբ նորահայտ խաչքարը, «Էջմիածին», Ե-Զ, էջ 80-81:
- 6. Արմոք. Խոսրով, «Արարատ» (չրջանային թերթ), № 100, 20 օգոստոսի, էջ 3:
- 7. Ջերմամիս. Հորթուն, «Արարատ» (չրջանային թերթ), 29 օգոստոսի, էջ 3:
- 8. Կուր գետի ձախափնյա հայկական մշակութային ժառանգությունը, «Գարուն», № 9, էջ 74-77:

1988 թ.

- 1. Գոտիի հուշարձանախումբը օգնություն է հայցում, «Կուր-տուր-տասավորական աշխատանք», № 2, էջ 9-12:
- 2. Պատմական Հայաստանի Կապաղակ գավառի թրքախոս հայկական գյուղերը, «ԼՀԳ», № 1, էջ 40-52:
- 3. Պատմական Մոկուրլու գյուղը և նրա հուշարձանները, «ԲԵՀ», № 3, էջ 106-111:
- 4. Памятник средневековой архитектуры в гаварах Шаки и Капалак собственно Албании, «Кавказ и Византия», выпуск 6, с. 223-252.

1989 թ.

- 1. Աղրբեջանական ՍՍՀ Թուրքի շրջանի հայկական պատմաճարտարապետական հուշարձանները, «Էջմիածին», Ա, էջ 51-55:
- 2. Մատրասա գյուղը և նրա հուշարձանները, «ՊԲՀ», № 2, էջ 225-233:
- 3. Монарстырский помплекс Сурб Аствацацин в гаваре Цар, «ԼՀԳ», № 12, էջ 57-70 (համահեղինակներ՝ Հարությունյան Վ. և Սարգսյան Ն.):
- 4. Շամախու գավառի գյուղերի պատմությունից, «ԼՀԳ», № 12, էջ 57-70:

1990 թ.

- 1. Церковь Сурб Вардананц (Сурб Ншан) города Ахалиха, «ԼՀԳ», № 5, էջ 75-85 (համահեղինակներ՝ Մարության Հ., Նահատակյան Ռ.):

1991 թ.

- 1. 1988-1991 թթ. ընթացքում հայաթափված գյուղերը Աղրբեջանում, «Հանրապետական», № 2, 20 սեպտեմբերի, էջ 4-5:
- 2. Հայաթափված գյուղերը Աղրբեջանի Հանրապետության կենտրոնական շրջաններում, «Հանրապետական», № 3, 27 սեպտեմբերի, էջ 4-5:
- 3. Հայաթափ գյուղերը Աղրբեջանում, «Հանրապետական», № 4 հոկտեմբերի, էջ 5:
- 4. Բուն Աղվանք. հայկական պատմաճարտարապետական հուշարձանները, «Հանրապետական», № 5, 11 հոկտեմբերի, էջ 5:
- 5. Հյուսիսային Արցախ. պատմաճարտարապետական հուշարձաններ, «Հանրապետական», № 8, 1 նոյեմբերի, էջ 5:
- 6. Հայկական դպրոցները Կուր գետի ձախափնյակում, «Ազատամարտ», № 36, 7-13 նոյեմբերի, էջ 13:
- 7. Կուր գետի ձախափնյակի հայերի ողիսականը, «Ազատամարտ», № 39, 28 նոյեմբերի-4 դեկտեմբերի, էջ 12, 14:
- 8. Կախեթի (Արևելյան Վրաստան) հայկական դպրոցները, «Ազատամարտ», № 42, էջ 13:

1992 թ.

- 1. Թբիլիսյան ողբերգությունը և ավերված ճարտարապետական կառույցները, «Ազատամարտ», № 9, փետրվար, էջ 13:
- 2. Դադի (Խուրթ) վանքի կավածքները, «Ազատամարտ», № 15, էջ 14:
- 3. Արցախ. ազգային ազատագրական պայքար. մարտական գործողությունների ժամանակագրություն, «Ազատամարտ», № 19, մայիս, էջ 8-9:
- 4. Ունքը շինելու տեղ..., «Երկիր», № 94, 20 մայիսի, էջ 5:
- 5. Լաչինի շրջանի հայկական պատմական հուշարձանները, «Ազատամարտ», № 21, 22-28 մայիսի, էջ 14 (նույնը՝ ռուսերեն՝ «Азатамарт», № 3, 26 мая-1 июня, с. 7):
- 6. Քյալբաջարի շրջանի հայկական պատմական հուշարձանները, «Ազատամարտ», № 22, էջ 13:
- 7. Ախալցխայի շրջանի հայկական հուշարձանները, «Ազատամարտ», № 30, 24-30 հուլիսի, էջ 13:
- 8. Ախալցխայի շրջանի հայկական հուշարձանները, «Կամք», № 30, 26 օգոստոսի, էջ 2:
- 9. Արցախահայր սփյուռքահայ չէ..., «Ազատամարտ», № 36, էջ 15:
- 10. Ջավախքի խաչքարերը, «Ազատամարտ», № 44, 30 հոկտեմբերի-6 նոյեմբերի, էջ 14:
- 11. Ջավախքի հայոց եկեղեցիները, «Ազատամարտ», № 45, 6-12 նոյեմբերի, էջ 14:

1993 թ.

- 1. Հայաթափ բնակավայրեր Աղրբեջանում (1988-1991), «Հայրենիքի ձայն», № 2, 19 հունվարի, էջ 4-5:
- 2. Հայաթափ բնակավայրեր Աղրբեջանում (1988-1991), «Հայրենիքի ձայն», № 3, 9 փետրվարի, էջ 4-5:
- 3. Հայաթափ բնակավայրեր Աղրբեջանում (1988-1991), «Հայրենիքի ձայն», № 4, էջ 5:
- 4. Հայաթափ բնակավայրեր Աղրբեջանում (1988-1991), «Հայրենիքի ձայն», № 5, 25 փետրվարի, էջ 5-6:

5. Հայաթափ բնակավայրեր Ադրբեջանում (1988-1991), «Հայրենիքի ձայն», № 6, 4 մարտի, էջ 6-7:
6. Հայաթափ բնակավայրեր Ադրբեջանում (1988-1991), «Հայրենիքի ձայն», № 7, 11 մարտի, էջ 6-7:
7. Հայաթափ բնակավայրեր Ադրբեջանում (1988-1991), «Հայրենիքի ձայն», № 8, 6 ապրիլի, էջ 6:
8. Հայաթափ բնակավայրեր Ադրբեջանում (1988-1991), «Հայրենիքի ձայն», № 9, 4 մայիսի, էջ 4-5:
9. Հայերը Աբխազիայում, «Միտք» («Ազատամարտ»-ի գիտական հավելված), մայիս, թիվ 5, էջ ԲԹ-ԼԱ:
10. Նորահայտ հուշարձաններ Քարվաճառի շրջանում, «Հայրենիքի ձայն», № 20, 2-22 սեպտեմբերի, էջ 5-6:
11. Քիլիսա գյուղի եկեղեցին, «Հայրենիքի ձայն», № 26, 14-20 հոկտեմբերի, էջ 5:
12. Ազատագրված Մենի գյուղի պատմությունից, «Հայրենիքի ձայն», № 27, 21-27 հոկտեմբերի, էջ 5:
13. Հայրենի մուռացված Դուռնուկ, «Վարուժան», № 8, մարտ, էջ 10:
14. Ի՞նչ է կատարվում Սուֆիխում, «Ազատամարտ», № 14, 9-15 ապրիլի, էջ 14 (ստորագրված՝ Բերդաղցի):
15. Ջավախք. Դիլիսկա, «Ազատամարտ», № 14, էջ 14 (համահեղինակ՝ Նահատակյան Ռ.):
16. Գողերի և մարդասպանների որջերը վերացված են, «Ազատամարտ», № 15, 16-22 ապրիլի, էջ 14 (նույնը՝ ռուսերեն «Azatamart», № 15, с. 4):
17. Ջավախք. Մուրճախեթ, Չամբուրա, «Ազատամարտ», № 18, 7-13 մայիսի, էջ 13 (համահեղինակ՝ Նահատակյան Ռ.):
18. Ջավախքի բնակավայրերը. Գուլալիս, Քարսեպ, Դավնյա, «Ազատամարտ», № 27, 16-22 հուլիսի, էջ 15 (համահեղինակ՝ Նահատակյան Ռ.):
19. Նյուրթական մշակույթի հուշարձաններ Կուր գետի ձախափնյա բնակավայրերում, «Հուշարձան» տարեգիրք, Բ, էջ 80-86:

1994 թ.

1. Նորահայտ հուշարձաններ Գուրաթլից, «Հայրենիքի ձայն», № 15, 2-8 հունիսի, էջ 5:
2. Ապագա թուններ մտավախության պատճառ, «Ազատամարտ», № 22, 3-9 հունիսի, էջ 10 (ստորագրված՝ Բերդաղցի):
3. Վերականգնվում են, թե՞ յուրացվում, «Ազատամարտ», № 26, հուլիս, էջ 9:
4. Վաղավեր. մի անկլավի պատմություն, «Ազատամարտ», № 29, 22-28 հուլիս, էջ 15:
5. Ինչպե՞ս էին յուրացվում հայկական հողերը (Քարվաճառ քաղաքի օրինակով), «Ազատամարտ», № 40, հոկտեմբեր, էջ 13:
6. Դառի վանք. վերականգնման անհրաժեշտությունն ու հնարավորությունները, «Ազատամարտ», № 40, 2-8 հունիսի, էջ 13:
7. Ինչպե՞ս էին յուրացվում հայկական հողերը (Լաչին քաղաքի օրինակով), «Ազատամարտ», № 43, նոյեմբեր, էջ 13:
8. Սահմանախաչ Գարդմանքից, «Ազատամարտ», № 43, նոյեմբեր, էջ 13:
9. Մի արձանագրության հետքերով, «Ազատամարտ», № 44, 4-10 նոյեմբերի, էջ 14:
10. ԼԳՀ-ն շրջապատող Ադրբեջանի քաղաքները 80 տարի առաջ, «Ազատամարտ», № 46, 18-24 նոյեմբերի, էջ 13:
11. Հասան Վախտանգյանի խաչքարը Դադի վանքում, «Ազատամարտ», № 46, 8-24 նոյեմբերի, էջ 13:
12. Մի խաչքարի հետքերով, «Ազատամարտ», № 47, 25-30 նոյեմբերի, էջ 14 (արտատպված՝ «Ալիք»-ում, 1995, № 14, 19 հունվարի, էջ 4 «Ազգակ» օրաթերթից):
13. Քարվաճառի միակ մզկիթի պատմությունը, «Ազատամարտ», № 47, 25-30 նոյեմբերի, էջ 14:

1995 թ.

1. Քարվաճառյան խաչքար 916 թվականից, «Ազգ», № 2:
2. Очаг погашен не чужим... «ТА», 21 февраля, № 13.
3. Համարում են քաղաքական կարճատևության դրսևորում, «Լրագիր», № 23, 1 մարտի, էջ 2:
4. Հանձվ գյուղի «դեգերումները» վերջ ունեն, «Առավոտ», № 23, 2 մարտի, էջ 6:

5. Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները (1), «Լրագիր», № 24, 2 մարտի, էջ 6:
6. Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները (2), «Լրագիր», № 25, 3 մարտի, էջ 6:
7. Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները (3), «Լրագիր», № 26, 4 մարտի, էջ 6:
8. Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները (4), «Լրագիր», № 27, 7 մարտի, էջ 6:
9. Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները (5), «Լրագիր», № 28, 8 մարտի, էջ 6:
10. Շաքի քաղաք, «Ար», № 4, 8 մարտի, էջ 11:
11. Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները (6), «Լրագիր», № 29, 9 մարտի, էջ 6:
12. Թուրքական դպրոց... հայկական խաչքարերից, «Հայաստանի Հանրապետություն» (այսուհետ՝ ՀՀ), № 49, 10 մարտի, էջ 2:
13. Քարվաճառի ազատագրումը սկսվել է 1913 թվականին, «ՀՀ», № 52, 13 մարտի:
14. Шамяновский район Азербайджана или гавар Алуэ-Вардут исторической Армении, «ТА», № 22, 14 марта, с. 13.
15. Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները (7), «Լրագիր», № 32, 14 մարտի, էջ 6:
16. Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները (8), «Լրագիր», № 33, 15 մարտի, էջ 6:
17. Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները (9), «Լրագիր», № 34, 16 մարտի, էջ 6:
18. Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները (10), «Լրագիր», № 37, 21 մարտի, էջ 6:
19. Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները (11), «Լրագիր», № 38, 22 մարտի, էջ 6:
20. Ջաբաթալա «ադրբեջանական» քաղաքը, «Ար», № 6, 22 մարտի, էջ 7:
21. Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները (12), «Լրագիր», № 41, 28 մարտի, էջ 6:
22. Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները (13), «Լրագիր», № 49, 7 ապրիլի, էջ 6:
23. Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները (14), «Լրագիր», № 81, 11 ապրիլի, էջ 6:
24. Արդյո՞ք իսպառ հայաթափ էր Ծար գավառը խաշնաբաժների ներթափանցման պահին, «Ար», № 9, 12 ապրիլի, էջ 5:
25. Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները (15), «Լրագիր», № 56, 18 ապրիլի, էջ 6:
26. Վերջապես ո՞րն է ճիշտ անվանումը, «ՀՀ», № 89, 19 ապրիլի, էջ 2:
27. Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները (16), «Լրագիր», № 59, 21 ապրիլի, էջ 6:
28. Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները (17), «Լրագիր», № 62, 27 ապրիլի, էջ 6:
29. Հայերը Կուրի աջակողմյան ափամերձ դաշտավայրերում, «ՀՀ», № 93, 23 ապրիլի, էջ 5:
30. The liberation of Karvachar began in 1913, «Noyan Tapan», 5 april, page 9.
31. The history and monuments of Karvachar, «Noyan Tapan», 12 april, page 10-11.
32. The history and monuments of Karvachar, «Noyan Tapan», 19 april, page 12-13.
33. The history and monuments of Karvachar, «Noyan Tapan», 26 april, page 10-11.
34. The history and monuments of Karvachar, «Noyan Tapan», 3 may, page 10.
35. Գյուղի հուշը. Վանքաշենի ողբերգությունը, «Հայաստան», № 46, 4 մայիսի:
36. Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները (18), «Լրագիր», № 69, 5 մայիսի, էջ 6:
37. Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները (19), «Լրագիր», № 72, 10 մայիսի, էջ 6:
38. Թբիլիսի. Նորաշենի սուրբ Աստվածածին հայոց եկեղեցին վանդալիզմի գոհ, «Լրագիր», № 74, 12 մայիսի, էջ 7:
39. Չուգանեղներ Աբխազիայի և Արցախի բնիկների միջև, «Լրագիր», № 74, 12 մայիսի, էջ 5 (ստորագրված՝ Բերդաղցի):

- 40. Հայ մտավորականներն ու Շահ-Աբասի չզործած հանցանքը, «Հայք», № 105, 13 հունիսի, էջ 6:
- 41. Ծանր ու ամօթալի հարուած հայագիտութեանը, «Դրօշակ», № 1459, 1-14 յունիսի, էջ 30-31:
- 42. Չարքոնք վրացախոս հայերի շրջանում. Սուրան, «Հայաստան», № 147, 16 հունիսի, էջ 6:
- 43. Հայերը Իմերեթիայում, «Երկիր Նաիրի», № 27, 14 հուլիսի, էջ 12-13:
- 44. Եթե Վրաստանում է, ուրեմն վրացական է...», «ՀՀ», № 194, 6 օգոստոսի, էջ 2:
- 45. Բանանցա Թաթրոլին (Գրիգոր Օհանյան), «ՀՀ», № 199, 11 օգոստոսի, էջ 4:
- 46. Պանջաղ. գյուղատեղի, որի անունն արժե հիշել, «ՀՀ», № 200, 12 օգոստոսի, էջ 3:
- 47. Սարաթլու. հայախոս հայերի միակ բնակավայրը Կախեթում, «ՀՀ», № 205, 17 օգոստոսի, էջ 2:
- 48. Մեկիքանիստ՝ մոռացութեան թմբիրում, «ՀՀ», № 209, 21 օգոստոսի, էջ 2:
- 49. Հնագույն խաչքար Քարվաճառում, «ՀՀ», № 216, 28 օգոստոսի, էջ 1:
- 50. Հյուսիսային Կովկասի արևելյան մասի հայկական գաղթավայրերի համառոտ պատմություն, «Հայկական համաշխարհային համագումար», № 4, էջ Է:
- 51. Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, «Բանբեր», № 61, 15-31 հոկտեմբերի, էջ 5:
- 52. Հերթը հասավ Սուրբ Գևորգ եկեղեցուն, «Հայք», № 196, 19 հոկտեմբերի, էջ 4 (ստորագրված՝ Բերդաղցի):
- 53. Այ քեզ քա՛ն...», «Հայք», № 202, 27 հոկտեմբերի, էջ 6:
- 54. Դազախի շրջանի հայկական հուշարձանները, «Բանբեր», № 62, 1-15 նոյեմբերի, էջ 3:
- 55. Դազախի շրջանի հայկական հուշարձանները, «Բանբեր», № 63, 15-30 նոյեմբերի, էջ 5:
- 56. Քաշունիք-Քարկուշատ-Ղուրաթլի. հայկական պատմական հուշարձանները, «Առերեսում», № 15, էջ 8-9:
- 57. Հայոց մասունքների տեղում վրաց եկեղեցի՞, «Բանբեր», № 64, 1-15 դեկտեմբերի, էջ 3:
- 58. Հայկական հուշարձանների եղեռնը Ադրբեջանում, «Ազգային հարցի և զենցողի ուսումնասիրման կենտրոն», մաս 2, Երևան, 1995, էջ 30-38:
- 59. Թբիլիսի. Նորաշենի սուրբ Աստվածածին հայոց եկեղեցին, «Միոն» ամսագիր, № 7-9, հատոր 69, էջ 362-366:

1996 թ.

- 1. Խոջիվանքի ողբերգությունը, «Ալիք», № 122, 16 յունիսի, էջ 4-5:
- 2. Գիտությունը բարոյականություն է կամ ինչ կարելի է չանել, «ԼՂ Հանրապետություն», № 93, 2 հուլիսի, էջ 5, 7 (համահեղինակ՝ Հակոբյան Վլ.):
- 3. Կովսական-Չանգեղան. Հայկական պատմական հուշարձանները, «Առերեսում», № 16, էջ 18-19:
- 4. Գարդմանահայ գաղթականությունը Վրաստանում, «Գարդմանք», № 1, էջ 7:
- 5. Փրկված խաչքար Խաչակապից, «Գարդմանք», № 1, էջ 8 (արտաստպված՝ «Հայաստանի կոմունիստ», № 31, 9 օգոստոսի, էջ 3):
- 6. Խոմնիսավանքի ավերումը 1982 թ., «Գարդմանք», № 1, էջ 8:
- 7. Հարթե՞լ ենք..., «Գարդմանք», № 2, էջ 2 (համահեղինակ՝ Շահնազարյան Բ.):
- 8. Չարդախլու, «Գարդմանք», № 2, էջ 5-7:
- 9. Գարդմանց աշխարհի վանքերը. Չարեք, «Գարդմանք», № 2, էջ 8-11:
- 10. Գարդմանահայ գաղթականությունը Վրաստանում, «Գարդմանք», № 2, էջ 16:
- 11. Խոջիվանքի նոր ողբերգությունը, «Ալիք», № 122, 16 յունիսի, էջ 4-5:
- 12. Շամախի, «Առերեսում», № 17, էջ 18-19:
- 13. 78 տարի առաջ՝ ամռանը. Վանքաշեն, Դալակա, Գիրք և Մատրասա գյուղերի հերոսամարտերը, «Առերեսում», № 18, էջ 4:

- 14. Ջավախքի պատմական հուշարձանները, «Լրագիր», № 141, 14 նոյեմբերի, էջ 6:
- 15. Վրացական բանակը քրեական տականքների հրոսակախումբ, «Մոլորակ», № 117, 27 դեկտեմբերի, էջ 4 (ստորագրված՝ Բերդաղցի):
- 16. Ոսկանապատ, «Գարդմանք», № 3, էջ 2-4:
- 17. Հայություն օտարված մասնիկը. այրումներ, «Գարդմանք», № 3, էջ 5:
- 18. Գերմանացիները Գարդմանքում, «Գարդմանք», № 3, էջ 6:
- 19. Գարդմանահայերի սպիտակ ջարդը Լիսում, «Գարդմանք», № 3, էջ 7, 16:
- 20. Գարդմանաց աշխարհի վանքերը. Հուկան մահատակ, «Գարդմանք», № 3, էջ 8-9:
- 21. VIII-XI դարերի խաչքարերը Գարդմանքում, «Գարդմանք», № 3, էջ 10-11:
- 22. Մի ավազակաորջի պատմություն. Թոփախասանլի, «Գարդմանք», № 3, էջ 11:
- 23. Մի նոր տարի Շամքորի ձորում. ճամփորդական հուշեր, «Գարդմանք», № 3, էջ 13:

1997 թ.

- 1. Քարվաճառ. վարչաքաղաքական կացությունը սկզբից մինչև մեր օրերը, «Առերեսում», № 19, էջ 8-9:
- 2. Ջավախքի պատմական հուշարձանները (1), «Մոլորակ», № 9, 18 հունվարի, էջ 4:
- 3. Ջավախքի պատմական հուշարձանները (2), «Մոլորակ», № 14, 25 հունվարի, էջ 4:
- 4. Ջավախքի պատմական հուշարձանները (3), «Մոլորակ», № 19, 1 փետրվարի, էջ 4:
- 5. Ջավախքի պատմական հուշարձանները (4), «Մոլորակ», № 24, 8 փետրվարի, էջ 6:
- 6. Ջավախքի պատմական հուշարձանները (5), «Մոլորակ», № 29, 15 փետրվարի, էջ 6:
- 7. Ջավախքի պատմական հուշարձանները (6), «Մոլորակ», № 34, 22 փետրվարի, էջ 4:
- 8. Ջավախքի պատմական հուշարձանները (7), «Մոլորակ», № 44, 8 մարտի, էջ 6:
- 9. Ջավախքի պատմական հուշարձանները (8), «Մոլորակ», № 48, 15 մարտի, էջ 6:
- 10. Ջավախքի պատմական հուշարձանները (9), «Մոլորակ», № 53, 22 մարտի, էջ 6:
- 11. Ճշմարտությունը գոնե պատմության համար, «Երևանյան օրեր», № 16, 25-28 մարտի, էջ 3-4:
- 12. Խոջիվանքի ողբերգությունը, «Երևանյան օրեր», № 17, 28 մարտի-1 ապրիլի, էջ 7:
- 13. Ջավախքի պատմական հուշարձանները (10), «Մոլորակ», № 58, 29 մարտի, էջ 4:
- 14. Չկա այլևս ու կարծես չէր էլ եղել, «Երևանյան օրեր», № 18, 1-4 ապրիլի, էջ 6:
- 15. Ջավախքի պատմական հուշարձանները (11), «Մոլորակ», № 63, 5 ապրիլի, էջ 6:
- 16. Արաշ (Արեշ) գավառի հայերը (1), «Երևանյան օրեր», № 20, 11-14 ապրիլի, էջ 7:
- 17. Արաշ (Արեշ) գավառի հայերը (2), «Երևանյան օրեր», № 21, 15-17 ապրիլի, էջ 7:
- 18. Արաշ (Արեշ) գավառի հայերը (3), «Երևանյան օրեր», № 22, 18-21 ապրիլի, էջ 7:
- 19. Արաշ (Արեշ) գավառի հայերը (4), «Երևանյան օրեր», № 23, 22-24 ապրիլի, էջ 7:
- 20. Արաշ (Արեշ) գավառի հայերը (5), «Երևանյան օրեր», № 24, 29 ապրիլի-1 մայիսի, էջ 7:
- 21. «Սունգայիք» հանրախանութ Թիֆլիսում, «Մոլորակ», № 72, 3 մայիսի, էջ 5:
- 22. Սուրանցի հայերը ազգակիցների օգնության կարիքն ունեն, «Մոլորակ», № 77, 13 մայիսի, էջ 5:
- 23. 1700-ամյակին Թբիլիսիի առանց հայոց եկեղեցիների. Վանդալիզմի հերթական գոլը՝ Քարափի Սբ. Գևորգ եկեղեցին, «Մոլորակ», № 79, 15 մայիսի, էջ 6:

24. Ձավախքի պատմական հուշարձանները (12), «Մոլորակ», № 81, 17 մայիսի, էջ 6:
25. Ձավախքի պատմական հուշարձանները (13), «Մոլորակ», № 86, 24 մայիսի, էջ 6:
26. Յիսիմվալի հայերն ազգակիցների օժանդակության կարիքն ունեն, «Մոլորակ», № 87, 27 մայիսի, էջ 7:
27. Ձավախքի պատմական հուշարձանները (14), «Մոլորակ», № 90, 31 մայիսի, էջ 10:
28. Պատասխան մոլորյալ ոչխարների այս տգեղ արարքին, «Մոլորակ», № 90, 31 մայիսի, էջ 9:
29. 1700-ամյակին Թբիլիսին առանց հայոց եկեղեցիների. Նարիդլայի բերդամիջի եկեղեցին, «Մոլորակ», № 92, 4 հունիսի, էջ 10:
30. Ձավախքի պատմական հուշարձանները (15), «Մոլորակ», № 95, 7 հունիսի, էջ 10:
31. 1700-ամյակին Թբիլիսին առանց հայոց եկեղեցիների. Վերայի հայոց գերեզմանատան Սբ. Խաչ եկեղեցու օտարումը, «Մոլորակ», № 99, 13 հունիսի, էջ 13:
32. Ձավախքի պատմական հուշարձանները (16), «Մոլորակ», № 104, 21 հունիսի, էջ 6:
33. Հայերն Ալշերոնյան թերակղզում (1), «Առավոտ», № 49, 28 հունիսի, էջ 13:
34. Եվրոպացիների աչքը խաչքարերի վրա էր, բայց մերոնք մնացին անդրովելի, «Հայոց աշխարհ», № 10, 28 հունիսի, էջ 5:
35. Հայկական գերեզմանոցի տեղում վերակառուցված վրացական եկեղեցու կառուցումը, «Հայոց աշխարհ», № 12, 2 հուլիսի, էջ 8:
36. Հայերն Ալշերոնյան թերակղզում (2), «Առավոտ», № 59, 12 հուլիսի, էջ 13:
37. Հերերում վրացիությունը ավելի ու ավելի է մարում, «Հայոց աշխարհ», № 21, 15 հուլիսի, էջ 8:
38. Հայերն Ալշերոնյան թերակղզում (3), «Առավոտ», № 64, 19 հուլիսի, էջ 13:
39. Հայերն Ալշերոնյան թերակղզում (4), «Առավոտ», № 69, 26 հուլիսի, էջ 13:
40. Հայերն Ալշերոնյան թերակղզում (5), «Առավոտ», № 74, 2 օգոստոսի, էջ 13:
41. Վանդալի հոգեբանություն սերմանող դպրոց, «Հայոց աշխարհ», № 39, 8 օգոստոսի, էջ 8:
42. Հայերն Ալշերոնյան թերակղզում (6), «Առավոտ», № 79, 9 օգոստոսի, էջ 9:
43. 1700-ամյակին՝ Թբիլիսին առանց հայոց եկեղեցիների. Հինա էլ Ջորաբաշի Սբ. Գևորգ եկեղեցու տեղում վրացական եկեղեցի, «Հայոց աշխարհ», № 49, 22 օգոստոսի, էջ 8:
44. Թելեթի Սբ. Գևորգը հայության համար ո՛չ ևս է, կամ այդ ուխտատեղին էլ մոռացքի հայեր, եթե կարող եք..., «Առերեսում», № 21, էջ 1, 10, 15:
45. Հայոց եկեղեցու վրացականացումը, «Հայոց աշխարհ», № 60, 6 սեպտեմբերի, էջ 8:
46. Վրաց գոյապահպանների դժգոհությունը Ծորոխ գետի վրա կառուցվող եկեղեցիի առթիվ. Մայր Վրաստանից պակասեց ևս 500 մետր. Դեսպանն ընկավ դռներու, «Հայոց աշխարհ», № 63, 11 սեպտեմբերի, էջ 7 (ստորագրված՝ Բերդաղցի):
47. Հայ մշակույթի նմուշները «Կովկասյան թանգարանում» և դրանց հետագա ճակատագիրը, «Հայոց աշխարհ», № 66, 16 սեպտեմբերի, էջ 8:
48. Եվս մի օտարված հայոց եկեղեցի. Շավմաբաղի Սբ. Գևորգ, «Հայոց աշխարհ», № 70, 20 սեպտեմբերի, էջ 8:
49. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (1), «ՀՀ», № 183, 23 սեպտեմբերի, էջ 7:
50. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (2), «ՀՀ», № 184, 24 սեպտեմբերի, էջ 7:
51. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (3), «ՀՀ», № 185, 25 սեպտեմբերի, էջ 7:
52. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (4), «ՀՀ», № 186, 26 սեպտեմբերի, էջ 7:
53. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (5), «ՀՀ», № 187, 27 սեպտեմբերի, էջ 7:
54. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (6), «ՀՀ», № 188, 30 սեպտեմբերի, էջ 7:
55. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (7), «ՀՀ», № 189, 1 հոկտեմբերի, էջ 7:
56. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (8), «ՀՀ», № 190, 2 հոկտեմբերի, էջ 7:
57. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (9), «ՀՀ», № 191, 3 հոկտեմբերի, էջ 7:
58. Անտառները ոչնչացրին, որովհետև տեսած չկային, «Մոլորակ», № 156, 4 հոկտեմբերի (ստորագրված՝ Սամվել Ձավախյան):
59. Կույս դեսանտիկների չարքաշ կյանքը Ձավախքում, «Մոլորակ», № 157, 7 հոկտեմբերի (ստորագրված՝ Սամվել Ձավախյան):
60. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (10), «ՀՀ», № 193, 7 հոկտեմբերի, էջ 7:
61. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (11), «ՀՀ», № 194, 8 հոկտեմբերի, էջ 7:
62. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (12), «ՀՀ», № 195, 9 հոկտեմբերի, էջ 7:
63. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (13), «ՀՀ», № 196, 10 հոկտեմբերի, էջ 7:
64. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (14), «ՀՀ», № 197, 11 հոկտեմբերի, էջ 7:
65. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (15), «ՀՀ», № 198, 14 հոկտեմբերի, էջ 7:
66. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (16), «ՀՀ», № 199, 15 հոկտեմբերի, էջ 7:
67. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (17), «ՀՀ», № 200, 16 հոկտեմբերի, էջ 7:
68. Վրաստանի տարածքը շարունակ կրճատվում է. Վրաստանից հեռացել են 1.006.000 այլազգիներ, «Հայոց աշխարհ», № 99, 31 հոկտեմբերի, էջ 8:
69. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (18), «ՀՀ», № 218, 11 նոյեմբերի, էջ 7:
70. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (19), «ՀՀ», № 219, 12 նոյեմբերի, էջ 7:
71. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (20), «ՀՀ», № 220, 13 նոյեմբերի, էջ 7:
72. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (21), «ՀՀ», № 221, 14 նոյեմբերի, էջ 7:
73. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (22), «ՀՀ», № 222, 15 նոյեմբերի, էջ 7:
74. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (23), «ՀՀ», № 223, 18 նոյեմբերի, էջ 7:
75. Հայերեն արձանագրությունները վրացու ա՛ջքն են հանել, «Հայոց աշխարհ», № 111, 18 նոյեմբերի, էջ 6:
76. Ձավախքի պատմական հուշարձանները (17), «Մենք+», № 53, 18-22 նոյեմբերի, էջ 7:
77. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (24), «ՀՀ», № 224, 19 նոյեմբերի, էջ 7:
78. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (25), «ՀՀ», № 225, 20 նոյեմբերի, էջ 7:
79. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (26), «ՀՀ», № 226, 21 նոյեմբերի, էջ 7:
80. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (27), «ՀՀ», № 227, 22 նոյեմբերի, էջ 7:
81. Սբ. Գևորգ եկեղեցին եղեռնապուրծ մասունքների ակամա հանգրվան, «Հայոց աշխարհ», № 128, 12 դեկտեմբերի, էջ 8:
82. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (28), «ՀՀ», № 242, 17 դեկտեմբերի, էջ 7:
83. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (29), «ՀՀ», № 244, 18 դեկտեմբերի, էջ 7:
84. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (30), «ՀՀ», № 245, 19 դեկտեմբերի, էջ 7:
85. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (31), «ՀՀ», № 246, 20 դեկտեմբերի, էջ 7:
86. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (32), «ՀՀ», № 247, 23 դեկտեմբերի, էջ 7:
87. Հուշարձանների բռնագաղթ դեպի անհայտություն, «Հայոց աշխարհ», № 136, 24 դեկտեմբերի, էջ 1, 8:

- 88. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (33), «ՀՀ», № 248, 24 դեկտեմբերի, էջ 7:
- 89. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (34), «ՀՀ», № 249, 25 դեկտեմբերի, էջ 7:
- 90. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (35), «ՀՀ», № 250, 26 դեկտեմբերի, էջ 7:
- 91. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված շրջաններում (36), «ՀՀ», № 251, 27 դեկտեմբերի, էջ 7:

1998 թ.

- 1. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված և հարակից շրջաններում, «ՀՀ», № 12, 22 հունվարի:
- 2. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված և հարակից շրջաններում, «ՀՀ», № 13, 23 հունվարի:
- 3. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված և հարակից շրջաններում, «ՀՀ», № 14, 24 հունվարի:
- 4. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված և հարակից շրջաններում, «ՀՀ», № 15, 27 հունվարի:
- 5. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված և հարակից շրջաններում, «ՀՀ», № 30, 17 փետրվարի:
- 6. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված և հարակից շրջաններում, «ՀՀ», № 31, 18 փետրվարի:
- 7. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված և հարակից շրջաններում, «ՀՀ», № 32, 19 փետրվարի:
- 8. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված և հարակից շրջաններում, «ՀՀ», № 33, 20 փետրվարի:
- 9. Հայ մշակույթի հուշարձանները ազատագրված և հարակից շրջաններում, «ՀՀ», № 34, 21 փետրվարի:
- 10. Մեղմ ասած ազգին չէ...., «ՀՀ», № 34, 21 փետրվարի, էջ 5:
- 11. Հայկական ԽՍՀ-ում թրքության ամենածաղկուն շրջանի մասին, «ՀՀ», 13 մարտի:
- 12. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. իբրև նախաբան, «Երկրապահ», № 3, 20 մարտի, էջ 6:
- 13. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Ազայիշեն (Նորշեն), «Երկրապահ», № 4, 27 մարտի, էջ 6:
- 14. Համառոտ վերլուծություն 1970-80-ական թվականների ընթացքում Հայաստանի կառավարության վարած քաղաքականության կամ այն մասին, թե ինչ ասել է՝ անդեմ ու ապագգային, «ՀՀ», № 57, 25 մարտի:
- 15. Համառոտ վերլուծություն 1970-80-ական թվականների ընթացքում Հայաստանի կառավարության վարած քաղաքականության կամ այն մասին, թե ինչ ասել է՝ անդեմ ու ապագգային, «ՀՀ», № 58, 26 մարտի:
- 16. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Աղբուլաղ, «Երկրապահ», № 5, 3 ապրիլի, էջ 6:
- 17. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Ավանաշեն, «Երկրապահ», № 6, 10 ապրիլի, էջ 6:
- 18. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Բահլիան, «Երկրապահ», № 7, 17-23 ապրիլի, էջ 6:
- 19. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Բիլիստան, «Երկրապահ», № 8, 24-30 ապրիլի, էջ 6:
- 20. Հայկական եկեղեցիները Վրաստանում, «Հայոց աշխարհ», № 74, 24 ապրիլի, էջ 6:
- 21. Հայկական եկեղեցիները Վրաստանում, «Հայոց աշխարհ», № 75, 25 ապրիլի, էջ 7:
- 22. Հայկական եկեղեցիները Վրաստանում, «Հայոց աշխարհ», № 77, 29 ապրիլի, էջ 6:
- 23. Հայկական եկեղեցիները Վրաստանում, «Հայոց աշխարհ», № 88, 14 մայիսի:
- 24. Համահավաք ցուցակ Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների. Ջարիշատի գավառ, «ՀՀ», № 82, 29 ապրիլի:
- 25. Համահավաք ցուցակ Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների. Չըղրի գավառ, «ՀՀ», № 83, 30 ապրիլի:
- 26. Համահավաք ցուցակ Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների. Նախիջևանի գավառ, «ՀՀ», № 84, 1 մայիսի:
- 27. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Բոզավանդ, «Երկրապահ», № 9, 1-7 մայիսի, էջ 6:

- 28. Համահավաք ցուցակ Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների. Նախիջևանի գավառ, «ՀՀ», № 85, 2 մայիսի:
- 29. Համահավաք ցուցակ Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների. Նախիջևանի գավառ, «ՀՀ», № 86, 5 մայիսի:
- 30. Համահավաք ցուցակ Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների. Արդահանի գավառ, «ՀՀ», № 87, 6 մայիսի:
- 31. Համահավաք ցուցակ Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների. Կաղզվանի գավառ, «ՀՀ», № 89, 8 մայիսի:
- 32. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Գանձակ, «Երկրապահ», № 10, 8-14 մայիսի, էջ 6:
- 33. Համահավաք ցուցակ Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների. Կաղզվանի գավառ, «ՀՀ», № 90, 9 մայիսի:
- 34. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Գանձակ, «Երկրապահ», № 11, 15-21 մայիսի, էջ 6:
- 35. Համահավաք ցուցակ Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների. Բաշ-Շորագյալի գավառ, «ՀՀ», № 91, 12 մայիսի:
- 36. Համահավաք ցուցակ Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների. Բաշ-Շորագյալի գավառ, «ՀՀ», № 92, 13 մայիսի:
- 37. Համահավաք ցուցակ Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների. Բաշ-Շորագյալի գավառ, «ՀՀ», № 93, 14 մայիսի:
- 38. Համահավաք ցուցակ Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների. Գյուլի գավառ, «ՀՀ», № 94, 15 մայիսի:
- 39. Համահավաք ցուցակ Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների. Կարսի գավառ, «ՀՀ», № 95, 16 մայիսի:
- 40. Համահավաք ցուցակ Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների. Կարսի գավառ, «ՀՀ», № 96, 19 մայիսի:
- 41. Համահավաք ցուցակ Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների. Սարիղամիշի գավառ, «ՀՀ», № 97, 20 մայիսի:
- 42. Համահավաք ցուցակ Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների. Սարիղամիշի գավառ, «ՀՀ», № 98, 21 մայիսի:
- 43. Հյուսիսային Արցախ. հայության բաց վերքը, «Ազդակ», քաղաքի, էջ 38-40 և 190-192:
- 44. Համահավաք ցուցակ Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների. Կարս քաղաք, «ՀՀ», № 99, 22 մայիսի:
- 45. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Գիլք, «Երկրապահ», № 12, 22-28 մայիսի, էջ 6:
- 46. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Գիլք, «Երկրապահ», № 13, 29 մայիսի-3 հունիսի, էջ 6:
- 47. Համահավաք ցուցակ Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների. Ռուսական Բասեն, «ՀՀ», № 101, 26 մայիսի:
- 48. Համահավաք ցուցակ Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների. Մուրմալուի գավառ, «ՀՀ», № 102, 27 մայիսի:
- 49. Համահավաք ցուցակ Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների. Մուրմալուի գավառ, «ՀՀ», № 103, 28 մայիսի:
- 50. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Գիլք, «Երկրապահ», № 14, 4-10 հունիսի, էջ 6:
- 51. Որքան անտեղյակ, այնքան համարձակ, որքան տգետ, այնքան հանդուգ, «ՀՀ», № 110, 6 հունիսի:
- 52. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Դայմադաղու, «Երկրապահ», № 15, 11-17 հունիսի, էջ 6:
- 53. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Ջարիկարան, «Երկրապահ», № 16, 18-25 հունիսի, էջ 6:
- 54. Грузинские “патриоты” и вопиющие камни, “Голос Армени”, № 66, 18 июня, ст. 1, 3.
- 55. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Ջարիկարան, «Երկրապահ», № 17, 25 հունիսի-1 հուլիսի, էջ 6:
- 56. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Թուրիշեն, «Երկրապահ», № 18, 2-8 հուլիսի, էջ 6:
- 57. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Թուրիշեն, «Երկրապահ», № 19, 9-16 հուլիսի, էջ 6:

58. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Կարմախան (Խոյլի), «Երկրապահ», № 20, 16-22 հուլիսի, էջ 6:

59. Հայկական եկեղեցիները Վրաստանում. Ադիգենի շրջան, «ՀՀ», № 136, 14 հուլիսի:

60. Հայկական եկեղեցիները Վրաստանում. Ախալցխալայի շրջան, «ՀՀ», № 139, 17 հուլիսի:

61. Հայկական եկեղեցիները Վրաստանում. Ախալցխալայի շրջան, «ՀՀ», № 140, 18 հուլիսի:

62. Հայկական եկեղեցիները Վրաստանում. Ախալցխալայի շրջան, «ՀՀ», № 141, 21 հուլիսի:

63. Հայկական եկեղեցիները Վրաստանում. Ախալցխալայի շրջան, «ՀՀ», № 142, 22 հուլիսի:

64. Հայկական եկեղեցիները Վրաստանում. Ախալցխալայի շրջան, «ՀՀ», № 143, 23 հուլիսի:

65. Հայկական եկեղեցիները Վրաստանում. Ախալցխալայի շրջան, «ՀՀ», № 144, 24 հուլիսի:

66. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Խոշավատ և Կուզբան, «Երկրապահ», № 21, 23-29 հուլիսի, էջ 6:

67. Հայկական եկեղեցիները Վրաստանում. Ախալցխալայի շրջան, «ՀՀ», № 145, 25 հուլիսի:

68. Հայկական եկեղեցիները Վրաստանում. Ախալցխալայի շրջան, «ՀՀ», № 146, 28 հուլիսի:

69. Հայկական եկեղեցիները Վրաստանում. Ախալցխալայի շրջան, «ՀՀ», № 147, 29 հուլիսի:

70. Հայկական եկեղեցիները Վրաստանում. Ախմետայի և Ասպինձայի շրջաններ, «ՀՀ», № 148, 30 հուլիսի:

71. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Ղալակա, «Երկրապահ», № 22, 30 հուլիսի-5 օգոստոսի, էջ 6:

72. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Ղալակա, «Երկրապահ», № 23, 6-12 օգոստոսի, էջ 6:

73. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Ղալակա, «Երկրապահ», № 24, 13-19 օգոստոսի, էջ 6:

74. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Ղալակա, «Երկրապահ», № 25, 20-26 օգոստոսի, էջ 6:

75. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Ղալակա, «Երկրապահ», № 26, 27 օգոստոսի-2 սեպտեմբերի, էջ 6:

76. Գրախոսություն «Իլիվան հայ վիճակագրության», պրակ 7, Ուկրաինա-Սովետական, «ԳԲՀ», № 1-2, էջ 263-266:

77. Սի դասավորության պատասխան (շարադրված RAA անդամների հեղինակությամբ), «ՀՀ», № 178, 10 սեպտեմբերի, էջ 7:

78. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Նորչեն, «Երկրապահ», № 28, 10-16 սեպտեմբերի, էջ 6:

79. Հայկական եկեղեցիները Վրաստանում. Բոլնիսի շրջան, «ՀՀ», № 179, 11 սեպտեմբերի:

80. Հայկական եկեղեցիները Վրաստանում. Բոլնիսի շրջան, «ՀՀ», № 180, 12 սեպտեմբերի:

81. Հայկական եկեղեցիները Վրաստանում. Բոլնիսի շրջան, «ՀՀ», № 181, 15 սեպտեմբերի:

82. Հայկական եկեղեցիները Վրաստանում. Բոլնիսի շրջան, «ՀՀ», № 182, 16 սեպտեմբերի:

83. Հայկական եկեղեցիները Վրաստանում. Բոլնիսի շրջան, «ՀՀ», № 183, 17 սեպտեմբերի:

84. Հայկական եկեղեցիները Վրաստանում. Բորժոմի շրջան, «ՀՀ», № 184, 18 սեպտեմբերի:

85. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Շուքուրչի, «Երկրապահ», № 29, 17 նոյեմբերի-2 դեկտեմբերի, էջ 6:

86. Իսմայիլի շրջանի պատմական հուշարձանները. Շուքուրչի, «Երկրապահ», № 30, 4-22 դեկտեմբերի, էջ 6:

1999 թ.

1. Հայերն ու Սցխերն տաճարը, «Հայոց աշխարհ», № 101, 2 հունիսի, էջ 12:

2. Բոլանիներն Արցախում, «Իրան-Նաստ», № 32-34, էջ 31-32:

2002 թ.

1. Մշակութային եղանակի հերթական գոհը. Թբիլիսիի Սր. Նշան եկեղեցին, «Ռազմիկ», № 20-25, յուլիս-նոյեմբեր, էջ 14-15:

2. Очередная жертва геноцида культуры, «Голос Армении», № 121, 5 ноября.

3. «Ռուկասյան» կրոնապատմական թանգարան. 1902-2002. 100-ամյա տարելիցի առթիվ, «ՀՀ», № 236, 27 դեկտեմբերի, էջ 5:

2003 թ.

1. Ոչնչացվել է Ջուղայի հայոց գերեզմանատունը, «ՀՀ», № 2, 9 հունվարի, էջ 5:

2. Ոչնչացվել է Ջուղայի հայոց գերեզմանատունը, «ՀՀ», № 6, 15 հունվարի, էջ 5 (ռուսերենը՝ «Голос Армении», № 5, 25 января).

3. Света играет короля. Играет нагло, «Новое Время», № 928, 3 марта.

4. Армяне в Душети, «Голос Армении», № 88, 5 августа.

5. Сейчас на вершине Гага, «Голос Армении», № 93, 16 августа.

6. Հայոց լեզուն երեկ եւ այսօր, «Ազդակ», № 233, 16 դեկտեմբերի, էջ 4, 10:

2006 թ.

1. Չեր դոկտոր, պրոֆեսոր աստի՛..., «Հայոց աշխարհ», № 8, 8 փետրվարի:

2. Մենք կորցնում ենք, որովհետեւ տեր չենք, «Ալիք», № 265, 14 դեկտեմբերի, էջ 1, 3:

3. Հայկական պատմական յուշարձանների ներկայ վիճակը Թուրքիայում եւ Ադրբեջանում, «Ալիք», էջ 106-108:

2007 թ.

1. Որքանո՞վ են հայկական «ժայկական տեսքերը», «Հայոց աշխարհ», № 58, 30 մարտի:

2008 թ.

1. «Հարգանքի» տուրք մահվան 100-ամյակին, «Հայոց աշխարհ», № 220, 19 նոյեմբերի, էջ 7:

2. Երկու հարց վեհափառին, «Հայոց աշխարհ», № 233, 6 դեկտեմբերի, էջ 7:

3. Շողակն Արարատյանին հայտնի չէ Սանահին վանքի տեղը..., «Հայոց աշխարհ», № 240, 17 դեկտեմբերի, էջ 6:

4. Հայաստանի հայ քաղկեդոնական պաշտամունքային կառույցները և վրացական նորահնար «պահանջատիրությունը», «Երկիր», № 71, 19 դեկտեմբերի, էջ 7:

2009 թ.

1. Եղորոս և ուսուցչիս հիշատակին, «Գիտություն», № 2, փետրվար, էջ 8:

2. Արարիկներ և քուրիկներ Համշենի դավալին ձեռք կտրեցավ, «Հայոց աշխարհ», № 87, 12 մայիսի, էջ 7:

3. Հայաստանի Հանրապետությունը պետք է ճանաչի Արևմտյան Հայաստանը, «Հայոց աշխարհ», № 81, 1 մայիսի, էջ 6 (համահեղինակ՝ Արրահամյան Ա.):

2010 թ.

1. Մենք մեր գլխին..., «Հայոց աշխարհ», № 96, 26 մայիսի, էջ 6:

2. Իրականում ո՞վ է «Ալլահի գործակալը». երբ թևածում են տգիտությունն ու անբարոյակամությունը, «Հայոց աշխարհ», № 173, 29 սեպտեմբերի, էջ 6:

3. Հայկական հուշարձանների վիճակը Արևմտյան Հայաստանում, «Վարձք», № 2, հուլիս-նոյեմբեր, էջ 2-64:

2011 թ.

1. Հայկական հուշարձանների վիճակը Ադրբեջանում, «Վարձք», № 3, դեկտեմբեր, 2010-ապրիլ, 2011, էջ 2-64:

2. Պատասխան «դավազրգիտ» բարբառաբանի հեղինակին, «Իրատես de facto», № 20, 25-28 մարտի, էջ 6:

3. Ծառաբարի վանքը, «Վարձք», № 4, մայիս-հոկտեմբեր, էջ 29-47:

4. Գանձասարի շրջապարսպի երեսպատման և հարակից հարցերի մասին, «Հայոց աշխարհ», № 160, 7 սեպտեմբերի, էջ 5; № 161, 8 սեպտեմբերի, էջ 5; № 162, 9 սեպտեմբերի, էջ 5:

2012 թ.

1. Օսմանյան կայսրության «անմեղ» հրդեհները, «Վարձք», № 5, հունվար-մարտ, էջ 11-14:
2. Ջարեհավանի (Գերիկի) Սբ. Աստվածամոր վանքը, «Վարձք», № 5, հունվար-մարտ, էջ 33-42:
3. Հուշարձանների աղճատման երևույթները մեր օրերում, «Վարձք», № 5, հունվար-մարտ, էջ 60-64:
4. Նոր տվյալներ Խաթրավանքի հիմնադրման և շինարարական ընթացքի մասին, «Վարձք», № 7, հուլիս-սեպտեմբեր, էջ 13-20:
5. Ազուլիսի երկրորդ եղեռնը, «Վարձք», № 7, հուլիս-սեպտեմբեր, էջ 22-27:
6. Մյենը և նրա հուշարձանները, «Վարձք», № 7, հուլիս-սեպտեմբեր, էջ 31-63:

2013 թ.

1. Գրախոսություն և քննադատություն, «Վարձք», № 8, էջ 45-64:
2. Եղեռնի հուշարձաններն Արևմտյան Հայաստանում, «Վարձք», № 9, էջ 12-15:
3. Բազմալի վանքի արձանագրությունները, «Վարձք», № 9, էջ 16-37:
4. Տեղերի վանքը, «Վարձք», № 10, էջ 1-31:

2016 թ.

1. Անցանկալի անձ Վրաստանի համար, ինչո՞ւ, «Վարձք», № 11, էջ 1-2:
2. Մյենի արքայական հրամանագրերը, «Վարձք», № 11, էջ 67-70:
3. Թրին վանքը, «Վարձք», № 12, էջ 12-18:

Քարտեզներ

1. Արցախ. ազգաբաշխական քարտեզ. 1:200.000, Փարիզ, 1990:
2. Artsakh (Karabagh). carte de la repartition ethnique, 1: 200.000, Paris, 1990.
3. Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանների քարտեզ, *Երևան, 1991:*
4. Բուն Աղվանքի պատմական հուշարձանների քարտեզ, *Երևան, 1991:*
5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քարտեզ, *Երևան, 1992:*
6. Нагорно-Карабахская республика, *Երևան, 1992:*

7. Republic of Mountainous Gharabagh, *Երևան, 1992:*
8. Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետություններ. վարչական քարտեզ, 1:600000, *Երևան, 1992:*
9. Արցախի քարտեզ, «Ազատամարտ», 1992, № 1, 1 յունվարի, էջ 14:
10. Արցախի քարտեզ, «Ազատամարտ», 1992, № 11, մարտ, էջ 16:
11. Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետություններ. վարչական քարտեզ, «Ազատամարտ», 1992, № 14, 3-9 ապրիլի, էջ 8-9:
12. Շուշիի ազատագրման գործողությունների սխեմատիկ քարտեզ, «Երկիր», 1992, № 88, 12 մայիսի, էջ 8:
13. Արցախի քարտեզ, «Ազատամարտ», 1992, № 24, մայիս, էջ 16:
14. Կարսի մարզ. ազգաբաշխական քարտեզ. 1914 թ., *Երևան, 1992:*
15. Արցախի քարտեզ, «Ազատամարտ», 1993, № 8, 26 փետրվարի-4 մարտի, էջ 16:
16. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն և ազատագրված շրջաններ (քարտեզ), *Երևան, 1995:*
17. ՀՀ (վարչական քարտեզ), *Երևան, 1995:*
18. Հայկական եկեղեցիները Վրաստանում. ցուցակ և քարտեզ (բովկետ), *Երևան, 1995:*
19. Գարդմանք (ազգաբաշխական քարտեզ), «Գարդմանք», 1996, № 1, էջ 3-4:
20. Ջավախքի պատմական հուշարձանները, *Բեյրութ, 2002:*
21. Ազատ, Անկախ եւ միացեալ Հայաստան (*համահեղինակ՝ Ս. Գասարեան*), *Բեյրութ, 2004:*
22. Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները, *Բեյրութ, 2004:*
23. Լեռնային Ղարաբաղի (Արցախ) Հանրապետություն, *Բեյրութ, 2006:*
24. Տպարանները Հայոց Հայրենիքում, 1771-1920 (նվիրվում է Հայ տպագրության 500-ամյակին, 1512-2012), *Երևան, 2012:*
25. Հայաստանի Հանրապետություն. Լոռու մարզ. Պատմական հուշարձանների քարտեզ-ուղեցույց, *Երևան, 2013:*
26. Հայաստանի Հանրապետություն. Տավուշի մարզ. Պատմական հուշարձանների քարտեզ-ուղեցույց, *Երևան, 2013:*
27. Հայաստանի Հանրապետություն. Գեղարքունիքի մարզ. Պատմական հուշարձանների քարտեզ-ուղեցույց, *Երևան, 2015:*
28. Հայաստանի Հանրապետություն. Կոտայքի մարզ. Պատմական հուշարձանների քարտեզ-ուղեցույց, *Երևան, 2015:*
29. Հայաստանի Հանրապետություն. Սյունիքի մարզ. Պատմական հուշարձանների քարտեզ-ուղեցույց, *Երևան, 2017:*

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ և ՇՔԱՆՇԱՆՆԵՐ

2001 թ. պարգևատրվել է ԼՂՀ կառավարության «Մերոպ Մաշտոց» շքանշանով՝ Ազգային կենսագործունեության և բարգավաճման առաջընթացին նպաստող ակնառու նվաճումների համար:

2003 թ. արժանացել է Արամ Ա-ի օրհնության և գնահատանքի գրի:

2003 թ. ԱՄՆ Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության վարչության կողմից պարգևատրվել է հայկական ճարտարապետական կոթողների ուսումնասիրության և պահպանման բնագավառում բազմամյա և բեղուն գործունեության համար:

2004 թ. «Հյուսիսային Արցախ» աշխատությունն արժանացել է ԼՂՀ կառավարության Եղիշեի անվան ամենամյա գրական մրցանակի:

2004 թ. Պուրճ Համուտի Հայ կաթողիկե Մերուպեան Արուեստից վարժարանի կողմից արժանացել է գնահատանքի և երախտագիտության գրի:

2006 թ. Հումանիտար գիտությունների զարգացման բնագավառում «Կովկասյան թանգարանի հայկական հավաքածուն», «Հայերը Կախեթում» և «Ջավախք» աշխատություններն արժանացել են ՀՀ Նախագահի մրցանակի:

2008 թ. Պատմական Հայաստանի տարածքում կատարած ծավալուն ուսումնասիրությունների և հայ ինքնության պահպանության գործում ունեցած քաջառիկ ծառայության համար պարգևատրվել է ՀՀ Ազգային ժողովի պատվո մեդալով:

2008 թ. Պատմական հուշարձանների հնավայրերի ուսումնասիրման և վերականգնման գործում ունեցած զգալի ավանդի համար արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության պատվոգրի:

2010 թ. պարգևատրվել է ՀՀ պաշտպանության նախարարության «Իրաստանատ Կանայան» մեդալով:

2012 թ. պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով՝ Հուշարձանների պահպանության ոլորտում ունեցած նշանակալի ավանդի, մշակույթի բնագավառում երկարամյա, անբասիր աշխատանքային գործունեության համար:

2012 թ. Ալպինիզմի և լեռնային տուրիզմի հայկական ֆեդերացիայի կողմից արժանացել է դիպլոմի՝ Հայկական հուշարձանների պահպանման ազգանվեր գործի համար:

2013 թ. Գյումրիում Խոսքի ազատության օրվա շրջանակներում արժանացել է պատվոգրի՝ քաղաքացիական ակտիվ դիրքորոշման և հրապարակախոսության համար:

2014 թ. արժանացել է «Վահագն» ռազմահայրենասիրական, բարեգործական, հասարակական կազմակերպության պատվոգրի՝ Ազգային և հայրենանվեր գործունեության համար, շնորհվել է «Հայրենիքի ձայն» տիտղոսակոշում, ինչպես նաև պարգևատրվել «Վահագնի» հուշարձանիկով:

2015 թ. «Հայկյան» մրցանակաբաշխության ժամանակ շնորհվել է Հատուկ մրցանակ՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների շրջանակներում իրականացված «Եղեռն՝ եղեռնից հետո» ծրագրի համար:



Սամվել Կարապետյանը ԳԳ քաղաքաշինության նախարար Ն. Սարգսյանից ստանում է «Մոմիկ ճարտարապետ» ոսկե մեդալը

2015 թ. դեկտեմբերին ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանի խորհրդական Մաջիդ Մեշքիի կողմից արժանացել է շնորհակալագրի՝ նույն տարվա հոկտեմբերին Երևանի Հովհ. Թումանյանի թանգարանում բացված ցուցահանդեսը լավագույնս կազմակերպելու և ներկայացնելու համար:

2015 թ. Երևանի քաղաքապետարանի կողմից արժանացել է շնորհակալագրի՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներին ունեցած ակտիվ մասնակցության և այդ գործում դրսևորած պատրաստակամության համար:

2016 թ. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կողմից պարգևատրվել է «Մոմիկ ճարտարապետ» ոսկե մեդալով՝ Հայկական ճարտարապետության ուսումնասիրության և հանրահռչակման գործում ներդրած նշանակալի ավանդի համար:

2016 թ. «Տիր-Ար» ընկերության կողմից արժանացել է շնորհակալագրի՝ արդյունավետ համագործակցության համար :

2017 թ. Հայկական աշխարհագրական նախագծի կողմից Արշավային մշակույթի զարգացման գործում մեծ ավանդ ունենալու համար արժանացել է «Անվերջ բացահայտվող Հայաստան» շնորհակալագրի:

2017 թ. արժեհամակարգային «Վերելք» կառույցի կողմից շնորհվել է Հայկ Ասատրյանի անվան ամենամյա մրցանակը՝ Ազգային ինքնաճանաչողության և ազգային ինքնակազմակերպման ասպարեզում նշանակալի աշխատանքներ կատարելու համար:

2018 թ. Հայկական աշխարհագրական նախագծին աջակցելու և ակտիվ մասնակցության համար արժանացել է «Ռանչպարների կանչը» շնորհակալագրի:

2018 թ. «Արարե» հայագիտական հիմնադրամի կողմից հայանպաստ գործունեության համար արժանացել է շնորհակալագրի:

2019 թ. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կողմից արժանացել է շնորհակալագրի՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի՝ 2018-2019 ուստարվա գործունեությանը մեծապես աջակցելու համար:

ՀՈՒՇԱՐՁԱՆԱԳԵՏ ՍԱՄԿԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հուշարձանագետ... այս բառը հնարավոր չէ գտնել բառարաններում... Այս բառն իր տասնամյա պատմության ընթացքում ստեղծվել և գործածվել է՝ բնութագրելու ընդամենը մեկ մարդու մաքառումը: Եվ եթե մի օր այն իր արժանի տեղը գտնի բառարաններում, ապա բացատրության մասում կգրվի ՍԱՄԿԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ:

Նա հիմնադիրն է մի գործելաոճի, որի կորիզն է կազմում դաշտային աշխատանքը՝ թիզ առ թիզ անցնել Հայրենի բնօրրանի կածաններով, գտնել, ուսումնասիրել, հանրայնացնել և հայագիտությանը նվիրել երբևէ չուսումնասիրվածը: Բոլոր աշխատությունների հիմքում խարսխելով այս ոճը՝ այն ամրակայեց արխիվային և բազմաթիվ այլ նյութերով և տասնապատկեց դրանց արժեքը:

Նա առաջին հետազոտողն է բազմաթիվ գյուղերի, գյուղատեղիների և հանդամասերի, առաջին լուսանկարիչն է, չափագրողը, հայտնաբերողն ու տեղորոշողն անթիվ հուշարձանների, առաջին ընթերցողն ու հրատարակիչը հազարավոր վիմագրերի: Անձնուրաց աշխատանքի շնորհիվ ամբարած վիթխարի նյութի, ցավոք, ընդամենը մի չնչին (սովորական մահկանացուներիս համար՝ հսկայական) մասնիկը Նա հասցրեց մշակել և հրատարակել:

Ստորև ներկայացնում ենք Սամվել Կարապետյանի դաշտային ուսումնասիրությունների համառոտ ժամանակագրությունը.


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. 1978-2019 թթ. ընթացքում Ս. Կարապետյանը լուսանկարել է մոտ 22000 կադր և չափագրել ավելի քան 50 հուշարձան: Եզակի են ուսումնասիրությունները Խոսրովի արգելոցում. վկայագրել է հարյուրավոր հուշարձաններ և 2004 թ. հրատարակության պատրաստել, ցավոք, դեռևս անտիպ «Խոսրովի արգելոց, ուղեցույց» երթուղիներով հարուստ գիրքը:



1. Ցարդ հայտնի ամենահին թվագրությամբ խաչքարը, որը հայտնաբերել է Խոսրովի արգելոցի Զորթուն գյուղատեղիի տարածքում. 2. Արմոց գյուղատեղիի 1348 թ. խաչքարը, որ հայտնաբերել և արձանագրությունն ընթերցելով՝ պարզել է գյուղատեղիի՝ ԺԹ դարից շրջանառվող Արմիկ անվանման նախնական՝ Արմոց տարբերակը. 3. Առաջել Դավրիժեցու հիշատակած Յախշխան այր բնակավայրը, որի տեղադրությունը պարզել է 1979-1980 թթ. 4. Յախշխան այր բնակավայրի քառախորան եկեղեցու առաջին չափագրությունը 1981 թ.


ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. 1978-2018 թթ. ընթացքում Ս. Կարապետյանը լուսանկարել է մոտ 24000 կադր և չափագրել ավելի քան 200 հուշարձան:

Ազատագրված Հայրենիքի կաժաններով անցած առաջին հետազոտողն է, կատարած աշխատանքի ծավալների առումով՝ ցարդ միակը: Նշված տարածքներում հայտնաբերել է և հանրայնացրել հայկական բազմաթիվ հուշարձաններ և նպաստել գրավյալ տարածքներ բառակապակցության փոխարինմանը ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐ եզրույթով:





1. Քարվաճառի Եղեգնուտ գյուղի եկեղեցին (լուս.՝ 1993 թ.). 2. Քաշաթաղի Ղարաղշլաղ գյուղի վիմափոր եկեղեցին (լուս.՝ 1994 թ.). 3. Քաշաթաղի Քաշարաթ գյուղի եկեղեցին (լուս.՝ 1994 թ.). 4. Դաղի վանքի Կաթողիկե եկեղեցու արևմտյան և արևելյան ճակատները (չափ.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.). 5. Խաչքար Քաշաթաղի Արցո գյուղի մոտ (լուս.՝ 1994 թ.). 6. Խաչքար (916 թ.) Քարվաճառում (լուս.՝ 1994 թ.). 7. Խաչքար Քարվաճառի Չափնի գյուղի մոտ (լուս.՝ 1993 թ.)

Սկսած 1978 թ.-ից՝ Մամվել Կարապետյանը հսկայական աշխատանքներ է իրականացրել Արցախի Մարտակերտի, Ասկերանի, Մարտունու, Հաղրուփի և Շուշիի շրջաններում: Ուսումնասիրել է ոչ միայն գյուղերում կան դրանց հանդամասերում գտնվող, այլև բնակավայրերից հեռու՝ խոր անտառներում պահպանված և երբևէ չուսումնասիրված հուշարձանները՝ խաչքար, գերեզմանոց, կամուրջ, մատուռ, եկեղեցի, վանք, բերդ: Զուգահեռաբար տեղաբնակներից հավաքել է ավելի քան 6000 մանրատեղանուն (2000-ը՝ Հյուսիսային Արցախից): 2003 թ.-ից հրատարակության պատրաստ «Արցախի մանրատեղանուններ» վերնագրով հսկայածավալ աշխատությունը, ցավոք, դեռևս անտիպ է:




1. Խրվանդա եղջի (Ասկերան, Բաղարա գյուղ, 1980-ական թթ.). 2. Կոշիկ անապատ (Մարտակերտ, Քոլատակ գյուղ, 1990-ական թթ.). 3. Կիչանի անապատ (Մարտակերտ, Կիչան, 1990-ական թթ.). 4. Գտիչ վանքի հատակագիծը (Դաղրուփ, Տող գյուղ, չափ.՝ 1980-ական թթ.). 5. Ամենափրկիչ վանք (Մարտակերտ, Պողոսագոմեր, 1980-ական թթ.). 6. Վաղմիջնադարյան խոյակի բեկոր եղցուն յալ տեղամասում (Մարտակերտ, Կուսապատ, 1999 թ.). 7. Վրդանա գոմերի վանք (Մարտակերտ, Խունկուբալա, 1980-ական թթ.)

ԲՈՆԱԶԱՎԹՎԱԾ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՐՅԱՆ (այդ թվում՝ նաև Շահումյանի շրջանը). 1980-1989 թթ. ընթացքում Ս. Կարապետյանը լուսանկարել է մոտ 5000 կադր և չափագրել մոտ 80 հուշարձան: Կանխատեսելով հայկական հուշարձաններին սպառնացող վտանգը՝ կարողացել է «գոմե թոթի վրա փրկել» Ադրբեջանի պետական ամենաբարձր մակարդակով ոչնչացվող մախնյաց հիշատակները:





1. Գանձակ քաղաքի Սբ. Գովհաննես եկեղեցու շինարարական (1633 թ.) արձանագրությունները 1985 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի) և միտումնավոր քերվելուց հետո՝ 2007 թ. (լուս.՝ Ֆ. Բերլենճոնի). 2. Հիմ Աբլաի գյուղատեղիի Սբ. Սիմաս եկեղեցին՝ այժմ հիմնահատակ ոչնչացված (լուս.՝ 1986 թ.). 3. Խաչակապ գյուղի Թարգմանչաց վանքի հատակագիծը, վանքն այժմ փլուզման եզրին է (չափ.՝ 1986 թ.). 4. Գազա Սբ. Սարգիս վանքը և այժմ ոչնչացված 1838 թ. նորոգության արձանագրությունը (լուս.՝ 1985 թ.)

ԲՈՒՆ ԱՂՎԱՆՔ. 1984-1987 թթ. ընթացքում Ս. Կարապետյանը լուսանկարել է մոտ 2000 կադր, չափագրել ավելի քան 60 ճարտարապետական կոթող և հաշվառել մոտ 3400 հայկական հուշարձան: Նա Կուրի ձախ ափին գտնվող հայկական հուշարձանների համակողմանի ուսումնասիրության ռահվիրան է, Բուն Աղվանք երկրամասի խաչքարերի առաջին հետազոտողն ու նրանց գեղարվեստական, ոճական և գրչագրական առանձնահատկությունների բացահայտողը:



1. Վարդաշենի շրջանի Մեծ Սոկուբու գյուղի հայկական գերեզմանոցը (լուս.՝ 1986 թ.)
2. Շաքիի շրջանի Պարտեզ (Բիդեիզ) գյուղի Գեղարդավանքը (լուս.՝ 1986 թ.)
3. Կախիի շրջանի Լեքիս գյուղի զվարթնոցատիպ եկեղեցու հատակագիծը (չափ.՝ 1986 թ.)
- 4-6. Խաչքարեր Իսմայիլիի շրջանի Վանք գյուղի «Ավերակ վանք» գյուղատեղիի գերեզմանոցում (լուս.՝ 1985 թ.)

ՎՐԱՍՏԱՆ. 1988-2015 թթ. ընթացքում Ս. Կարապետյանը լուսանկարել է մոտ 20000 կադր և չափագրել ավելի քան 130 հուշարձան: 1989 թ.-ից ականատեսն է եղել հայկական հուշարձանների նկատմամբ Վրաստանի իշխանությունների՝ ընդգծված խտրական և անհանդուրժող վերաբերմունքի: Անձնուրաց աշխատանքի շնորհիվ հասցրել է ուսումնասիրել (լուսանկարել, չափագրել, վերծանել) հետազայում ոչնչացված կամ ձևափոխելով յուրացված հայկական պաշտամունքային բազմաթիվ կառույցներ, անհետացված գերեզմանոցներ, միջնադարյան խաչքարեր, հարյուրավոր վիմագրեր և մեծաթիվ որմնանկարներ:



1. Տփղիսի Բեթղեհեմի Սբ. Աստվածածին եկեղեցու սբ. սեղանը և բեմը մինչև քանդելը և քանդման ընթացքում. 2. Նույն եկեղեցու գմբեթի միջի հին որմնանկարները մինչև քերելը և հետո կատարված նոր նկարչությունը. 3. Նույն եկեղեցու արևմտյան ճակատին ագուցված 1718 թ. խաչքարը մինչև անհետացումը և դրանից հետո. 4. Տփղիսի Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցու գմբեթը 1650 թ. վերակառուցած նորոշուրայեցի խոջաներից հիշատակ մնացած խաչքարը մինչև անհետացումը և դրանից հետո. 5. Քարելի շրջանի Դիրբ գյուղի հայկական եկեղեցու արևելյան ճակատին ագուցված 1456 թ. խաչքարը մինչև անհետացումը և դրանից հետո. 6. Գրեմ քաղաքատեղիի հայոց եկեղեցիներից մեկի արևմտյան ճակատին ագուցված ԺՁ դարի խաչքարերը մինչև ցեմենտով սվաղելը և դրանից հետո (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի)

Վրաստանում օրավուր ծավալվող վանդալական գործողությունները մերկացնելու նպատակով հրատարակել է աշխատություններ, բազմաթիվ հոդվածներ, ստեղծել վավերագրական ֆիլմեր, որի հետևանքով 2015 թ. վրացական իշխանությունների կողմից հայտարարվել է անցանկալի անձ, և արգելվել է նրա մուտքը Վրաստան:

Թուրքիայի կողմից բռնագավթված ԱՐԵՎՍՏՅԱՆ և ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ. 2004-2019 թթ. Ս. Կարապետյանի ղեկավարությամբ (մինչև 2008 թ.՝ նաև Ա. Հախնազարյանի) մեկը մյուսին հաջորդող գիտարշավների ընթացքում մանրամասն ուսումնասիրվել է մոտ 1800 բնակավայր, լուսանկարվել մոտ 80000 (63500-ը՝ Ս. Կ.-ի կողմից) կադր և չափագրվել հարյուրավոր հուշարձաններ:

Այսպիսով՝ մինչև համաշխարհային մշակութային ժառանգությունից վերջնականապես կանհետանային հայկական հուշարձանները, հայտնաբերվեցին գրականության մեջ երբևէ չհիշատակված բազմաթիվ հուշարձաններ, տեղորոշվեցին միայն սկզբնաղբյուրներից հայտնի եկեղեցիներ, վանքեր, բերդեր և բնակավայրեր, ինչպես նաև փաստագրվեցին իրարահաջորդ թուրքական իշխանությունների՝ տասնամյակներ իրականացրած վանդալական քաղաքականության արդյունքները:



1. Թրին վանքը (լուս.՝ 2014 թ.). 2. Սբ. Խաչ եկեղեցին համանուն լեռան գագաթին՝ ճ.մ. 2901 մ (լուս.՝ 2006 թ.). 3. Արտագերս կամ Կապույտ բերդը (լուս.՝ 2007 թ.)

ԻՐԱՆ. 2009-2018 թթ. ընթացքում Ս. Կարապետյանը լուսանկարել է մոտ 33000 կադր: Նրա ղեկավարած արշավախումբը գյուղ առ գյուղ ուսումնասիրել է Ուրմիա, Սալմաստ, Խոյ և Պարսպատունիք (Ղարաղաղ) գավառները, ինչպես նաև Իրանի գաղթօջախների հիմնական մասը՝ Փերիա, Չարմահալ, Բուրվարի, Ղարաղան, Գյախլա, Քյամարա, Քյազագ և այլն:







1. Ղարաղաղի Ավարսիմ բերդը (լուս.՝ 2018 թ.). 2. Խոյի Ֆինա գյուղի եկեղեցին (լուս.՝ 2011 թ.). 3. Դերիկի վանքը (լուս.՝ 2011 թ.). 4. Հատված Նոր Զուղայի հայոց գերեզմանոցից, որտեղ 45-օրյա աշխատանքից հետո հաշվառվել է մոտ 10000 (միայն ժե-ժԸ դր.՝ 6500 միավոր) տապանաքար (լուս.՝ 2010 թ.). 5. Փերիա գավառի Վերին Խոյգան գյուղի Սբ. Հովհաննես եկեղեցին (լուս.՝ 2010 թ.)

ՀՆԳԿԱՍՏԱՆ. կարևորելով պատմական գաղթօջախների ուսումնասիրության աշխատանքները՝ Ս. Կարապետյանի գլխավորությամբ ՀՃՈՒ հիմնադրամի արշավախումբը, 2011 թ. Հնդկաստանում աշխատելով 21 օր, չափագրել է Դելի, Ագրա, Գվալիոր, Կալկաթա, Տինգրա, Մեյդաբադ, Չինսուրա, Մադրաս, Բոմբեյ և Սուրաթ քաղաքների հայկական եկեղեցիները և լուսանկարել գերեզմանոցների բոլոր տապանաքարերը (մոտ 4400 կադր)։



1. Մեյդաբադ քաղաքի Սբ. Աստվածածին եկեղեցին. 2. Չինսուրա քաղաքի Սբ. Դովհաննես եկեղեցին. 3. Սուրաթ քաղաքի եկեղեցին. 4. Ագրա քաղաքի գերեզմանոցը. 5. Գվալիոր քաղաքի գերեզմանոցը (բոլոր լուսանկարները՝ Ս. Կարապետյանի)

Հայ իրականության մեջ գրչագրական առանձին դպրոց կարելի է համարել Ս. Կարապետյանի գրչանկար անելու ոճն ու սկզբունքները՝ մանրակրկիտ ներկայացնել տառերի փորագրական, գրչագրական և գեղագրական առանձնահատկությունները և ոչ թե կեղծ գրչանկարներով մատուցել վիճագրերի միօրինակ և նույնաձև արտագրությունները: Ընդունված գիտական տարրերակից շատ ավելի ժամանակատար այս աշխատելատեղով 1979-2019 թթ. ընթացքում նա ստեղծել է ավելի քան 1800 գրչանկար: Հիմք ընդունելով այն, որ այս հմտություններն ինչ-որ չափով փոխանցել է նաև ՀՃՈՒ հիմնադրամի մի քանի աշխատակիցների, Երևանյան գրասենյակի վարչական կառույցի նիստում (03.06.2020) Ս. Կարապետյանի ստեղծած դպրոցն անվանվեց նրա պատվին՝ ՀՃՈՒ հիմնադրամի Սամվել Կարապետյանի անվան գրչագրական դպրոց:



1. Գաղտնագրով խաչքար. Ռշտունիք, Շատվան գյուղ (գրչ.: 2009 թ.). 2. Տոհմախաչեր. Շատախ, Ծուղ գյուղ (գրչ.: 2006 թ.). 3. Աճիի Սբ. Փրկիչ եկեղեցու արձանագրություններից (գրչ.: 2019 թ.). 4. Բճիճորի Մեծ վանքի շինարարական արձանագրությունը. Մառնեուլ, Մեծ Շուլավեր գյուղ (գրչ.: 2017 թ.). 5. Դադի վանքի Կաթողիկե եկեղեցու հարավային ճակատի արձանագրությունները (գրչ.: 1998 թ.). 6. Աճիի Սբ. Առաքելոց եկեղեցու արձանագրություններից (գրչ.: 2019 թ.)

ՀՈՒՇԵՐ

Սամվելին լսելը խիստ հետաքրքիր էր և ուսանելի, հատկապես՝ ճամփորդական արկածները: Այն- քան տպավորիչ էր պատմում, որ համակ ուշադրությամբ լսում էիր՝ փորձելով բաց չթողնել ոչ մի բառ: Պատմությունները գրեթե միշտ համեմուն էր հումորով, ավելի հաճախ՝ պատմական տվյալներով, իսկ այդ բոլորն ավարտում էր խորհմաստ և մտորելու տեղիք տվող մտքերով:

Նրա անհատակ հուշերից մի քանիսն իր իսկ ցանկությամբ պահ տվեցինք սոսկ մեր մտքում, որոշ հուշեր չցանկացավ այդպես էլ երբևէ պատմել (հատկապես Ադրբեջանի ազգային անվտանգության նկուղներում «անցկացրած» օրերի մասին), բայց որոշել էր մի օր անպայման գրի առնել: Դրանք այսօր, ավա՛ղ, մնացին սոսկ վերնագրեր՝ Չերքակալություն Ռուշանաշենում, Քննություն Կուտկաշենի ՊԱԿ-ի վարչությունում, Մեկ շաբաթ Կախի ՊԱԿ-ի մեկուսարանում, Չերքակալությունից մազապուրծ, Չերքակալություն Լեքիսում և այլն:

Ստորև ներկայացնում ենք մի շարք հուշեր՝ ներծծված հույզերի և ապրումների տարբեր երանգավորումներով, որոնք ամբողջացնում են Սամվել Կարապետյան Մեծ հայի նվիրական և վեհ կերպարը:



Սամվել Կարապետյանին կլանված լսում են ՀՅԴԻ հիմնադրամի հոգաբարձության խորհրդի անդամները՝ Մարգրիթ Հախնազարյանը (երջանակա- հիշատակ Արմեն Հախնազարյանի կինը), Ռուբեն Գալչյանը և Ժորա Մանուչարյանը Բյուրականի անտառներում (լուս.՝ Ա. Հակոբյանի, 2012 թ.)

ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆ

Կուպեկ-կուպեկ հավաքում, արշավի էինք գնում

Դեռ դպրոցական տարիներից եմ արշավներ կազմակերպելու գործը սիրել և հաջողությամբ կատարել: Հայկական տուրիզմին վերաբերող Հարություն Երանոսյանի գիրքն էր ընկել ձեռքս, որը մի տեսակ ուղղորդող նշանակություն ու- ներ ինձ համար: Այդ շրջանում Գանիել Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզոն» էի կարդացել և այնքան էի տարված, որ համա- դասարանցիներից մի քանիսին հավաքում էի, դասից փախչում էինք և գնում այգի (կիիշե՞ք, «Պրագա» հյուրանոցի դիմացը այգի կար, այգու պոչին էլ՝ կարուսել, մատելու տեղեր), և ես նրանց համար կարդում էի սիրածս գիրքը: Իրենք չէին կարդում, իսկ ես շատ էի հավանել և չէի կարող հանդուրժել, որ ընկերներս լուր չունենան դրանից:

Հիշում եմ՝ կարողացա հասնել նրան, որ մեր դասարանում ֆոնդ հիմնեցի, ոչ մեկին թույլ չէի տալիս՝ իրենց ծնողնե- րի տված 10 կուպեկը հաց ու երշիկի կամ բուլկու վրա ծախսելին: Իհարկե, ամեն օր չէր, որ ինչպես ինձ, այնպես էլ մյուս- ներին 10 կուպեկ տային: Մեր ունեցածը չէինք ծախսում, հավաքում էինք՝ շաբաթվա մեջ հավասար գումար ներդնելով: Մի քանի ամիս ես այդ քսակի, զանձանակի տերն էի, որը շատ խիստ հսկողության տակ էր, գրանցում էի, տեսր ունեի պահած և այլն: Երեք ամիս անց (7-րդ դասարանում էինք)՝ մայիս ամսին, երբ դասերն էլ վերջանում էին, գնացինք սպորտխամուր, որը գտնվում էր Կոմիտասի պողոտայում՝ առաջվա բաղնիքի դիմաց, և մեր հավաքած 4 ռուբլու սահ-

մաններում գնեցինք 4 ուսապարկ, ջրամաններ, կողմնացույց և պարան: Այսպես սկսեցինք մեր արշավները: Քիչ էր պատահում, որ բոլորս միասին գնանք, բայց չորս ընկերներով մի նկար ունենք՝ արված «Սմենա» ապարատով:

Արշավները մեր հայրենաճանաչությունը խորացրին, բոլորովին նոր փուլ էր սկսվել իմ և ընկերներիս կյանքում: Ի դեպ, այդ շրջանում ես դեռ հուշարձաններով հատուկ հետաքրքրված չէի: Ավելի շատ լեռներ էինք բարձրանում և ճանապարհներին հուշարձանների հանդիպելով՝ ակամա առնչվում էինք:

Ութ տարեկանում բարձրացա Արագած և ուղղակի խենթացա այդ գեղեցկությամբ: Դա իմ առաջին արշավն էր, որ կանխորոշեց գործունեությանս հետագա ընթացքը:

Ինչպես կորցրի իմ առաջին վաստակով գնված հեռադիտակը

Վանքերն ինձ ավելի ուշ սկսեցին գրավել: 8-րդ դասարանից աշխատել եմ, ամռանը հորեղբորս հետ «մալարություն» էի անում և այդ ժամանակ էլ գնեցի և՛ իմ առաջին լուսանկարչական ապարատը, և՛ հեռադիտակը: Քերոբյան Արմենը՝ ընկերս, ծննդյան առթիվ «Սմենա» ապարատ էր նվեր ստացել, որից ինքս էլ շատ էի ուզում ունենալ: Եվ ահա 8-րդ դասարանում իմ առաջին աշխատավարձով ես էլ գնեցի:

Հիշում եմ՝ ինչպես առաջին հեռադիտակս Դիլիջանում՝ Ջուխտակ վանքի մոտ ձեռքիցս տարան: Դիլիջանցիները քեֆ էին անում, ինձ հրավիրեցին իրենց մոտ և տեսնելով հեռադիտակս, մանավանդ իմանալով, որ որոշել եմ Ջուխտակ վանքում մնալ, ասացին.

– Հեռադիտակը տուր, այսօր տանենք, մի քիչ նայենք, վաղն էլի այստեղ ենք լինելու:

Ես էլ ավելացրի.

– Միայն այնպես արեք, որ առավոտյան 10-ից չուշանաք, քանի որ պիտի գնամ:

Հաջորդ օրը սպասեցի մինչև ժամը 12-ը: Չեկան այդ մարդիկ և իմ առաջին վաստակով (45 ռուբլի արժեք) գնված հեռադիտակն այդպես գողացան: 9-րդ դասարանում էի, մեծ ցավ ապրեցի այդ կորստի համար՝ արդեն իսկ զգալով սեփական ժողովրդի վատ կողմերը: Լավն էլ կա, վատն էլ: Բհարկե, միշտ լավն է գերակշռել: Ես մարդուն չեմ կարող չվստահել: Սկսած այդ հեռադիտակի գողանալուց, խաբել-չվերադարձնելուց՝ բազմիցս հայտնվել եմ նման իրավիճակներում: Պատահել է՝ վստահել եմ՝ մեջս կասկած ունենալով, բայց մարդուն չեմ կարող չվստահել: Որքան էլ կասկածում եմ, թե կխաբի, միևնույն է, վստահում եմ: Ավելի շատ խաբել եմ, իհարկե: Նա, ով խաբել է, օգտվել է հենց այդ մեկ անգամից, մինչդեռ ինքը հնարավորություն ուներ ավելի շատ օգտվելու, եթե այդ կերպ չվարվեր: Սա, ցավոք, մեր ժողովրդի մեջ ընդհանրական գիծ է:

Պապերիս հիշատակին (հուշեր հորական և մորական պապերիս դասերից)

Նորս հայրը՝ Բաղդասարը, Վանի Արճեշ գավառի Բերդաղ, իսկ մորս հայրը՝ Հովհաննեսը, Բասեն գավառի Արուճագրակ գյուղից էր: Ընտանեկան դրվագներ կան, որ տպավորվել են: Դրանցից ինչ-որ բան քաղել եմ:

Մի անգամ Հովհաննես պապս թե՛ վեճի մեջ էր կրոստեր որդու (փոքր քեռուս) հետ: 1967 կամ 1968 թիվն էր, ուստի ես 6 կամ 7 տարեկան էի: Վեճի մանրամասները չեմ հիշում, բայց լավ հիշում եմ, որ տանը, իրենցից գատ, ուրիշ մեկը չկար, միայն ես էի և տան մեծերի թունդ վեճի ճնշող ազդեցությունից կծկվել էի սենյակի մի անկյունում: Չեմ կարծում, թե այդ դեպքը կմնար հիշողությանս մեջ, եթե վիճաբանության թունդ պահին քեռուս օգտագործած օտար մի բառին (խոսքի մեջ ասաց, թե այսինչ բանը «վսյոտկի» ես այսպես կանեմ) չհետևեր պապիս կայրուկ դիտողությունը.

– Ա՛յ տղա, այդ «վսյոտկին» ես էլ տեսա գուգարանի դռան առաջ ընկած, բայց ես չվերցրի՛, դու ինչո՞ւ վերցրիր:

Այսպես ասաց Հովհաննես պապս, որ հայ-թուրքական պատերազմին մասնակցել էր, երբ 16 տարեկան էր:

Պապիս՝ բանք ու խորխտ ձայնով քեռուս արված դիտողությունն ինձ սթափեցրեց ոչ միայն խոսքի անակնկալ և պատկերավոր բնույթով, այլև նրանով, որ դիտողությունից հետո առանց վայրկյան կորցնելու նա անմիջապես անցավ վեճի բուն նյութին:

Այդ օրվանից հայերենում օտարաբեր բառ գործածելուն ուղղված պապիս այդ պատկերավոր նկատողությունն անջինջ մնաց հիշողությանս մեջ, սակայն իբր դա քիչ էր, մի օր էլ հորաքրոջս աղջիկն էլ համանման մի դեպք պատմեց հորական՝ Բաղդասար պապիցս, որով էլ ինքն էր տպավորվել: Ահա այն. պապս տուն է մտնում և լսելով խոհանոցի պատից կախված ռադիոյից հնչող ռուսերենը, որին գուցե տնեցիներից ոչ ոք ուշադրություն չէր էլ դարձրել, զայրացած ասում է.

– Էլի այս շան հաչոցը կապե՛լ եք տնով մեկ:

Խոսք կա, թե պտուղը ծառից հեռու չի ընկնում (չնայած, իմ կարծիքով, լավ էլ հեռու է ընկնում): Ինչևէ, ինձ համար թանկ են իրար հետևից՝ 1983 և 1984 թթ. կյանքից հեռացած մայրենիի պաշտպան պապերիցս մնացած այս հուշերը: Եվ քանի որ այսքանը հիշեցի, ուրեմն պատմեմ նաև հետևյալը: Երբ արդեն 6 կամ 7-րդ դասարանում էի սովորում, հասարակական վայրերում իրենց երեխաների հետ ռուսերեն «չթող» հայ ծնողները բառիս բուն իմաստով սկսել էին աջ ու ձախ ազդել ջղերիս վրա: Անվերջ մտածում էի, թե այս անպատիվ և տգետ քաղբենիներին ինչպես կարող էի շանթահարել: Եվ պատկերացրեք՝ մի օր հնարը գտա, ավելի ճիշտ գտա այն արտահայտությունը, որով սկսեցի հոսանքի տալ «հայ» մայրերին:

Ահա այդ նախադասությունը, որն առանձնահատուկ գոհունակությամբ շարտում էի անդեմ մայրերի երեսին.

– Տիկին, այդ լեզվով շուն եմ վարժեցնում,– ասում էի և չսպասելով որևէ պատասխանի՝ հեռանում (և, իսկապես, զիտես ինչու, ով շուն ուներ, հետը ռուսերեն էր խոսում՝ «կամեն», «սիդեմ» և այլն):

Գնահատանքով եմ հիշում մայրենիապաշտ ու մայրենիի պաշտպան պապերիս, նաև այդ «պատերազմի» առաջամարտիկ Շիրազին, որը «դու ռուսի ճո՞ւտ ես» ասելով փողոցում թեթև ապտակ էր հասցնում ռուսերեն խոսող պատահած հայ երեխայի (ճանաչում եմ մարդու, որը հպարտությամբ է հիշում ռուսերեն խոսելու համար Շիրազից ստացած ապտակը...):

Ե՞րբ սկսեցի գրադվել սիրելի գործով

Ե՞րբ սկսեցի գրադվել սիրելի գործով: Մի դեպք հիշեմ, որ կարող էր պատճառ լինել: Մեր տան խոհանոցում՝ գազ-օջախին կից պատին, փակցված էր Եվրասիայի քաղաքական քարտեզը երևի նրա համար, որ «ճաշի-մաշի» ցայտոցները պատը չաղտոտեին: Ես սիրում էի գազ չօգտագործելու պահերին քառել այնտեղ և ուղղակի ժամերով ուսումնասիրել այդ քարտեզը: Հիշում եմ՝ մի անգամ, երբ շատ երկար նայում էի, մայրս ասաց.

– Դու գիտե՞ս, որ Թուրքիայի կեսը Հայաստան է եղել:


Եվ ես երկար նայում էի Թուրքիայի քարտեզը, ռուսերենով գրված քաղաքների անուններ էի կարդում ու մորս հարցնում.

– Մա՛ն, այս անունը այդ քո ասած կեսի մե՞ջ է:

Նա լսում էր և ասում՝ ոչ: Էլի մի քաղաք էի ասում ու էլի լսում պատասխանը՝ չէ: Հիշում եմ, երբ կարդացի Էրզրում անունը, մայրս ասաց.

– Դա այդ կեսի մեջ է:

Եվ հիշում եմ, որ մտածում էի՝ տարբեր պետություններից ամեն մեկն իր գույնն ունի, եթե սա Հայաստան է, ինչո՞ւ է Թուրքիայի գույնով ներկված: Առհասարակ սովետի ժամանակ Արևելյան Հայաստանն էլ Ռուսաստանի հետ լրիվ կարմիրով էր ներկված: Այդ ամենը մի անարդար վիճակ էր առաջացրել մեզս: Գուցե այս կարգի փոքր դրվագներն ինչ-որ նշանակություն ունեցել են, բայց ես կարծում եմ, եթե մարդուն մի բան տրված չլիներ, սրանք կգային ու կանցնեին: Ուրեմն, ենթադրում եմ, ես այն մարդկանց տոկոսին եմ պատկանում, որ թերևս ծնվել են հենց կոնկրետ գործ անելու համար և կոչված են որոշակի առաքելություն իրականացնելու:



Սամվել Կարապետյանի կազմած 1976-1980 թթ. արշավների մասնակիցների աղյուսակը և դեպի Մարտունու շրջան կազմակերպած արշավի հուշարձանների քարտեզը

Դասընկերներով դեպի Սբ. Ստեփանոս (Աղջոց) վանք (լուս.՝ 1976 թ.)

57-րդ արշավի (23-25.09.1980) երթուղին՝ Երևան-Աբովյան-Ջառ-Սևաբերդ-Ալնա լիճ-Աժդահակ-Վանքի լիճ-Գեղարդ-Գողթ-Գառնի-Երևան Դասընկերներով Գեղի (Կաքավաբերդ) բերդում (ձախից աջ՝ Ա. Քերոբյան, Գ. Շաչկինյան, Ս. Կարապետյան, լուս.՝ 1978 թ.)

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Ի հիշատակ անմոռաց ընկերոջս՝ ճարտարապետ Աշոտ Աբրահամյանի

Աշոտ Աբրահամյանին ճանաչեցի 1980 թվականին, երբ ճարտ. Արմեն Զարյանի միջնորդությամբ աշխատանքի ընդունվեցի Հուշարձանների պահպանության և վերականգնման գլխավոր վարչության նախագծային գրասենյակում: Բացառիկ ջերմ և ընկերական վերաբերմունքի շնորհիվ նույն օրն իսկ մտերմացանք: Ուղիղ երեք տարի միասին աշխատեցինք, բայց իրար ավելի ճանաչելուն, իհարկե, նպաստեցին այն մի քանի գործուղումները, որոնց ես էլ մասնակից էի: Հատկապես հիշարժան էին Թալինի Կամսարականների եկեղեցու (միայն երկուսով էինք), Գնդեվանքին կից շինությունների չափագրման նպատակով մեր գործուղումները, որի ավարտին նաև շրջագայեցինք Վայոց ձորում՝ ուսումնասիրելով մի շարք հուշարձաններ, իսկ Նոր Վարազավանքի չափագրությունը մոտ երկու ամիս տևեց, և այդ ընթացքում երկուսով մի վրանի մեջ էինք գիշերում:

Կյանքումս շատ ընկերներ եմ ունեցել և ունեմ, բայց կենսախնդրյալս լեցուն և այնպիսի նուրբ զգացողությունների ու բացառիկ սուր հումորի տեր մարդու, որ Աշոտն էր, չեմ հանդիպել...:

Ընդհանրապես, երբ հարազատ մարդու ես կորցնում՝ ընկեր, թե բարեկամ, բնականաբար ամեն անգամ հիշելիս տխրության զգացումն է ճնշում: Դա բնական է, բայց պիտի խոստովանեմ, որ Աշոտին հիշելիս (ցավոք, արդեն մեզ հետ չէ, բայց այս ընթացքում նրան անվերջ մտքումս ունեմ) հիշում եմ ուրախ և միայն ուրախ դիպվածների ուղեկցությամբ (չգիտեմ՝ որքանով է նորմալ կամ աննորմալ)...

Բացի առեւելի ավիստանքից և անարդար ճակատագրի դեմ անձայն կռիվ տալուց՝ տխրությանս յուրաքանչյուր պահը, նրա եզակի կերպարով պայմանավորված, բեկվում է մի որևէ հուշով:

Այո՛, սիրելի՛ Աշոտ, դու այնպե՛ս ապրեցիր, որ գոնե ես ի վիճակի չեմ քեզ անուրախ մտաբերելու, և ո՛վ գիտե, գուցե հենց երանի՛ նրան, ով կարող է այդպես հեռանալ...

Աշոտը խոր և լուրջ արվեստագետ էր, նուրբ ճաշակի և զգացողությունների տեր մի մարդ: Առաջին հերթին ճարտարապետ էր, վերականգնող ճարտարապետ, բայց նաև նկարիչ, ազգային անաղարտ երաժշտության և դասական ոռոքի երկրպագու և անգուգական երգիչ-կատարող: Բոլոր հավաքույթներին նրա երգն ու հումորն անպակաս էին: Եթե կար Աշոտը, ուրեմն թևածում էր խնդությունը:

Աշոտի հետ կապված բազում պատմություններ ունեմ, որոնցից յուրաքանչյուրը հումորի աշխարհից պոկված մի-մի գլուխգործոց է: Եթե շնորհով վերարտադրելու գոնե մի փոքր կարողություն ունենայի, ապա երևի կստանձնեի նրա հետ կապված հուշերս ի մի բերելու գործը (գուցե առնվազն մի համեստ գիրք կկազմեր), բայց մտածում եմ, ըստ կարելվույն, մեկ-երկու դրվագով փորձեմ ձեզ ևս հաղորդակից դարձնել Աշոտի հումորի սահմաններին (որն իրականում անսահման էր):

Եվ այսպես, 1981 թ. Աշոտի հետ Թալինում եմ: Չեմ հիշում, թե ինչպես, բայց մի կերպ բարձրացել ենք Կամսարական իշխանների կառուցած 7-րդ դարի եկեղեցու տանիքին և ութնամիստ թմբուկից ինչ-որ չափեր ենք վերցնում: Ո՛չ կանգնելու և ո՛չ էլ բռնվելու մի կարգին տեղ կա: Չեռքս մտցրել եմ եկեղեցու լուսամուտից ներս, իբր բռնվելու տեղ եմ ճարել, իսկ մյուս ձեռքով մետրի ծայրն եմ պահում Աշոտի մատնանշած տեղերում: Նույն դժվարին կացության մեջ էլ Աշոտն է, դեռ ավելին, որովհետև չափերը տետրի մեջ գրի առնելն էլ նրա վրա էր: Տեսնում ենք, որ ներքևում մի խումբ երեխաներ ուշադրությամբ հետևում են մեր շարժումներին (դե՛, ամեն օր չէ, որ եկեղեցու զմբեթին մարդիկ են տեսնում): Այդ լարված իրավիճակում մեկ էլ Աշոտը, հայացքն ուղղելով երեխաներից մեկին, կանչում է.

– Ապերի՛ կ:

Երեխան՝ ուշիմ և պատրաստակամ, թերևս կարծում է, թե մեր նեղ վիճակում ինչ-որ օգնության կարիք ունենք, ներքևից պատասխանում է.

– Ի՞նչ ա, ձա՞ձա՛...

Աշոտն ասում է.

– Լսի՛ր, քո պապան մամային ինչո՞վ ա ծեծում:

Շուուս պահած նայում եմ Աշոտին, նայում եմ զարմանքը դեմքին սառեցրած երեխային և լսում եմ պատասխանը.

– Պոռվուդով...

Աշոտի հետ միշտ էր այսպես. մեկը մեկից զավեշտալի իրավիճակները ծնվում էին տեղում և իրար հաջորդում այն-քան ժամանակ, քանի դեռ միասին էինք:

1982 թվականն է: Քաղ առ քաղ Նոր Վարազավանքն ենք չափագրում: Չորս հոգով ենք և երկու վրանով: Սեկում Հրաչյա Քարտաշյանն ու Գալուստ Դարբինյանն են, մյուսում՝ Աշոտն ու ես (ինձնից բացի՝ բոլորն էլ ճարտարապետներ): Վանքի հյուսիսային կողմում՝ փոքր բարձրության վրա, պահպանված մի քանի տապանաքարերով միջնադարյան գերեզմանոցն էր, որի մի մասն էլ հարթ հատված ունեք: Վրանները զինվորական էին, բրեզնտից, բարձր և ընդարձակ: Մեր վրանի զբաղեցրած մակերեսի ճիշտ մեջտեղում մի տապանաքար կար: Քնապարկերն այդ տապանաքարի երկու կողմերում էինք փռել, այնպես որ այն մի տեսակ սեղանի դեր էր կատարում, վրան նավթավառ, լապտեր, գիրք ու ակնոց էինք դնում:

Մի երկու-երեք շաբաթ անց Վարազավան գյուղի գրադարանից հայ ժողովրդի պատմության վերաբերյալ մի գիրք վերցրինք: Երեկոներն ընթերցում էի:

Մի օր Աշոտն ասաց.

– Մա՛մ, էդ ի՞նչ ես, է՛, կարդում: Ասացի՛ դե՛, այսպես-այսպես:

Ասաց.

– Կլինի՞, որ բարձրաձայն կարդաս, ես էլ լսեմ:

Պատասխանեցի.

– Իհարկե՛,– և սկսեցի բարձր կարդալ: Չանցած մի քանի րոպե՝ Աշոտի շնչառության ձայնը փոխվեց, որից հասկացա՝ արդեն քնել է: Համոզվելու համար էլի ձայն տվի և ճշտելով, որ իսկապես քնել է, ընթերցանությունն շարունակեցի անձայն:

Հաջորդ օրը երեկոյան դարձյալ ասաց.

– Բարձր կարդա՛, ես էլ լսեմ...

Բայց էլի թույլենք անց մույն պատմությունը, էլի քնեց...

Մյուս օրն ասում եմ.

– Աշոտ ջան, ի՞նչ իմաստ ունի բարձր կարդալս, երբ դու շատ արագ քնում ես...

– Չէ՛, ինչքան էլ լսում եմ, շա՛տ հետաքրքիր է...

Եվ այսպես օրեր շարունակ:

Վերջապես հասավ մի օր, որ գիրքն ավարտեցի: Պառնել էնք, մա ասում է.

– Մա՛ն, դե՛, կարդա՛:

Ասում եմ.

– Աշոտ ջան, այդ գիրքն ավարտել եմ, ու կարդալիք չկա:

Մի կերպ հաշտվեց, ու քնեցինք:

Առավոտյան ի՛նչ ասի ինձ.

– Մա՛ն, քո երեսից ամբողջ գիշեր արթուն եմ մնացել, այսր էդ գրքով այնպես լա՛վ էիր քնեցնում...

Անցյալ տարվա ամռանն էր: Փողոցում պատահական հանդիպեցինք: Վաղուց իրար չէինք տեսել և երկի հարցնելիք ու պատմելիք շատ բան ունեինք, բայց այնպես ստացվեց, որ մի կես թուպի չափ մաթով լուռ քայլեցինք: Հանկարծ խախտելով լուռությունը՝ Աշոտն ասաց.

– Դե՛, Մա՛ն ջան, իրականում էսքան տարի մեր մեջ արդեն ամեն ինչ ասվա՛ծ է, էլ ասելու բան չի՛ մնացել:

Այա շարունակում է.

– Լսիր, եթե մեկը քեզ գանգի ու չխոսի, իմացիր, որ ես եմ, դե՛, որովհետև մեր մեջ ամեն ինչ ասվա՛ծ է...

Ասաց, ու տեղի ունեցավ այն, ինչը, որպես կանոն, տեղի է ունեցել միշտ, երբ բախտի կամոք թեկուզ մի քանի թուպեով հանդիպել ենք իրար...

Ինչո՞ւ է այսպես, երբ մարդը կա, հազվադեպ ես հանդիպում, իսկ երբ չկա, անասելի կարոտում ես: Թանկագին ընկերս, դու չկաս, իսկ ես անվերջ քեզ հետ եմ...

Չորսը, Բեթովենի 7-րդն ու ես

Հեռավոր, արդեն շատ հեռավոր 1982 թվականը երկրորդ տարին էր, որ աշխատանքի էի անցել Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման և օգտագործման գլխավոր վարչության մախագծային գրասենյակում: Նյութատեխնիկական հզոր բազա ունեցող այդ հիմնարկության նշածս գրասենյակը գտնվում էր Ջեյթուն քաղաքում:

Այստեղ կարճ ժամանակ անց ինձ ներառեցին ճարտարապետ Մերի Դանիելյանի գլխավորությամբ գործող խմբի կազմում, որտեղ, բացի Մերիից, ևս երեք ճարտարապետ կար, բոլորն էլ՝ մինչև հինգ-վեց տարի ինձնից մեծ:

Այդ թվականին մեր խմբին հանձնարարվեց ապագա վերականգնման մախագծի ստեղծման նպատակով մանրագին չափագրել Նոր Վարազավանքը: Մա ենթադրում էր տեղում իրականացնելիք մոտ երեք ամսվա աշխատանք: Գործուղվեցինք չորսով, այսինքն՝ միայն տղաներով՝ Հրաչյա Քարտաշյանը, Աշոտ Աբրահամյանը, Գալուստ Դարբինյանն ու ես: Մեզ հետ ունեինք զինվորական երկու մեծ վրան, որոնք տեղ հասնելուն պես կանգնեցրինք վանքամերձ հարթակում: Մակայն, ի հակադրություն երևանյան պարզկա օրերի, Նոր Վարազավանքում անձրևային ու մառախլապատ եղանակ էր: Որոշեցինք մի քանի օր սպասել այն հույսով, թե եղանակները կբացվեն:

Հիմա արդեն ճիշտ չեմ հիշում, թե խոնավության, մշուշի և ցեխի մեջ քանի օր անցկացրինք, բայց անտանելի վիճակի թելադրանքով տղաները որոշեցին վերադառնալ Երևան՝ ճիշտ երկու շաբաթից հետո՝ վանք գալու մտքով:

Ի տարբերություն ընկերներիս՝ ես չուզեցի Երևան գնալ: Խոստացա, որ որոշված օրը կլինեմ վանքում, բայց փոխարենն այդ ժամանակահատվածում կշրջեմ Տավուշի և Լոռվա կողմերում: Թե անձրևի և մառախլապատ եղանակին խեղճիս ի՛նչ փչեց ճամփորդ լինել, չգիտեմ, բայց արշավս սկիզբ առավ հենց Նոր Վարազավանքից:

Հիշում եմ, որ առաջինն այցելեցի Այգեձոր գյուղի մոտ գտնվող Մրվելի վանքը, որտեղ մախտորդիվ երբևէ չէի եղել, ապա՝ Մակարավանք, որտեղ մի գիշեր անցկացրի: Իմ բախտից, ինչպես պարզև, երկրորդ օրն իսկ եղանակները կտրուկ փոխվեցին, և ինձ տրվեց հնարավորություն լիովի վայելելու արևոտ օրերը:

Արշավիս կարծեմ երրորդ օրն էր, մտել էի Կունեն գետակի հովիտը: Այստեղ մույնպես առաջին անգամ էի լինում, և ուրախությանս չափ չկար, երբ ծառերի արանքից հանկարծ առջևս հայտնվեց Կիրանց վանքը: Երևի մի ժամի չափ վանքը դիտել-նկարելուց հետո սկսեցի հողել մույն ճանապարհով իջնել: Մի որոշ հատված անցնելուց հետո տեսնեմ չորս տղաներ՝ շատ ավելի փքված ուսապարկերով, քան ինձ էր, քրտնաթոր գալիս եմ: Ակնհայտ էր, որ դեպի Կիրանց



Սամվել Կարապետյանն ընկերների՝ Աշոտ Աբրահամյանի և Գալուստ Դարբինյանի հետ Նորավանքում և Գոդեվանքում (1982 թ.)

էին գնում: Երկուստեք միմյանց ողջունելուց զատ՝ ոչ մի բառ ավել չփոխանակեցինք, և ես՝ դեպի վար, նրանք՝ դեպի վեր, շարունակեցինք մեր ճանապարհները:

Մտածում էի այդքանով սահմանափակել շրջագայությանս իջևանյան հատվածն ու անցնել Նոյեմբերյանի շրջան: Հասա մայրուղի և սկսեցի առաջանալ Ոսկեպարի ուղղությամբ: Անցնող-դարձող մեքենաները քիչ էին, եղածներն էլ՝ պատահական անցորդ վերցնելուն անհավես: Վերջապես երևաց Ոսկեպարի 7-րդ դարի եկեղեցին, որի վերականգնումը նորերս էին ավարտել: Եկեղեցամերձ տարածքում բնակություն հաստատած թուրքերի խուզարկու հայացքների ներքո միայն մի քանի բուսական տեղում մնալով՝ կրկին ճանապարհվեցի: Ճիշտն ասած՝ ասֆալտե ճանապարհով քայլել երբևէ չեմ սիրել, ուստի անցնող մեքենաներից մեկն ու մեկում հայտնվելուս ցանկությունն ավելի էր մեծացել, և բախտս փորձելով՝ յուրաքանչյուր մոտեցողի առջև աշխույժով ձեռքս էի պարզում:

Վերջապես կահույք փոխադրող մի բեռնատար ոչ միայն կանգ առավ, այլև վարորդն առանց ուր գնալու հարցնելու իջավ տեղից, անցավ մեքենայի ետնամասը և երկաթյա դուռը բացելով՝ ասաց հետևյալը.

– Չորսն էիք, եղեք հիմա:

Տեսնե՛մ՝ ներսում, ուսապարկերն առջևը դրած, իրար կողք մստած են այն չորս տղաները, որոնց տեսել էի Կիրանց վանքից Աճարկուտ գյուղ իջնելուս ժամանակ: Դե ի՞նչ, ես էլ բարձրացա, և ինչպես բարեսիրտ վարորդն էր ասել, արդեն եղանք հիմա: Ծանոթացանք: Հայրենի բնության և նախնայաց հիշատակների նկատմամբ սիրո և հետաքրքրության հողի վրա միավորված տարբեր մասնագիտությունների տեր լավ ընկերներ էին՝ Վարուժանը՝ մաթեմատիկոս, Սեդրակը՝ նկարիչ, Ռուբենը՝ ջութակահար, Արամ՝ տնտեսագետ: Շատ արագ պարզեցինք, որ մեր նախընտրած երթուղին նույնն էր, և երկուստեք ցանկությամբ որոշեցինք, որ արշավի մնացյալ հատվածը միասին անցկացնենք:

Հետագա օրերին միասին այցելեցինք Հաղպատ, որի զանգակատան մոտ գիշերեցինք բաց երկնքի տակ, ապա Սանահին, Օձուն, Հոռոմայր, Քորայր, Դսեղ գյուղ, Բարձրաքաշի վանք, ի վերջո Դիլիջան՝ համալսարանականների ճամբար, որտեղից բաժանվեցինք, ես՝ դեպի Նոր Վարազավանք, նրանք՝ Երևան:

Արշավական մոտ ընկերներիս հետ անցկացրած օրերն ինձ համար մեծապես հաճելի և հիշարժան եղան: Սակայն մի բան այնպես տպավորվեց, որ այսքան տարի անց մտահան չարեցի. մեր միատեղ քայլքի համարյա ողջ ընթացքում և օրեր շարունակ Ռուբենը, անվերջ քթի տակ ինչ-որ մեղեդի հնչեցնելով, օրվա մեջ բազմիցս հանկարծ կանգ էր առնում և զարմացահիացական շեշտադրությամբ բացականչում.

– Արա՛, էս ի՞նչ ա արել...

Հիշում եմ, որ բազմաթիվ նման ինքնաբուխ բացականչություններից հետո մի օր չդիմացա ու հարցրի.

– Ռուբեն, այդ ո՞վ և ի՞նչ է արել:

Ասաց.

– Բեթովենն իր 7-րդ սիմֆոնիայի 2-րդ մասում:

Հրաշյա Քարտաշյանի ղեկավարությամբ Նոր Վարազավանքի ճարտարապետական մանրագին չափագրությունը մոտ 2,5 ամսվա ընթացքում ավարտեցինք: Երբ վերջապես Երևան հասանք, հիշում եմ, առաջին գործս եղավ 7-րդ սիմֆոնիայի ձայնապնակը գտնելը, քանի որ իմ հավաքածուում այդ ժամանակ ունեի միայն առաջինը, հինգերորդն ու իններորդը: Չայնապնակը բավական երկար փնտրեցի. այդ տարիներին ամեն բան գտանելի չէր: Սակայն այն պահից, ինչ գտա և մինչ օրս յուրաքանչյուր ունկնդրությանս հետ Ռուբենին եմ հիշում իր հիացական բացականչությամբ՝ իմ հերթին մտքումս ավելացնելով. «Իսկապե՛ս, էս ի՞նչ է արել...»:

ՀՅՈՒՄԻՍԱՐՑԱՆՅԱՆ ՀՈՒՇԵՐ

Տարօրինակ էր, բայց ինձ ոգևորեց մեկը, որ եկեղեցի էր քանդել...

Գառնակերում առաջին անգամ եղել եմ 1980 թվականին, այն արշավին, որ տևեց 51 օր: Այդ ժամանակից ահա արդեն անցել է զրեթե քառորդ դար, բայց չքնաղ Գառնակերով ներծծված հեքիաթը, որն ապրել եմ իրականության տեղ, երբեք և ոչ մի օր չի լքել միտքս:

Բազում դարեր վտանգների ժամանակ ոչ միայն Շամքորի ձորահովտի, այլև հեռու-հեռուների հայության համար հուսալի ապաստան ծառայած Գառնակերում 1980 թ. միայն 9 բնակիչ էր մնացել, բոլորն էլ՝ տարեց մարդիկ: Արտաքին աշխարհի հետ միայն կաժաններով հարաբերվող գյուղում հնությունը դրոշմն էին կրում ամեն քար ու ծառ, տուն ու պարիսպ, աղբյուր ու եկեղեցի:

Մեղրածոր կեռասենիներով ծովացած և թթենիների պուրակ համարվող մեռնող Գառնակերում փնտրում էի Աշխատանքային հերոսի շքանշանակիր Հայկազ Աղաջանյանին: Տնամիջյան նեղ կաժաններով մոտենում էի կենդանության նշաններ ցույց տվող հնամենի շենքերին և բնակիչ փնտրում...

Վերջապես հասա գյուղամիջի եկեղեցու արևելյան կողմում՝ Շամքորի ձորահայաց լանջին ծվարած փոքրիկ բակով այն տանը, որտեղ բնակվում էին ծերունագարդ ամուսինները:

Այդ գիշեր ես հյուրընկալվեցի Աղաջանյանների հարկի տակ: Տանտերը՝ 80-ամյա Հայկազ Աղաջանյանը, ողջ շրջանում հայտնի էր Գերոյ (հերոս) մականունով: Իրիկնաղենին նստել էինք բակում տեղադրված փայտաշեն նստարանին, և աչքիս առաջ ունենալով ամեն ինչով դրախտին գերազանցող աննկարագրելի տեսարանը՝ հետաքրքրությամբ լսում էի Հայկազ պապի պատմությունները Գառնակերի ու գառնակերցիների մասին:

Երբ խոսք բացվեց հարևան Գյուլամբուրի մոտ գտնվող Կարմիր եղջուր մասին, որ նույն Դասնովանքն է, Հայկազ պապն ասաց.

– Էդ վանքը կոմսոնոլ ժամանակներս ենք քանդել, հիմա հազիվ տեղն է երևում, ի՞նչ ենք թողել, որ դեռ ուզում ես տեսնել...

Հայկազ պապը, որ երիտասարդ հասակում խավար ուժերի ձեռքին կույր գործիք դարձած՝ քանդել էր մեր նվիրական վանքերից մեկը, որտեղ Մխիթար Գոշը հեղինակել էր հռչակավոր «Դատաստանագիրք»-ը, առավույան՝ հրաժեշտի պահին, ինձ համար իրապես անակնկալ, ասաց.

– Հըվաքիր, ու թե կըրլական ես, մի կիրք տյուս պեր, որ մեր պատմությունը խոխեքը գիդան:

Հայկազ դայու խոսքերն իբրև պատգամ՝ շուրջ քառորդ դար հավաքեցի... ու այսօր այդ գիրքը հրատարակվել է, որ «խոխեքը գիդան...»:



Հայկազ Աղաջանյանը կնոջ հետ (լուս.՝ Ս. Կարապետյանի 1984 թ.)
Դասնո անապատի մնացորդները (լուս.՝ Ս. Կարապետյանի 1982 թ.)

Ռուստամալիցի հրեշները

1982 թ. մարտի վերջին, երբ առաջին անգամ ընկերոջս հետ այցելեցի Գետաբեկի շրջանի Ռուստամ-Ալիև գյուղ, դեռևս չգիտեի, որ այն այդ անվամբ էր կոչվում՝ ի հիշատակ վրիժառու հայի զնդակից 1921 թ. սպանված հայակեր մի հրեշի, բայց գյուղում անցկացրած հազիվ կես ժամվա ընթացքում լիովի առիթն ունեցանք զգալու, որ հրեշ էին նաև գյուղի մերօրյա բնակիչները:

Իջանք մեզ՝ շրջկենտրոնից գյուղ հասցրած փոքրիկ ավտոբուսի վերջնականգառում: Վախերի հետ (ճարտ. Արմեն Զարյանի կրտսեր որդին է) մտադրվել էինք տեսնել Փառիսոսի բերդը, որը գյուղ հասնելուն պես նկատեցինք մոտակա ոչ շատ բարձր լեռան գագաթին: Օրվա մեծ մասն արդեն անցել էր, և մի երեք ժամից պիտի մթնեք: Որոշել էինք բերդի տարածքում գիշերել, ուստի ցանկություն ունեինք հացի և թեյի համար մի քիչ էլ շաքար գնել:

Կանգառը գյուղի թեյատուն-խանութի առջևում էր, հետևաբար մենք սկսեցինք անմիջապես հայտնվեցինք այդ մասում վեր ընկած գյուղացիների ուշադրության կենտրոնում և ուշիուշով մեզ գնող նրանց հայացքների ներքո: Հարմար գտանք գնումները ճիշտ այդ տեղում վերջացնել և մոտեցանք թուրքերենով ասած՝ «չայխանային»: Բարևելով շենքի մուտքի առջև ցցված փափախածածկ մի քանի խոժոռ դեմքերի ու դրանցից որևէ պատասխան չստանալով՝ ներս մտանք: Իրար մեջ ցածրածայն ինչ-որ բան փսփսալով, բայց աչքերը մեզ վրա չորս արած՝ անմիջապես մեր ետևից ներս լցվեցին տասից ավելի փափախակիր թուրքեր: Մի երկու այդքան էլ, ներսում նստած, թեյում էին: Մրանց ևս բարևելով՝ մոտեցանք պատի մեջ պատուհանաձև քաղցված վաճառատեղ-մատուցարանին, որի ներսում գտնվող գործակատարն արդեն ցցված էր տեղում և կարծես ուսումնասիրում էր մեզ: Մասնավոր բարև էլ գործակատարին ուղղելով՝ թուրքերենով հարցրի.

– Հաց ունե՞ք:



Փառիսոսի բերդը և Վ. Զարյանի ու Ս. Կարապետյանի գիշերատեղին (լուս.՝ 1982 թ.)

Նույն հարցն անմիջապես նաև ռուսերենով տվեցի, որպեսզի շեշտեն թուրքերենի՝ խիստ սահմանափակ իմացությունն և մինչ մտածում էի, թե էլ ինչ կարելի էր հարցնել, հանկարծ այդ վաճառանոց-պատուհանի փայտե դռնակն այնպիսի ուժգնությամբ ուղիղ դեմքիս առջև փակվեց, որ ամբողջովին պատվեցի ծեփ ու փոշիով: Այդ վայրենի վերաբերմունքն ուղեկցվեց նստածների ու կանգնածների քմծիծաղով, արհամարհական ու հեզմանական ժայտներով:

Լուռ դուրս եկանք թեյատոնից, և հաշտված առաջիկա անհաց կացության հետ՝ բարվոք համարեցի գոնե տափաշիչս լրացնել շենքից հագիվ 15-20 մետր հեռու գտնվող հորդաբուխ աղբյուրի ջրով: Մինչ մենք հաշված վայրկյաններում կհասնեինք աղբյուրին, շենքի մուտքի առջև հասցրել էին խոնավել ներսի ու դրսի բոլոր փափախավորները: Տափաշչիս փականի բացելն ու ջրի կտրվելը մեկ եղավ: Այլևս ամեն ինչ պարզ էր, և հետագա բարդություններից խուսափելու համար վերցրինք մեր ուսապարկերը և արդեն բարձրաձայն ու լիաթոք վայրի քրքիջների ներքո բերդի ուղղությամբ շարժվելով՝ դուրս եկանք գյուղից:

Բերդասարի գյուղահայաց լանջը ձյունածածկ էր: Վրանը խփեցինք բերդամիջի՝ գյուղից աննկատ մասում: Վալեղեցինք ձնահալ անշաքար թեյն ու լուսաբացին բերդից իջանք եկած ճանապարհով: Երբ վերադարձի համար կանգառում սպասում էինք ավտոբուսին, նորից հայտնվեցին մի խումբ թուրքեր և մեր՝ որտեղացի լինելն իմանալուց հետո ասացին.

– Գիտե՞ք՝ մեր գյուղի մոտերքում մի քանի եկեղեցիներ կան, բայց դրանք բոլորն էլ հույներն են կառուցել, հունական են:

Այդ աստղը, ուղիղ աչքերիս մեջ նայելով, շարունակեց.

– Հնում այստեղ հույներ են ապրել, եկեղեցիներն էլ հունական են:

Զգալով, որ թուրքն անվերջ փորձում է ինձ զրույցի մեջ ներքաշել, ու թերևս ինձնից հակառակ տեսակետ լսելով՝ նաև վեճի մեջ ներքաշել, ասացի.

– Գուցեև հունական են, բայց Բաքվի գիտնականներն էլ պնդում են, թե այբանական են, հիմա ձեզնից որին հավատանք, չգիտեմ...

Ավտոբուսը եկավ, և «հունա-այբանական» եկեղեցիների մասին իմ ու թուրքի զրույցն ինձ համար ցանկալի պահին ընդհատվեց...

Մի Նոր տարի Շամքորի ձորում

Անքուն գիշեր էր, բայց դա ոչ այնքան ցրտից, որքան նախորդ օրերի ճնշող պատկերների ազդեցությունից: Մտքումս անընդհատ գետիչենցի ծերունու՝ վշտից քայաացած հայացքն էր, որ գլխիկոր նստել էր իր իսկ ձեռքով հրդեհված պապական տան՝ դեռ միսացող ավերակի առջև: Մտաբերում էի այն մի խումբ քարացած հանդիսականների ցամաքած դեմքերն ու հագիվ, կիսածայն արտասանած «թուրքին թողնելու չենք» խոսքերը, և ինձ թվում էր, թե 1982-ի դեկտեմբերի 30-ը չէր, և ես էլ Դաշկեսանի շրջանի Գետիչեն գյուղում չէի, այլ 1915 թվականն էր, Արևմտահայաստանը...

Հայկական մեռնող գյուղ, գյուղի վերջին բնակիչները՝ մի խումբ տարեց մամիկներ ու պապիկներ: Ազգի և հարազատ հողի նկատմամբ պարտքի վերջին հատուցում՝ հայրենի օջախի հրկիզում, որ նույնն է, թե հրաժեշտ հայրենիքին ու պատմության ավարտ, ինքնասպանություն...

Մտքեր, մտածումներ, մեռնող հայոց շենքերի ու տիրազուրկ վանքերի տեսիլքներ և ժամանակ առ ժամանակ մինչև ոսկոր թափանցող ու սթափեցնող ցուրտ, մինչդեռ պարզկա և աստղալից գիշերը հաջորդ օրվա համար խոստանում էր բարենպաստ եղանակ: Երկնքում հայտնվող ամենափոքր ամպն իսկ ինձ անհանգստացնում էր. չէ՞ որ ճամփորդություն կարող էի շարունակել այնքան ժամանակ, քանի դեռ լեռնաշխարհը գերծ էր ձնածածկույթից: Չգիտեմ՝ ինչո՞ւ էի այդքան եղանակի մասին մտածում, մի՞թե նրա համար, որ հաջորդ օրն էլի ավեր մի վանք կամ հայոց մեռնող մի գյուղ էլ հասցնեմ տեսնել...

Գեկտեմբերի 31-ը ճամփորդության 7-րդ օրն էր՝ արևոտ ու պարզ: Մինչև կեսօր զբաղված էի Ամենափրկիչ վանքի չափագրմամբ ու լուսանկարմամբ, իսկ մտքումս Գետիչենի վերջին բնակիչներն էին և հայի այրած պապեճական տունը: Ամենափրկիչ վանքը բնակավայրերից առանձնացած ու կտրված վայրում է՝ շրջապատված թավ անտառներով, որոնք դեկտեմբերի վերջին մերկ ու թափանցիկ էին: Վանքից դեպի հյուսիս-արևմուտք՝ դեպի Շամքոր գետի խոր ու ընդարձակ հովիտը, մի աննման տեսարան է բացվում:

Հավաքելով ուսապարկս՝ սկսեցի իջնել վանքի մոտից սկիզբ առնող փոքրիկ կածանով: Հագիվ 150 մետր անց՝ աջ կողմում, աղբյուր նկատվեց: Այն բխում, բայց ավելի ճիշտ կաթկթում էր մի հսկա ժայռի տակից՝ բնության ստեղծած քարե ավազանի մեջ: Լեփ-լեցուն ավազանից ջուրը դուրս էր թափվում և հոսում ձորն ի վար: Այս աղբյուրին ժողովուրդը «Ծծեր» անունն է տալիս այն պատճառով, որ ավազանի վրա կախված ժայռն ավարտվում էր տարբեր ձևի ու չափի քարե գնդիկներով, որոնցից էլ կաթկթում էր ջուրը: Ավազանի մոտ պարզ և ամարձանագիր մի քանի խաչքարեր կային: Դրանք հուշում էին, որ վայրը սրբացված էր, կամ պարզապես «Ծծերը» սուրբ աղբյուր է:

Լրացնելով տափաշիչս ջրով՝ շարունակեցի իջնել: Կածանը, անընդհատ գալարվելով անտառի մեջ, իջնում ու իջնում էր: Վերջապես 4-5 կիլոմետրից այն լայնացավ ու Շամքորին աջ կողմից միացող ձորի մեջ փոված Գլամբար (Գյուլամբար) գյուղի վերին ծայրում վերածվեց ճանապարհի:

Սոս գյուղ: Թեք ու քարքարոտ ճանապարհի երկու կողմերում ցանկապատված տնամերձ այգիներ էին, տներ, բայց կարծես անբնակ: Արդեն գյուղամիջում էի, և վերջապես...

Անթաքույց հետաքրքրությամբ ուղիղ աչքերիս մեջ նայելով՝ ճանապարհս կտրեց մի ծերունի: Ով լինելս և որտեղից գալս իմանալով՝ ոչ թե առաջարկեց, այլ հրամայեց մտնել իր տուն: Ծանոթացանք: Ինձ հյուրընկալողը Գրիգոր դային էր: Ընտանիքի անդամներն էին ինքն ու կինը:

Անցածս ճանապարհից մի քանի մանրամասներ պատմեցի, բայց երբ հանկարծ իմացավ, որ ինձ հետ մի շիշ «Ծծերի» ջրից ունեն, ուղղակի խանդավառվեց: Ծեր կնոջից ոգևորված բաժակ խմորեց, դողողացող ձեռքով, բայց առանց

մի կաթիլ թափելու լցրեց, երկար ու անթարթ ջրին մայելուց հետո խմեց, կիսաձայն ինչ-որ բաներ կարծես ինքն իր մեջ արտասանելով՝ էլի խմեց: Մնացածն էլ մի այլ խցանավոր շշի մեջ փոխադրելով՝ պահեց, ինչպես ամենաթանկագին ու անմահական մի հեղուկ: Ինձ այնպես թվաց, թե ծերունու հիշողության մեջ խոնավեցին անցած տասնամյակները և այն բազում պահերը, երբ ինքն անձամբ էր աղբյուրից ջուր խմել, բայց, ըստ երևույթին, արդեն տարիներ էին, որ հնարավորություն չունեի սուրբ ու հարազատ աղբյուրին հասնել և հոգու խորքում հավանաբար վաղուց արդեն հրաժեշտ էր տվել իր կենսագրության թանկագին մասնիկը կազմող աղբյուրի ջրին, բայց ահա գտնվել է մեկը, որ «Ծծերի» ջուրն իր տուն է հասցրել...

Այդ պահից սկսած՝ ես կարծես հարազատացա Գրիգոր դայու համար, իսկ տունը, որ ավելի խրճիթի տպավորություն էր թողնում, պահպանում էր նորածին երկու ձագերով շրջապատված հավատարիմ շունը:

– Թռռներիս կնվիրեմ, շա՛տ կուրախանան,– ժպտալով ասաց ծեր կինը, երբ տեսավ, որ դիտում եմ ձագուկներին: Իրիկանմուտին ճրագի լույսի տակ երեքով նստել էինք խնձորով ու չրով զարդարված սեղանի շուրջ: Միայն այդպես էլ չիմացա, թե ե՞րբ վերջացավ 1982-ը, և երբ սկսվեց 1983-ը: Գրիգոր դայու ժամացույցը վաղո՞ւց էր կանգ առել...

Ասացին, որ որդիներ ու թոռներ ունեն, բոլորն էլ՝ Հայաստանում և հաջորդ օրն անպայման իրենց մոտ կլինեն:

Հունվարի 1-ին թափառեցի գյուղի շրջակայքում: Միջնադարյան բազմաթիշ կամրջի մնացորդները տեսա Շամբոր գետի վրա, վաղմիջնադարյան խաչածև եկեղեցու ավերակները գյուղի հյուսիսային կողմում և այլն: Օրվա վերջում ուղղվեցի դեպի Գրիգոր դայու տուն և ներս չմտած՝ ինչ-որ աշխուժություն նկատեցի: Հասկացա, որ որդիներն են եկել ծերունի ծնողների նոր տարին շնորհավորելու, բայց...

Ո՛չ, տանը երեք թուրք էր հայտնվել: Նրանք խժռում էին, ինչպես սոված գայլեր: Երբ տան, գուցե մեկ շաբաթվա հացն ու մյուս մթերքները սպառեցին, դուրս եկան բակ: Նրանցից մեկը ձեռքն առավ շան նորածին ձագերին ու հետը դուրս տարավ: Ծերունի ամուսինները լուռ ու անշարժ կանգնած էին բակում: Թուրքերը, անընդմեջ շատախոսելով, գոռում-գոչյունով, մերթ ընդ մերթ հռչակում, տեղավորվեցին տան առջև կանգնեցրած իրենց սայլակավոր մոտոցիկլետի մեջ ու հեռացան:

Ծեր ամուսինների դեմքին այնպիսի ճնշված արտահայտություն կար, որ երկար ժամանակ սիրտ չէի անում խոսք ասել: Հանկարծ Գրիգոր դային, կարծես հայացքիցս հարցս որսալով, ասաց.

- Եթե իրենց ուզածը խաբրով չտանք, գողությանը կամ թշնամությանը կառնեն:
- Ընթրիքի պահին կինը կարծես իմ առջև որդիներին արդարացնելու համար ասաց.
- Դե՛, ախր ամսի 1-ին ինչպե՞ս կարող էին իրենց տան դռները կողպել ու գալ. չէ՞ որ իրենց տուն էլ մարդիկ, բարեկամներ ու ընկերներ են գնում: Ա՛յ վաղը հաստատ կգան:

Հունվարի 2-ին վաղ առավոտից Շամբորն անցնելով՝ բարձրացա դեպի Ջազիր գյուղ և համարյա մութն ընկել էր, երբ վերադարձա Գրիգոր դայունց տուն:

Ծեր ծնողները լուռ էին: Օրն անց էին կացրել՝ աչքները պահած հայաստանաբնակ որդիների ճամփին: Մխիթարելու խոսք չէի գտնում...

Գիշերվանից ձյուն էր տեղում, որը շարունակվեց նաև հունվարի 3-ի առավոտյան: Գրիգոր դային ինձ ճանապարհեց մինչև գյուղի ծայրը:

Իրենցից բացի՝ գյուղում մի ընտանիք էլ կար՝ մեն-մենակ ապրող Արշակ դային՝ ավելի ծեր ու հիվանդ: Օրվա տարբեր ժամերի նրան միշտ տեսա իր տան պատին թիկն տված, հայացքը՝ հառած արդեն անմշակ ու վայրենացող այգուն...

Մեզ հյուրընկալելու համար ծագած վեճը Գոթյուլում

Դա պատահեց 1985 թ. Գոթյուլ գյուղում: Ես երկու ընկերներիս՝ Վահրամի և Վանոյի հետ էի: Օրվա ընթացքում կտրելով Շամբոր գետի խորախոր հովիտը՝ իրիկնադեմին դուրս եկանք սարահարթ և մտանք հազիվ 25-30 տնից բաղկացած Գոթյուլ գյուղ: Այնքան փոքր էր, որ մեր գյուղ մտնելն ու գյուղամիջում հայտնվելը մեկ եղավ: Միանգամից հայտնվեցինք գյուղամիջում կանգնած մի քանի գյուղացիների ուշադրության կենտրոնում: Մեզ հետ հազիվ մի քանի մախադասություն փոխանակելուց հետո հյուրընկալության միանգամից մի քանի առաջարկներ եղան: Դրանք մեկը մյուսից ավելի անկեղծ ու սրտանց էին, մեկը մյուսից ավելի հարազատ ու ջերմ: Ակամա հայտնվեցինք անել վիճակում: Ավանդապահ և բացառիկ հյուրընկալ մեր թանկագին գյուղացիներից և ոչ մեկին չէինք ցանկանում մերժել, և մինչդեռ մտորում էինք կայացնելիք որոշման մասին, հանկարծ առավել համառ դրոշմակերպից երկուսի մեջ մեզ հյուրընկալելու համար նույնիսկ վեճ բորբոքվեց: Բուպեներ անց մենք հայտնվեցինք այդ պայքարում հաղթանակած հայ գյուղացու անմիջական ու ջերմ հարկի տակ:

Առավոտյան՝ հրաժեշտից առաջ, ջրի գնալու պահին լուսանկարեցի մեր հյուրընկալ տանտիրուհուն, և շնորհակալությամբ ճամփա ընկանք:



Գոթյուլցի տանտիրուհին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1985 թ.)

Սահիկների բացօթյա ցուցադրություն Բանանցում

1986 թ. ընկերոջս՝ բանանցեցի Մարտիրոս Չալումյանի հետ մեկնեցի Բանանց: Հանգրվանս Չալումյանների պապենական տունն էր: Այդ անգամ հետս վերցրել էի նախորդ ճամփորդությունների ընթացքում Բանանցում և նրա մերձակայքում լուսանկարած պատմական հուշարձանների գունավոր սահիկներն ու դրանք ցուցադրելու համար նախատեսված սարքը:

Նախապես որոշված օրը՝ մութն ընկնելուն պես, նշանակված էր սահիկների ցուցադրության ժամը: Հայտարարված ժամին թե՛ ես ու ընկերս և թե՛ բազմաթիվ բանանցեցիներ հավաքվեցինք գյուղամիջում, որ հայտնի էր Փողոցք անվամբ: Որոշեցինք որպես էկրան ծառայեցնել Փողոցքի հարավային եզրին գտնվող խանութի երկհարկ շենքի սպիտակեցված պատը: Սահիկներ ցուցադրող սարքն ամրացրի Փողոցքի գրեթե կենտրոնում կանգնեցրածս եռոտանու վրա և կարճ նախաբանից հետո սկսեցի ցուցադրությունը: Բանանցի հրապարակը լիքն էր ամեն տարիքի մի քանի հարյուր հանդիսատեսներով:

Բանանցեցիները հետաքրքրությամբ լսում էին շրջանի տարբեր գյուղերի պատմական հուշարձաններին վերաբերող յուրաքանչյուր պատկերին ուղեկցվող բացատրություններս, բայց բոլորի ոգևորությունը մեծացավ, երբ հերթը հասավ հարազատ բնօրրանի տեսարաններին ու պատմական հուշարձաններին:

Այդ օրվա սահիկների ցուցադրությունը՝ ընտրված տեղով, ներկաների անմիջական և ինքնաբերական բազում բացականություններով, շատ պատկերների համար տվածս բացատրություններին հենց տեղում բանանցեցիների հետաքրքրական ու արժեքավոր լրացումներով, բացառիկ էր տարիների ընթացքում ամենուր և անհաշիվ կազմակերպած սահիկների ցուցադրություններիս շարքում, որը և միշտ վերհիշում եմ բանանցեցի խանդավառ հանդիսատեսներից ինձ փոխանցված ոգևորությամբ:

Մահվանից առաջ շռայլ էր դարձել

1989 թ. նոյեմբերի սկիզբն էր: Ես, եղբայրս և երեք ընկերներս, որոնցից մեկը գետաշենցի էր, մյուսը՝ ազատցի, Գետաշենցում էինք: Լարված և օրավուր սրվող դրություն էր: Ջգում էի, որ յուրաքանչյուր անցնող օրվա հետ հողը կարծես անեւանում էր մեր ոտքերի տակ:

Հերթական ամբողջ օրը գերեզմանոցի տապանագրերը գրի առնելուց և քարերը լուսանկարելուց հետո՝ իրիկնադեմին, վերադարձանք մեր օթևանը՝ չորս եղբայրների՝ Ծատուրանց անվամբ հայտնի միմյանց կից երկհարկ տները: Դրանցից մեկը, որ համեմատաբար ավելի ուշ էր լքվել և դեռ կահ-կարասիքով ամբողջական էր, տանտերը՝ մեր գետաշենցի երևանաբնակ ընկերոջ միայնակ ապրող տատիկը, մեզ էր հատկացրել, իսկ ինքը բնակվում էր դիմացի տնակում:

Իրիկնադեմին մասիկը մեզ դիմավորեց ոչ թե այդ օրերի համար սովորական՝ մտահոգ, այլ ավելի՝ այլայլված դեմքով:

– Տղերք, թուրքերը բռնել են Աբլահն ու Արմավիրը, այդ գյուղերում էլ հայ չի մնացել, ձեզ մատաղ, էդ տեղերը թող կանեք, մեր շենից դուրս միայն մինչև Ազատ ու Մարտունաշեն, էլ դեմը չգնա՛ք:

Ազդված ևս երկու հայ գյուղերի վախճանի մասին գուժող սոսկալի լուրից՝ դրանում մեղքի բաժին ունենալու անբացատրելի և չափազանց ծանր զգացում ճնշեց ինձ: Մի պահ մտաբերեցի Հին Աբլահ գյուղատեղիի Սբ. Մինաս եկեղեցին, որտեղ եղել էի 1980 և 1986 թվականներին, իսկ նրա մոտ՝ լեռան գագաթին գտնվող Սբ. Հովհաննես մատուռը գոնե այս անգամ բարձրանալու թաքուն հույսն ունեի...

Մի տասն օր առաջ հայաբնակ, այսօր՝ պատմության գիրկն անցած հայոց շենքեր, իսկ մենք՝ հայի հազարամյա հիշատակները գոնե թղթի վրա փրկել ջանացող հանդիսականներ:

Աչքերիս առջև օրավուր հալչում էր արցախահայության՝ բախտի քմահաճույքին թողած հյուսիսային հատվածը, որ նույնն էր, թե փլվում էր Հայաստանի հյուսիսարևելյան պարիսպը:

Նկատում էի, որ առանց այն էլ հյուրասեր գյուղացիներն անսովոր շռայլ էին դարձել, մինչև իսկ՝ վատնող շռայլ: Տեսնված չէր, որ գյուղացին այդքան շատ ընտանի կենդանի մորթեր ու պատահածին բաժաներ: Այդ շռայլությունը սարսափելի ազդանշան էր: Այո՛, մարդիկ կանխագգում էին Գետաշենի մոտալուտ վախճանը ևս, և ինչպես վերջին պահին հոգին ավանդելուց առաջ մահամերձի միտքն է պայծառանում, այնպես էլ բազում դարեր ապրած Գետաշենը մահվանից առաջ շռայլ էր դարձել...



Բանանց և Գետաշեն գյուղերը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1985 և 1989 թթ.)

Մինչև նույնների 16-ն այդ եղերական շապտոթյան մեջ արձանագրեցի, լուսանկարեցի և հաշվառեցի մեռնողի թողած մշակութային ժառանգությունը, իսկ Գետաշենը հազիվ 4 ամիս անց նախ ականատեսը եղավ երեխեքի՝ Ազատ և Կամո գյուղերի վախճանին և ապա մեկ տարի ու մեկ ամիս անց իր հոգին էլ ավանդեց անկեղանոցում հայտնված և վաղուց հարազատներից մոռացված անտեր ծերունու մահով...

ՀՈՒՇԵՐ ԲՈՆԱԶԱՎԹՎԱԾ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԻՑ

Երբեք չեմ մոռանա ձեզ՝ մայր և որդի պատվական բուզուխցիներ

Երբևէ կատարած ճամփորդություններիցս ամենից երկարը՝ 51 օր տևողությամբ, եղել է 1980 թվականին: Արշավս սկսեցի Իջևան քաղաքից ու Շամշադինի գյուղերն անցնելով՝ մտա թոուզի շրջան, այնուհետև Գետաբեկի, Շամխորի, Դաշկեսանի, Խանլարի, Շահումյանի և ի վերջո հասա Հաղբուքի շրջանի հարավային գյուղերը:

Արշավիս 21-րդ օրն էր: Առավոտյան դուրս էի եկել Մարտունաշենից ու Մանաշիղն անցնելով՝ արդեն մոտենում էի Բուզուխին, որտեղ եկեղեցին ու կարևոր մյուս հնությունները տեսնելուց հետո պետք է շարժվեի դեպի Վերիշեն:

Մանաշիղից Բուզուխ տանող ճանապարհը, ընդհանուր առմամբ դեպի վեր ձգվելով, վերջին մի քանի հարյուր մետրը սկսում է իջնել և մտնում այն ձորակը, որից ձախ՝ հարավահայաց ձորակողին, փոխված է Բուզուխ գյուղը:

Ճանապարհի այն մասից, որտեղից սկսում ես իջնել, առջևդ բացվում է Բուզուխի տեսարանը: Հասնելով ահա այդտեղ՝ գյուղից ընդամենը մի 300-400 մետր հեռու, տեսա ճամփեզրի քարին նստած մոտ 10 տարեկան մի տղայի, որը հսկում էր քիչ հեռու արածող իրենց կենդանիներին: Բարևս վրա երեխան իսկույն ոտքի կանգնեց ու չսպասելով որևէ պատասխանի՝ շատ քաղաքավարի իրար հետևից հարցրեց.

– Ո՞վ եք, մեր գյուղ եք գալիս, որտեղի՞ց եք գալիս, հայաստանցի՞ եք, եկեք գնանք մեր տուն:

Ես դեռ մտածում էի, թե հարցերին պատասխանելը ո՞ր մեկից սկսեմ, տղան շարունակեց.

– Երևում է՝ երկար ճանապարհ եք կտրել, ի՞նչ կլինի, գնանք մեր տուն, մի փոքր կհանգստանաք, էլի ձեր գործին կգնաք:

Եթե ինձ հրավիրողը չափահաս մեկը լիներ, երևի նույնիսկ չէի էլ փորձի հրաժարվել հրավերից, բայց մտածելով, որ այդ երեխան անկոչ հյուր տուն առաջնորդելու իրավունքը դեռևս չունի, կարականապես հրաժարվեցի:

– Չէ՛, շնորհակալ եմ,– ասացի,– գյուղում գործս արագ պիտի վերջացնեմ, որ դեռ Վերիշեն ու Ներքիշեն էլ այսօր հասնեմ:

– Լավ, բայց մի տեղ, մի քիչ, մեկ է, պիտի հանգստանաք, ի՞նչ կլինի, գնանք մեր տուն:

Մինչ ես հրաժարվում էի, երեխան էլ՝ համոզում, հասանք գյուղ:

– Հրե մեր տունը, դե՛, եկե՛ք, էլի,– այս ասելով՝ բաց դարպասից ձայնեց,– մամ, հայաստանցի դոնախ ունեք:

Մայրը՝ երիտասարդ մի կին, կարծես հյուրընկալ որդու արարքից փառավորված, նույնքան և ավելի ջերմությամբ ընդառաջ գալով ինձ, որ դեռ կանգնել էի դրսում, ներս հրավիրեց:

Տանն ուրիշ ոչ ոք չկար, և մինչև այցելությանս նպատակի մասին մի քանի հարցումների կպատասխանեի, կինը հասցրեց սեղանին դնել «եղուծու», հաց-պանիր և գոմեշի մածուն:

Մոտեցանք սեղանին: Մինչ ես վայելում էի ամեն բան չափազանց համեղ թվացող տնական սնունդը, նկատեցի, որ տղան քաղցած չէր, բայց քաղաքավարությամբ ընկերակցեց ինձ:

– Սրտախի հաց կերեք,– ասաց իմ դիմաց նստած որդու կողքին կանգնած մայրը՝ մեղմ ու կարծես երախտազիտությամբ շոյելով տղայի գլուխը:

Հազիվ կես ժամ անց, երբ կյանքի դպրոցում ազգասիրության ու մարդկայնության հերթական դասը ստացած՝ շնորհակալությամբ հրաժեշտ տվեցի բուզուխցի ընտանիքին, նկատեցի, որ տղան վազքով բարձրացավ դեպի մեր հանդիպման վայրը, որտեղ արածում էին իրենց կենդանիները:

Արդյոք ո՞ր եք հիմա դուք, իմ բնավեր, պատվական ու թանկագին բուզուխցիներ...

Ծանոթություն Շահեն Մեղրյանի հետ

1984 թ. Շահումյան մեկնեցի անսովոր բեռով: Բացի անբաժան ուսապարկիցս՝ Երևան-Շահումյան ավտոբուսի մեջ մի կերպ խցկեցի իրար լավ կապկպած 1,2 x 1,0 մ չափի 12 հատ հաստ սովարաթուղթ, որոնցից յուրաքանչյուրը նվիրել էի Շահումյանի շրջանի մեկ բնակավայրի և նրանց վրա բացատրագրելով փակցրել տվյալ գյուղի պատմական հուշարձանների լուսանկարները: Մտադրվել էի այդ ցուցանակները նվիրել Շահումյան շրջկենտրոնում գործող պատմաերկրագիտական թանգարանին, որի տնօրենի՝ Մամիկոն Պետրոսյանի հետ ծանոթ էի նախորդ տարվանից և ոգևորված էի ստանձնած գործի նկատմամբ նրա բարեխիղճ ու հոգատար կեցվածքից:

Արդեն սովորական դարձած երթուղին շատ երկար էր, և տեղ հասա իրիկնադեմին, երբ թանգարանը ժամեր առաջ փակվել էր: Գործը հաջորդ օրվան թողնելով՝ տեղավորվեցի հյուրանոցում, որի գործավարն էլ արդեն ճանաչում էր ինձ:

Առավոտվա մի քանի ժամերը Շահումյանի հին գերեզմանոցում անցկացնելուց հետո վերադարձա հյուրանոց, վերցրի նվերս ու գնացի թանգարան: Ենթադրում էի, որ հարգարժան տնօրենին հաճելի պիտի լիներ պատրաստածս ցուցանակները, քանի որ թանգարանի ունեցածի համեմատ դրանք և՛ ավելի որակով ու մեծ էին, և՛ ընդգրկմամբ ու քանակապես ավելի հարուստ: Մեծ եղավ զարմանքս, երբ լուսանկարները դիտելուց հետո կարծես ավելի մտահոգվեց, քան ուրախացավ: Բոլորն աչքի անցկացնելուց հետո ասաց.

– Շա՛տ լավն են, բայց սրանք թանգարանում չենք կարող ցուցադրել:

Ապա քիչ մտորելուց հետո ավելացրեց.

– Ա՛յ եթե Միրզոկը թույլ տա, դժվարություն չենք ունենա:

Եվ էլի մի փոքր դիտելուց հետո վճռաբար ասաց.

– Հավաքի՛ր, հենց հիմա միասին գնանք ընկեր Միրզոկի մոտ ու ցույց տանք, գուցե ես քոյլ տա:

Գործի նման անակնկալ ընթացքից մի քիչ շվարած՝ հավաքեցի բոլորը: Միասին դեպի շրջկոմի շենք ուղղվեցինք: Ընդամենը մի քանի րոպե սպասելուց հետո քարտուղարուհին մեզ ներս հրավիրեց: Շահումյանի շրջանի առաջին քարտուղար Միրզոկի մասին նախկինում էլ լսել էի, բայց անձամբ ծանոթանալու առիթ մինչ այդ չէի ունեցել:

Ընդարձակ սենյակում միայն երկու հոգի էին՝ նստած խորքում տեղադրված գրասեղանի մոտ: Մեր ներս մտնելու պահին Միրզոկը, որ մյուս ընկերոջ համեմատ թե՛ ավելի տարեց էր և թե՛ ավելի հաղթանդամ, աշխուժորեն մեզ ընդառաջ եկավ, ձեռքով բարևեց, և հենց ոտքի վրա սկսվեց բերածս ցուցանակներին վերաբերող խոսակցությունը: Այդ ընթացքում պատի երկայնքով շարեցի 12 գյուղերի անուններով պատրաստված նկարաշատ ցուցանակները: Նույն պահին վեր կացավ նաև Միրզոկի գրասեղանի առջև նստած անձը, որն առաջին հերթին մոտեցավ Գյուլիստան գյուղի հուշարձանները ներկայացնող ցուցանակին, ապա հետաքրքրությամբ սկսեց դիտել նաև մյուսները: Ոգևորված ու դրվատանքի խոսքերով այնպես միացավ թանգարանում դրանք ցուցադրել-չցուցադրելու հարցի քննությանը, այնպիսի շնչով խրախուսեց ու արժևորեց աշխատանքը, որ ստեղծված մթնոլորտում Միրզոկին մնաց միայն իր բաժին ողջույնի խոսքն ասել:

Թույլտվությունը ստացված էր: Չկարևորվեց նույնիսկ հիմնական «թերությունը»՝ նկարատակերի բացատրականներում աղբրեջաներենի բացակայությունը:

Այնուհետև անձանոթն իր համար մեկ-երկու հարցումներով պարզեց, որ Խրիսափորի ձորակում դեռևս չէի տեսել Ջինավորի խաչը, և ինչպես կարգադրություն՝ ասաց.

– Վաղը՝ առավոտյան ժամը տասին, սպասի՛ր հյուրանոցում, միասին գնալու ենք Ջինավորի խաչ, հետո էլ մի լավ քեփ կանենք...

Ցուցանակները ձեռքիս՝ հաճելի տրամադրությամբ ես և Մամիկոն Պետրոսյանը դուրս եկանք շրջկոմի շենքից և կարծես հաղթանակած՝ կրկին ուղղվեցինք թանգարան:

– Ընկեր Պետրոսյան, ո՞վ էր այդ համարձակ ու հայրենասեր մարդը, որի միջամտությունն այդպես որոշիչ եղավ... հարցրի ես:

– Շահեն Մեղրյանը...



Սամվել Կարապետյանը Շահեն Մեղրյանի հետ հոր՝ Ջինավոր Մեղրյանի՝ ձորում գտած և Խրիսափոր-Գյուլիստան ճամապարհի մոտ կանգնեցրած 1174 թ. խաչքարի մոտ, որն արդեն այն ժամանակ ստացել էր «Ջինավորի խաչ» անունը (ձախից աջ՝ Շահեն Գովասափյան, Վահագն Կարապետյան, Սամվել Կարապետյան, Շահեն Մեղրյան)

ՀՈՒՇԵՐ ԱՐՑԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՇՐՋԱՆՆԵՐԻՑ

«Գերի»՝ մի քանի թույլտվություն

1993-1996 թթ. ընթացքում դեպի ազատագրված շրջաններ իրականացրած ճամփորդությունների ժամանակ արկածալից դրվագները հաջորդում էին միմյանց: Նրանցից որոշ պահեր վերհիշելիս՝ նույնիսկ այսքան տարի անց, կանքիցս անկախ, հոգիս ծիծաղով է համակվում:

Կարծես երեկ էր, բայց արդեն 25 տարի է անցել:

1993 թ. առաջին կեսերն էին: Դեպի ազատագրված շրջաններ իրարահաջորդ հերթական ճամփորդության ընկերակից ունեի Հայկ եղբորս:

Մեր ուղին սկսեցինք Քաշաթաղի շրջանից և առաջանալով Աղավնագետի հովտում գտնվող աղորեջանցի համարված և որպես այդպիսին՝ Ազատամարտի օրերին վտարված թրքացած քրդերից մնացած անբնակ գյուղերով, հովտի վերջին՝ պատմական Եզնարածանց (նախկին՝ Լեռնիքենդ) գյուղում հայաշեն թաղակապ բնակելի տունը տեսնելուց հետո անցանք լեռնանցքն ու սկսեցինք շրջագայել Հոչանց գետի հովտում փռված գյուղերով: Այս վերջինից հետո էլ անցանք Շավլայի հովիտը և քիչ-քիչ վեր բարձրանալով՝ ճամփորդության 6-րդ օրը՝ հուլիսի 4-ին, հասանք մի բարձր կետի, որտեղից արդեն շատ մոտ երևում էին Քաշաթաղի շրջանը Քարվաճառի շրջանից բաժանող լեռնաշղթան, լեռնանցքը հասող և զիզգագներով դեպի մեր կողմ իջնող հողե ճանապարհը, իսկ ցածում՝ ուղղակի մեր առջև՝ այժմ Հայթաղ վերանվանված Գռչու գյուղը:

Արդեն երեկոյանում էր, և մտածում էի հրդեհված գյուղում զիշերելու համար շեն մնացած մի տուն կամ թեկուզ մի կտոր ծածկ գտնել: Միջանկյալ ասեմ, որ այդ ճամփորդությունների շրջանում մեր ուսապարկերը հնարավորինս թեթև լինելու համար ոչ այնքան էական նկատված յուրաքանչյուր պարագա ի սկզբանե դուրս էինք բողել: Ավելորդ իրերի թվում էր հայտնվել նույնիսկ իմ՝ ոչ այնքան ծանր վրանը, ուստի հնարավոր անձրևներից խուսափելու համար յուրաքանչյուր գիշերատեղիում գոնե մի ծածկ գտնելը մեզ համար կարևոր էր: Այն էլ ասեմ, որ չնայած մեր շալակած և օրավուր սպառվող սննդամթերքի պաշարներին՝ գոնե իմ ուսապարկը գյուղերի ավերված գրադարաններից հավաքածս գրքերի պատճառով թեթևանալու փոխարեն անընդհատ ավելի ու ավելի էր ծանրանում: Այդ ճամփորդության ընթացքում չափերով ու քաշով հատկապես անդուր էր Աղորեջանական խորհրդային հանրագիտարանի (տանս գրադարանում պակասող հատորներից մեկը), ի թիվս այլ գրքերի, շալակած տանելը:

Հեռադիտակն աչքերիս՝ շրջում եմ տնետուն և վերջապես գյուղամիջյան թեթև բարձրության վրա հրդեհից զերծ մնացած կրկնահարկ կանգուն մի շենք եմ նկատում:

Դե՛ ինչ, գիշերատեղը որոշված էր, մնում էր օրվա վերջին մոտ 3 կմ տարածությունը կտրել ու մտնել գյուղ: Կարճ հանգստից հետո արդեն ուզում էինք շալակել ուսապարկերն ու իջնել դեպի գյուղ, երբ լեռնանցքից դեպի մեր կողմ իջնող երեք մեքենա երևաց: Նորից դիրքավորվում ենք և հեռադիտակով ուշադիր նայում մեզնից ուղիղ գծով մոտ 6 կմ հեռավորության վրա զիզգագներով դեպի ցած իջնող զինվորական մուգ կանաչ գույնի մեքենաներին: Նրանցից մեկը՝ առջևից ընթացողը, «Վիլիս» էր, իսկ մյուս երկուսը՝ բեռնատարներ՝ «Կռագ» և «Կամազ»:

Դեռ մայիս ամսից անվերջ արժարժվում էր ազատագրված շրջանների վերադարձման խայտառակ հարցը, և արտաքին աշխարհից օրեր ու շաբաթներ իսպառ կտրված՝ յուրաքանչյուր ճամփորդության ընթացքում թաքուն անհանգստություն ունեի. չլինի՞ թե հանկարծ «մեր իշխանությունները» այդ պիղծ գործարքն իրականացրած լինեին, և մենք էլ, բանից անտեղյակ, ընկնեինք աղորեջանցիների ձեռքը: Ավելորդ էլ ասել, որ չունեինք ոչ մերօրյա ձեռքի հեռախոսներ և ոչ էլ անգամ ճամփորդական ռադիո, ուստի այդ ընթացքում գտնվում էինք աշխարհից լիակատար մեկուսացած վիճակում:

Նայում էի հակառակ կողմից նույնպես դեպի գյուղ իջնող զինվորական մեքենաներին և գոնե եղբորս ավելորդ անհանգստություն չպատճառելու համար մտածումներս չէի բարձրաձայնում: Վերջապես մի շաբաթ էր, որ աշխարհից ոչ մի լուր չունեինք, և ո՞վ գիտե, թե այդ ընթացքում ինչ էր կատարվել:

Այս մտքերով շարունակում էի հեռադիտակով հետևել զինվորական մեքենաներին, որոնք արդեն հասել էին գյուղ: Բեռնատարները տեսադաշտիցս կորել էին, պարզ էր, որ նրանք կանգ էին առել մեր դիտակետից անտեսանելի տեղում: Դրա փոխարեն անընդհատ շարժման մեջ էր «Վիլիսը». կարծես ինչ-որ բան էր որոնում, քանի որ անընդհատ մի ուղղությամբ առաջ էր շարժվում, ապա վերադառնում և նույն երթը կրկնում մեկ այլ ուղղությամբ:

Վերջապես բացարձակ վստահություն վայելող ներքին ձայնիս դրոշմաբ որոշեցի գյուղ իջնել: Շալակեցինք մեր ուսապարկերը և սկսեցինք քայլել դեպի գյուղ:

Գյուղեգրով հոսող գետակն անցնելով՝ շատ մոտից լսվում է կարծես դեզերումների մեջ գտնվող «Վիլիսի» ձայնը, որը հեռանում է մեզնից ձախ ընկած թաղամասի ուղղությամբ: Մինչ այդ մենք էլ հասնում ենք գյուղամիջյան այն ճանապարհին, որով թույլենք առաջ անցել էր մեքենան: Մտածում էի կանգ առնել, քանի որ համարյա համոզված էի, որ արդեն մի քանի ուղղությամբ գնացած ու վերադարձած մեքենան մալ այս անգամ ետ դարձով պիտի դուրս գար դեմ հանդիման:

Շուտով լսվում է վերադարձող մեքենայի՝ վայրկյան առ վայրկյան ավելի մոտեցող ձայնը: Ծամփեզրի մեր կանգնած տեղը մի փոքր ոլորան ուներ, ուստի «Վիլիսը» մեզ նկատեց գրեթե միայն վերջին պահին և մի լավ փոշի բարձրացնելով՝ կտրուկ արգելակեց:

Ուսապարկերից գատ՝ միայն ձեռնափայտս կար, ուստի գոնե արտաքուստ հաստատ վտանգավոր թվացող կերպարանք չունեինք:

Որոշեցի ինքս մոտենալ մեզնից մի 20-25 մետր հեռու անշարժացած մեքենային: Մոտենում եմ վարորդի կողմից և մի երեք մետր չհասած՝ բարևելով կանգ առնում: Վարորդն առանց բարևիս պատասխանելու դռան բաց պատուհանից լուռ ու անթարթ ինձ է նայում: Կամքիցս անկախ՝ հայացքս գցում եմ վարորդի կողքին նստած, նույնպես լուռ մյուս զին-

վորականի կողմը և նկատում, որ սա ավտոմատը պատրաստ դիրքով մարմնի կես մասով արդեն դուրս է եկել իր կողմից գզուշորեն բացած դռնից և վարորդի նման անթարթ ինձ է նայում:

Չգիտեմ՝ քանի ակնթարթ տևեց այս ամենը, բայց սիրտս պատվեց իրական անհանգստությամբ, մանավանդ այն պահին, երբ նկատեցի մեքենայի մեջ կանգնած և կիսաբաց դռնից դանդաղ դուրս ելնող զինվորականի՝ քիչ սեխաձև գլուխը:

Այդ ծանրագույն ակնթարթներին ինքս ինձ նախատում էի, թե ինչո՞ւ մոտենալիս նույնիսկ մտքովս չէր անցել, որ գոնե մեքենայի համարանիշներին ուշադրություն դարձնեի: Հիմա կանգնել եմ երկու զինվորականի առջև, որոնցից մեկը չի խոսում, մյուսն էլ, հերիք չէ՝ չի խոսում, դեռ գլուխն էլ քիչ սեխաձև է: Եվ մինչ գլուխս ծակում էր այն տակալի միտքը, թե գուցե իրապես արդեն տեղի է ունեցել դավաճանական մեծագույն արարքը, և տարածքներն էլ հանձնել են, իսկ մենք էլ դրանից ոչ մի լուր չունենք, հանկարծ այնքան երկար ընդմիջումից հետո վարորդն արձագանքում է բարևին: Մո՞տեմք մեկ ակնթարթում ցրվում է, շունչս՝ տեղն ընկնում: Անթաքույց ուրախությամբ թեքևացած բացականչում եմ.

– Ա՛յ ախպերս, բա մի ձա՛յն հանի, ես էլ արդեն մտածում էի, թե...

Խոսքս չհասցրի ավարտել, քանի որ վարորդի կողքի զինվորականը հրամայեց առաջ անցնել: Այս հրամանն ավելի խրոխտ ձայնով կրկնեց, երբ ասացի, թե գոնե մեր ուսապարկերը դնենք մեքենայի մեջ:

Ի՛նչ արած, քայլում ենք մեր հետևից դանդաղ ընթացող մեքենայի առջևից: Կանգ ենք առնում մի գետակի առջև: Մինչ մտածում էի, թե ինչպե՞ս պիտի անկամուրջ ջուրն անցնեիք, հնչում է հերթական հրամանը.

– Ի՞նչ եք կանգնել, ջո՛րն անցեք:

Ճար չկար, շրմբի-չրմբիցով ջուրն ենք անցնում: Սրանից քիչ նեղսրած՝ ինձնից ինը տարի փոքր եղբայրս ասում է.

– Այս ի՛նչ փորձանքի մեջ ընկանք:

Պատասխանում եմ.

– Հայկ ջան, չմտածե՛ս, գնում ենք խորոված ուտելու:

– Չէ՛, չէ՛ մի,– սա էր պատասխանը:

Սկսում ենք հողե ճանապարհով բարձրանալ դեպի կանգուն այն միակ տունը, որը դեռ գյուղ չմտած, իբրև հարմար գիշերատեղի, ես էլ էի նկատել և աչքիս տակ առել:

Թմբի գլխին գտնվող երկհարկ տան բակում մեզ են դիմավորում հարցական հայացքները մեր կողմն ուղղած մոտ 15-20 զինվորականներ:

Հասնում ենք իրենց: Տեղի տալով դեռ չմարած բարկության՝ որոշում եմ բարևս մի քանի ակնթարթ ուշացնել, որով փոխադարձաբար նույնպիսի անորոշության ու լարվածության եմ մատնում մեր այն զինվորներին, որոնցից երկուսը ըստենք առաջ բարևիս ուշացումով էին պատասխանել:

Կանգնել ենք մեր զինվորների առջև՝ մի 5-6 մետրի հեռու, և պարզ լսում եմ միմյանց ականջին փոխանցվող փսփոսոցները. «Ուրեմն դեռ թուրքեր կան», մյուսը, թե «Սրանք բնակիչներ չեն, այլ լրտեսներ»:

Վերջապես բարևեցի, և մեզ թուրք կարծող զինվորների մեջ թեթև իրարանցում ընկավ:

– Եթե կարելի է, ուզում եմ Ձեր հրամանատարին ներկայանալ:

Տեսնում եմ՝ դեպի ինձ են առաջանում երկու հոգի, մեկը՝ կադավրով, մյուսը՝ ձեռքին մի աթոռ (ակամա մտաբերում եմ բոլշևիկյան հեղափոխության մասին տեսածս խորհրդային ֆիլմերի այն դրվագները, երբ չզիտես ինչու միշտ սպիտակ գվարդիական կադատամանին կրնկակոխ հետևում է աթոռը ձեռքին համհարզը):

Հրամանատարը տեղավորվում է առջևս հարմարեցված աթոռին: Ողջունում եմ և անձնագիրս մեկնելով՝ ներկայանում: Վերցնում է, զննաբար նայում: Նույն պահին կողքին կանգնած մեկ ուրիշ զինվորական հրամանատարի ականջին փսփսում է.

– Կեղծ կլինի:

Փորձում եմ մեր նպատակի, աշխատանքի և անցած ուղու մասին տեղեկություններ փոխանցելով՝ փարատել կասկածները: Թվարկում եմ նախորդ օրերի ընթացքում մեր անցած գյուղերը, թե որ գյուղում հայկական ինչ հնություններ ենք տեսել:

Հրամանատարը լսում, լսում է և մեկ էլ ասում.

– Խաչքա՞ր, ի՞նչ խաչքար, այստեղ ի՞նչ խաչքար կարող է լինել:

Սկսում եմ ավելի հանգամանալից և հավելյալ տեղեկություններ փոխանցել այն մասին, որ այս բոլոր գյուղերը նախքան վերջին մեկ-մեկուկես դարերի ընթացքում թրքաբնակ դառնալով դարեր շարունակ հայաբնակ էին, ուստի և հայկական շատ հուշարձաններ են պահպանվել, որոնք գտնել-ուսումնասիրելու նպատակով էլ ահա և մենք ընկել ենք սար ու ձոր:

Հրամանատարն իր կաշվե պայուսակից դուրս է բերում մի քանի ծալքով փոքրացրած խորհրդային ռազմական քարտեզն ու այնպիսի դիրքով, որ ես չտեսնեմ, փորձում է գտնել այն գյուղերը, որոնք արդեն թվարկել էի:

– Ասում ես՝ ո՞ր գյուղերն եք անցել:

Նորից հերթականությամբ կրկնում եմ մի քանի գյուղերի անունները, իսկ հրամանատարը շարունակում է փնտրել: Վերջապես ոչ միայն, որ համբերությունս է հատում, այլև ուզում եմ գործը հեշտացնել, մեր անցած երթուղին ընդգծած նույնպիսի քարտեզի իմ օրինակն եմ ուսապարկիցս դուրս բերում: Ընթացքում կատակի տալով ակնարկում եմ, թե ձեր քարտեզը 100:000-անոցն է, իսկ իմը՝ կրկնակի մանրամասն՝ 50.000-անոցը (դե՛, հակառակ հրամանատարի գզուշավորությանը, քարտեզը բացելու պահին մի ակնթարթ աչքս դիպել էր, և հասկացել էի, որ հրամանատարի ձեռքին ընդամենը 100.000-անոցն է):

Ուսապարկիցս հանում եմ նաև դաշտային գրառումներիս հաստ տետրը և ցույց եմ տալիս մեր չափազրած կառույցներից մի քանիսը, նաև հայերեն արձանագրությունների ընդօրինակություններս, որոնցից մի քանիսի բովանդակությունը ներկայացնում եմ պատմողաբար:

Մինչ այս բոլոր զինվորները հնարավորինս մոտ խմբվել են մեր շուրջը և հետաքրքրությամբ լսում են:

Հրամանատարի խոսվածքն ինձ ծանոթ է թվում, ուստի հարցնում եմ, թե արդյո՞ք նա Ջավախքից է: Պատասխանում է.

– Այո՛, Կարգախ գյուղից:

Ասում եմ, որ մի քանի տարի առաջ Կարգախում և Ջավախքի անխտիր բոլոր բնակավայրերում էլ այս նույն նպատակով շրջագայել եմ, որ հենց Կարգախում էլ ճանաչում եմ այսինչ մարդկանց, որոնցից մեկն առաջնորդել է Խոզապին լճի ափին գտնվող Ավետենց սուրբը, մյուսն իր տանը հյուրասիրել է և այլն:

Հրամանատարի դեմքին ժպիտ է երևում: Մտորկանգնած զինվորականը հարցնում է.

– Սուխիսում է՞լ եք եղել:

Հասկացա, որ խոսքն Ախալցխայի Սուֆլիս գյուղի մասին է, ուստի դրա և մերձակայքի կարևոր հնավայրերն էլ թվարկեցի: Հետևեց մեկ ուրիշի հարցը.

– Իսկ Կուրթանո՞ւմ:

– Կուրթանում էլ, Հնեվանքում էլ...

Վերջապես մեկ ուրիշն էլ ասաց.

– Իսկ Գյառնիո՞ւմ:

– Գյառնիում էլ, Հավուց թառ և Աղջոց վանքերում էլ, որ գառնեցիներդ Սբ. Ստեփանոս ամուսնով եք ճանաչում, Գեղի բերդում էլ, որ Թաթուլ իշխանի բերդ կամ Կաքավաբերդ եք կոչում:

– Ախպե՛ր, ըսենց թուրք չի՛ լինում,– ծիծաղով բարձրաձայնում է զինվորներից մեկը:

– Դե որ այդքան տեղ շրջել եք, կարո՞ղ ես ասել, թե այս ի՞նչ գազան է ոտքս կծել,– ասում է հրամանատարն ինձ և շարժարդ վեր քշտելով՝ մատնացույց անում ոռած ոտքը, հետն էլ շարունակում,– տղե՛րք, ուշադի՛ր, էն խոտվածը հանկարծ չվառվի՛...

Նայում եմ եղբորս ու ասում.

– Իսկ դու չէի՛ր հավատում...



Սամվել Կարապետյանը Քաշաթաղի Փարաջանց գյուղի դիմաց (ուս.՝ 1994 թ.)

Կապիտան Վահագն Հակոբյանի հիշատակին

Քարվաճառի շրջանի ազատագրումից և Բաշլիբեյ գյուղում թուրք հրոսակների վերջին հեռակետի վնասագերծումից երկու շաբաթ անց պատմական հուշարձանների ուսումնասիրության նպատակով եղբորս՝ Վահագնի հետ արդեն շրջանում էինք: Հակառակ մերոնց անմախաղեպ հաղթանակների առաջ բերած համընդհանուր ոգևորությանը՝ օդը լցված էր իշխանությունների՝ ամենաբարձր մակարդակներից հնչող վիստեցնող հայտարարություններով առ այն, որ շատ շուտով ազատագրված շրջանը պետք է վերադարձվեր թշնամուն: Դժվար էր կանխորոշել, թե ի՞նչ էր լինելու օր կամ շաբաթ անց, ուստի գոնե ինձ մնում էր անել հնարավոր ամեն ինչ՝ գտնել ավելի մեծ թվով հայկական հուշարձաններ, դրանք լուսանկարել-չափագրել: Չէ՞ որ շրջանը թուրքին վերադարձնելու պարագայում նախ և առաջ և հատկապես մշակույթով էինք հատուցելու. կատաղած թուրքն իր վրեժը մեր հիշատակներից պիտի առներ: Այս առումով բռնաձու գործը քիչ մնանվում էր Առաջին աշխարհամարտի ժամանակ Նիկողայոս Մառի կազմակերպած արտահերթ արշավախմբի գործունեությանը. առաջացող գորքի հետևից հասավ Վան և այն ժամանակ, երբ գորքը ճակատում պատերազմում էր, նա Վանում հասցրեց շատ կարևոր ուսումնասիրություններ կատարել:

Ոչ ոք չէր կարող ասել, թե ի՞նչ էր լինելու, ուստի գոնե ինձ մնում էր առավելագույնս օգտվել ընձեռված բացառիկ հնարավորությունից: Հենց այս նպատակով և մտահոգությամբ առաջին երկշաբաթյա ճամփորդությանը հաշված օրեր անց հետևեց երկրորդը, ասպա՝ երրորդը և այդպես շարունակ: Երրորդ ճամփորդությունս սկիզբ առավ 1993 թ. հուլիսի 31-ին: Այս անգամ ինձ ընկերակցում էր փոքր եղբայրս՝ Հայկը:

Օգոստոսի 2-ին օրվա մեծ մասն անցկացրինք Հանդաբերդում և գրեթե ավարտին հասցրինք բերդի հատակագծի և պարսպապատի մի ճակատի չափագրումը: Օրվա վերջին իջանք Չափնիի ուղղությամբ: Այստեղ մեր հրետանավորներն էին: Ծանոթացանք հրամանատար Վահագն Հակոբյանի հետ, որ հենց սկզբից տպավորվեց մարդկային որակներով՝ համեստ, բարեկիրթ, խիստ, միևնույն ժամանակ՝ ցածրախոս: Ծանոթացանք նաև կոմբատ Մամվել Աղոյանի հետ: Առաջարկեցին գիշերն անցկացնել գործնասում՝ իրենց հետ: Ուրախությամբ համաձայնեցի, մանավանդ որ հաջորդ մեկ-երկու օրերը հենց Չափնիի մերձակայքում պիտի աշխատեինք:

Գիշերը տազնապ եղավ: Լուր ստացանք այն մասին, որ բոլորքերը Մոավի կողմից գրոհում են: Քիչ անց մի լուր էլ հասավ, որ մարտերն ընթանում էին Յանշաղ գյուղի մատույցներում: Մեր հրետանավորները հաուրից թնդանոթից երեք արկ ուղարկեցին թշնամու դիրքերի ուղղությամբ: Եվս հիմնք էլ լուսադեմին, երբ իմացանք, որ մարտերը շարունակվել էին ամբողջ գիշեր, և այդ ընթացքում մերոնք թուրքերին մինչև վերջ հետ էին շարտել:

Որոշվեց, որ կրկին գործառնա՞սում գիշերենք: Օգոստոսի երեքն ամբողջությամբ անցկացրինք Չափնիի վանական համալիրում և նրա շուրջը տարածված խաչքարաշատ գերեզմանոցում, իսկ հաջորդ օրը Վահագնը և Մանվելը մեզ առաջնորդեցին Փոքր Լև կամ Թարքաղայա կոչված հին գյուղատեղիում պահպանված միջնադարյան եկեղեցի, որի մուտքի առջև եղբայրս մեզ երեքիս լուսանկարեց: Հրաժեշտին Վահագնը ասաց.

– Ես տանը ճիշտ քո ոտքերի չափով, հարմար, զինվորական մի գույգ կոշիկ ունեմ, մոտ մի ամսից կարճ արձակուրդով Երևանում եմ լինելու, ինձ հեռախոսիդ համարը տո՛ւր, հանդիպենք, փոխանցեմ:

Չէր մոռացել: Մեպտեմբերին զանգեց և մետրոյի «Բարեկամություն» կայարանի մոտ կոշիկներն ինձ փոխանցեց:

– Գործդ կարևոր է, իսկ սրանք քեզ բավական երկար կծառայեն,– ասաց և զինվորական կոշիկներն ինձ մվիրեց:

Անսահման զգացված էի Վահագնի ուշադրությունից, նրա հոգատարությունից և պարտաճանաչությունից, որ, իհարկե, նկատել էի դեռ գործառնա՞սում նրա հրամանատարության ներքո գտնվող զինվորների հետ վերաբերմունքից:

Դա մեր երկրորդ և ընդամենը բուպեներ տևած վերջին հանդիպումն էր: Միայն մի քանի նախադասություն փոխանակեցինք: Շնորհակալության անօրինակ զգացումով ստացա նվերս, նաև իմացա, որ Վահագնը մանկահասակ մի դուստր ուներ, կարոտից շատ էր նեղվում, սակայն ընդամենն օրեր անց ստիպված էր գործառնա՞ս վերադառնալ:

Ես շարունակում էի դեպի ազատագրված շրջաններ իրարահաջորդ արշավներս և այդ ընթացքում վայելում հարմարավետ նվերս:

1993 թվականի դեկտեմբերի 31-ին թուրքերը շրջանը վերագրավելու մի հուժկու փորձ ևս արեցին, և այս անգամ ճակատը ճեղքելով՝ նրանց հաջողվեց հասնել գրեթե մինչև Տրտուլի (Թարթառ) ավիդ: Մեր զինված ուժերը, իհարկե, արդեն փետրվարին կարողացան թուրքերին մի անգամ ևս հետ շարտել և վերատիրանալ Մռավի գագաթնամերձ բարձունքներին տեղակայված մեր դիրքերին, սակայն դա իրականացվեց մեր լույս եղբայրներից և զավակներից շատերի կյանքի գնով: Նրանց մեջ էր և կապիտան Վահագն Հակոբյանը...

Չինակից ընկերներն ավելի ուշ պատմեցին նրա անհետ կորելու, բայց իրականում նահատակության մասին: Հունվարի 18-ին Գորտագարակ (Ղանլըգյու) լճից մոտ 300-400 մետր հյուսիս թեժ և անհավասար մարտի պահին Վահագնը զինվորներին նահանջի հրաման է տվել, իսկ ինքը շարունակել է դիրքը պահել...

Ոստիկ դեմ ծառացած ու կյանքը սրբազան Հայրենիքին նվեր մատուցած հայի ազնվագույն տեսակ Վահագն Հակոբյանն արդեն 25 տարի անմահացել է:

Մե՛նք, որ շատերի թվում նաև Վահագնի գոհաբերության շնորհիվ ենք ապրում, պարտք ունենք՝ ձգտելու արժանի լինել նրա և նրա նմանների հիշատակին: Յմահ խոնարհումս...

Ջուրը տաքացրո՛ւ, գալիս եմ

1993 թ. Հորադիզի ազատագրումից անմիջապես հետո որոշեցի տեղում սկսել ուսումնասիրություններս և հնարավորինս գտնել, չափագրել, լուսանկարել այն, ինչ հայկական էր և չէր հոշոտվել թուրքի կողմից: Ընդհանրապես մի միտք ունեի՝ ազատագրված ամեն տարածքում գտնել հայկական մշակութային արժեքները և աշխարհին ներկայացնել դրանք:

Դժվար էր կանխորոշել, թե հետագայում ինչ կլիներ, չէ՞ որ ազատագրված շրջանների վերադարձման մոդկալի խոսակցություններն անընդհատ շրջանառվում էին:

Մեն-մենակ ճանապարհ ընկա: Հայաստանում ցուրտ ու մութ տարիներն էին, հոսանքը հովհարային անջատումներով էին տալիս:

Սի քանի օր աշխատանքներս ընթանում էին առանց որևէ խոչընդոտի: Հիմնական գործս արդեն վերջացրել էի, մնացել էր մի օրվա գործ: Առավոտյան պիտի քայլեի 17-18 կմ, լուսանկարելի, չափագրելի և ավարտելով աշխատանքս՝ վերադառնալի Երևան:

Քայլում եմ: Դճանապարհին հանկարծ մի «Վիլիս» մեքենա տեսա: Կանգնեց: Չարմացած հայացքներով ինձ եմ նայում: Բարևեցի: Ես էլ ուրախացել եմ՝ ի՞նչ լավ է, կխնդրեմ, մեքենայով ինձ կհասցնեն այնտեղ:

– Ո՞վ ես և ի՞նչ ես անում այստեղ,– հարցնում են ինձ:

Պատասխանում եմ նրանց հարցերին: Չեմ հավատում: Հրամայում են, որ նստեմ մեքենան: Ենթարկվում եմ:



Սամվել Կարապետյանը Փոքր Լևի եկեղեցու առջև հրամանատար Վահագն Հակոբյանի (կենտրոնում) և կոմբատ Մանվել Աղոյանի (աջ կողմում) հետ (լուս.՝ 04.08.1993 թ.)

Արագ շարժվում են, և մի քանի ժամից հասնում ենք Երևան: Մտածում եմ. «Լա՛վ, ես մեծ դժվարություններով պիտի հասնեի Երևան: Ոչինչ, որ մի հուշարձան չհասցրի չափազրել ու նկարել, կավարտեմ հաջորդ ճամփորդության ժամանակ»:

Ամբողջ ճանապարհին այս մարդիկ լուռ են և չեն խոսում: Վարորդը շատ արագ է վարում: Երեկոյան արդեն Երևանում ենք: Ինձ ուղեկցում են Ազգային անվտանգության շենք: Ներս ենք մտնում: Սեղանի մոտ նստած մի պաշտոնյայի են ինձ ներկայացնում: Խնդրում են թույլտվություն սեղանին դրված հեռախոսով զանգելու համար: Թույլատրում է: Չանգում են տուն և ասում կնոջս.

– Գա՛յ, Երևանում եմ: Ջուրը տաքացրո՛ւ, գալիս եմ...

Իմ ես խոսքերի վրա դուք պիտի տեսնեիք այդ պաշտոնյայի զարմանքը: Նա զարմանում է, որ ես չեմ պատկերացնում, թե ո՞ր եմ ընկել: Հարցեր է տալիս, պատասխանում եմ: Չի հավատում: Էլի հարցեր ու հարցեր...

Տույց եմ տալիս պայուսակիս նյութերը և ասում. «Էս ձեռք հետևում՝ պատի վրա փակցրած քարտեզն էլ ես եմ գծել»:

«Գերի»՝ մի կես ժամով

1994 թ. օգոստոսի 31-ին՝ արշավիս 11-րդ օրը՝ կեսօրն անց, հասել էի Դաղի վանք: Միտքս այն էր, որ վանքից անընդհատ հյուսիս բարձրանալով՝ հասնեմ և առաջին անգամ տեսնեմ խորհրդային քարտեզներում թուրքերենով Ղանլըգյոլ (Արյան լիճ) արձանագրված լճակը, որ հետո Մարգիս Ջալալյանցի մի տեղեկությունից օգտվելով՝ այն կնքեցի Գորտագարակ անվամբ:

Դեպի լիճ ձգվող ճանապարհը բավական երկար էր, և արդեն մութն ընկնելու պահին հազիվ հասա անտառներով շրջապատված և մի ընդարձակ բացատ ներկայացնող Բաղուփայա հորջորջված գյուղատեղին: Դեռ ճանապարհին այնքան մապաստակ ու աղվես էին հանդիպել, ինչպես նաև վարագի քանդակաձևեր և արջի գուգարանային հետքեր (հիմնականում հոնի կորիզների բաղադրությամբ), որ ինձ համար միանգամայն պարզ էր՝ որևէ շինությունից զուրկ ամայի գյուղատեղիում գիշերն անցկացնելս որքա՛ն հետաքրքրական պիտի լիներ կենդանական աշխարհի ներկայացուցիչների համար: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ գիշերատեղս որոշելուց հետո, համենայն դեպս, մի քիչ փայտ հավաքեցի ծայրահեղ իրավիճակի համար: Ինչո՞ւ ծայրահեղ, որովհետև մտածում էի՝ գիշերվա խարույկը շատ հեռվից էլ կնկատվի, որը հատկապես մեր զինվորականները կարող են վերագրել, օրինակ, թուրքական հետախույզների թափանցման և, ով գիտե, ի՞նչ կլիներ դրա վերջը: Չգիտեմ, գուցե և զգուշավորության մեջ չափն անցնում էի, բայց կարծում էի, որ ավելի ապահով է գործ ունենալ զազանների, քան թե քեզ թուրք կարծող հայ զինվորականության հետ, ուստի, ինչպես արդեն նշեցի, փայտը հավաքեցի՝ մեծ հույսով, որ ստիպված չեմ լինելու այն խարույկի վերածել: Մոմլաթի մի կտորը քնապարկիս տակ փռեցի և միակ երազանքով, որ գիշերն անանձրև անցնի, մտա պարկիս մեջ: Ավելորդ է ասել, որ գուտ քաշի պատճառով (մանավանդ երբ միայնակ էի ճամփորդում) հետս վրան չէի վերցրել: Աստղալից, բայց մթնկա գիշեր էր: Լուսինը, որ շատ փոքր էր, հազիվ մեկ ժամ երևաց ու անհետացավ: Հազիվ էի հարմարվել, երբ սկսեցի ավելի պարզ լսել մերթ հեռվից, մերթ շատ մոտ հնչող տարբեր կենդանիների ոռնոցներն ու ճղրոցները: Կարծես անվերջ ոմանք խժռելիս լինեիք:

Համարյա արդեն վարժվել ու համակերպվել էի այդ ձայներին, կամ հոգնությունս էր իր գործն անում, մեկ էլ վեր թռա մի առեղի թռչունի թևերի ճողվյունից, որ սրընթաց իջավ, բայց կարծես միայն վերջին պահին հասկանալով, որ ես իր պատկերացրած որսը չեմ կարող լինել, և ինքն անգոր է ինձ վեր բարձրացնելու, մթության մեջ սկին խփող լայն թևերի ծանր աշխատանքով կրկին վեր բարձրացավ: Այս հսկա, բայց հիմար թռչունը մի քանի անգամ նույնը կրկնեց: Ամեն անգամ այնքան էր մոտենում, որ հետադարձի ժամանակ թևերի ուժգին թափահարման պահին արդեն մի քանի մետրից դեմքիս քամի էր հասցնում: Որպեսզի հնարավորինս ավելի շուտ հասկացնել տամ, թե ես իր բանը չեմ, մտքովս անցավ հետևյալը. մոտենալու պահին սկսեցի ժրաջանորեն ոտքերս ու ձեռքերս թափահարել: Այս գործողությունը կարծես օգուտ տվեց: Համենայն դեպս, մի քանի փորձից հետո թռչունն ինձնից ձեռք քաշեց ու հեռացավ:

Նորից տեղավորվեցի քնապարկիս մեջ և հույս ունենալով՝ այլևս փորձություն չի լինի, տրամադրվեցի, որ քնեմ, չնայած, անկեղծ ասած, հակառակ հոգնությանս, լարվածությունից քունս փախել էր: Մյուս կողմից անօրինակ խոնավություն կար, և երկու-երեք ժամվա մեջ քնապարկս հասցրել էր բավականին թրջվել: Մի կողմից կենդանիների՝ այդքան առատ ներկայությունը, մյուս կողմից անտանելի խոնավությունն արդեն ստիպում էին, որ խարույկի պատարաստություն տեսնեմ, բայց դեռ վերջնական որոշում տալ չէի կարողանում:

Որոշեցի, այնուամենայնիվ, փորձեմ գոնե մի քիչ քնել, բայց գիշերատեղս բառիս բուն իմաստով զազանանոց էր: Թռչունի գրոհներից հազիվ մի 20 րոպե էր անցել, երբ այնքան մոտ՝ գուցե միայն մի 8-10 մետրի վրա, փայտի կոտրվելու բարձր ձայն լսեցի: Անմիջապես նստեցի, վայրկյան առաջ փորձում եմ եղյամով պատած ակնոցս չորացնել, որ ձայնի ուղղությամբ կարողանամ մի բան տեսնել, բայց ոչինչ չկար, կամ մինչ ես կարողացա մի բան տեսնել, այլևս ոչինչ չկար: Այդպիսի ձայնով փայտը կարող էր միայն բավական ծանրաքաշ կենդանու ոտքի տակ կոտրվել, իսկ այդ կենդանին տվյալ պահին և տվյալ վայրում հենց միայն արջը կարող էր լինել: Ուրեմն հիմա էլ ինձնով արջն էր սկսել հետաքրքրվել: «Իշտն ասած՝ սա արդեն մի քիչ շատ էր ինձ համար, և սարսափահար եղած, ներքին ձայնիս դղմամբ՝ հապճեպ դուրս թռա քնապարկիս միջից, 10 րոպե չարչարվելուց հետո մի կերպ խարույկ վառեցի: Փայտեր ավելացնելով՝ բորբոքեցի կրակը, և ինքս ինձ բռնացնելով նրանում, որ փաստորեն զազաններից ավելի եմ վախենում, քան ինձ թուրք կարծող հայ զինվորականության հետ հնարավոր հանդիպումից, տեղավորվեցի խարույկին հնարավորինս մոտ: Հետաքրքրական այն էր, որ այդ պահից սկսած՝ բոլոր մոտ ձայներն ինձնից հեռացան, և միակ անախորժ պահը կիսաբաց քնապարկս էր, որ կարողացա խարույկի մոտ ինչ-որ չավով չորացնել:

Սկսեց լուսանալ, և համարյա անքուն անցկացրած գիշերն անցավ պատմության գիրկը:

Առանց ժամանակ կորցնելու հավաքեցի ուսապարկը և ճամփա ընկա: Մոտ երեք ժամ անվերջ բարձրանալուց հետո դուրս եկա անտառային գոտուց (ձեռքիս խորհրդային 50.000-անոց քարտեզն ունեի, ուստի ինձ համար դժվար չէր



Գորտագարակ լիճը և Ս. Կարապետյանին ուղեկցող զինվորականները լճից ոչ հեռու ընկած խաչքարի մոտ (ձախից երկրորդը՝ Վաղինակ Չրադյան (Բոցման), 3-րդը՝ Աշոտ Մարտիրոսյան, 4-րդը՝ արտաշավանցի Սոս, լուս.՝ Ս. Կարապետյանի, 1994 թ.)

ճիշտ ուղին պահելը)։ Վերջապես կեսօրն անց բավական հեռվից նկատեցի մի լերկ լեռան ստորոտին գտնվող և որոշ իմաստով բնության միապաղաղ ու միանման տեսարանները կտորող Գորտագարակ լիճը։ Ճանապարհի հենց այս հատվածով անցնելիս ինձնից աջ՝ բավական մոտ տարածության վրա, ակնհայտորեն թարմ փորվածքներ տեսա։ Ուրոշեցի ճշտել, թե ի՞նչ են դրանք։ Պարզվեց՝ հունվարին Օսմարի կողմից շրջանի տարածք ներխուժած թուրքերի փորած խրամատներն էին։ Այստեղ, ի թիվս զինվորական հանդերձանքի մնացորդների և զանազան պարագաների, տեսա նաև մետաղական 3 տուփերով 7,62 միլիմետրանոց փամփուշտներ (յուրաքանչյուրի մեջ՝ 440 հատ, մեկ տուփը՝ կիսով բաց, բայց լեցուն, մյուս երկուսը՝ բոլորովին փակ)։ Թուրքի այդ խրամատից ինձ համար իբրև հիշատակ վերցրի գոտոց կախելուն հարմար մի պայուսակ, որ իրականում նախատեսված էր Կալաշնիկովի «մագազինների» համար։ Ի դեպ, այդ ավարս շատ տարիներ ինձ ծառայեց որպես լուսանկարչական սարքերիցս մեկի պայուսակ։ Այն պահել եմ մինչ օրս։

Լիճը շատ գեղեցիկ էր, և անկախ ինձնից՝ համարյա ամեն մի քանի հարյուր մետր մոտենալիս լուսանկարում էի։ Վերջապես ափ հասա։ Ի՞նչ գեղեցկություն, անաղարտություն։ Ուզում էի գոնե մի կետից լճի ընդհանուր տեսարան վերցնել, ուստի մի որոշ չափով բարձրացա հյուսիսակողմյան լեռնալանջը և այնտեղից լուսանկարեցի։ Ի դեպ, հակառակ նախնական պատկերացումիս, տեղում պարզվեց, որ լիճը փակ ավազան չէր։ Նրա հարավային ծայրից մի վտակ էր դուրս ելնում, որը քիչ անց մտնում էր Երիցուշենի ձորակը և իրեն միացող մի քանի վտակների շնորհիվ բավական հորդացած՝ ի վերջո ձախից միախառնվում Տրսու (Թարթառ) գետին։

Մոտ մեկ ժամ լճամերձ տարածքները չափչփելուց հետո (թաքուն հույս պահելով՝ մտածում էի, թե գուցե մերձակայքում մի վիշապաքար էլ կարող եմ հայտնաբերել) ի վերջո հրաժեշտ տվեցի բնության այս հրաշալիքին և սկսեցի իջնել։ Երևի 1-2 կմ հազիվ էի անցել և արդեն կրկին մոտեցել էի անտառային գոտու սահմանին, երբ ինձանից բավական ցած երեք զինվորի նկատեցի։ Եվս մի քանի րոպե, և արդեն մոտ տարածությունից ողջունում եմ մեր զինվորներին։ Մակայն տեսնում եմ, որ տղաները, ավտոմատները պատրաստ դիրքում պահած, ծայրահեղ կասկածոտ ու սառը հայացքներով զննում են ինձ և ակներև դժկամությամբ են արձագանքում բարկիս։ Փորձում եմ հնարավորինս շատ խոսել՝ մտածելով, որ կարելի է լարվածությունը չեզոքացնել, բայց օգուտ չունի։ Բացատրում եմ, թե ինչպես եմ եկել, ինչ տեղերով եմ անցել, օգուտ չունի։ Պարզվում է, որ հյուսիսից կամ որ նույնն է, թե թուրքերի կողմից մոտենալս մեր զինվորներին հիմք էր տվել կարծելու, թե ես թուրք հետահույզ եմ։ Պահանջում են, որ իրենց հետևեմ, և իրենք ինձ պիտի ուղեկցեն մինչև գորամաս։ Չեմ հակառակվում։ Սկսում ենք քայլել դեպի Յանշաղ գյուղ։ Ճանապարհին պատասխանում եմ տղաների հարցերին, ու մեկ էլ նրանցից մեկն ասում է.

– Հըլը մի հատ ասա՛ տրուբա։

Անմիջապես գլխի եմ ընկնում միտքը. չէ՞ որ թուրքերն իրենց լեզվական արտասանության սահմանափակ հնարավորությունների պատճառով ռուսերեն որոշ բառեր աղավաղված են արտասանում և մասնավորապես այդ մի բառի մեջ երկու տառ սխալ են արտաբերում։ Չգիտեմ, թե ինչու, բայց հենց այդ պահին կատակ անելս բռնեց, և որոշեցի բառն արտասանել այնպես, ինչպես կարող էին արտաբերել թուրքերը, և ժպտալով պատասխանեցի՝ թրուփա։

Վա՛յ, տեսնելու բան էր, թե ի՞նչ կատարվեց այդ պահին։ Երեքը միատեղ մեկ ակնթարթում տարբեր ուղղություններով, յուրաքանչյուրը մի քանի մետր հեռացած, ավտոմատները պատրաստ դիրքում պահած, անթարթ ինձ են նայում։

– Տղե՛րք,– ասում եմ,– կատակ արեցի, գիտեմ, որ թուրքերն այդ բառը չեն կարողանում արտասանել: Ահա, խնդրեմ, լսե՛ք, թե ինչպես պարզ հայավարի «տրուբա» եմ ասում:

Հետո էլ ավելացնում եմ, որ հայերեն դրան խողովակ եմ ասում: Չգիտեմ՝ որքան տեեց, բայց դաժան կատակիս պատճառով հարկ եղավ, որ հայ լինելս ապացուցող ջանքերս վերսկսեի գրոյից:

Վերջապես հասանք Յանշաղում գտնվող գորամասը, որտեղ ուղեկից զինվորներն ինձ ներկայացրին հրամանատարին՝ գնդապետ Թանգամյանին և թույլտվություն ստանալով՝ հեռացան: Բարեբախտաբար, այստեղ փոխըմբռնու՝ մը լիակատար էր, իսկ երեք տուփ փամփուշտների գտնված վայրը քարտեզի վրա մատնացույց անելս մի առանձին ուրախություն պատճառեց հրամանատարին: Հենց իմ ներկայությամբ անմիջապես կարգադրեց զինամթերքը գորամաս փոխադրելու խնդիրը լուծել:

Այդ գիշերն անցկացրի կարծախցի գնդապետի հրամանատարական մեծ վրանի մեջ, իսկ արդեն առավոտյան Հանդարեբդի կիսատ մնացած չափագրական աշխատանքներն ավարտին հասցնելու համար հրամանատարն ինձ օգնական կարգեց երկու զինվորի (հիշում եմ տղաների անունները՝ Վաղինակ և Մերոժ):

Դադի վանքի արջը

1994 թ. սեպտեմբերի վերջն էր: Որոշել էի մանրամասնորեն չափագրել Դադի վանքը: Ինձ հետ էին Հայկ եղբայրս և նրա կինը: Աշխատանքներն այնպես դասավորեցի, որ քանի դեռ օգնականներ ունեի, նախապատվությունը տվեցի չափագրությունների՝ սենակ գլուխ չբերելիք բաժիններին: Մի տասն օրվա մեջ ավարտելուց հետո հրաժեշտ տվեցի օգնականներին և գործը սկսեցի շարունակել արդեն միայնակ:

Հոկտեմբերի վերջերին չափագրական գործերս արդեն լիովին ավարտել և անցել էի ինձ ամենից հոգեհարազատ աշխատանքին՝ վիճագրերի ընդօրինակմանը: Աշխատանքային սեղանս և նույն ժամանակ ԱՇ չափի վատմանների պահոցս էին ինքնաշեն թղթադարանս, որը պատրաստել էի եկեղեցամերձ ավերված տանը մնացած կիսակործան զգեստապահարանի թիկունքի «ֆաներայից»: Ի դեպ, կաթողիկե եկեղեցուց հազիվ 30 մ հյուսիս-արևելք գտնվող մեկ սենյակից բաղկացած փոքրիկ տունն էլ կացարանս էր:

Վաղուց սպառված վերմիշելին լիուլի փոխարինում էր հոնի կաթուկը, որի մեկ-երկու բուռը ճաշի տեղ էր տալիս, դե իսկ մոտակա խնձորենիներն էլ ապահովում էին դեսերտի բաժինը: Վանքի հարավարևելյան կողմի փոքրիկ ձորում առատ բերքով ծանրացած մի տանձենի կար: Մրա պտուղները վայելելու մտքով քանի օրը մեկ այցելում էի ծառին, բայց տանձերը քարի պես խակ էին ու այդպես էլ խակ մնացին: Հետո եմ իմացել, որ «էշի տանձ» կոչվող տեսակին մինչև ցուրտը չի խփում, չի հասունանում, մինչդեռ անգեստ ակնկալում էի հոկտեմբերին համտեսել:

Ի դեպ, երբ ցերեկները մի կես ժամ հատկացնում էի ճաշին (նկատի ունեմ այցելությունս վանքամերձ մի որևէ հոնի ծառի տակ կուտակված բերքը), պատահում էի արջի զուգարամային հետքերի, որից հստակ էր՝ նրա սիրած սնունդն էլ հոնն էր, ինչպես նաև՝ վայրի տանձը, մոշն ու մատուրը: Սակայն սննդի խնդրում ճաշակակից կոլեգայիս այդպես էլ չհանդիպեցի:

Նոյեմբերի 2-ից եղանակները խառնվեցին, բայց մոտավորապես դեռ մեկ շաբաթվա գործ ունեի: Հույս ունեի, որ կավարտեմ, բայց նոյեմբերի 3-ի առավոտը դիմավորեցի ողջ աշխարհը ձյունի տակ անցած: Մինչև կեսօր փորձեցի չկտրվել գործից, բայց ցուրտն իր վճիռը կայացրեց, և ես որոշեցի վերջին մի քանի օրվա գործը թողնել հաջորդ տարվան: Հավաքեցի ուսապարկս և թղթադարանն ու չափագրական ձողերը ձեռքիս՝ սկսեցի վանքից իջնել: Անտեսանելի և անկարագրելի թելերով կապվել էի այս վայրին: Երևի դրան նպաստել էր նաև այն, որ շուրջ մեկ ամիս վանքում մենմիայնակ մնալու ընթացքում ոչ մի մարդ վանք չէր այցելել, և ոչ մեկը չէր վրդովել լիակատար մեռությունս:

Ինչևէ, իջնում եմ վանքից: Ծանապարհս՝ մոտ 7 կմ, ձգվում է մինչև Չարեքտարի պահակատունը: Մոտավորապես կես անցել եմ, արդեն մթնշաղ է: Հանկարծ առջևիցս մեքենայի ձայն եմ լսում: Ահա մոտենում է: Ես ձեռքով, վարորդը կարճ ազդանշանով բարևում ենք միմյանց: Առանց կանգառի շարունակում են ընթացքը, բայց ինձնից հազիվ մի 10-15 մ անց կտրուկ արգելակում են: Անմիջապես կրակահերթ եմ լսում, ապա կարճ դադարից հետո մեքենան կրկին շարժվում է, իսկ ձայնը՝ հեռանում:

Ամբողջ ճանապարհին մտածում էի, թե տեսնես ի՞նչ պատահեց, որ կանգնեցին ու կրակեցին: Վերջապես հասա Չարեքտար: Գրեթե միաժամանակ Չարեքտարի պահակատուն հասավ նաև այն մեքենան, որին հանդիպել էի ճանապարհին: Պարզվեց՝ երկու ֆրանսահայեր շատ էին խնդրել, որ եթե նույնիսկ գիշերով էլ լինի, ուզում են անպայման տեսնել Դադի վանքը, և իրենց համար էր այդ մեքենան ճանապարհ ընկել, իսկ հարցումիս, թե ի՞նչ պատահեց, որ ինձ անցնելուց հետո կանգնեցիք ու կրակ բաց արիք, պատասխանեցին.

– Բա գիտե՞ս, որ հետևիցդ արջ էր գալիս: Երբ մեզ տեսավ, թեքվեց գետի կողմը, դե՛, մենք էլ արջի ուղղությամբ կրակեցինք:

Շատ տխրեցի, որ արջի վրա էին կրակել: Չէ՞ որ այդ արջը հաստատ ինձ վնասելու մտադրություն չէր ունեցել: Չէ՞ որ կիրճատրեր գետի ափով ձգվող ճանապարհով իջնելուս ընթացքում (գետի խշշոցը, իհարկե, չէր թողնում, որ ես որևէ ձայն լսեի), արջն ընդամենն ուղեկցում էր ինձ: Նրա համար մի երկու ոստյունով ինձ հասնելն ի՞նչ էր, եթե մտքին վատ բան լիներ: Փաստորեն նա Դադի վանքի արջն էր: Գուցե մեկ ամիս անվերջ տեսել էր ինձ, նկատել էր, որ իր ճաշակին մեկն եմ, նույն պտուղներով սնվող խաղաղ մեկը, և տեսնելով, որ հեռանում եմ, որոշել էր ճանապարհել ինձ, մինչդեռ մերոնք անմիջապես կրակել էին նրա ուղղությամբ (երանի՜ վրիպած լինեին):

Ահա այսպիսի պատմություն ինձ ճանապարհող Դադի վանքի արջի մասին:

Մարդիկ և մարդկային որակներ

Տարիներ շարունակ զարմանալիս ամիսներին և հատկապես մարտ-ապրիլին կատարած ճամփորդություններին մի առանձնահատուկ կարևորություն եմ տվել: Դա տարվա այն շրջանն է, երբ ոչ միայն անտառն է մերկ ու թափան-

ցիկ, այլև խոտն իսկ չի հասցրել բարձրանալ, ուստի անհամեմատ ավելի հեշտ ես նկատում այն, ինչը փնտրում ես և էլ առավել՝ նկատում-հայտնաբերում ես հուշարձաններ, որոնց գոյությունից լուր չունենալով՝ չէիր էլ փնտրում:

Ավաճառի ավելացնեն մահ, որ հատկապես անտառային գոտում գտնվող ճարտարապետական հուշարձանները լուսանկարելու համար այս ամիսները պարզապես գյուտ են, քանի որ տարվա մնացյալ ամիսներին ավելի շատ ծառ ու տերև, քան հուշարձան կարող ես արձանագրել:

Մարտ-ապրիլի հետ չի կարող համեմատվել նույնիսկ խոր աշունը, քանի որ որքան էլ տերևաթափ, այնուամենայնիվ, այն երկու կարևոր առավելություն ունի, ասենք, նոյեմբերի վերջերի համեմատ: Առաջինը, որ ողջ ձմռան ընթացքում քամիները հասցրած են լինում վերջին տերևը ցած առնել և անտառն առավել թափանցիկ դարձնել, երկրորդը՝ մարտ-ապրիլին ցերեկային ժամերն ավելի երկար են, քան նոյեմբերին:

Ահա այս պատճառներով արդեն տասնամյակներ փորձում եմ նշյալ ամիսներն առավելագույն չափով ծառայեցնել դաշտային աշխատանքին: Իհարկե, հենց այդ երկու ամիսներին դաշտային աշխատանքներն առաջ տանելիս գրեթե մշտապես հանդիպում ես տարվա այդ շրջանին բնորոշ բարդությունների, ընդ որում, ոչ միայն անձրևները, այլև երբեմն ձյունն էապես խոչընդոտում են վաղօրոք մշակված ծրագրերի իրականացումը:

Ինչևէ, 1996 թվականի մարտն էր, և ես էլ պատրաստվում էի նպատակիս ծառայեցնել հերթական վաղ գարունը:

Արդեն վերջին ճամփորդություններիս մեծ մասը, կամքիցս անկախ, միայնակ էի անցկացրել, սակայն այս անգամ ինձ ընկերակից ունեի Հայաստանի ազգային դիվանի հարգարժան աշխատակցուհիներից մեկի որդուն՝ Վահագնին: Նա ոչ թե ինձ հետ, այլ ընդհանրապես նման ճամփորդության առաջին անգամ էր մասնակցում: Ինձնից մոտ 15 տարի կրտսեր Վահագնի ծնողները շատ էին ցանկանում, որ իրենց որդին զոնե մի անգամ ինձ ճամփորդակից լինի, ուստի այդպես էլ եղավ: Մենք միասին հատկապես Քաշաթաղի շրջանի անտառային գոտում գտնվող հուշարձաններն այցելելու նպատակով Երևան-Ստեփանակերտ ավտոբուսում հայտնվեցինք 1996 թ. մարտի 12-ին:

Այս արշավս գոնե Վահագնի համար մի տեսակ փորձություն էր: Մեր չար բախտից օրերը բավական տեղումնաշատ էին, մերթ ձյուն, մերթ անձրև, մերթ էլ՝ երկուսը միասին, իսկ մառախուղն ու շաղը սովորական բաներ էին:

Դա դեռ հերիք չէ, գյուղերն էլ դեռևս մի նշանակալի մասով անբնակ էին, ուստի պատահում էր, որ օրվա մեջ մի քանի գյուղ էինք անցնում, բայց ոչ մի մարդ չէր հանդիպում:

10-րդ օրվա իրիկնադեմին Ջերդ գյուղի մերձակայքում էինք: Արդեն բավականաչափ մութ էր, ես պարտավոր էի գիշերատեղի որոշում տալ: Լեռն ու ընդարձակ մի հանդամասում՝ մեզնից քիչ հեռու, մեն-միայնակ ծառ էր երևում: Քայլեցինք այդ ուղղությամբ: Կարճ ընթրիքից հետո ծառի տակ փռեցի վրանի փոխարեն հետս վերցրած մոմլաթի գույգ կտորներից մեկը, ապա մեր քնապարկերը, իսկ մոմլաթի մյուս կտորն էլ տարածեցի վրաներս: Ընդ որում, այս ամենը տեղի էր ունենում՝ սկսված մանր անձրևը սառը քամու ներգործությամբ դեմքը ծակծկող ձնե ասեղների վերածված հարձակմանը դիմագրավելով:

Վահագնը պարկեշտ ու համեստ ընտանիքի լավագույն որակները կրող զավակ էր և թերևս մասամբ մեր միջև եղած տարիքային զգալի տարբերության պատճառով, մասամբ էլ գուցե հենց բնույթով առանձնապես չիտոսկան էր, ավելի շատ լսում էր: Այդ երեկո և գիշերը նա համարյա ոչ մի բառ չարտաբերեց, իսկ որպիսությամբ վերաբերող հարցերիս էլ բավարարվում էր կարճ և դրական պատասխանով:

Առաջ անցնելով ասեմ, որ մեր այս ճամփորդությունից հետո, երբ կրկին առիթ ունեցա լինելու Վահագնեց տանը, մայրը պատմեց մեր այդ գիշերվա հետ կապված որդու ապրումների մասին: Նա ասել էր, թե իր համար այդ սարսափելի իրավիճակում միակ հույսը Մամվելի հանգստությունն էր:

Լուսաբացը դիմավորեցինք մոմլաթ-վերմակի վրա ձյան քարակ շերտի ծածկույթով: Նույն պատկերը, իհարկե, ամենուր էր, սակայն արդեն կեսօրին այդ ամենը չքացավ:

Այստեղ գանց եմ առնում արշավային մոտ մեկ տասնօրյակում տեղի ունեցած հիշատակելի դիպվածները, որպեսզի միանգամից հասնեմ իմ կարծիքով պատմությանս առավել կարևոր դրվագին:

Եղանակները կրկին խառնվել էին, մանր անձրև էր մաղում: Երբեք որևէ դժվարությունից չդժգոհած և արդեն արշավային կյանքին բավականաչափ մերված, բայց և սովորականի պես լռակյաց կրտսեր ընկերոջս հետ հերթական իրիկնադեմին մոտեցել էինք անտառապատ մի նեղ ձորակում գտնվող և արդեն իր առաջին բնակիչներն ունեցող Վազգենաշեն անունը ստացած գյուղակին:

Գյուղ մտնելուն պես հանդիպեցինք մոտ 10-12 տարեկան մի տղայի: Հարցրի, թե արդյոք գյուղապետ ունե՞ն: Պատասխանը թե՛ դրական էր, թե՛ երեխան հանձն առավ մեզ առաջնորդել գյուղապետի մոտ:

Գյուղապետի հետ տեսակցելու վայրը մի գոմ էր, որտեղ կովը կթելու պահին հանդիպեցինք կենդանու հանդիպակաց կողմում աթոռակին տեղավորված և կովի ոտքերի արանքից մեր բարևին արձագանքած մի տղամարդու:

– Տղե՛րք, մի փոքր կհամբերե՞ք՝ այս գործս ավարտեմ, նոր գնանք տուն:

– Անշուշտ,– պատասխանում եմ և հիանում մի կողմից գոմի մաքրությամբ, մյուս կողմից կթվոր գյուղապետի վարժ աշխատանքով:

Ընթացքում ծանոթանում ենք. պարզվում է՝ անվանակիցներ ենք, թերևս նաև տարեկիցներ: Գյուղն էլ միայն երկու ընտանիքից էր բաղկացած, որ միասին երեք շուն էին, մի տունը երկու շնչով մայր և որդի էին՝ Մարտին ու Վրեժը, մյուս տունն էլ գյուղապետն ինքն էր:

Երևանի կենտրոնում երեքսենյականոց բնակարանը թողած և արդեն համարյա մեկ տարի Վազգենաշենում հաստատված ճարտարապետ Մամվել Գյուլգադյանն ավարտում է աշխատանքը, որից հետո եմ տեսնում բարձրահասակ և փարթած բեղ-մորուսով պատված գյուղապետին:

Նախքան տուն հրավիրելն այցելում ենք գոմի հարևանությամբ գտնվող համանման մաքրությամբ աչքի ընկնող երկրորդ շենքը, որն արդեն խոզանոցն է: Այստեղ ուշադրությունս գրավում են խոզերի՝ չնրսելու համար տեղադրված վառարանները:

Անասնապահական տնտեսությանը ծանոթացնելուց հետո ճարտարապետ-գյուղապետ Սամվելը մեզ հրավիրում է տուն: Մուտք ենք գործում միահարկ շենք, որի փայտամած հատակով ընդարձակ և մաքուր սենյակի կենտրոնում վառարանն է, ապա առանց որևէ մի ավելորդության՝ բացառապես միայն տանն անհրաժեշտ իրերը:

– Նախքան սեղանի շուրջ նստելը եկեք մի փոքր գեղարվեստական ընդմիջում անենք,– ասում է մեր գյուղապետն ու թախտի տակից դուրս քաշում սնդուկի յուրահատուկ տեսքով անմիջապես ճանաչելի ակորդեոնը:

Ճիշտն ասած՝ մինչ այդ օրն ընդհանրապես ակորդեոնը հանդիպել էր որպես կերուխումային իրավիճակների կամ էլ ռաբիսի ուղեկից նվագարան, ուստի մի տեսակ կանխակալ բացասական վերաբերմունք ունեի երաժշտական այդ գործիքի նկատմամբ: Երբ Սամվելը ձեռքն առավ ակորդեոնը, ոչ միայն ոգևորություն չապրեցի, այլև ցավեցի ականջներին՝ սպասվելիք երաժշտական արհավիրքի ակամա գոհ դառնալու կապակցությամբ:

Սակայն, ա՛յ թեզ հրաշք, ակորդեոն և Բեթհովեն, շշմելո՛ւ էր, ինչպիսի՛ բավականություն, աննկարագրելի զգացողություն... օրեր շարունակ մարդու երես չտեսնելուց հետո ընկնում ես աշխարհից կտրված, երեք բնակչով մի գյուղ, և կորած այս անկյունում հոգիդ Բեթհովենով են լցնում: Հրաշք ասածը հենց սա էր, որ իրականության տեղ մեզ հրամցրեց ճարտարապետ Սամվելը:

Ապշանքից որևէ բան ասելու ունակությունս կորցրած՝ ընդամենը հետևում էի Սամվելի շարժումներին, որ ավարտելով նվագը՝ հանգիստ և խնամքով սնդուկում տեղավորեց ակորդեոնը և մեզ հացի հրավիրեց:

Ուսապարկերում խնայված սննդամթերքի վերջին մնացորդներին ապավինած մեր ստամոքսներին Սամվելի տան փոքրիկ խոհանոցում ոչ պակաս անակնկալ էր սպասվում: Պատին հաված սեղանի այդ եզրին իրար վրա դարսած լավաշների ֆոնին երեքիտրանոց տարայով թթվասերն այստեղ ուղղակի դատարկվեց հյուրերի առջև դրված խոր ավսենների մեջ:

Գիշերեցիքն ո՛չ մինչ այդ և ո՛չ էլ դրանից հետո ապրածս կյանքում հանդիպած արարչագործ գյուղապետի տանը և առավոտյան միմյանց հրաժեշտ տվեցիք՝ մեզ հետ տանելով (գոնե իմ պարագայում) որևէ կերպ չխամրող հիշողությունները:

Ամնոռանալի այս հանդիպումից հետո Վազգենաշենի ճարտարապետ-գյուղապետին հաճելի պատահականությամբ ևս մեկ անգամ հանդիպեցի 1996 թ. մայիսի 18-ին Բերձորում, երբ այնտեղ էի մեկնել տեղի Երկրագիտական քանգարանի բացման առիթով: Նույն Սամվելն էր՝ իր աշխատանքով, այդ աշխատանքի պտուղներով ապրող հայի և առհասարակ մարդու բարձրորակ ու երանելի կերպարով:

Այժմ այս պատմությանս կողքին ցանկանում եմ դնել մեկ ուրիշը, որն ինձ համար պակաս տպավորիչ և ամնոռաց չէր, բայց որը հակապատկերն էր վերոշարադրյալի:

Եվ, այսպես, 2006 թ. խոր աշունն է: Տարիներ շարունակ տարբեր պատճառներով անվերջ չէր հաջողվում այցելել Հաղորդի շրջանի ծայրարևմտյան գյուղերը, ուստի շատ ուրախ էի, որ վերջապես արդեն կարծես երազանքի վերածված ցանկությունս իրականացման շեմին էր:

Այդ ճամփորդությանս ընկերակից ունեի «Դեպի Հայք» կազմակերպության ճանապարհով մեր գրասենյակում որպես կամավոր աշխատանքի անցած Բաֆֆի Քորթոյանին, որը ոչ միայն շարունակեց համագործակցությունը, այլև դարձավ Հայաստանի քաղաքացի, իսկ ժամանակի ընթացքում՝ նաև մեր հիմնադրամի (այն օրերին՝ դեռևս հ/կ) առավել գործուն մշխատակիցներից մեկը:

Մեր քայլարշավը սկսվեց Քաշաթաղի շրջանի Խաչգետիկ գյուղի մոտից, որ պիտի ձգվեր Հարար-Փարաջանց գծով դեպի Արփագետիկ, Պետրոսաշեն, Մայիտակշեն, իսկ վերջում՝ Խծաբերդ, Հին Թաղք և Արևշատ:

Դիպվածը, որի մասին ցանկանում եմ պատմել, մեզ հետ պատահեց Հարար գյուղում: Այստեղ առաջին անգամ եղել էի և թուրք-ադրբեջանցիների ձեռքով տեղի հայոց տակնուկրա արված գերեզմանոցը տեսել դեռևս 1994 թ.: Որոշեցի մեկ անգամ ևս լինել հնավայրում: Ինչպես պարզվեց, կացությունը նույնն էր, ինչ շուրջ 12 տարի առաջ:

Ի տարբերություն 1994 թ., երբ Հարարն անբնակ գյուղատեղի էր, 2006 թվականին գյուղն արդեն վաղուց և մասնավորապես «Շեն» միության ջանքերով բնակեցված էր: Ահա ընդառաջ են գալիս գյուղաբնակ երկու երիտասարդներ: Ծանոթանում ենք. արքայանցիներ են, սակայն արդեն տարիներ ի վեր դարձել էին հարարաբնակներ: Զրուցելով քայլում ենք դեպի գյուղ: Տղաներից մեկը մեզ հրավիրում է իր տուն՝ չմռանալով շեշտել, որ քառասուն լիտր օղի էին քաշել, բայց մեկ շաբաթում խմել-սպառել էին և հակառակ իրենց ցանկությանը՝ այժմ հյուրասիրելու համար խմիչք չունեն: Չեմ արձագանքում, բայց մտքումս կշռում եմ լաճս և մտածում, որ եթե նույնիսկ ընկերներով են կոնծել 40 լիտրը, ապա գյուղի տղամարդկանց այդ խումբը քանի՞ օր կամ շաբաթ է որևէ աշխատանքի անընդունակ եղել և մի տեսակ բեռ ու պատուհաս դարձել սեփական ընտանիքների գլխին: Նույն ժամանակ էլ գոհանում եմ, որ ի՛նչ լավ է՝ խմիչք չունեն, թե չէ հիմա իբր հյուրասիրություն մեզ էլ կրակը պիտի գցեին:

Մինչև տուն հասնելը պատմում եմ իրենց դժվար կյանքից, «Շեն» միությունից, որ սկզբնական շրջանում ամեն ինչով ապահովել էր, բայց արդեն մի քանի տարի է, որ կտրել էր այդ օգնությունները, և իրենք հայտնվել էին ծանր կացության մեջ:

Տարաբնույթ, շնորհմիջով դժգոհություններին ականջալուր՝ վերջապես հասանք հյուրընկալող ընկերոջ տուն: Առաջինը, որ տխուր տպավորություն գործեց, տան միակ սենյակի հողե անհարթ հատակն էր: Նստել ենք տարբեր ուղղություններով գլուխները վեր պարզած զապանակներով հնամաշ բազմոցին: Դիտում եմ մեկը մեկից տխուր պատկերները: Դրսից սենյակի մեջ բացվող դուռը մոտ 5-6 սմ կարճ է, և եթե ցուրտն ու քամին դեռ չեն անհանգստացնում, ապա ի՛նչ է լինելու վիճակը ձմռանը: Սենյակի մի հատվածում սեղանն է, որի վրա տետրերն ու գրքերը փռած՝ դաս են անում տան գույզ դպրոցականները, սակայն հասակի անհարթության պատճառով սեղանն անվերջ ղնգղնգում է՝ ծանրության կենտրոնի՝ անընդհատ փոփոխվելու պատճառով: Մտածում եմ՝ մի կտոր քար կամ փայտ խցկեմ սեղանի կախ մնացած ոտքի տակ, որ երեխաները հանգիստ իրենց գրավորներն անեն, բայց և մտածում եմ՝ քայլս երիտասարդ ամուսիններին վիրավորական կթվա:

Երեխաներին մի կողմ տանելով, տեսարն ու գրիչը հավաքելով՝ սեղանին հաց են դնում և հագիվ իրենք իրենց պահող ճոճաճոճ արժույթներն առաջարկելով՝ հյուրերին սեղանի մոտ հրավիրում: Կուշտ ձևանալով՝ համարյա չենք օգտվում, քանի որ նույնիսկ խաշած մակարոնը թվում է երեխաների բաժնից կտրած: Չբուրում ենք, փորձում են հասկանալ, թե ինչո՞ւ այսքան տարի անց մնացել են այսպես անմխիթար վիճակում: Նորից շեշտվում են դժվարությունները՝ «Շեն»-ի օգնությունների դադարեցման հետևանքով: Բացատրում են, որ «Շեն»-ի առաքելությունը ձեռք անվերջ կերակրելը չէ, այլ նորաբնակներին սկզբնական դժվար տարիներին սատարելը մինչև այն ժամանակ, երբ յուրաքանչյուր ընտանիք այլևս սեփական եկամուտներով կարող է իր գլուխը պահել:

Ասածին հետ իբր համաձայն՝ տանտերը մեկ էլ ասում է.

– Մեր պապերն ալաշկերտցի են, երևի ես վերջը փոխադրվեմ՝ իմ պապերի երկրում ապրելու, քանի որ ո՛չ այստեղ, ո՛չ էլ Աբովյանում ապրել չի լինում:

Դատարկախոսությունն այլևս ազդում է ջղերին վրա, միայն, որպես ի գիտություն, ասում են.

– Ալաշկերտում մեկ մետր արոտավայրի համար ներկայումս քուրդը քրոյի կոկորդ է պատռում: Եթե դուք, որ այստեղ այս անծայրածիր և բոլորովին ազատ հողերի տեր եք ու չեք կարողանում ապրել, ինչպե՞ս պետք է Ալաշկերտում ապրեք...

Հյուրընկալության համար շնորհակալություն ենք հայտնում և հաջողություն մաղթելով՝ հեռանում ենք:

Տարիներ են անցել, չեմ մոռանում թե՛ ամեն տեսակ բարիքներ ստեղծած և հյուրասիրության համար այնքան «կարևոր» օղու գոյությունն իսկ չմտաբերած Վազգենաշենի գյուղապետ Սամվելին և թե՛ 40 լիտր օղին ընկերների հետ մեկ շաբաթում սպառած և մատղաշ երեխաներին ու ջահել կնոջը հողը հատակին թողած ալաշկերտցի-հարաբցուն:

Երկուսին էլ իրապես հաճախ են հիշում, համեմատում են անհամեմատելի և որպես գոյության սեփական ընտրանք՝ այս պատմությունը հրամցնում ընթերցողներին: Բարով դատեք...

Այդ սարսափագրու բառը՝ ազատագրված

1980-ական թվականների վերջերին և 90-ականների սկզբներին Արցախին նվիրված մի շարք քարտեզներ են պատրաստել: Նրանց հիմնական մասը լույս ընծայվեց «Ազատամարտ» և «Երկիր» պարբերականների էջերում, սակայն մի քանիսը հրապարակվեցին նաև որպես առանձին միավորներ: Վերջիններիցս հիշատակելի են «Շեն» միության ջանքերով Փարիզում տպագրված «Արցախի ազգաբաշխական քարտեզ»-ը (նույնը՝ նաև ֆրանսերենով), «Հասաստանի և Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետություններ» և «Հայաստանի Հանրապետություն» վարչական նոր՝ մարզային բաժանումը ներկայացնող քարտեզները:

1995 թ., երբ ազատագրված շրջանների վերադարձման նողկալի խոսակցություններն արդեն երրորդ տարին էր, որ աշխույժով շրջանառվում էին և դարձել էին հայաստանյան քաղաքական անողնաշար կյանքի բաղադրիչը (որը, իհարկե, անամոթությամբ արծարծվում էր մինչև վերջերս), մտածեցի մի որևէ աշխատանքով փորձել, իրականությանն ուժ տալով, սովերել այդ ժամանակ արդեն լայնորեն շրջանառվող «գրավյալ տարածքներ» ձևակերպումը և դրա փոխարեն հանրայնացնել «ազատագրված շրջաններ»-ը:

Այդ նպատակով կազմեցի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն և ազատագրված շրջաններ» վերնագրով քարտեզը: Արդեն հրատարակածս նախորդ քարտեզների վաճառքից մի որոշ եկամուտ ունեի, որին գումարվեց նաև ընկերոջս՝ Սարգիս Շահինյանի աջակցությունը, ուստի տպագրության նյութական առկա էր: Սակայն, ի զարմանս ինձ, քարտեզները ծագեցին բոլորովին այլ կողմից: Բանից պարզվեց, որ քարտեզի վերնագրի մաս կազմող «ազատագրված» բառը խիստ անցանկալի, մինչև իսկ վտանգավոր էր հրատարակիչների համար: Արդեն դիմել էի ծանոթ-անծանոթ մի քանի տպարանների, բայց այդպես էլ ոչ ոք հանձն չէր առել տպագրել քարտեզս:

Շվարած վիճակում էի, երբ ընկերներից մեկը խորհուրդ տվեց դիմել «Ամարաս» տպագրատուն՝ շեշտելով, որ տնօրենն արցախցի է, ուստի և չի մերժի:

Գտա Տեղյան փողոցում գտնվող տպարանը, հանդիպեցի արցախցի տնօրենին, ցուցադրեցի աշխատանքս և լսեցի հետևյալ պատասխանը.

– Արա՛, էս ի՞նչ ա, հո դու շա՛ն չես, հավաքի՛ր, հավաքի՛ր, տար՛:

Մոտ կես ամիս շարունակեցի փնտրել քարտեզիս տպագրությունը ստանձող մի «խիզախ» տպարանատիրոջ և վերջապես գտա նրան: Այն իրականություն դարձավ Արմենպրեսի շենքի նկուղային հարկում գտնվող տպարանում:

Ուրախ էի, որ վերջապես քարտեզս լույս էր տեսել, բայց շուտով պարզվեց, որ վերնագրի պատճառով հիմա էլ գրախանութներն են վախենում վաճառքի ընդունել: Ավելի ուշ այն կարողացա ցրել մասնավոր գրավաճառների միջոցով:

Այդ խայտառակ ժամանակներից արդեն շատ տարիներ են անցել, և ներկա իրականության մեջ Հայրենիքի ազատագրյալ հատվածը «գրավյալ» կոչող ոչնչություններին արդեն կարծես թե կարելի է մատների վրա հաշվել...

ՀՈՒՇԵՐ ԲՈՒՆ ԱՂՎԱՆՔԻՑ

Ինձ Հայաստանն է ուղարկել

1984 թ. Ազալիշեն, Ղալակա և ուրիշ մի քանի գյուղերում Չարգարանի մասին արված հարցումների մարդիկ հակասական տեղեկություններ էին տվել: Ոմանք ասել էին, թե Չարգարանում այլևս հայեր չկան, ուրիշներն էլ՝ դեռ պիտի որ լինեն...

Տեղեկությունների ահա այսպիսի պաշարով որոշեցի, այնուամենայնիվ, այցելել նաև Չարգարան:

Մեծ Կովկաս լեռների անտառածածկ լեռնաճյուղերից մեկի ստորոտին է Չարգարանը: Տներն այնպես են քարքնված վայրի անտառին խառնված պտղատու այգիների մեջ, որ հեռվից բնավ էլ նկատելի չեն: Վերջապես բռնեցի



Սամվել Կարապետյանը Ջարգարանում Գալուստ և Սաթիկ Չայրապետյանների հետ (ուս.՝ 1984 թ.)

ուղիղ դեպի գյուղ ձգվող բավական զառիթափ ճանապարհը: Շուտով քարաշեն ոչ բարձր պարսպից ներս երևաց չափազանց համեստ կամ, ավելի ճիշտ, խղճուկ, հարթ տանիքով, միահարկ, ցածր մի տուն: Ես արդեն գյուղում էի: Ծիշտ այդտեղ ճանապարհը ճյուղավորվեց երկու մասի: Նախընտրածս աջակողմյանն էր, որն ավելի ուշադրություն գրավեց սալահատակված լինելու պատճառով: Ամալոթյան մեջ սկսեցի քայլել գյուղամիջի՝ երբեմնի բարգավաճ օրերի հիշատակ՝ սալարկված ճանապարհով, որի երկու կողմում ձգվում էր քարաշեն պարսպաշար: Այն տեղ-տեղ ընդմիջվում էր վերնամասում երկթեք փոքրիկ ծածկ ունեցող ոչ լայն դարպասներով: Արդեն անցել էի 3-4 դարպաս, որ նույնն է, թե 3-4 տուն, բայց կարծես բոլորն էլ՝ անկենդան: Վերջապես ձախ կողմի տան բակում մի կնոջ նկատեցի: Մոտեցա պարսպապատին և վայրկյանների մեջ զննելով բազմազույն հագուստի մեջ փաթաթված անհարազատ արտաքինով կնոջը՝ ավելի խոհեմ համարեցի բարևել ռուսերենով ու պատասխանի չսպասելով, արդեն բազմիցս փորձած եղանակով պատահական մի անուն տալով՝ տան տեղը հարցրի: Չգացի՝ կինն ուզում է ճանաչել, որ ինձ հուշի, թե ինչպես գտնեմ ուզածս մարդու տունը, բայց կարծես տեղը չէր բերում: Շտապեցի տալ այդպիսի պահերի համար միշտ պատրաստ պահած երկրորդ՝ իբր օգնական ու հուշարար հարցս.

– Դե՛, հայ մարդ է, գուցե հիմա նույնիսկ գյուղում էլ չի բնակվում, հաստատ չգիտեմ:

Կինը կարծես հարցիս ծանրությունից միանգամից թեթևացավ և մի երկու ռուսերեն բառ թուրքերենին խառնելով՝ աշխուժորեն հասկացրեց, որ երկու տուն էլ վեր Գալուստ անունով մի հայ մարդ կա, գուցե նա կճանաչի իմ ուզած մարդուն:

Հոգիս՝ հայ մարդու գոյության գյուտով փառավորված, շնորհակալություն հայտնելով՝ շարժվեցի դեպի վեր՝ մատնանշված տան ուղղությամբ: Սալարկված մաքուր բակով և կենդանության նշաններ ցույց տվող տան դարպասի առջև կանգնելով՝ ակնթարթներ պահը քննելուց հետո, ինչպես ծանոթ-բարեկամի կարելի էր ձայնել, կանչեցի.

– Գալուստ դայի...

Տան միջից շարժում նկատեցի, և ձայն լսվեց: Ահա և դուռը բացեց մի ծերունի: Մի քիչ կքած մեջքով և մի ոտքից էլ կարծես փոքր-ինչ նեղվելով՝ քայլեց դեպի ինձ, կանգնեց բակի ճիշտ կենտրոնում և «Բարև ձեզ»-ս լսելուց հետո հայացքով ինձ քննելով՝ հարցրեց.

– Ո՞վ ես:

Ծերունու կասկածներն ու անհանգստությունն արագ փարատելու մտքով հապճեպ ներկայացա և բացատրեցի նաև այցելությանս նպատակը: Առանց մի բառ ասելու մոտեցավ դարպասին, բացեց, ձեռքով ներս մտնելու նշան արեց ու շարունակելով նայել ուղիղ աչքերիս մեջ՝ գրեթե դեռ հենց շենքին հարցրեց.

– Բեզ Հայաստանն է ուղարկել, թե՞ դու ես եկել:

Չեմ հիշում, թե է՛լ երբ էր պահն այդպես պատասխանատու և որոշիչ թվացել ինձ: Վայրկենապես կարծես կենաց-մահու քննություն պիտի հանձնեի, որի մի պատասխանը պիտի ապրեցներ, իսկ մյուսը բազմապատկեր տարիներ խորացած հուսահատությունը: Եվ պատասխանեցի.

– Ինձ Հայաստանն է ուղարկել...

Ստեցի, այնքան համոզված ու վստահ ստեցի, որ այն ոչ թե Գալուստ դայուն, այլ ինձ էլ ճշմարիտ թվաց: Ու ցնցվեց մարդը, մի-երկու քայլ ինձնից հեռանալով՝ թեքվեց տնամերձ այգու կողմն ու կարծես տագնապ գուժող ձայնով բղավեց.

– Սաթիկ:

Կինը, որ այգում գործ էր անում և վայրկյաններ հետո արդեն իսկ գալիս էր, ամուսնու ձայնի վրա վերջին մետրերն ավելի արագ կտրելով, հասավ և հարցական հայացքը հառած Գալուստ դայու դեմքին՝ լուռ ու սպասողական կանգնեց, իսկ Գալուստն ասաց.

– Սաթի՛կ, լսո՛ւմ ես, Հայաստանը մեր տեղը գիտի...

Ողջ երեկո ու մինչև ուշ գիշեր անհագ հետաքրքրությամբ լսում էի Գալուստ դայու հուշերը 1918 թ. թուրքական բանակի՝ դեպի Բաքու արշավելու ժամանակ զարգարանցի փախստականների և մասնավորապես իրենց՝ Հայրապետյան ընտանիքի կրած արհավիրքների, Բաքվից նավով Կրասնովոդսկ, հետո էլ Աշխաբադ հասնելու, նույն նավում գտնվող և հետագայում 26 կոմիսարներ անունը ստացած երիտասարդների՝ ճանապարհին անվերջ խմել-ծխել ու թուղթ խաղալու, Ադրբեջանի խորհրդայնացումից հետո զարգարանցիների մնացորդների վերադարձի, հարևան Թրջան թրքաբնակ գյուղի բնակիչների գիշատիչ ու սպանող գործողությունների և այլ իրողությունների մասին:

Հաջորդ օրը, Գալուստ դայու հրահանգների համեմատ, տիկին Սաթիկն ինձ պետք է առաջնորդեր որոշված երթուղով՝ գյուղամերձ հնավայրերը տեսնելու: Երբ քայլում էինք, գյուղից դուրս գալուց անմիջապես հետո Սաթիկը հենատեսրտեն ձեռքիցս դաշտային տեսրա առավ և խալաթի ներքո թաքցնելով՝ ասաց.

– Թող չերևա, եթե թրջանցիք նկատեն, ավելորդ հարցաքննությունից չենք ազատվի:

Տարիներ անցան: Տեղի ունեցան Սումգայիթն ու դրան հետևած հայտնի դեպքերը: Բազմաթիվ գյուղեր պատմության մեջ առաջին անգամ իսպառ հայաթափ եղան: Զարգարանցի Գալուստ Հայրապետյանից լուր չունեի, և ի՛նչ զուգադիպություն, մի օր Երևանում ինձ մոտեցավ մի աղջիկ և ասաց.

– Ձեզ ճանաչեցի ծնողներիս մոտ եղած լուսանկարից, ես Գալուստ Հայրապետյանի աղջիկն եմ՝ Մարինեն: Մերոնք հիմա հաստատվել են Իջևանի շրջանի Աչաջուր գյուղում, հայրիկն անվերջ ասում է, թե Հայաստանում միայն մի մարդու է ուզում տեսնել, այդ Դուք եք, շատ եմ խնդրում, մի անգամ գնացեք հորս մոտ՝ Աչաջուր:

Խոստացա ու ինքս էլ շատ էի ուզում տեսնել Գալուստ դայուն: Մի ծանր միտք անվերջ տանջում էր ինձ: Համոզված էի, որ Հայաստանում Գալուստ դային զգացած ու հասկացած կլիներ, որ այն ժամանակ «Հայաստանն ինձ չէր ուղարկել»...

Կյանքում շատ հաճախ նույնիսկ բուռն ցանկությունները մնում են չիրականացած: Ամիսներ անց, երբ երկրորդ անգամ, դարձյալ պատահաբար հանդիպեցի Մարինեին, իմացա, որ Գալուստ դային վախճանվել էր՝ առանց Հայաստանում իր ուզած միակ մարդուն տեսնելու...

Նորշենի վերջին հայր

1985-ի աշունն էր: Նորշեն (կամ ինչպես պաշտոնապես կոչվում է Աշղ-Բայրամլի) գյուղ այցելելու համար պետք է անցնեի 1918 թվականից ի վեր անբնակ Կուզան, ապա լեզգիաբնակ դարձած Շուքուրչի գյուղերով: Ինձ հյուրընկալած գիրքեցի Ռազմիկը ճանապարհի մեծ մասն ուղեկցեց, հետո հրաժեշտ տվեցինք իրար, և ես բռնեցի Նորշեն տանող ճանապարհը: Իմ խնդիրն էր նույնպես լեզգիաբնակ դարձած Նորշենում գտնել միակ հայ բնակչին՝ ծերունի Արշավիրին, որ նրանից կարողանայի տեղեկություններ քաղել գյուղի պատմությունից:

Վերջապես ճանապարհը հաղթահարեց վերջին բլրաշարը, և իմ առջև հայտնվեց Շամախու գավառի երբեմնի ծաղկուն գյուղերից մեկի ներկայիս խղճուկ համայնապատկերը: Բարձրից սկսեցի դիտել գյուղը և տուն առ տուն աչքով առաջ անցնելով՝ մտորել, թե ավելի քան 30 տների մեջ արդյոք ո՞ր մեկը կարող էր լինել Արշավիր պապինը: Հեռվից հեռու աչքիս զարնեց խաղողի վազերով շրջապատված միակ տունը: Ուղենիչ ընդունելով՝ որոշեցի շարժվել այդ ուղղությամբ: Տարեց և երիտասարդ լեզգիների ուշադիր հայացքների ներքո կտրեցի գյուղամեջն ու առանց որևէ մեկին հարցում անելու, չոր ու ցամաք բակեր, խղճուկ, հնաշեն տներ ետևում թողնելով՝ հասա խաղողի վազերով շրջապատված միահարկ, պարզ ու քայքայված տան դարպասին: Այստեղ ուշադրությունս միանգամից երկու տեսարան գրավեց, նախ՝ տնամերձ հողամասում բահը ձեռքին աշխատող ծերունին՝ բավական կոր մեջքով, ապա՝ բակին որպես հովանոց՝ մոտ երկուսուկես մետր բարձրությունից կախ ընկած վարդակարմիր խաղողի մեծաթիվ ու գրավիչ ողկույզները:

Քրտնաջան աշխատանքի շնորհիվ բերք ու բարիք ստեղծած ծերունին հարագատապես արտացոլում էր հայ մարդու բնական վիճակը, որից սրտապնդված՝ այլևս առանց վարանելու հայերենով ձայնեցի.

– Արշավիր պապ, բարև՝ ձեզ:

Ծերունին դանդաղ քայլերով մոտեցավ, բացեց նեղ դարպասը, հրավիրեց ներս: Նստեցինք դրախտի անկյուն հիշեցնող խաղողի վազերի ստվերի ներքո տեղադրված տախտակաշեն սեղանի առջև դասավորված հին ու ճոճվող աթոռներին և սկսեցինք զրուցել:



Միրզոյանցի գերեզմանը Նորշենում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1985 թ.)

– Եկեղեցին էլ, որի միայն տեղն է հայտնի, գերեզմանոցն էլ հինա ցույց կտան, բայց այժմ աճեցրածս խաղողից քաղի՞ր ու կե՛ր, կե՛ր, որքան սիրադ ուզի: Ես քաղել չեմ կարող, ամբողջ բերքը լեզգիներին ու թռչուններին է բաժին դառնալու:

Քիչ անց միասին դուրս եկանք տնից ու քայլեցինք դեպի գյուղամերձ բարձունքը: Աշխատում էի քայլել ծերունու քայլքին համաչափ, ուստի չափազանց դանդաղ: Կանգնեցինք հողով ու մացառներով պատած ընդարձակ մի փոսի առջև: Մինչ այդ լուռ ծերունին ասաց.

– Սա էլ մեր ժամը:

Ոչ հեռու տարածվում էր Նորշենի գերեզմանոցը: Ծերունին առաջանալով հասավ մի տապանաքարի և հայացքով ինձ այդտեղ հրավիրելուց հետո ասաց.

– Միրզոյանցի գերեզմանն է: Բաքվում ծխախոտի գործարան ուներ, ամեն ինչում համագյուղացիներին աջակից է եղել:

Հետո միասին քայլեցինք և կանգ առանք մերօրյա մի գերեզմանաքարի առջև: Տեսնե՞մ՝ քարին փորագրված են նրա անունն ու ծննդյան թվականը, իսկ մահվան տարեթվի տեղը բաց է թողած: Քարի առջև պատրաստ էր գերեզմանավորը:

– Տեղս պատրաստ ունեմ, հուսով եմ, որ լեզգիները չեն զլանա մարմինս տնիցս մինչև այստեղ հասցնել...

Գերեզմանատանը՝ սեփական փոսի մոտ, հրաժեշտ տվի Նորշենի վերջին հային՝ Արշավիր պապին...

Աբրիկի ճանապարհերը

1918 թվականի կոտորածներից հետո ցրիվ եկած, հրաշքով կենդանի մնացած և գյուղ վերադարձած քաղաքացիները, տեսնելով հարազատ գյուղը մոխրակույտի վերածված, Ադրբեջանի խորհրդայնացումից հետո նպատակահարմար էին գտել նոր գյուղ հիմնել հնի ավերակներից մոտ 1 կմ ցած՝ լեռնագոտու ստորոտում: Գյուղ այցելածս տարում՝ 1985 թվականին, 42 տնից բաղկացած Քալբանդում հյուրընկալվեցի Ավագյան ընտանիքում: Թերևս հայաստանցի հյուրին տեսնելու հետաքրքրությունից դրդված՝ երեկոյան Աբրիկենց տուն էին եկել նաև հարևանները: Տանտիրոջ որդին՝ Աբրիկը, հատկապես հարցնում էր Հայաստանում ուսում ստանալու հնարավորությունների մասին: Ամբողջ գյուղում նա իրեն տարեկից մեկը չուներ: Ընդհանուր առմամբ նրանք անվերջ Հայաստանից և Երևանից էին հարցնում, իսկ ես էլ՝ նրանցից ու Քալբանդի պատմությունից: Ինձ համակել էր այնպիսի մի զգացողություն, որ կարծես բոլորն էլ ինձ՝ ընդամենը մի քանի ժամվա ծանոթիս, կարոտած էին:

Առավոտյան նախաճաշից հետո Աբրիկի ուղեկցությամբ բարձրացանք նոր գյուղից վեր մնացած համանուն հին գյուղատեղին: Տեղ հասնելուն պես մեր առջև փռվեցին արդեն մացառներով և մույնիսկ ծառերով ծածկված անհամար տնատեղերն ու մի եզրին ծվարած գերեզմանոցը: Վերջինս բոլորովին պատվել էր անտառով և մացառներով:

Կեսօրն անց վերադարձանք գյուղ: Ճաշից հետո ինձ հյուրընկալած Ավագյան ընտանիքին երախտագիտությամբ հրաժեշտ տալով՝ բռնեցի մոտակա Քեշխուրդ գյուղ տանող լեռնային կարճ ճանապարհը: Աբրիկը, որսորդական հրացանն ուսին, ինձ ուղեկցեց մինչև երկու գյուղերի միջնամասով ձգվող լեռնաճյուղի բարձրադիր կետը: Կարծես թե որպես վաղեմի հարազատներ իրարից բաժանվելուց հետո սկսեցի քայլել Աբրիկի մատնանշած օձազալար կաման ի վար: Բավականին հեռացել էի, երբ շրջվելով նկատեցի, որ Աբրիկը դեռ կանգնած էր մեր բաժանման կետում: Իմ շրջվելու պահին հրաժեշտի համազարկ լսվեց: Հասկացա, որ այդ ամբողջ ընթացքում հայացքն ինձնից չէր հեռացրել և ակնթարթ իսկ չուշացրեց ողջույնի ազդանշանը: Արդեն մի կես ժամ քայլելուց հետո շուրջ երկու կիլոմետր հեռացել էի, երբ մի ոլորանի հարմար տեղից դարձյալ շրջվեցի, և ո՛վ գարմանք, նույն ակնթարթին՝ էլի մեկ համազարկ: Հուզմունքից սիրտս լցվեց, ա՛խ, Աբրի՛կ, մի՞թե այսքան ժամանակ հայացքով դեռ ինձ ես հետևում:

Քայլում էի մի ժամանակ սայլի համար բանուկ, այժմ նեղ կածանի վերածված ճանապարհով, և Աբրիկի կանգնած տեղն էլ վաղուց արդեն ծածկել էին ետևում թողածս բլրաշարերը, միայն թե փոքր ընդմիջումներով Աբրիկը դեռ շարունակում էր քայլքս ուղեկցել արդեն բավական խուլ ձայնով լսվող կրակոցներով...



Ավագյան Աբրիկի ընտանիքը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1985 թ.)

Էս մեր վա՛նքն ա ցվեաճոյ...

Երկրորդ անգամ Շամախու շրջանի Սաղիան գյուղ այցելեցի 1986 թվականին: Առաջին անգամ եղել էի ընդամենը մեկուկես տարի առաջ և հյուրընկալվել էի բրիգադի Գ-անիելյան Արտաշեսի տանը: Այս անգամ ինձ հետ վերցրել էի նախկին Շամախու գավառի մի շարք գյուղերում անցած երկու-երեք տարիներին նկարահանած գունավոր սահիկներս և դրանք ցուցադրող սարքը:

Իրար տեսնելով վաղեմի բարեկամների պես՝ երկուստեք անկեղծ ուրախացանք: Իրիկնաղեմին Արտաշեսն իրենց տուն հրավիրեց հարևաններին ու համագյուղացիներից շատերին: Նախապատրաստվելով սահիկների դիտումին՝ բոլորն էլ տեղավորվեցին տան առջևի ընդարձակ ու կոկիկ բակում՝ նստելու համար կենտրոնացնելով մոտ ապրող մի



Սաղիանի Սբ. Ստեփանոս Նախավկա վանքը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1985 թ.)

Սամվել Կարապետյանը Սաղիանի գերեզմանոցի տապանագրերն արտագրելիս (լուս.՝ 1986 թ.)

քանի ընտանիքների բոլոր աթոռները: Էկրանը դրկից հարևանի տան սպիտակեցված պատն էր: Սահիկներն այնպիսի հերթականությամբ էի դասավորել, որ հարևան Աղսուի և Իսմայիլի մի շարք գյուղերն իրենց պատմական հուշարձաններով ցուցադրելուց հետո պիտի հասնեի Շամսախու գյուղերին և վերջում եզրափակելի հանդիսատեսների հարազատ ծննդավայր Սաղիանով:

Եվ սկսեցի ցուցադրել՝ յուրաքանչյուր պատկերին տալով անհրաժեշտ բացատրությունը: Ամեն մի պատկերի հետ՝ բացականչություններ, ա՛խ ու վա՛խ. մեկն ասում է. «Էս էլ համերոջս գյուղը», մյուսը՝ շարունակում. «Ես էս գյուղից եմ Սաղիան հարս եկել», երրորդը՝ «Էս ժամը մեր գյուղի վանքին շատ է մնան...» և այդպես շարունակ, մինչև եկանք, հասանք Սաղիանի պատկերներին:

Սար ու թումբ, տուն ու պատ, նով ու աղբյուր անվրեպ ճանաչելով, իրար լրացնելով, ճշտելով ու հաստատելով՝ պատկեր առ պատկեր առաջ էինք անցնում: Երբ հարևանի տան սպիտակ պատին հայտնվեց Սաղիան գյուղի Սբ. Ստեփանոս Նախավկա վանքը, իրենց վանքը, այն վանքը, որ Արտաշեսենց տնից հագիվ 100 մետր էր հեռու, հանկարծ հանդիսականներից մեկը, տեղից վեր կենալով, ուղղվեց դեպի պատ-էկրանը, համբուրեց եկեղեցու խաչազարդ ճակատը և ասաց.

– Էս մեր վանքն ա ցվետնոյ, մեռնե՛մ իրա գորոթյանը...

Պտեզի՝ ծագումով հայ մահմեդականների հետ

1986 թվականին դարձյալ ճամփորդ էի: Այս անգամ՝ Շաքիի շրջան: Համանուն շրջկենտրոնը մինչև 1988 թ. ուներ 100 տուն հայ բնակչություն: Բոլորն էլ հետագայում բռնի տեղահանվեցին:

Հասանք Շաքիի շրջանի Պարտեզ (Պտեզ, իսկ թուրքերը կոչում էին Պիտեիզ) գյուղ: Այն դեռևս ԺՁ դարում հիշվում է որպես գրչօջախ: Գյուղաբնակ հայերը բռնությամբ մահմեդականություն են ընդունել 1720-ական թվականներին: Պարտեզից ոչ հեռու Օրաբան անունով մի գյուղ կար: Երկուսի անուններն էլ հայկական էին մնացել: Օրաբանն ուներ երկու թաղամաս: Մի թաղի հայ բնակչությունը հարևան Պարտեզի մնան մահմեդական էր դարձել 1720-ական թվականներին, իսկ մյուս թաղը շարունակել է հայ առաքելադավան մնալ մինչև 1918 թ.: Ահա այսպես երկու թաղամասերի հայ բնակիչները մեկ դար շուտ, մեկ դար ուշ արժամացել են մույն ճակատագրին: Այսօր էլ նրանք ապրում են այդ գյուղերում:

Պարտեզում 1986 թ. թեև ավերակ, բայց կանգուն էր Սբ. Գևորգ եկեղեցին: Գիշերելու նպատակով ես և ընկերներս վրան խփեցինք եկեղեցու մերձակայքում: Որոշ ժամանակ անց մեզ մոտեցան գյուղի մի քանի երիտասարդներ, այսպես կոչված՝ աղբբեջանցիներ: Հարցուփորձից, միմյանցից տեղեկություններ ստանալուց հետո իմացան, որ հայ ենք: Նրանց հարցրի.

– Ի՞նչ գիտեք ձեր պատմության, ձեր նախնիների մասին, ձեր պապերից ի՞նչ եք լսել:

– Մենք չգիտենք՝ որտեղից ենք եկել այստեղ:

Տարօրինակ էր պատասխանը: Ես տվեցի հաջորդ հարցը.

– Իսկ ինչո՞ւ եք կարծում, որ եկվոր եք և անպայման ինչ-որ տեղից եք եկել այստեղ:

– Այդպես ենք կարծում,– ասացին նրանք,– քանի որ գյուղի մերձակայքում այն ամենը, ինչ կա, կապված է հայի անվան հետ՝ էրմանի քիլիսա, էրմանի գյաբրստան՝ հայկական եկեղեցի, հայկական գերեզմանոց: Ամեն բան հայ խոսքի հետ է կապված, դրա համար մենք մտածում ենք, որ եկվոր ենք, այլ տեղից ենք եկել:

Երբ գրույցը կարծես ավելի մտերմիկ դարձավ, սկսեցի որոշ մանրամասնություններ պատմել.

– Դուք բնիկներ եք և որևէ տեղից այստեղ չեք եկել: Շաքիի Հաջի Չելեբի խանի տիրապետության ժամանակ դուք բռնությամբ մահմեդական եք դարձել: Չեր գյուղերից շատ մամակներ կան՝ ուղղված Պետրոս Մեծին: Խնդրագրերից մեկում գրված է. «Եթե ռուսական զորքը շուտափույթ չգա, չհասնի և մեզ խանական այս հալածանքներից չազատի, մենք արդեն իսկ մահմեդականություն ենք ընդունել, բայց դեռ ասերես: Գիշերով հայություն ենք անում, ցերեկով՝ թրքություն»: Սա էր տիրող կացությունը 1720-ականների կեսերին:

Այս տեղեկությունները լսելով՝ երիտասարդները նախ իրար հետ սկսեցին աղբբեջաներեն խոսել, հետո դարձան մեզ.

– Գիտեք, մենք շա՛տ ենք տարբերվում Կուրի դաշտավայրային՝ Գյոքչայի, Ուջարի, Եվլախի, Քյուրդամիրի շրջաններում ապրող թուրքերից: Ինքներս այնքա՛ն տարբերություն ենք զգում: Մեր մայրերը հաց թխելիս անպայման խաչ են անում խմորի վրա: Երեխաներին քնեցնելու ձևն անգամ ուրիշ է: Շա՛տ տարբերություններ կան...



Ճալեթցի սպիավոր պապիկը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1986 թ.)
Սմբատ Քալյանցը տիկնոջ՝ Վարդուհու հետ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1986 թ.)

Ճալեթցի սպիավոր պապիկը

1986 թ. Վարդաշենի շրջանում ենք: Համանուն շրջկենտրոնից հետո հաջորդ նշանավոր բնակավայրը Ճալեթն է, որը գտնվում է Վարդաշենից 4 կմ արևմուտք՝ անտառոտ լեռնաշղթայի ստորոտում: Երկու թաղամասից բաղկացած գյուղն ունեցել է երկու եկեղեցի, որոնք քանդել են խորհրդային տարիներին: Ես միայն մեկի հիմքերը տեսա: Դրանք մի մեծ եկեղեցու հիմքեր էին՝ կառուցված ավելի հին փոքր եկեղեցու վրա: Հավանաբար հինը շատ մեծ համբավ է ունեցել՝ որպես սրբավայր, և նորն էլ դրա վրա են կառուցել՝ պահպանելով պատերը 1-1,5 սմ բարձրությամբ:

Ի՞նչ հասցրի տեսնել Ճալեթում: Գեղեցիկ գյուղ էր: Հատկապես գեղեցիկ էին բնակելի տներն իրենց պարիսպներով և մանավանդ պարիսպների մեջ բացված դարպասներով: Որոշ տներ ունեին շինարարական արձանագրություններ, մեծ մասը՝ 1910-ական թվականների: Ճալեթը, սակայն, հայտնի է հատկապես իր վանքով: Այն գտնվում էր գյուղից մոտ 1 կմ հյուսիս՝ անտառներով շրջապատված գեղատեսիլ վայրում: Բաղկացած էր երկու եկեղեցուց՝ հին և նոր, որոնք երկուսն էլ ունեին նույն անվանումը՝ Սբ. Աստվածածին: Վանքը ԺԵ-ԺԶ դարերում եղել է Աղվանից կաթողիկոսության նստավայրը:

Մեր այցելության ժամանակ հին եկեղեցուց պահպանվում էին միայն պատերը, իսկ նորը միանգամայն կանգուն էր:

Մի ճալեթցու ուղեկցությամբ հաջողվեց տեսնել նաև գյուղից հարավ 1918 թվականից ի վեր ամայացած Օթմանլու անվամբ գյուղատեղիի եկեղեցու և գերեզմանոցի մնացորդները:

Ճալեթում հանդիպեցինք տարեց մի մարդու թոռան հետ: Թոռն ուզում էր, որ պապին լուսանկարեինք: Մենք, իհարկե, լուսանկարեցինք: Հատկապես մատնանշում էր պապի վզի հատվածի սպին: Եվ պատմեց, թուրքերը 1918 թվականին փորձել են թրով գլուխը կտրել, սակայն նա հրաշքով ողջ է մնացել: Թրի հարվածը շատ խոր չի եղել...

Ահա այդ սպին էր մատնանշում թոռը:

Սմբատ Քալյանցի ոգևորությունը

Քեշխուրդ գյուղում ինձ ասել էին, որ 6 կմ հյուսիս գտնվող Գանձակում հայեր կային: Ճանապարհի ընկա դեպի Գանձակ: Գյուղի բնակչությունն ընդամենը 6 տուն էր, բոլորը միասին՝ 10 շունչ: Որպես կանոն՝ ամեն տանը մեկ ծեր էր մնացել:

Բացի կանգուն, բայց ամայի տներից՝ գյուղի սկզբնամասում աչք էր զարնում ֆուտբոլի դաշտը՝ բարձր խոտերով ծածկված: Հայտնի չէր, թե քանի՞ տարի ոչ մի երեխա չէր վազվզել այդ դաշտում: Գյուղը մինչև 1960-ական թվականները դեռևս շեն էր:

Գանձակ մտնելով՝ փորձեցի գտնել կենդանության նշաններ ցույց տվող մի տուն: Երբ ձայնեցի, ինձ դիմավորեց տարեց մի մարդ: Խոսեցինք, նա ցույց տվեց եկեղեցու պատերը, որոնք կանգուն էին: Խորհրդային տարիներին եկեղեցին, ինչպես ամենուր, այստեղ ևս պահեստի էին վերածել:

– Գիտես, ես իմ տան բակում պահել եմ մեր դպրոցի շինարարական արձանագրությունը: Պահել եմ, որ թուրքերը վնաս չտան,– գրույցի ժամանակ ասաց նա:

Եվ տնամերձ հողամասում ինձ ցույց տվեց 1889 թ. Գանձակում բացված դպրոցի շինարարական արձանագրությունը:

Հրաժեշտի պահին ցանկացա լուսանկարել ամուսիններին և իմանալ նրանց անուն-ազգանունը: Սմբատ Քալյանց:

Երբ լսեցի Քալյանց ազգանունը, հիշեցի և նրանց ասացի.

– 1866 թ. Շամախու թեմի առաջնորդ Դանիել արքեպիսկոպոս Շահնագարյանը գյուղեր այցելելիս Գանձակում հյուրընկալվել է Գասպար բեկ Քալյանցի տանը: Արդյոք ազգակցական կապ ունե՞ք Գասպար բեկ Քալյանցի հետ:

Դուք պիտի տեսնեի՞ք Սմբատ Քալյանցի խանդավառությունը: Խեղճ ծերունին երևի տարիներ շարունակ առիթ չէր ունեցել նման խանդավառության.

– Իմ պապի հայրն է: Ո՞վ էս դու, որտեղի՞ց գիտես պապիս հոր՝ Գասպար բեկի անունը...

Ի՞նչ մեծ ուրախություն պատճառեցի ծերունուն՝ ընդամենը հիշելով նրա պապի հոր անունը...

ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Ընկերոջս վերջին ժայիտը (ազատամարտիկ Վարդան Մամսոնյանի հիշատակին)

2015 թ. ապրիլի 15: Չանգահարողը Ղազարն էր: Վարդանի առողջությունը վերջին օրերին կտրուկ վատացել էր... Որոշեցինք նույն երեկոյան այցի գնալ: Նստած ենք բացառիկ խիզախ կամքի տեր, սակայն հյուծող հիվանդությամբ նվաղած Վարդանի առջև: Հակառակ մեր կամքին՝ չուզեց պառկած մնալ և ճիզերի գնով, նաև որդու՝ Վահագնի օգնությամբ բարձերին հենվելով, նստեց: Կարծում էի, թե գրույցի բռնվելով՝ գուցե այդ կերպ մի քիչ կօգնենք, որ միտքը ցրվի, գուցե թեթևություն զգա, բայց շատ արագ հասկացա, որ դրա համար բավական ուշացել էինք, քանի որ խոսելու համար ուժերն այլևս չէին բավարարում, իսկ դժվարությամբ արտասանվող առանձին բառերն էլ գոնե ինձ համար մնում էին համարյա անհասկանալի: Ամենածանր զգացումով լուռ նստած ենք: Չգիտես ի՞նչ ասես, ինչի՞ց խոսես: Ամեն ասելիք կարծես միանգամից իմաստագրկվել ու արժեգրկվել էր: Ճնշող լռությունը խախտում էր միայն Վարդանի ծանր շնչառությունը: Ժամանակ առ ժամանակ փոքր-ինչ բարձրացնում էր հայացքը և կիսաբաց աչքերն ուղղում ինձ, լռությամբ ասելիքը փոխանցում ու նորից հայացքը թողնում ներքև:

Շատ էի ուզում աչքիս առջև մարդը ընկերոջս մի բան ասել, բայց ի՞նչ, ինքս էլ չէի հասկանում: Օգնելու անկարողության զգացումն անասելի ճնշում էր, իսկ ժամանակը կարծես կանգ էր առել: Այլևս դիմանալու չէր, և որոշեցի խոսել. – Վարդան ջան, գիտե՞ս՝ միշտ երախտագիտությամբ եմ հիշում, թե ինչպես 2000 թվին, հակառակ սրբազանի կամքին, որոշեցիր մեզ՝ մի քանի հոգուս Մրեն հասցնել: Գիտե՞ս՝ մեզնից առաջ և մեզնից հետո՝ մինչև 2007 թ., երբ փլվեց արձանագրություններով լեցուն եկեղեցու հարավային ճակատը, ոչ ոք չէր լուսանկարել: Եթե դու այդ համարձակ քայլն այն օրը չանելիր, փաստորեն այդ արձանագրությունները պիտի անհետանային առանց գոնե մի լուսանկարով անմահանալու: Այսինքն՝ այդ օրը քո շնորհիվ ահագին պատմություն փրկվեց...

Վարդանը գլուխը բարձրացրեց, դեմքը պայծառացավ, աչքերը կյանք առած բացվեցին, և շատ բան ասելու ցանկությամբ վառված՝ անխոս հայացքին ժայի՛տ տեսա: Ընկերոջս վերջի՛ն ժայիտը...



Մրենի տաճարը հարավ-արևմուտքից 2000 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի) և փլուզումից հետո՝ 2009 թ. (լուս.՝ Գ. Արզումանյանի)

Լճանցի քուրդը

2007 թվականի օգոստոսի 18-ն էր: Ընկերակցում էի ամառային արձակուրդն Արևմտյան Հայաստանում անցկացնող Լուռու և Շիրակի թեմերի առաջնորդներին՝ Մեպուհ Չուլջյան և Միքայել Աջապահյան սրբազաններին: Մեքենան վարում էր Չուլջյան սրբազանը, կողքին նստած էր Աջապահյանը, ետևում՝ Չուլջյանի եղբորորդին և ես: Հետս վերցրել էի նախորդ 2-3 տարիներին տարբեր վայրերում լուսանկարած տեղացիների նկարներից, մի քանիսը՝ առանձին ծրարների մեջ խմբավորած: Ի թիվս դրանց՝ ձեռքիս էին նաև Մոկսի Լճան գյուղի քուրդ դպրոցականների նկարները: Մտածում էի, որ եթե մոտերքով անցնելու լինեն, փոխանցեն:

Բռնել էինք Հայոց ձորից Փեսանդաշտով Մոկս գնացող ճանապարհը և արդեն կտրել երկու զավառներն իրարից բաժանող լեռնանցքը, որտեղից երևում էր ընկուզենիների մեջ թաղված Լճանը: Մեր ճանապարհը գյուղ չէր մտնում, այլ գյուղի տակով իջնում էր ուղիղ դեպի գավառամիստ Մոկս: Միտք էլ չունեք այդ մեկ ծրարի համար ճամփից շեղվել և գյուղ մտնել: Ընդամենը հույս ունեի, որ գյուղամերձ հատվածներում այդ գյուղից որևէ մեկին կհանդիպեմք, և հենց այդպես էլ կփոխանցեի: Արդեն գյուղի սահմաններից համարյա դուրս էինք գալիս, մեկ էլ ճամփեզրին մի մարդ երևաց: Ծրարը փոխանցելու համար խնդրեցի Չուլջյան սրբազանին, որ կանգ առնի և միաժամանակ հարցնի՝ արդյոք այդ գյուղի՞ց է, թե՞ ոչ: Չմոռանամ ասել, որ ծնունդով մալաթիացի սրբազանը մայրենիի պես թուրքերեն է իմանում:

Խնդրանքս կատարվեց, կանգ առանք և գյուղացու՝ լճանցի լինելը պարզելուց հետո ծրարը մեկնեցինք մարդուն: Քիչ անակնկալի եկած՝ միջին տարիքի քուրդը նախ հարցրեց մեր որտեղացի և ինչ ազգից լինելը, ապա լուռ բացեց ծրարը, մեկիկ-մեկիկ նայեց, որի ընթացքում, սակայն, կարծես ոչ այնքան նկարներին էր նայում, որքան մի այլ բանի մասին էր մտածում: Լռությամբ նկարները տեղավորեց ծրարի մեջ, և մինչ մենք ամենաշատը մեկ՝ շնորհակալություն բարձր էինք սպասում, մի քանի ակնթարթ անխոս մնալուց հետո հանկարծ ասաց հետևյալը.

– Հազար տարի հետո էլ գաք, միևնու՛յնն է, ձե՛րն է...

Ասաց ու այլևս առանց ոչ մի ուրիշ բառ ավելացնելու շրջվեց ու հեռացավ...

Ի՞նչ զարմանալի ժողովուրդ էք դուք

Նույն ճամփորդության ժամանակ էր: Եկել, հասել էինք Արաբկիր քաղաք: Մտածում էինք՝ փորձենք տեսնել Արաբկիրի մեծաշեն Մայր եկեղեցին կամ այն, ինչ կարող էր նրանից մնացած լինել: Հին թաղամասի ոլոր-մոլոր ճանապարհին հանկարծ Չուլջյանն Աջապահյանին պատվիրում է.

– Մի բարի դեմքով մարդ գտի՛ր, կանգնեմ, եկեղեցու տեղը հարցնենք:

Բուպե չանցած՝ Աջապահյանն ասում է.

– Գտել եմ, կանգնի՛ր:

Կանգ առանք ճամփեզրին՝ մի սղոցարանի առջև աշխատող մարդու մոտ: Դեռ մինչև մեր բարևին և հարցումին պատասխանելն անմիջապես հակադարձեց.

– Որտեղացի՞ եք:

Անմիջապես զգացվեց, որ մեր պարզ պատասխանը մարդուն ինչ-որ այլ հոգեվիճակի մեջ զգեց: Սպասում ենք, թե ո՞ր ճանապարհով մեզ կուղղորդի, բայց դրա փոխարեն լսում ենք հետևյալը.

– Ի՞նչ զարմանալի ժողովուրդ էք դուք, միայն տասը տեսակի խաղող կար, ամեն բարիք ձեզ հետ չքացավ...

Կարճ դադարից հետո կարծես վերադարձավ իրականություն և բացատրեց եկեղեցատեղիի գտնված վայրը...

Արաբկիրի վերջին հայը

Սարգիս Միրանշահյան: Առաջին անգամ 97-ամյա այս պատվական մարդուն բախտ ունեցա հանդիպելու 2007 թ. (ծնվել է 1910 թ.), երբ թեմակալներ Սեպուհ Եպիս. Չուլջյանի և Միքայել Եպիս. Աջապահյանի հետ միասին էինք ճամփորդում: Չափազանց տպավորված էի, ուստի հաջորդ տարի՝ 2008 թ., արդեն մեր աշխատակիցների փոքր խմբով նորից այցելեցինք թանկագին մարդուն: Ինչպես տեղեկացրեց նրա սպասուհին՝ գյումրեցի տիկին Մանուշակը, պ. Միրանշահյանը ձմռանը հիվանդացել էր և բավականին ընկճվել, սակայն նա այնքան հզոր մարդ էր, որ նույնիսկ այդ վիճակում ապշեցրեց բոլորին: Ես, որ մեկ տարի առաջ էլ էի տեսել, իհարկե, տարբերություն չատ էի զգում: Ուզում եմ այս իմաստուն և հայի դարդով ապրած մարդու՝ խոր ցավով արտահայտած մտքերից մի քանիսը փոխանցել:

1 Հայը միություն, միություն չունի: Իրարու ետևեն նախանձություն կենեն (ասում էր և առյուծի պես մռնչում էր ցավից, ափսոսանքից):

2. Ինձ պես շատեր ըլլային, նե Հայաստան թագավորություն կունենար (ու նորից մռնչում էր):

3. Այլազգի մեկը դիմադարձություն ըրավ, զարկի, սատկեցուցի (ու նորից մռնչում էր):

Տիկին Մանուշակն ասաց, թե մեզանից առաջ ամերիկահայեր էին այցելել և իրենց տպավորությունները մի թերթում տպել էին՝ «Արաբկիրի մռնչան առյուծը» վերնագրով: Կինը փնտրեց, բայց թերթը չգտավ, տան մեջ կորցրել էր...

Մեր այս հանդիպումից ամիսներ անց՝ 2009 թ. գարնանը, Սարգիս Միրանշահյանը վախճանվեց՝ մեր հոգիներին պահ տալով ազգի ցավով ապրող հզոր հայի պայծառ հիշատակը:

Քուրդ գյուղացին

2010 թ. օգոստոսի 11-ն էր: Խնուսի Ջեռնակ գյուղից միջահասակ մի քուրդ գյուղացու ուղեկցությամբ հասել էինք Վարաժնունիք և Հարթ գավառների սահմանագլխին գտնվող Ջեռնակի բերդը և փորձում էինք պահպանված որմերը դրվագ առ դրվագ լուսանկարել: Մեկ էլ այս մարդը, որ դեռ գյուղում պարզել էր մեր որտեղացի և ինչ ազգից լինելը, բերդից դուրս՝ մի ավելի բարձր տեղում կանգնած, մեզ իր մոտ է հրավիրում: Խմբվում ենք շուրջը և լսում հետևյալ խոսքերը.


– Ես ձեզ հիմա Հայաստանն եմ ցույց տալու, – և հին անուններն արտաբերելով՝ մեկիկ-մեկիկ մատնացույց է անում մինչև 1915 թվականը հայաբնակ Հարթ (Բուլանդղ) գավառի հեռու-մոտիկ գյուղերը:



Արաբկիրի վերջին հայը՝ Սարգիս Միրանշահյան (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2008 թ.)
Ջեռնակի քուրդը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2010 թ.)

Մի փշուր ազգային պատմությունից

2011 թ. օգոստոսի 11-ն է: Խիզանի ձորերում անցնող ճամփորդության հերթական օրը եզրափակում ենք շրջապատի նկատմամբ բարձր և մեկուսի դիրքում գտնվող Վերին Պախուր (այժմ՝ Աքջալը) գյուղում: Ընդամենը 8 քուղղ ընտանիքից բաղկացած մի փոքր գյուղ էր, որը թուրքական բանակի կողմից 1991 թ. հրդեհվելու պատճառով նոր-նոր վերստին բնակելի էր դարձել: Մեր նկատմամբ գյուղացիները բարյացակամ են և մատնացույց են անում կցակառույցների մեջ թաքնված դեռևս գոյություն ունեցող Սր. Գևորգ եկեղեցին և դպրոցը, որը կառուցվել էր հայոց գերեզմանոցի տարածքում: Յույց են տալիս նաև գյուղական այս ու այն շինության որմուն որպես շինանյութ գործածված խաչքարեր, բեկորներ: Վերջապես կանգ ենք առնում եկեղեցու անկյունաքարերից մեկին նշմարվող արձանագրության մոտ: Փորձում են ընթերցել: Քրդերը հետաքրքրությամբ խոնվել են մեր շուրջը և շատ են ուզում իմանալ ի՞նչ է գրված: Կարդում են. «Յիշեցէք զՕվանէսի Ի Քս., որ Ծովակ գնեց, ռիսլ արար Երուսաղմ., դռ...շ... կարալ եղիր վրա.», և թարգմանաբար փոխանցում ենք, որ Հովհաննես անունով մեկը գնել է Ծովակ տեղամասը և մվիրել Երուսաղեմի հայոց վանքին... Քրդերն իրար են նայում, անմիջապես մատնանշում են գյուղամերձ կանաչապատ տարածքը և ասում. – Ձովակը (դե՛, իրենք Ծ արտասանել չեն կարողանում) ահա այդ մասն է: Երջանիկ, որ կորուսյալ Հայրենիքի հայանուն մեկ մանրատեղանուն էլ մոռացության ծովից ափ հանեցինք, շնորհակալությամբ հրաժեշտ ենք տալիս գյուղացիներին և հեռանում...



Կանաչապատ Ծովակը, մվիրատվական արձանագրությունը և գրչանկարը (լուս և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2011 թ.)

Ծկորա Գալուստը

Յուրաքանչյուր ազգի պատմության մեջ կարևոր դեր են կատարել և այսօր էլ կատարում են անհատները, որոնց գործունեությունը սերունդների համար կարող է օրինակ ծառայել: Չէ՞ որ նրանց մվիրումի շնորհիվ է, որ այսօր գոյություն ունենք: Նրանք ապրեցին, որ ապրեցնեն մեզ:

Այդ անհատներից շատերի անուններն այսօր, սակայն, անարդարացիորեն մոռացության շղարշով են պատված: Մենք չենք հիշում կամ գրեթե ոչինչ չգիտենք, սակայն օտարազգիներն անգամ 100 տարի անց հիշում են և բերանացի պատմում նրանց քաջագործությունների մասին:

2011 թ. մեր հերթական ճամփորդության ժամանակ, առիթ ունեցանք շրջագայելու Վանա լճի հարավային շրջաններում: Օգոստոս ամիսն է: Խիզան գավառի Վերին Կարկառ գավառամասի Արբենց գյուղում ենք: Առաջին իսկ պատահած քուղղը սկսեց մեզ պատմել հետևյալը.

– Մի քանի գյուղ այն կողմ Սկորն է (նախկին Ծկորը: Քրդերն այդպես են անվանում, քանի որ ծ տառը չեն կարողանում արտաբերել): Դուք հայ եք, իսկ գիտե՞ք, որ Սկոր գյուղում եղել է ֆիդայի Գյալուն: Դուք գիտե՞ք նրա պատմությունը:

Ո՞վ էր ֆիդայի Գյալուն՝ Գալուստ Պողոսյանը: Անկեղծ ասած՝ մինչ այդ ըոպեն նրա անունն ինձ առանձնապես ոչինչ չէր ասում:

Միջին տարիքի քուղղը սկսեց այնպես պատմել, կարծես անձամբ ճանաչում էր, կարծես մասնակիցն էր 100 տարի առաջ տեղի ունեցած իրադարձությունների, այլ ոչ թե երրորդ սերնդի ներկայացուցիչ, որն այդ պատմությունը լսել էր պապերից:

Ֆիդայի Գյալուն Ծկորի գյուղապետն էր: 1915 թ. թուրքերը հարձակվում են գյուղի վրա և ավերում: Գյուղաբնակները փախչում են Որիս գյուղ, որտեղ բնակվում էր մի հարուստ մարդ: Տեսնելով Գալուստին՝ ասում է.

– Տեսա՞ր՝ ինչ եղավ: Գյուղը ավերեցին, դուք փախաք: Ախր ասացինք, որ թուրքական պետության դեմ ոչինչ չես կարող:

Գալուստը լսում է այս խոսքերը, վիրավորվում, վերցնում է եղբորորդուն և վերադառնում գյուղ: Չորքը պաշարում է Ծկորը: Գալուստը երեք-չորս հոգով մի քանի օր խիզախորեն կռվում է և նահատակվում: Եղբորորդին վերցնում է նրա զենքը և հեռանում: Թշնամին կտրում է քաջ ֆիդայու գլուխը, իսկ մարմինը՝ այրում:

Հասանք Ծկոր գյուղ: Այստեղ ևս սկսեցին նույնը պատմել Գալուստի մասին: Պարզվեց, որ գյուղաբնակներն անգամ տան տեղն են հիշում և ցույց տվեցին մեզ: Այն արդեն ավերակների մի կույտ էր, որից միայն մի քանի պատ էր կանգուն: Յույց տվեցին նաև նրա արտերը, որտեղ լոբի էր ցանված, այգին և Գալուստի տնկած ծիրանի ծառը, որի ստվերում սիրում էր նստել և հանգստանալ աշխատանքից հետո: Իսկ գյուղի դիմաց այն ժայռն էր, որտեղ էլ նահատակվել է քաջ ֆիդային:

Ֆիդայի Ծկորա Գալուստի պատմությունը մեզ է փոխանցել նաև ժամանակի մամուլը: «Հորիզոն», «Աշխատանք» թերթերում գրվել է քաջ ֆիդայու մասին հետևյալը. 1914 թվականին գյուղապետ Գալուստ Պողոսյանը, քրդական մի շարժման հետ կապված, ձերբակալվում է և տարվում Բաղեշի բանտ, սակայն հետո ազատ է արձակվում:



Ֆիդայի Գալուստ Պողոսյանի այգին և նրա տնկած ծիրանի ծառը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2011 թ.)

Դեռևս 1914 թ. դեկտեմբերին թուրքական կառավարությունը հարձակվում է Ներքին և Վերին Կարկառի 10 գյուղերի (Թացու, Եղեգիս, Բերկրի, Որիս, Արբենց և այլն) վրա: Այդ հարձակումները տևում են մինչև 1915 թ. Եղեռնը: Գյուղերը հրդեհվում են: Փրկվածները, ցուրտ ձմռանը զոհեր տալով, անցնում են լեռնանցքը և ապաստանում Մոկս գավառում, քանի որ գավառապետը՝ ազգությամբ քուրդ Մուրթուլա բեյը, ավելի մարդկային վերաբերմունք ուներ հայերի նկատմամբ: Այդ ամենի շնորհիվ էլ Մոկսը կարծես հուսալի ապաստան էր ծառայում:

1915 թ. փետրվարի սկզբին նորից պաշարվում է Ծկոր գյուղը: Ֆիդայի Գալուստը ևս հնարավորություն ուներ փախչելու և ապաստանելու Մոկսում, սակայն նա ժողովրդին փոխադրելուց հետո վերադառնում է գյուղ, դիրքավորվում գյուղամերձ ժայռի վրա և 1 հրացանով և 1 ատրճանակով դիմադրում բազմաքանակ խուժանին: Երկու կողմից հարձակման են անցնում: Քաջ ֆիդային նահատակվում է՝ կռվելով մինչև վերջին փամփուշտը: Քրդերը երկար ժամանակ չեն համարձակվում մոտենալ ժայռին: Միայն ժամեր անց մահացած են գտնում նրան: Կտրում են զլուխը, իսկ մարմինը՝ այրում:

Ահա սա էր մամուլի այն տեղեկությունը, որը 2011 թ.՝ 100 տարի անց, գրեթե նույնությամբ լսեցինք քրդերից: Փառք ու պատիվ Հայրենիքի համար նահատակվածներին: Նրանք հերոսացան, որ մենք ապրենք: Հիշենք նրանց...

Մի ներողություն ունենք ասելու

Մարդկային և մշակութային անձայրածիր գերեզմանոցի վերածված նախնյաց օրրանում, ինչպես ուրվական թափառելիս, 2014 թ. հուլիսի 20-ին մեզ գտանք Հայոց ձոր գավառի երբեմնի գավառանիստ Կղզի գյուղում: Ամեն անգամ, երբ առիթ են ունենում այս գյուղի անունը տալու, սկսմանից անմիջապես միտքս ծակում է Օլգենիին՝ 1913 թ. «Անհետացող Հայաստան» վերնագրով հրապարակման մեջ տեղ գտած այս վկայությունը. «...ցոյց տուին մի գառամեալ և հոգեկան հիւանդ հայ ծերունու, որի ամբողջ հիւանդությունը այն է, որ 40 տարվա ընթացքում ամեն օր առաւօտները դուրս է գալիս գիւղի ծայրը և նայում է դէպի հիւսիս. վերադառնալով ապա տուն՝ նա հառաչելով ասում է. «Ո՛չ, Մօսկօվ քեռիները դեռ չեն գալիս»:

Կղզին ներկայումս գավառանիստ քաղաք է, որ վերանվանվել է Գյուրվիճնար և ունի 5300 գրեթե բացառապես քուրդ բնակիչ: Այստեղ հին գյուղից ոչինչ չի պահպանվել: Հետաքրքիր էր նորակառույց մզկիթի երիտասարդ իմամի հետ մեր կարճ գրույցը, որի ընթացքում իմանալով, որ մեր խումբը Հայաստանից է, այսպես արտահայտվեց.

– Դուք չպայքարեցիք այս հողի համար, իսկ մենք պայքարում ենք: Մի օր, երբ կստեղծենք մեր պետությունը, իմացեք, որ հայերը ազատորեն կարող եք բնակվել մեր պետության մեջ, իսկ ընդհանրապես մենք՝ քրդերս, ձեր ժողովրդից մի ներողություն պետք է խնդրենք 1915 թ. կատարվածի համար:

Այո՛, եռանդուն մասնակցություն ունենալ սեփական Հայրենիքում մի ողջ ազգի բնաջնջման թուրքական ծրագրին, այնուհետև գրեթե մեկ դար անվերջ ավերել-անհետացնել բնաջինջ ազգի՝ հազարամյակների ընթացքում ստեղծած մշակութային արժեքները և մեծահոգաբար «մի ներողություն» հայտնել...

«Մի ներողություն», որ առաջին անգամն էլինք լսում ու դեռ չգիտեինք, որ տարօրինակ զուգադիպությամբ մեկ այլ քրդի շուրթերից հենց հաջորդ օրն էլ պետք է լսեինք:

Հայոց ձորին սահմանակից Շատախ գավառը մի գյուղախումբ ունի, որը բարձրաբերձ լեռներով անջրպետված է բուն գավառից: Այնտեղ հասնելու համար պետք է ճանապարհ ընկնել Նորդուզի կողմից: Դա Մաքռչկ-Շվրաշ-Նավ-հանդ գյուղերի ձորակն է:

Այս գյուղախմբի բնակիչների ճակատագիրը մինչև 2014 թ. հուլիսի 21-ը գոնե ինձ համար մի խորհրդավոր անհայտության մեջ էր: Նրանց մասին ո՛չ հայրենակցական միությունների և ո՛չ էլ վերապրած հուշագիրների մոտ որևէ տեղեկություն գոյություն չուներ: Սրանից թերևս երկու հետևության կարելի էր հանգել. առաջինը՝ գուցե ցեղասպանությունը վերապրած ձորակի բնակիչների մեջ կատարվածն արձանագրելու կարևորությունը զգացած կամ պարզապես գրչի մարդ չի եղել, երկրորդ՝ պարզապես ոչ ոք չէր փրկվել այդ անելու համար:

Մաքռչկցի մի խումբ քրդերի առաջնորդությամբ տակնուվրա արված հայոց գերեզմանոցը ետևում թողնելով՝ ուղղություն վերցրինք դեպի Շվրաշ: Ճանապարհին մեր ուշադրությունը գրավեց ավերակ մի ջրաղաց, որից ոչ հեռու ողջունեցինք երեխաների օգնությամբ խոտից պարան հյուսող միջին տարիքի մի քրդի: Սա՛ մեր որսեղացի լինելն իմանալուց հետո ասաց, որ ամաչում է հայերի նկատմամբ իրենց պապերի կատարածի համար և մի կարճ լռությունից հետո, կարծես պատմելու որոշումը դժվարությամբ կայացնելով, սկսեց.

– Այս ծորակի հայկական երեք գյուղերի բնակիչներից ջարդի ժամանակ փախուստով միայն երկու երեխա է փրկվել: Նրանցից մեկն օրեր անց մոտեցել է մի քուրդ հովվի և հաց խնդրել: Հովվը հաց և կաթ է տվել, բայց երբ երեխան շնորհակալությամբ ցանկացել է հեռանալ, ետևից փայտով այնպես է հարվածել գլխին, որ աչքերը դուրս են թռել, և տեղում մահացել է: Մյուսին էլ գյուղում բռնել, մեջքին մի ծանր կոճղ են դրել ու կացնով գլուխը կտրել: Մրա համար մեր ժողովուրդը մի ներողություն ունի հայերին ասելու»:

Ահա թե ինչու հետեղեռնյան հուշագրական բնույթի մեծաքանակ իրատարակությունների մեջ այս երեք գյուղերի մասին որևէ հիշատակություն երբևէ չի հանդիպում, որովհետև սպանվել էին բոլորը, և որի համար էլ՝ հերթական «մի ներողությունը»...



Շվրաշում քուրդ գյուղացին, տեսախցիկներից հեռանալով, պատմում և ներողություն է խնդրում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Կյանքիս աստեղային պահերից մեկը

Սահող տարիներն աննկատ բեռնաթափում են հիշողությունս: Ժամանակն իրար հետևից սրբում է ամեն տեսակ միջադեպերի և իրադարձությունների հետ կապված համեմատաբար թույլ հուշերն և կարծես դրանք բյուրեղացնելով՝ առայժմ խնայում է առավել հիշարժանները: Վերջիններիս թվում, ըստ իս, կան այնպիսիները, որ թերևս արժեք գրի առնել, մասնավոր զգում են, որ անցնող ժամանակը կամաց-կամաց խամրեցնում է մառ այն ամենը, ինչն այսօր դեռևս թարմ է թվում:

Առ ի փորձ կամ պնդություն՝ ներկայացնում են հուշերիցս մեկը, որն առնչվում է Արճեշ գավառի Բերդաղ գյուղից սերող մեր տոհմի պատմությանը:

Ընդհանրապես պապին տեսած և հետը զրուցած թոռներից շատերն են ավստում՝ ժամանակին շատ բաների մասին, որ կարելի էր և անհրաժեշտ էր խոսել պապի հետ, չի արել կամ արել է մասնակի: Ես էլ հենց այդպիսիների թվում եմ և տարիների հեռավորությունից անչափելի ավստասնք եմ զգում, որ ժամանակին պապիս հետ այնքան կարևոր բաների մասին չեմ զրուցել: Այս խնդրում, այնուամենայնիվ, մի մխիթարություն ունեմ. պապիս մահվանից (1983) մեկ թե երկու տարի առաջ զրուցել էի մեր տոհմի մասին ու ըստ նրա իմացածների՝ կազմել Բերդաղից սերող մեր ազգի տոհմաձառը:

Այդ օրերից ավելի քան երկու տասնամյակ անց՝ 2004 թվականին, պապիս շուրթերից այնքան հաճախ արտաբերված, ինչպես նաև հորս բանաստեղծություններում բազմիցս հիշատակված մեր տոհմի օրրան Արճեշ գավառի Բերդաղ գյուղ ոտք դնելու բախտ ունեցա:

2004 թվականի ճամփորդությունս առաջինն էր Արևմտյան Հայաստան իրականացվող մեր իրարահաջորդ բազմօրյա ճամփորդությունների շարքում, և հենց այդ առաջին առիթից օգտվելով էլ՝ մեծ ցանկություն ունեի լինել Բերդաղում:

Մեր փոքրիկ խումբն Արճեշ քաղաք (այժմ կոչվում է Էրջիշ) հասավ հուլիսի 30-ին: Հիշում եմ քաղաքամիջում մայրով քայլող մի բնակչին ուղղված մեր հարցը՝ որտե՞ղ կարող ենք մաքուր, բայց և ոչ թանկ հյուրանոց գտնել: Անցորդն անմիջապես հարցրեց մեր՝ որ երկրից լինելը և Հայաստանի անունը լսելով՝ պատրաստակամ մատնանշեց մի հյուրանոց, որը, ինչպես պարզվեց, իրապես թե՛ հարմարավետ էր և թե՛ մատչելի: Գիշերակացի խնդիրը լուծելուց հետո դեռ մինչև օրվա վերջը մի քանի ժամ լույս ունեինք և դեռ կհասցնեինք մի որևէ գյուղ այցելել: Ընտրությունը, իհարկե, պիտի կանգ առնեք Բերդաղի վրա, որը, անշուշտ, կարելի էր այցելել մառ հաջորդ օրը, քանի որ լույսով ավելի շատ ժամանակ կհատկացնեինք գյուղին, բայց այդպես վարվելու համար համբերությունս չհերիքեց, և բուպեներ անց մենք արդեն Բերդաղի ճանապարհին էինք: Ճիշտն ասած՝ անպայման այդ օրը գյուղ հասնելու համար մեկ այլ դրոպապատճառ էլ ունեի: Հուլիսի 30-ը ծննդյանս օրն էր, և կարծես ուզում էի ինքս ինձ նվեր անել՝ հատկապես այդ օրը պապերիս գյուղ ոտք դնելով:

Հազիվ կես ժամ անց հասանք ներկայումս Դիլիջանի վերանվանված Բերդաղի մատույցներին: Գյուղեգրի առաջին կառույցը մի փոքրիկ խանութ էր, որի մուտքի առջև երկարած ծածկի տակ խմբված քրդերը դիտում էին ընկերակից գույզի նարդու խաղը:

Թարգմանչի միջոցով ներկայացրինք մեր այցի նպատակը: Խաղն ընդհատած քրդերից մեկն ասաց՝ գյուղում միայն մեկ անձ կա, որ մեր հարցումներին հնարավոր է՝ կարողանա պատասխանել, և երիտասարդը վերադարձավ միջահասակ և ոչ այնքան տարեց մի մարդու հետ: Մեր հարցումները կրկնեցինք մառ այս մարդու համար՝ հատկապես շեշտելով, որ ինքս բերդաղցու ծոռ եմ, և պապիս հայրը՝ Գևորգը, այս գյուղի ծնունդ էր և Հովհաննեսի (Ախանես աղա) որդին էր, իսկ վերջինս էլ՝ Բերդաղի ռեիս Կարապետի որդին (ի դեպ, նրանից էլ վերցրել ենք մեր ազգանունը): Ինձ շատ էր հետաքրքրում, թե այս անունները մի որևէ բան կհուշե՞ն ներկայիս բնակիչներին և ի մասնավորի՝ այս մարդուն, որը հայտնի էր գյուղի՝ հայերին վերաբերող պատմությունների իմացությամբ:

Մեր հարցումների ավարտին մարդն առանց մի խոսք արտաբերելու գլխի շարժումով իրեն հետևելու նշան արեց և առաջ անցավ: Հինգ հոգուց բաղկացած մեր խումբն էլ իսկույն սկսեց հետևել այս ու այն տնամերձ հողակտորները հատող, դրանց ոչ բարձր պատնեշների, երբեմն մառ առուների վրայից պարբերաբար և նկատելի դյուրությամբ ցատկող մեր առաջնորդին: Ընդամենը մի քանի բուպե այսպես քայլելուց հետո կանգ առավ հերթական շրջափակ հողա-



Սամվել Կարապետյանը Բերդաղ գյուղի մատույցներում և պապենական հողամասի հարևանությամբ գտնվող աղբյուրից կից ընկած խաչքարի մոտ (լուս.՝ Է. Աբրահամյանի, 2004 թ.)

կտորի կենտրոնում և լուռ ու համբերատար սպասեց, որ պոչ պոչի իրար հետևից քայլող մեր խմբի բոլոր անդամները տեղ հասնեն: Մեզնից բացի՝ մերձակա տնից անմիջապես այդտեղ էր եկել նաև տվյալ հողամասի տերը և հարցական հայացքով մերք մեզ էր նայում, մերք էլ իր՝ ակնհայտորեն մեծ հարգանք վայելող համազյուղացուն, որը մի կարճ լուսթյունից հետո, դեմքն իմ կողմն ուղղելով, բայց խոսքը թարգմանչին հասցեագրելով, ասաց.

– Դու քո պապերի հողամասի վրա ես կանգնած,– նաև ավելացրեց,– առաջ այստեղ միայն խաղողի վազեր էին, որոնց վայրենացած մնացորդները տեղ-տեղ դեռ նշմարվում են հողամասի շրջապարսպի վրա: Մեր ժողովուրդը խաղողագործությամբ չի զբաղվում, ուստի տարածքն ազատվել է անասնակեր ցանելու համար:

Այս կարճ բացատրությունների ավարտին մեզ պես ունկնդիր դարձած հողամասի տերը գրեթե վազքով տուն գնաց և մի խումբ կանանց ու աղջիկների հետ արագ վերադարձավ՝ սփռոցը, մութաքիներն ու թեյի պարագաները ձեռքին: Մեզ առաջարկեցին իմ պապերին պատկանած հողամասի մեջտեղում՝ հենց մեր կանգնած տեղում, թեյի նստել: Թեյ-խմության պահին տանտերն ասաց, որ չի կարող մվիրել, բայց սովորականից շատ ավելի ցածր արժեքով կարող է իմ պապական հողամասն ինձ վաճառել, եթե, իհարկե, այն գնելու ցանկություն ունենամ:

Մեր առաջնորդ քուրդը նաև շեշտեց, որ հարևան Փանիկ (պատմական՝ Բանոն) գյուղում են բնակվում այս նույն հողատիրոջ շառավիղները, ովքեր փաստորեն իմ արյունակիցներն էին: Այս տեղեկությունը պարզապես ցնցեց ինձ, բայց արդեն օրվա վերջն էր, ուստի որոշեցի Փանիկի այցելությունն թողնել առավոտյան:

Թեյից հետո քրդերը մեզ առաջնորդեցին նաև հարևանությամբ գտնվող աղբյուրը՝ շեշտելով, որ դա էլ է նույն հողատիրոջը, այսինքն՝ իմ պապերին պատկանել: Աղբյուրին կից երեսնիվայր մի խաչքար կար, որը տեսնելու համար քրդերն օգնեցին շրջել այն:

Հասցրինք տեսնել նաև միակ պարզ խաչքարով հայոց գերեզմանոցատեղին և ձորամիջի ջրաղացի ավերակները: Անսպասելի տպավորություններով վերադարձանք Արճեշ քաղաք, երբ արդեն բոլորովին մութ էր: Մակայն այստեղ պարզվեց, որ Ջավախքից վարձակալած մեր մեքենան ինչ-որ խնդիր ուներ, ուստի այն վերացնելու համար անհրաժեշտ էր առավոտյան նախ արհեստանոց հասնել:

Առավոտյան ինքս անիմաստ համարեցի արհեստանոցում լինել և որոշեցի սպասել հյուրանոցում: Մոտ երկու ժամ անց մեքենան նորոգված էր, վարորդը վերադարձավ, սակայն որոշ տիպի լուրերով: Բանն այն էր, որ երբ նորոգող արհեստավորներն իմացել էին, թե մենք որ հյուրանոցում էինք իջևանել, զարմանքով նշել էին՝ դա քաղաքի 25 հյուրանոցներից միակն է, որի աշխատողները թուրք էին, այն պարզապես լրտեսանոց էր, և անկեղծ զարմացել՝ ինչպես ենք գտել հենց այդ հյուրանոցը: Արհեստանոցի աշխատակիցներից իրենց իմացած զանազան հնավայրերն առաջնորդելու պատրաստակամությամբ արդեն մեր մեքենայում գտնվող երկու քուրդ երիտասարդ հյուրանոցի անձնակազմից նկատվելու մտավախությամբ նույնիսկ մեքենայից դուրս չեկավ: Ինչևէ, գուցե նույնիսկ տեղի տալով ավերորդ գգուշավորությամբ՝ որոշեցինք Արճեշում տեսնելիք մյուս վայրերը թողնել սպազալին:

Այդպիսով՝ հուլիսի 31-ին միայն Չիլանի շրջանում մի քանի հնավայրեր այցելելուց հետո մենք հեռացանք Արճեշի սահմաններից և հարևան Թիմար գավառի զանազան գյուղերն ու հնավայրերն այցելելուց հետո մի քանի օրից հասանք Վան քաղաք: Հյուրանոցում հանգրվանելով՝ մոտ մեկ շաբաթ շրջապայցիցինք Վան-Տոսպ և Հայոց ձոր գավառների գյուղերում:

Երևի մի 10 օր էր անցել, ինչ մենք դուրս էինք եկել Արճեշի շրջանից, երբ մի երեկո հյուրանոցի հերթապահն իրագեկեց, որ ցերեկը երկու հոգի՝ հայր և որդի, մեզ էին հարցրել և հեռախոսահամար թողնելով՝ խնդրել, որ իրենց հետ կապվելինք: Չանգեցինք, և, ո՛վ զարմանք, փանիկաբնակ բերդաղցի արյունակիցներս էին, ովքեր մեր մասին Բերդաղից լուրն առնելուց հետո փաստորեն օրեր շարունակ հարց ու փորձով գավառից գավառ, գյուղից գյուղ մեզ էին փնտրել և վերջապես գտել:

Երբևէ երևակայել իսկ չէի կարող, թե ճամփորդություններիս ժամանակ, պատմական հուշարձաններից գատ, նաև ազգականներ պիտի հայտնաբերեի, բայց ինչպես ասում են, մեծ աշխարհ է, ամեն ինչ կարող է պատահել:

Վանի «Ենի Չալդրան» հյուրանոցից նորահայտ ազգականներիս հետ մեր հեռախոսագրույցը միմյանց փոխանցվող գրեթե նույնական հարցերից էր բաղկացած. ովքե՞ր եք, ո՞ւմ թոռներ եք, մեր տոհմի ո՞ր ճյուղն եք, ձեր պապի հոր անունն ի՞նչ էր, իսկ պապի պապի անո՞ւնը և այդպես շարունակ: Իհարկե, թուրքերենով և այն էլ թարգմանչի միջոցով տեղի ունեցող մեր գրույցը հեռու էր բավարար համարվելուց: Ինչպես պարզվեց (որը, անշուշտ, սպասելի էր) ազգականներս քրդախոս էին, բայց և ազատ տիրապետում էին թուրքերենին, մինչդեռ հայերենն իսպառ մոռացության էին մատնել: Ձրույցի մեխը մեզ Արճեշ վերադարձնելն էր, որ հնարավորություն ունենայինք հանգիստ պայմաններում երկար խոսելու մեր տոհմի՝ իրարից շուրջ մեկ դար կտրված երկու ճյուղերի մասին: Մակայն մեր հաջորդ հանգրվանը,

ըստ իմ՝ նախապես որոշած աշխատանքային երթուղու, պետք է լինեն Վանա լճի հարավային շրջանը, որն Արճեշի համեմատ լճի ճիշտ հակադիր կողմում էր: Իհարկե, անչափ մեծ էր անմիջապես հանդիպելու գայթակղությունը, բայց տեղի տվեցի՝ Արճեշում երկրորդ անգամ հայտնվելու կասկածի առարկա չդարձնելու մտավախության պատճառով: Վերջապես առաջին ճամփորդությունս էր, մեջս մի անբացատրելի լարվածություն կար (իհարկե, արդեն հաջորդ ճամփորդության ժամանակ իսպառ ցրվեց): Ամեն կերպ ձգտում էի չլսանգել զբոսաշրջիկի անվան ներքո իրականացվող աշխատանքը, ուստի և որոշեցի չչեղվել մեր ծրագրից և նորահայտ ազգականներիս հետ այնքան ցանկալի հանդիպումը հետաձգեցի հաջորդ տարի:

Մինչև 2005 թ. ամառը, երբ մեր խումբը կրկին ճանապարհ ընկավ Արևմտյան Հայաստան, փանիկաբնակ բերդաղցի ազգականներիս տարբեր առիթներով, ինչպես նաև անառիթ մի քանի զանգով ողջունել էի և ամեն անգամ վստահեցրել, որ մեր առաջիկա հանդիպմանն այլևս ոչինչ չէր խոչընդոտելու:

Օգոստոսի 3-ը մեր երկրորդ ճամփորդության 8-րդ օրն էր: Այդ օրը Հուսկանորդու և Արգելանի վանքերն այցելելուց հետո որոշեցի զանգով ազգականներիս իմաց տալ, որ մենք Բերկրիի շրջանում ենք, մեկ-երկու օրից կլինենք Արճեշում և վերջապես կհանդիպենք:

Չանգի պատասխանը հետևյալն էր.

– Հիմա որտե՞ղ եք:

Պատասխանում ենք.

– Բերկրիի ջրվեժի մոտ:

– Խնդրում ենք՝ սպասեք, մենք գալիս ենք ձեզ ընդառաջ:

Ժամ չանցած՝ երկու մեքենա կանգնեց ջրվեժի հարևանությամբ գտնվող փոքրիկ հրապարակում: Չգիտեմ՝ մեքենաներից դուրս եկած անձերի հարցական և որոնող դեմքերի արտահայտությունների՞, թե՞ որևէ կերպ անմեկնաբանելի զգացողությունների դրոմամբ քայլեցի դեպի... դեպի՝ ճիշտ 90 տարվա անջրպետով միմյանց գոյությանն անհաբորդ մնացած ազգականներս:

Տարիներ են անցել, բայց նույնիսկ այս պահին, երբ սույն տողերն են շարադրում, դարձյալ խեղդում է այն նույն հուզմունքը, որն ապրել եմ 2005 թ. օգոստոս 3-ին՝ անձանոթ արյունակիցներիս հետ գրկախառնվելու պահին:

Կարճ ծանոթությունից հետո, հետևելով մեր առաջնորդներին, անմիջապես շարժվեցինք դեպի Արճեշ: Քաղաքում կանգ առանք մի տան առջև: 7 հոգուց բաղկացած մեր խմբին ներս հրավիրեցին: Մեր գրույցը բավական երկար տևեց: Կարողացա պարզել, որ իմ առջև էին 1983 թ. վախճանված Բաղդասար պապիս պապի՝ Հովհաննեսի (Ախանես աղա) եղբոր՝ Ղազարի ծոռները, նրանց երեխաներն ու թոռները: Շատ էին պատմում հատկապես բերդաղցի Ղազարի հերոսությունների, նրա բարության, ազգասիրության և ի վերջո դավադիր սպանության մասին:

Չարմանքով պարզեցի այն հզոր ցանցի գոյությունը, որն առկա էր հեռու-մոտիկ գյուղերում ապրող սակավաթիվ մահմեդականացած հայերի շրջանում: Երբ հարցրի, թե ինչպիսի՞ն են հարաբերությունները ձեզ շրջապատող հարյուր-հազարավոր քրդերի հետ, հնչեց մի կարճ պատասխան, որը, անկեղծ ասած, ինձ տարօրինակ թվաց.

– Զրդերը մեր դեմ շատ փորձեցին, բայց չկարողացան:

Ես չկարողացա հասկանալ, թե այդ ինչպե՞ս կարող է պատահել, որ հարյուր-հազարավոր քրդերի շրջապատում գտնվող այս ու այն գյուղում մեկ-երկու կամ հինգ-տասը տուն մահմեդական հայերը, որպես հակադիր կողմ, կարողանան իրենց կշիռն ու ինքնությունը պահել: Ավելին, եթե անկեղծ լինեմ, ապա պիտի խոստովանեմ, որ այդ պատասխանը մտքիս մեջ մինչև իսկ մի տեսակ գոռոզամտության կամ սնապարծության վերագրեցի, բայց չուզեցի թերահավատությունս բարձրաձայնել. չէ՞ որ այդ աստղը 75-80-ին մոտ պատկառելի, անգամ չեմ վարանում ասել՝ ազնվական դիմագծերով ալեհեր անձնավորություն էր:

Հաջորդ առավոտյան Փանիկ այցելելու պայմանավորվածությամբ ուշ երեկոյան հրաժեշտ տվեցինք: Գիշերեցինք նրանց առաջարկած հյուրանոցում:

Առավոտյան եկան մեր հետևից, և միասին ճամփա ընկանք դեպի Փանիկ գյուղ: Ես այդպես էլ նորահայտ ազգականներիս չհարցրի, թե ե՞րբ կամ ի՞նչ պատճառով էին Բերդաղցի փոխադրվել հարևան գյուղ, բայց ենթադրում եմ, որ պատճառը կարող էր տնտեսական լինել: Ազգականներիցս մեկը, ում պարզապես դիմում էին Հաջի անվամբ, տեղավորվել էր մեր մեքենայում և ամբողջ ճանապարհին մերթ մեքենայի աջ, մերթ ձախ կողմերում մատնացույց էր անում երբեմն մինչև շատ հեռու հասնող ու հազիվ նշմարվող սարերում փռված արոտավայրերը կամ էլ անծայրածիր վարելահողերը և հենց այնպես, կարծես ի միջի այլոց, անընդհատ արտաբերում նույն նախադասությունը.

– Սրանք իմ հողերն են..., սրանք էլ են իմը...

Եվ այդպես շարունակ: Ճիշտն ասած՝ դեռ երեկվա չմարսածս պատասխանի ֆոնին («Զրդերը մեր դեմ շատ փորձեցին, բայց չկարողացան») գումարվող մաս այս՝ համարյա անհավանական թվացող հավաստիացումներն իմ մեջ առ նորահայտ ազգականներս մի տեսակ անվստահության զգացումներ էին առաջացրել: Ավելին՝ աջ ու ձախ «իմ հողերն են» արտահայտությունն ակամա ինձ հիշեցրել էր «Գոշկավոր կատուն» մուլտֆիլմի այն դրվագը, երբ թագավորին անվերջ ասվում էր, թե սրանք բոլորը մարկիզ Կարաբասի տիրույթներն են:

Հետևում թողնելով Բերդաղը՝ վերջապես հասանք Փանիկ: Ազգականներիս տունը գտնվում էր բուն գյուղից քիչ մեկուսի դիրքում՝ շրջապատի նկատմամբ իշխող դիրք ունեցող բլրակի վրա: Երբ տեղ հասանք, առաջինն ուշադրությունս գրավեց գյուղտեխնիկայի առատությունը (տրակտորներ, կոմբայն, շարքացան, կցորդներ և մեքենաների օժանդակ շատ այլ մոտոշներ): Կային նաև շատ աշխատակիցներ, որոնք առանց աշխատանքից կտրվելու բավարարվեցին անձանոթներիս սոսկ հարգալից բարի գալուստ մաղթելով:

Սեզ հրավիրեցին տուն: Այստեղ առաջինը, որ աչք զարնեց, քրդական կենցաղին խորթ՝ կահույքի առկայությունն էր: Ինձ միանգամից հասկանալի դարձավ (զոնե ազգականներիս օրինակով կարող էի նշել), որ մահմեդական և քրդախոս հայերը քրդական կենցաղով չէին ապրում, և, օրինակ, պատերի շուրջ դասավորված բարձերին նստելու փոխարեն տեղավորվեցինք բազմոց-բազկաթոռների:



Սամվել Կարապետյանն իր արշավախմբով Գաջի Ազատի ընտանիքի հետ Բանոն գյուղում (լուս.՝ Տ. Կարապետյանի, 2005 թ.)
Գաջի Ազատը, Սամվել Կարապետյանը, Ֆերիդը և Վահագն Կարապետյանն Արճեշում (լուս.՝ Ր. Քոթրոշյանի, 2013 թ.)

Ես նստել էի բազմոցին, բայց կամքիցս անկախ՝ վիզս ծռվել էր քիկունքիս կողմը, քանի որ մեր ետևի պատից իրար կողք կախված էր Կալաշնիկով ավտոմատների տեսականին: Դրանցից միանգամից ճանաչեցի ԱԿՄ և ԱԿՄ տեսակները:

Մեր տոհմի մասին գրույցն այստեղ շատ քիչ շոշափվեց, քանի որ այդ նյութն արդեն հիմնականում քննել էինք նախորդ օրը: Չարմազած էի՝ տեսնելով զենքի առատությունը և դրանք այդպես բացահայտ ցուցադրելը: Մինչ ուզում էի հարցնել, թե ո՞րն է տան մեջ այդչափ զենք պահելու հարկավորությունը, հանկարծ շփոթված տեսքով եկավ և կողքս նստեց մեր խմբի անդամներից մեկը՝ բազմատաղանդ Վահրամ Թաթևյանը: Այս անգամ նա մեր խմբին էր ընկերացել գյուղերում պահպանված հայկական գորգերն ու կարպետները լուսանկարելու նպատակով: Վահրամը նստելուն պես ցածրաձայն ասաց հետևյալը.

– Լսի՛ր, կողքի սենյակում՝ թախտին, մի հոյակապ հին կարպետ կար: Նկարելու համար փորձեցի ծայրին խանգարող բարձր հեռացնել, սակայն բարձի տակ ատրճանակ կար:

Բարձի տակ ատրճանակ, չէ՞ որ սա արդեն բոլորովին այլ իրավիճակի մասին է խոսում: Չէ՞ որ դա զենքին դիմելու «համար մեկ» վիճակն է: Այս ի՞նչ կացություն է: Մտքիս մեջ ծանր ու թեթև եմ անում տեսածս ու լսածս և հետևյալ հարցն ուղղում Հաջիին.

- Բարեկանս, ձեր տունը կարծես զինապահեստ լինի:
- Հաջին մեղմ ժպտում է և թարգմանչին հաղորդում հետևյալը.
- Սամվելին ասա, որ ես տանս զենք չունեմ, եթե իրոք ցանկանում է իմ զենքերը տեսնել, ապա պիտի գնանք իմ յայլան:

Ելնում է տեղից, անցնում հարևան սենյակն ու արագ վերադառնալով՝ Մակարով տեսակի մի ատրճանակ է մեկնում ինձ՝ ասելով.

- Վերցրո՛ւ, սա ինձնից քեզ հիշատակ:
- Կամաց-կամաց կարծես սկսում էի հասկանալ, թե նախորդ երեկոյան ինչ ասել էր «Քրդերը մեր դեմ շատ փորձեցին, բայց չկարողացան»: Փաստորեն մահմեդականացած, մաև քրդախոս դարձած հայերը նույնիսկ այդ վիճակում էլի հանգիստ ապրելու հնարավորություն չունեին և ստիպված էին ատրճանակը բարձի տակ քնել, մինչդեռ այս մարդկանց կյանք ու բարքից, իրականությունից կտրվածս, թեկուզ մտքում, անխոհեմաբար թույլ էի տվել նշյալ արտահայտությունը սնապարծության վերագրել: Ինձ համար քիչ-քիչ պարզվող իրականությունը նոր հարցերի տեղիք էր տալիս, և ցանկացա տեղեկանալ հայ-քրդական հարաբերությունների մերօրյա լարվածության պատճառների մասին: Հաջի Ազատն այսպես բացատրեց.

– Քրդերի հետ մենք ընդհանրապես հաշտ ու խաղաղ ենք ապրում, բայց մի հարց կա, որի պատճառով երբեմն հարաբերությունները սրվում են: Դա այն է, որ հայերս նրանց աղջիկ չենք տալիս, մինչդեռ պատահում է, որ մեր տղաները քրդուհիների հետ են պսակվում: Այս խնդիրը զայրացնում է քրդերին, որի պատճառով էլ երբեմն բախումներ ենք ունենում:

Ես թե՛ լսում էի հարցիս պատասխանը և թե՛ մտորում մեկ այլ բանի մասին. ի՞նչ պիտի անեմ նվերս՝ ատրճանակը: Մտածում էի ինչ-որ մի ձևով, միայն թե չնեղացնեմ մարդուն, փորձեմ հրաժարվել Մակարով տեսակի ատրճանակից, քանի որ համոզված էի, որ դրա պատճառով ոչ միայն կարող էի Թուրքիա-Վրաստան և Վրաստան-Հայաստան սահմաններին լուրջ խնդիրներ ունենալ, այլև ի վերջո մտածում էի, որ եթե նույնիսկ կարողանամ ատրճանակն անփորձանք ու բարեհաջող Երևան հասցնել, ի՞նչ եմ անելու այն Երևանում:

Ի վերջո որոշեցի Հաջիին բացատրել կացությունը և շնորհակալությամբ հրաժարվել նվերիցս: Գիշտն ասած՝ մինչ օրս չեմ գտել նվերիցս հրաժարվելու մեկ այլ ձևակերպում, որն ավելի տանելի կթվար թե՛ ինձ և թե՛ Հաջիին, բայց այն, ինչը թարգմանչի օգնությամբ արտահայտեցի, այդ պահին խորապես հիասթափեցրեց զենքի պաշտամունքով ապրող ազգակցիս:

Պիտի խոստովանեմ, որ մինչև հիմա՝ նույնիսկ այսքան տարի անց, ամեն անգամ, երբ մտաբերում եմ այդ պահը, որևէ կերպ չարդարացվող ամոթի ծանր զգացումը պաշարում է ինձ, քանի որ անմիջապես աչքիս առաջ հայտնվում է ազգակցիս՝ ակնհայտորեն հիասթափված և հուսախաբ դեմքը: Գիշտ է, ոչ մի բան չարտասանեց, բայց դեմքի արտահայտությունն ինձ պարզորոշ ասում էր հետևյալը. «Մա էլ իրեն տղամա՛րդ է կարծում, տղամարդուն զենք եմ նվիրում, չգիտես ի՞նչ պատճառաբանություններ է առաջ բերում և զենքից հրաժարվում, թո՛ւ, քեզ տղամա՛րդ ասողի...»: Այս խոսքերն էին, որ կարողացի այդ պահին իմ պատճառով տխրությամբ գլուխը կախ գցած, ատրճանակը բարձի տակ քնող արյունակցիս դեմքին:



Սամվել Կարապետյանն իր արշավախմբով Ալի Քաչրանի ընտանիքի հետ Դաջի-Յուսուֆ գյուղում (լուս.՝ Բ. Քորթոշյանի, 2007 թ.)
Անժամոք արյունակցիներ Սամվել Կարապետյանն ու Ալի Քաչրանը հուզումնալից գրկախառնվելու պահին (լուս.՝ Ա. Դակոբյանի, 2007 թ.)

Օրվա ընթացքում Հաջի Ազատի և նրա որդիներից մեկի՝ Հիքմեթի առաջնորդությամբ այցելեցինք հարևան մի քանի գյուղեր՝ Արմիզոնք, Գանձակ, Ծակձակ և Տիլան: Վերջին գյուղում հայերեն արձանագրություններով ժայռախաչեր տեսանք, իսկ Ծակձակի մոտ ակնհայտորեն հայ քարգործ վարպետների ձեռքի աշխատանք՝ լավ պահպանված մահմեդական մի դամբարան: Օրվա վերջին վերադարձանք Փանիկ և միմյանց հրաժեշտ տվեցինք՝ առաջին իսկ առիթով անպայմանորեն կրկին հանդիպելու հաստատականությամբ:

Բաժանումից հետո անվերջ մտածում էի, թե որքա՞ն ավելի ջերմ և արդյունավետ կլինեք մեր հանդիպումը, եթե ոչ իրենք հայերեն, այլ գոնե ես թուրքերեն կամ քրդերեն իմանայի: Ախր գրուցելու այնքա՞ն շատ բան կար, որ պարզապես անհնար էր անվերջ թարգմանչի օգնությամբ գլուխ բերել:

Տարիները հաջորդեցին միմյանց, և մեր հեթանոսական հանդիպումը տեղի ունեցավ միայն 2013 թվականին: Մինչ այդ, իհարկե, յուրաքանչյուր տարվա մեջ միմյանց որպիսությամբ հետաքրքրվում և ողջունում էինք կարճ հեռախոսազրույցներով:

2013 թ. ինձ մի նոր և շատ հաճելի անակնկալ էր սպասում, քանի որ Հաջի Ազատն այս անգամ մեզ առաջնորդեց արճեշաբանակ մեկ այլ ազգականի՝ Ֆերիդի տուն: Նա մեր տոհմի Հայրենիքում մնացած ճյուղի տոհմաբանության վերաբերյալ բավականաչափ նոր և լրացնող տեղեկություններ փոխանցեց: Ի դեպ, արդեն այս անգամ մեզ հետ ունեինք և մեր ազգականներին էինք փոխանցում Բաֆֆի Քորթոշյանի հեղինակած «Հայերենի ուսումնական ձեռնարկ»-ը, որ հրատարակել էինք մասնավորապես լեզվակորույս մահմեդական հայերին նվիրելու նպատակով: Ֆերիդի հաղորդած տեղեկություններն իրապես շատ արժեքավոր էին: Դրա շնորհիվ, կարելի է ասել, բերդաղցիների մեր տոհմածառը գրեթե ամբողջացավ:

Ի դեպ, Բերդաղցի սերող մեր տոհմի մի ճյուղին էլ հետաքրքիր դիպվածով հայտնաբերեցինք 2007 թվականին Մանակերտի շրջանի Հաջի-Յուսուֆ գյուղում:

Նախ նշեմ, որ այդ ճամփորդությունը սկիզբ էր առել 2007 թ. սեպտեմբերի 28-ին: Արդեն 14-րդ օրն էր, որ մենք Մանակերտի մոտերքում գտնվող Արադերե (նախկինում՝ Փրեմասիան) գյուղում ծանոթացանք մահմեդականություն ընդունած մի եզրու հետ: Նա մեզ տեղեկացրեց, որ մոտերքում գտնվող Հաջի-Յուսուֆ գյուղում հայեր կան: Մեր ուղեկցի հետ հասանք նշյալ գյուղն ու հայտնվեցինք բազմանդամ հայ ընտանիքի հյուրընկալ հարկի ներքո: Պարզվեց, որ փարթքան ու ալեխառն մորուսով տան ավագը՝ Ալի Քաչրանը, գյուղի՝ թռչակի անցած նախկին իմամն էր: Այստեղ մեզ վկայեցին, որ իրենք սերում էին 1919 թ. սպանված բերդաղցի Գևորգի (Կևո), որի թոռը՝ Օմարի որդին՝ Ալի Քաչրանը, և նրա որդիներն ապրում էին այս գյուղում: Բերդաղցիների այս ճյուղի ներկայացուցիչները վկայեցին՝ իրենք Փանիկում ապրող բերդաղցիների ազգականներն էին, այսինքն՝ նույն տոհմից, սակայն ինձ չհաջողվեց ճշգրիտ հասկանալ, թե իրենք մեր տոհմի ո՞ր ճյուղն էին ներկայացնում: Ալի Քաչրանի որդիների հետ գրույցում շեշտվեց, որ իրենք գիտեին՝ իրենց պապ Օմարը (Գևորգի որդին) ուներ մահ հայկական անուն, սակայն մինչ ի մահ որդիներին ու թոռներին այդպես էլ չի ասել՝ հայկական անունն ինչ էր:

Հարկ է հիշատակեմ նաև մի միջադեպի մասին: Երբ մենք խորասուզված ուսումնասիրում էինք 1920-ականներից մնացած կալվածագիրը (թափում), որտեղ, որպես սեփականատեր, հիշված էր Կևոյի որդի Օմարը, այդ պահին մեկ էլ ակնհայտորեն շփոթված դեմքով սենյակ մտավ մի երիտասարդ և մեր գրուցակցի՝ Ալի Քաչրանի որդու ականջին մի բան փափասց: Վերջինս, դիմելով մեզ, ասաց հետևյալը.

– Բարեկամներ, պարզվում է՝ արդեն 14 օր է, ողջ Թուրքիայում ժանդարմերիան ձեզ է փնտրում: Եթե մեզ ասեք՝ ի՞նչ է պատահել, գուցե մենք էլ հասկանանք, թե ձեզ ինչով կարող ենք օգնել:

Առաջին պահին անակնկալի եկանք, որ մեզ հետ կապված նման խնդիր է ծագել, բայց շուտով գլխի ընկանք: Բանն այն է, որ սահմանը հատելուց ի վեր մենք որևէ հյուրանոցում չէինք զիջերել, այլ միայն վրաններում, իսկ հենց հյուրանոցների հաղորդած տվյալների շնորհիվ են պարզում, թե օտարերկրացիները որ օրը որտեղ են հասել: Սրանով փաստորեն արդեն 14 օր էր, որ պատկան մարմինները մեր հետքը կորցրել էին, բայց թե որտեղից որտեղ խնդիրը հասել էր Հաջի-Յուսուֆ գյուղ, այ դա արդեն զարմանալի էր: Ինչևէ, հաջիյուսուֆաբանակ բերդաղցիներին էլ այսպես հայտնաբերելով, ճանաչելով և ողջագուրվելով՝ հրաժեշտ տվեցինք:

Այն էլ ասեմ, որ 2013 թվականին Հաջի Ազատին պատմեցի, որ Հաջի-Յուսուֆում էլ մեր տոհմից մարդիկ ունենք: Պարզվեց, որ ինքը լավ գիտեր այդ մասին, և ընտանիքներով կապի մեջ էին: Սրանով հանդերձ՝ ոգևորություն ապրեց, երբ իմացավ, որ ես էլ արդեն ճանաչում եմ նրանց:

Արդեն մի քանի տարի է, ինչ փափագում եմ հայրենի Արճեշում ապրող բերդաղցի ազգականներիս Հայաստանի Հանրապետություն հրավիրել: Չեմ ասում Հայաստան, քանի որ այդ կուպիտ սխալիս համար մի անգամ միանգամայն տեղին դիտողություն եմ ստացել: Այն հարցիս, թե.

– Չե՞ք ուզում Հայաստան այցելել:

Ստացել եմ այս պատասխանը.

– Ինչու մենք որտե՞ղ ենք ապրում...

Դեռևս ամեն անգամ ինչ-ինչ արգելափակ պատճառներ են հայտնվում, բայց միևնույնն է, վստահ եմ, որ մի օր կարժանանամ բերդաղցի արյունակիցներիս այստեղ՝ երևանյան տանս հյուրընկալելու վայելքն ապրելուն:

ՎԱՀՐԱՄ ԹԱԹԻԿՅԱՆԻ ՖԵՆՈՍԵՆԸ

Ասում եմ՝ եթե մարդուն ուզում ես ճանաչել, հետը ճամփա գնա: Իմաստուն խոսք է սա: Հին ու նոր շատ ընկերներիս էլ, նրանց թվում նաև Վահրամին, հենց ճամփորդելիս եմ ճանաչել, ավելին՝ Վահրամին հենց ճամփորդելիս էլ հայտնաբերել եմ:

Արդեն 38 տարի է, ինչ ճանաչում եմ նրան: Բազմաշնորհ ու բազմատաղանդ անհատականություն է: Բանաստեղծը, կիթառահար-երաժիշտը, երգահանն ու երգիչը մեկտեղված ու խտացված են այս յուրօրինակ արվեստագետի կերպարում: Թվարկածներից զատ՝ Վահրամը նաև գորգագիտության բնագավառի վաստակաշատ մասնագետ է՝ «Արցախի տոհմագորգերը» մեծադիր աշխատության հեղինակը:

Վահրամը միևնույն ժամանակ նաև դժվար, տարօրինակ ու անկանխատեսելի, ինչու չէ, նաև փորձանքաբեր և ըստ այդմ՝ վտանգավոր դեմք է:

Վահրամի հետ ճամփորդել եմ նախ 1980-1985 թթ., ապա վերջին անգամ՝ 2005 թ., և ըստ իս՝ բավականաչափ ճանաչում եմ նրան: Սույն ճանաչողության հիմքով որոշեցի կարողությանս համեմատ համբերատար ընթերցողիս առջև պարզել արտառոց բնության տեր Վահրամ Թաթիկյանի ֆենոմենը:

Իբրև նախաբան՝ միայն ցանկանում եմ նշել, որ Վահրամին առնչվող հուշերս որքան զավեշտալի, նույնքան էլ անհավանական, արկածալից և բացառապես իրական պատմությունների շարան են:

Եվ այսպես, 1980 թվականի աշունն է: Ընդամենը մի երկու ամիս է, որ ծանոթացել-ընկերացել եմ Վալտեր Զարյանի հետ, բայց արդեն հասցրել էինք միասին մի քանի արշավների գնալ: Հերթական արշավի ուղին սկիզբ էր առել Գառնիից, և Հավուց թառ, Աղջոց և Վանստանի Աստվածածին վանքերից հետո հասել էինք Գեղի բերդ:

Վերջալույս էր, պատրաստվում էինք գիշերելու բերդամիջի վիմափոր մառուռի մեջ, երբ հանկարծ բերդ բարձրացող ձորից լսում ենք կոմիտասյան երգեցողություն: Մոտենում ենք բերդի դարպասին և վայելում մթության մեջ բնության ձայներից միահյուսված և կամաց-կամաց դեպի մեզ մոտեցող կոմիտասյան հրաշք մեղեդիները: Վերջապես հայտնվում են երկու հոգի: Ծանոթանում ենք. բերդատերերիս հյուրերն են Վահրամ Թաթիկյանն ու Տիգրան Եղիազարյանը: Կարճ զրույցից հետո Վահրամն ասում է.

– Մենք Խցում ենք գիշերելու, դա բերդից ցած վիմափոր մատուռների խումբ է, դրա տեղը հազարից մեկը չգիտի: Դուք լավ տպավորություն թողեցիք և եթե ուզում եք, կարող ենք հիմա միասին իջնել և այնտեղ գիշերել:

Առաջարկի համար շատ ուրախացա, քանի որ 1976 թվականից ի վեր բազմիցս եղել էի բերդում, բայց այդ Խուց կոչվածի գոյության մասին նույնիսկ լսած չկայի:

Գիշերով բերդից իջանք ու հասանք Խուց: Երկար զրույցեցինք, մտերմացանք: Տիգրանն անտառտնտեսության ինժեներ էր, կիրք ու բարի անձնավորություն (երկու տարի անց՝ 1982 թ. մայիսի 20-ին, ողբերգական վախճանը գտավ Ազատ գետի վարարած ջրերում), դե՛, իսկ Վահրամի մասին դեռ երկար պիտի գրեմ:

Արդեն Երևանում Վահրամի հետ բավականին մտերմացել էի: Հիշում եմ, որ 80-ականների սկզբներին մի քանի անգամ նաև նրա տուն եմ այցելել: Հիշողությանս մեջ ավելի շատ դրոշմվել է այն, որ երբ նրա բնակարանի դռանն էի հասնում, որպես կանոն՝ ներսից լսում էի Վահրամի կատարումներից մեկը և զանգի կոճակը չէի սեղմում այնքան ժա-



Խմբանկար Տախաջբարում (ձախից աջ՝ Տիգրան Եղիազարյան, Վահրամ Թաթիկյան, Սամվել Կարապետյան, Վալտեր Զարյան, լուս.՝ 1981 թ.)
Սամվել Կարապետյանը և Տիգրան Եղիազարյանը Պոռշաբերդում (լուս.՝ Վ. Զարյանի, 1981 թ.)

մանակ, քանի դեռ Վահրամն ավարտին չէր հասցրել տվյալ երգը: Այդպես թե՛ չէի խանգարում նրան և թե՛ վաճելում էի երգը մինչև վերջ:

1981 թվականին չորսհոգանոց խմբով մեկնեցինք Վայոց ձոր: Այցելեցինք Յախագքարի վանք, Սմբատաբերդ, Պոռշաբերդ, Շատիկ անապատ և այլ հնավայրեր: Հիշում եմ, որ Սպիտակավոր Աստվածածնում գիշերը Վալտերն ու ես անցկացրինք եկեղեցու խորանում, իսկ Վահրամն ու Տիգրանը՝ եկեղեցու հարավային կողմի փոքրիկ հարթակում՝ վրանի մեջ:

Առավոտյան Վահրամն ու ես բավական վաղ էինք վեր կացել, իսկ Տիգրանը դեռ դանդաղում էր: Սրան գուժարած՝ Վալտերն էլ, թե՛ խորանում սառել եմ, գնամ մի քիչ վրանի մեջ տաքանամ:

Ժամանակն անցնում էր, բայց այս երկուսը վրանից դուրս չէին գալիս: Ես առաջին անգամ էի տեսնում, թե ինչ է լինում, երբ Վահրամը բարկանում է: Նախ վրանից դուրս գալու մի քանի վերջնագիր հրամաններ արձակեց, ապա դրանց՝ անհետևանք մնալու փաստից գժվեց, քանդեց-փլցրեց վրանը մեր ծուլացած ընկերների վրա և հավաքելով ուսապարկը՝ հայտարարեց, որ մեկնում է: Վիճակն ավելի բարդացավ, երբ վրանի միջից, փոխանակ մեզ լքելու մտքից Վահրամին ետ կանգնեցնելու խնդրանքներին, հռչակեց լավեցին: Այդ պահին ինձ այնպես թվաց, որ Վահրամը, այնուամենայնիվ, չէր ուզում միայնակ հեռանալ, բայց որս համար հարկավոր էր, որ ընկերներից գոնե մեկը խնդրեր, համոզեր չառանձնանալ խմբից: Միավորիչ առաքելությունն ինձ վրա վերցրի, և մենք՝ չորս հոգով, մինչև վերջ շարունակեցինք մեր վայոցձորյան արշավը:

1985 թ. դարձյալ ճամփորդ էինք: Այս անգամ մեր խումբը բաղկացած էր երեք հոգուց՝ Վահրամն էր, Վանո Գարոյանն ու ես: Նպատակը Հյուսիսային Արցախում շրջագայելն էր, որը սկսեցինք մեր Արծվաշենից, ապա անցանք Գետաբեկի շրջան:

Այս ճամփորդության ընթացքում Վահրամի պատճառով մոռացված չէին իրավիճակներն այնքան շատ էին, որ ավարտին որոշեցի այլևս երբեք նրա հետ չճամփորդել:

Հիմա պիտի պատմեմ, թե ինչեր բերեց Վահրամը մեր գլխին թեկուզ միայն մեկ օրվա ընթացքում:

Դեռ նախքան կեսօրը Գետաբեկի շրջանի Բեյուք (Մեծ) Ղարամուրադ գյուղ ենք հասել, որտեղից պիտի բարձրանայինք սխալմամբ Խամշի վանք հորջորջված, իրականում՝ Հարանց վանքը: Վերջինս գյուղից հազիվ 1 կմ հյուսիս է գտնվում:

Արդեն ետևում ենք թողել գյուղի՝ այդ ուղղությամբ բնակելի վերջին տները, երբ հանկարծ Վահրամն ասում է.

– Ես այս վանքում արդեն եղել եմ և այնտեղ նկարելու բան չունեմ, ուստի իմ ֆոտոապարատներն ինձ հարկավոր չեն: Հիմա մի քարի ետևում իմ գույգ «Ջենիթ»-ները կթաքցնեմ ու թեթև ուսապարկով կբարձրանամ վանք:

Վանոյի հետ փորձում ենք համոզել, որ այդպես չանի: Վերջապես ամեն ինչ հնարավոր է, հերիք է, որ մեկը նկատի: Գյուղի վերջին տներից էլ շատ չենք հեռացել, եթե մեր աչքին ոչ ոք չի երևում, դա չի նշանակում, թե մեզ՝ անծանոթներին, իրոք, ոչ մեկը հայացքով հետամուտ չէ: Օգուտ չունի. Վահրամն իրենն է պնդում: Վերջը գնաց, ինչ-որ մի քարին կից՝ իր ասելով միանգամայն աննկատ տեղում, թաքցրեց և իրենից գոհ՝ սկսեց մեզ հետ բարձրանալ վանքի ուղղությամբ:

Վանոյի օգնությամբ առաջին անգամ չափեցի եկեղեցուց և զանգակատնից բաղկացած ԺԷ դարի համալիրի հատակագիծը: Շատ ավելի մանրամասն, քան 1980 թ.՝ առաջին այցելությանս ժամանակ էի հասցրել, լուսանկարեցի վանքը, և սկսեցինք իջնել դեպի գյուղ: Հասանք այն մույն տեղը, ուր Վահրամն իր լուսանկարչական գործիքներն էր թաքցրել: Տեսնում ենք՝ թուրքի մի քանի լամուկներ, այս ու այն քարի ու թփի ետևում թաքնված, միայն գլուխները վեր բարձրացնելով, ծաղրական բացականչում են՝ թուրիսթ-թուրիսթ և կրկին թաքնվում:

Վահրամը շփոթված հայտնվում է և ասում.

– Ապարատներս չկա՛ն...

Շվարած իրար երես ենք նայում: Ոչինչ օգուտ չունի, եղածը եղած է:

Մեկ էլ տեսնում ենք, որ Վահրամը վայրկենապես վազում է խնդացող լամուկներից մեկի ետևից, բռնում դրան, դուրս բերում գոտուց կախած արշավային փոքրիկ կացինն ու երեխային պառկեցնելով գետնին՝ գլխատելու պատրաստ դիրքով (կացինը բռնած ձեռքը՝ վեր պարզած) ռուսերենով բղավում է.

– Կսպանե՛մ, ֆոտոապարատնե՛րս...

Միայն այդ պահին տեսանք, թե իրականում քանի լամուկներ էին հավաքվել, որովհետև տեսարանից զարհուրած՝ արդեն ամենքն էլ, իրենց թաքստոցներից գլուխները հանած, քարացած կանգնել էին: Մեկ էլ դրանցից մեկը վազում է գյուղի վերջին տների ուղղությամբ, իսկ մինչ այդ գլխատման ենթակա լամուկը սարսափից հիստերիկ ճչում է:

Տեսնում ենք, որ դեպի գյուղ վազ տված լամուկը նույնպիսի վազքով վերադառնում է՝ գույգ ապարատները ձեռքին: Բերում, դնում է գետնին՝ Վահրամի առջև, էլի փախչում: Լացի գոռ ձայնով նրան է հետևում նաև արդեն ազատ արձակված Վահրամի «գերին»:

Մտածում ենք, որ այս երեխաները տուն հասնելուն պես պատմելու են, թե իրենցից մեկի գլուխն ինչպես էր թռչելու, և, ո՛վ գիտե, գուցե ամբողջ գյուղով հասնելու են մեզ վրա, սկսում ենք գյուղի տների այդ մասը շրջանցող ուղիով արագ, համարյա թե կիսավազքով փախչել:



Վ. Թաթիկյանը վրանը փլցնելուց հետո՝ ուսապարկը հավաքելու պահին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1981 թ.)



Մեծ Ղարամուրատ գյուղի Գարապետյանի (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1981 թ.)
Փոքր Ղարամուրատ գյուղի եկեղեցին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1985 թ.)

Մի 10 րոպեից, կարծես վտանգը ետևում թողած, մի փոքր շունչ ենք քաշում և արդեն գլխավոր ճանապարհով քայլում ենք Գետաբեկ շրջկենտրոնի ուղղությամբ:

Գետաբեկի շրջանի այս հատվածում գյուղերը գրեթե կից են միմյանց: Հազիվ Մեծ Ղարամուրատից դուրս ելած՝ հայտնվում ենք Քիչիկ (Փոքր) Ղարամուրատ գյուղում:

Շարունակում ենք քայլել շրջկենտրոն տանող և գյուղամիջով անցնող ասֆալտապատ ճանապարհով: Մեկ էլ Վահրամը նկատում է մեզմից աջ՝ յուրաքանչյուրն իր դարպասով պարիսպների մերքո գտնվող սներից մեկի երկրորդ հարկի պատշգամբի բազրիքին փռած մի կարպետ:

– Տղերք, սա ես անպայման պիտի լուսանկարեմ,– ասում է Վահրամն ու թակում երկդուռ մետաղյա մեծ դարպասը: Արձագանք չկա, փոխարենն ինքնիրեն թեթև բացվում է մեծ դռներից մեկի միջի փոքր դուռը:

Ըստ էության, դուռը բաց է, բայց քանի տանտերը չի երևացել, Վանոն ու ես չենք ցանկանում մարդու բակ ներխուժել: Վահրամը, իհարկե, մեզ չի լսում: Արդեն ոչ միայն ներսում է, այլև պատշգամբ բարձրացող փայտե աստիճաններով վեր է ելել ու մեզ էլ կանչում է.

– Եկե՛ք, այս կարպետը պահե՛ք, որ նկարեն:

Մեր համարձակությունը չի հերիքում միանալ Վահրամին, և մնում ենք դարպասից ներս՝ միայն մեկ-երկու քայլ խորացած: Ընկերներից հիասթափված՝ մեկ էլ տեսնենք, չգիտես որտեղից մուրճ ու մեխ գտած, Վահրամը կարպետը մեխելով կախում է պատշգամբի արտաքին երեսին: Պատկերացրե՛ք... ինչ-որ անձանոթ մարդիկ մտել են մեկի տուն հերիք չէ, դեռ աղմուկով էլ ինչ-որ աշխատանք են անում: Ես ամոթից ու անհանգստությունից կարկամել եմ, բայց տեսնում եմ, որ Վանոն էլ ընկել է Վահրամի ջրերը ու բարձրացել պատշգամբ: Սա դեռ հերիք չէ, մտել է տան երկրորդ հարկի սենյակներից մեկն ու դուրս թռչելով՝ ինձ վերև է կանչում: Գոնե Վանոյի հավասարակշիռ կեցվածքը կասկածի տակ առնելու պատճառ չունեի, ուստի համարելով, որ շատ կարևոր է, ես էլ եմ վեր բարձրանում: Ներս ենք մտնում, որտեղ Վանոն ցույց է տալիս մի հնաշեն փայտյա թախտ՝ մեխի փոխարեն բոլոր հանգույցները փայտյա սեպերով սարքած, մի ճակատին էլ՝ «վարպետ Սարգիս» փորագրած:

Շտապով նկարում եմ Վանոյի մատնանշած բոլոր կարևոր դրվագներն ու անմիջապես իջնում բակ, որտեղ արդեն վայրկյաններ անց հայտնվում է տանտիրուհին՝ ձայնը գլուխը գցած և իրեն կորցնելու աստիճան բղավելով ու երկու ձեռքերով մեզ հրելով՝ դուրս է հանում տան բակից: Դուրս գալուց առաջ ես էլ հասցնում եմ լուսանկարել Վահրամի՝ պատշգամբին մեխած կարպետը, որի մի եզրին արդեն հետագայում լուսանկարից ընթերցում եմ՝ «1914 թ. Գարեգին ...եան»:

Կինը կարծես մի փոքր հանգստանում է՝ գուցե ըմբռնելով, որ անկոչ հյուրերն անպատկան են, բայց և վնասատու չեն: Մի պահ նույնիսկ կարծես շոյվում է Վահրամի բուք մատը վեր պարզած և «Չոխ յախշի խալիչա» խոսքերից ու բարձրանում պատշգամբ: Նրա հետ մահ թռնիկներն են հայտնվում: Ներքևում Վահրամը դեռ շարունակում է մեկ մի Ձենիթով (սև-սպիտակ), մեկ մյուսով (գունավոր սլայո) լուսանկարել կարպետը: Կարծես ամեն ինչ խաղաղվել էր, մեկ էլ այս կինը, նորից իրեն կորցրած, վար է իջնում ու թուրքերեն ինչ-որ բաներ ասելով՝ շտապով մեզ դուրս հանում բակից: Նրա խոսքերից միայն այնքանն են հասկանում, որ ասում է.

– Հրե՛ն, ամուսինս գալի՛ս է, եթե գա և տեսնի, որ օտար տղամարդ եմ ներս թողել, դուք հե՛չ, ի՛նձ էլ կսպանի...

Նույն պահին նկատում եմ, որ հարևան բակի կողմից դադստանցու՝ ոչխարի բրդից կարված փափախով բեղավոր մեկն արագ քայլերով մեր կողմն է գալիս:

Արդեն միասին շտապով դուրս ենք ելնում և գրեթե նույն իրավիճակում, ինչ նախորդ գյուղում պատահեց, նորից կիսավազ փախչում ենք:

Արդեն հաջորդ գյուղում ենք: Մրա անունն է Փոլաղու: Հոգնել ենք, և քանի որ մինչև Գետաբեկ դեռ շատ ճանապարհ կա, շրջկենտրոն գնացող մի որևէ ավտոբուս նստելու մտքով որոշում ենք սպասել գյուղեգրով ձգվող ճանապարհին:

Հազիվ մի քանի րոպե է՝ կանգնած ենք, ահա մեզ է մոտենում նույն գյուղացի միջին տարիքի երեք թուրք: Մեր որտեղացի և ինչ ազգից լինելն իմանալուց հետո նրանցից մեկը, մեզ ուշադիր նայելով, ասում է.

– Առաջ այստեղ ձերոնք են ապրելիս եղել:

– Իսկապե՛ս:

– Այո՛, այո՛, եթե կուզեք, հիմա էլ կարող եք գալ, մեզ հետ ապրել:

- Իսկ ի՞նչ կարող ենք այստեղ անել:
- Մեզ պես կարտոֆիլ կցանեք, կապրեք:
- Դե՛, չէ՛, մենք արդեն քաղաքային կյանքին ենք վարժվել, ուստի մեզ համար այստեղ դժվար կլինի: Թուրքերից մեկը մեկ էլ ասում է.

- Դեռ ձերոնցից էլ մի շենք կա մնացած,- և մատնացույց անում մեզնից հազիվ 150 մետրի վրա երևացող կիսավեր մի շենք:

Տեսնելու ցանկությունը բորբոքում է մեզ, և որոշում ենք Վահրամի հսկողության ներքո տեղում թողնել Վանոյի և իմ ուսապարկերը, իսկ մենք երկուսով գնանք-տեսնենք՝ ինչ շենքի ավերակ է դա: Հետս վերցնում են արտաքուստ սովորական պայուսակի նմանվող լուսանկարչական գործիքներիցս մեկը, և քայլում ենք դեպի ավերակը: Մի 20-30 մետրից երևում են պարզ հորինվածքներով մի քանի խաչքարեր՝ կիսով չափ կամ ավելի շատ խրված հողի մեջ: Հասկանում են, որ մենք գտնվում ենք երբեմնի հայաբնակ գյուղի գերեզմանոցում, իսկ կիսավեր շենքն էլ եկեղեցին է՝ թաղը և խորանի հատվածը փլված, լցված գյուղի աղբով:

Արագ համում են լուսանկարչական գործիքս և հնարավորինս անցկատ՝ գոնե մի քանի պատկեր վերցնելու համար: Անմիջապես լսում են նույն թուրքերի գայրացկոտ հանդիմանությունը.

- Դուք ճիշտ մարդիկ չեք, ինչո՞ւ եք լուսանկարում (ռուսերենով հնչում էր այսպես. «Վի նե պրավիլնիե լյուժի, պաչեմու ֆատագրաֆիրովայժե»):

Այս խոսքերն ասելով՝ արագ քայլերով մոտենում են մեզ: Մոտեցող թուրքերի հետ է նաև Վահրամը: Հասնում են մեզ: Շարունակում են նկարելու անթույլատրելիության մասին շեշտել: Պատասխանում են, որ իբրև հմուքուն՝ հետաքրքիր էր, բայց եթե նկարելն արգելված է, ապա ոչ մի խնդիր չկա, չենք նկարի, մանավանդ, որ դեռ չեմ էլ նկարել, միայն փորձում էի:

Արդեն մի կերպ խաղաղեցրել էինք այս թուրքերին և հարթել խնդիրը, երբ հանկարծ Վահրամը ծոցից հանում է իր անձնագիրը (խորհրդային անձնագրերը կարմիր գույնի էին) և ձեռքը վեր պարզած, բարձրում թափահարելով՝ գոչում.

- Ես խորհրդային քաղաքացի եմ, սա Խորհրդային Միություն է («Յա սավետսկիյ գրաժդանին, էտը Սավետսկիյ Սայուզ»):

Վահրամի այս խոսքերի և կարմիր անձնագրի վրա թուրքերը վայրկենապես այնպես են զազազում, ինչպես ցուլերն են զազազում կարմիր գույնի փալաք տեսնելիս: Միահամուռ հարձակվում ու բռնում են Վահրամի օձիքից, շոքերն են քաշքշում: Անկանխատեսելի այդ նեղ պահին Վանոյի հետ ես էլ խաղաղասիրական հիմար բաներ են քարոզում, միայն թե մեր խորհրդային երկրի քաղաքացի ընկերոջն այս կոստյումավոր մարդակերների ճանկերից մի կերպ կարողանանք ազատել: Վերջապես մեզ հաջողվում է Վահրամի օձիքն ազատել, և երեքով, համարյա վագելով, հասնում ենք մեր ուսապարկերին: Եթե մի 20 թույն առաջ գումար խմայելու նպատակով Գետաբեկ հասնելու համար ավտոբուսի էինք սպասում, ապա հիմա պատրաստ էինք առաջին պատահած մեքենան կանգնեցնել և պահանջված գումարը վճարել, միայն թե թույն շուտ կարողանայինք այս վայրից դուրս պրծնել:

Բարեբախտաբար, թուրքերն այլևս մեզ չեն հետապնդում, այլ բավականանում են մեզ հասցեագրված մի շարք «սիրալիր» արտահայտություններ հոխորտալով: Մեր բախտից «Մոսկվիչ» մեքենա է հայտնվում, որը և մեզ ազատում է Փոլաղլուից և հասցնում Գետաբեկ:

Գետաբեկ շրջկենտրոն հասանք արդեն իրիկնաղեմին: Քաղաքավանի կենտրոնում միահարկ մի հյուրանոց կար: Ներս մտանք: Կառավարիչը մի խիստ գեր կին էր, որ բացի աղորեջաներնից՝ ոչ մի ուրիշ լեզու չէր հասկանում: Մեր երեքի անձնագրերի ռուսերեն բաժնում արձանագրված անուն-ազգանունները հազիվ մի կես ժամում կարողացավ գրանցել և մեզ երեք մահճակալով մի սենյակ հատկացնել:

Հենց սկզբից աչք զարնեց հյուրանոցում միայն նորերս ավարտված նորոգությունը: Համեմայն դեպս, մեզ տրամադրած սենյակը և այնտեղ տանող միջանցքն ակնհայտորեն վերջերս էին սպիտակեցրել:

Հյուրանոցային համարն ապահովելուց հետո որոշեցինք դուրս գալ և մի փոքր զբոսնել: Դեմ հանդիման շուկան էր, որ, իհարկե, այդ ժամին արդեն փակ էր, միայն մի երկու կրպակ-խանութներ դեռ բաց էին: Մտանք դրանցից մեկը: Մթերքի մասով ոչ մի ընտրություն չկար: Յուցաղոված էին մի քանի տուփ վաֆլի, կոդքին՝ ռետինե երկարաճիտ կոշիկներ, ապա լվացքի օճառների խոշոր կտորներ և խմիչք:

Այստեղ Վահրամը ոչ բարով մի խմիչք նկատեց. բալի շամպայն էր:
- Տղաներ, այս ի՞նչ յուրահատուկ շամպայն է: Կյանքիս մեջ երբեք բալի շամպայն ոչ թե խմած, նույնիսկ տեսած չկամ: Պիտի մեկ շիշ գնեմ դրանից:

Վաճառողը մի տղամարդ է, որն ազնվորեն ասում է.
- Շամպայնը լավը չէ («Փլախո՛ւյ, դասաա՛»), բայց եթե անպայման խմիչք եք ուզում, ապա, խնդրեմ, կարող եք օղի վերցնել:

Վահրամն էլ ասում է.
- Խնդիրը խմելը չէ, որ օղի վերցնենք, այլ այս յուրահատուկ շամպայնը համտեսելն է: Պնդում է ասածը և վաճառողի կամքին հակառակ՝ գնում բալի շամպայնը:
Մի քանի տուփ վաֆլին և մեկ շիշ շամպայնը մեր ձեռքին՝ վերադառնում ենք հյուրանոց: Վահրամն անմիջապես ասում է.

- Մի սրանց անկողինների սավանների գույնի՛ն նայեք, մարդու զգվա՛նք է գալիս: Ես սրանց վրա չեմ պառկի: Գնամ, ասեմ, թող գա, սրանք հավաքի ու նոր սավաններ փոխի:

Փորձում են համոզել, որ դրա կարիքը չկա. չէ՞ որ մենք քնապարկեր ունենք, կիսանք և դրանց մեջ ստնելով՝ մահճակալներին կպառկենք: Չէ, որ չէ, Վահրամի որոշումն անբեկանելի է: Դուրս է գալիս սենյակից և շուտով վերադառնում հյուրանոցի կառավարիչ այն գեր կնոջ հետ: Ավելի ժեստերով, քան լեզվով մի կերպ հասկացնում է կնոջը, որ սա-

վանները մաքուր չեն, և հարկավոր է փոխել: Կինը դժգոհ և ակնհայտ դժկամությամբ հեռանում է, լուպեներ անց միևնույն գորշ գույնի երեք նոր սավան բերում, փնջացնելով-ֆշացնելով հավաքում եղածն ու նորերը փռելով՝ հեռանում:

Քիչ հետո նկատում են, որ կառավարիչը, թեյի մատուցարանը ձեռքին, մտնում է միջանցքի երկարությամբ իրար կողք շարված սենյակներից մեկը: Հասկանում են, որ մենք ևս կարող ենք թեյ պատվիրել, ուստի հասկացնում են, որ մեզ էլ թեյ բերի: Կինը գլխով է անում՝ հասկացնելով, որ պատվերն ընդունված է:

Մինչ թեյը մեր սենյակ էլ մուտք կգործեր, Վահրամը շամպայնի շիշը հրճվալից գուրգուրելուց հետո դնում է սենյակի կենտրոնում գտնվող սեղանի վրա և փորձում բացել այն: Դեռ խցանի մետաղական ապահովիչը հազիվ մի պտույտ արած՝ կապրոնե խցանը հանկարծ դուրս է թռչում տեղից ու հարվածում առաստաղին, հետևից էլ՝ բալի շամպայնի անօրինակ հզոր շիթը, որ նույնպես հասնում է առաստաղին: Վահրամը, իրեն կորցրած, փորձում է ափով խցը ընդոտել ժայթքոցը և ողջ ուժով ձեռքը սեղմում է շիթ բերանին: Հիմա էլ ժայթքոցը սփռվում և մի ակնթարթում ներկում է նոր սավաններով թարմացված մահճակալները: Հրեղեն ներկարարությունն ավարտվում է միայն այն ժամանակ, երբ շիթ տակ մնում է հազիվ երկու սանտիմետր տարողությամբ շամպայն:

Վահրամին մտքում հուս-հուս ուտելով՝ Վանոյի հետ շվարած իրար երես ենք մայում: Լա՛վ, ի՛նչ անենք հիմա: Չէ՞ որ հակառակի պես էլ թեյ են պատվիրել, և քիչ հետո կինը ներս է մտնելու: Հուսալով, որ խնդիրը միայն ներկված սավաններն են, այլ ոչ առաստաղը, քանի որ դժվար թե կինը պատճառ ունենա հայացքն առաստաղին գցելու, որոշում ենք յուրաքանչյուրս արագ դուրս բերենք և մահճակալին փռենք մեր քնապարկերը, որով կարելի էր քողարկել բալի շամպայնի անհամար կաթիլների հետքերը: Որոշում և ակնթարթորեն իրագործում ենք այն: Հազիվ էինք ծածկահմփոցն ավարտել, երբ մատուցարանը ձեռքին՝ ներս է մտնում կառավարիչը: Մեր քնապարկերը, որոնցով քողարկել էինք ներկված սավանները, հենց առաջին վայրկյանից այնպիսի գորեղ տպավորություն են գործում կնոջ վրա, որ սա, փոխանակ առաջանալու և մատուցարանը սեղանին դնելու, ապշահար կանգնած է մնում և հայացքը մահճակալից մահճակալ ուղղելով՝ դեռևս հեռվից հերթով գնում է մեր քնապարկերը:

Վերջապես կառավարիչը հաղթահարում է ապշանքը և մեկ ջնարակված թեյնիկ, շաքարաման և երեք տանձաձև բաժակ պարունակող մատուցարանը դնում սեղանին: Մեկ ռուբլի վճարը ստանալուց հետո սենյակից դուրս գալու փոխարեն մտնում է այն մահճակալին, որի վրա իմ քնապարկն էր փռված: Մոտենում է ու սկսում տնտղել-շոշափել քնապարկս՝ երկի հասկանալու համար, թե ինչ բան էր դա:

Այդ պահին ինձ այնպես թվաց, որ չտես տիկնոջը քնապարկերով զբաղեցնելը լավ միտք է, ուստի ինքս, օրինակ ծառայելով, առաջարկեցի տնտղել նաև Վանոյի քնապարկը: Կինը գլխի շարժումներով զարմանքի ու հիացական նշաններ էր ցույց տալիս, և կարծես շամպայնի խախտառակ հետքերն առանց բացահայտելու բավական հաջող մի շրջան էինք կատարում սենյակում:

Ի դեպ, իմ և Վանոյի քնապարկերը պարզ տեսակից էին: Նրանց երկու կողմով ձգվում էր երկար շղթան, և բացելիս հնարավոր էր գործածել իբրև մի պարզ ծածկոց, մինչդեռ Վահրամի քնապարկը նաև գլխամաս ուներ, որ ուզած պահին կարող էր միայն մարդու դեմքն ազատ թողնելով՝ գլխարկի պես հավաքվել:

Երբ տեսա, որ այս կնոջը կարողանում ենք Վանոյի և իմ պարզ քնապարկերով զբաղեցնել, մտածեցի, որ Վահրամին էլ՝ առավել կարող է հետաքրքրական լինել, և որպես քնապարկերի գծով զբոսավար՝ տիկնոջը ցույց տվեցի Վահրամի մահճակալը:

Կինը մոտեցավ, սովորականի պես տնտղեց և զարմացական հայացքն ուղղեց քնապարկի գլխամասին: Ինձ թվաց, թե նա չի կարողանում կողմնորոշվել, թե ինչու կամ ինչի համար է սրա վերնամասն այդ տեսքով, ուստի ավելի շարժումներով, քան բառերով հասկացրի, թե ինչ կիրառություն ունի այդքան տարօրինակ թվացող գլխամասը:

Կինը մի քիչ դժվար ընթացեց դա, բայց երբ ի վերջո հասկացավ, մի այնպիսի զարմանք ապրեց, որ ձեռքերն ու գլուխը վեր պարզած՝ մաշալլա՛հ բացականչեց, որին էլ հետևեց ապականված առաստաղի՝ ոչ պակաս զարմացական բացահայտումը՝ վուա՛հ...

Կորա՛նք... այն, ինչն ամենից շատն էինք ցանկանում աննկատ պահել, չհաջողվեց:

Հաջորդ առավոտյան հյուրանոցի կառավարիչ կինը մեր անձնագրերը չի վերադարձնում և պնդում է, որ մինչև առաստաղի ապականությունը չվերացնենք, անձնագրերի երես չենք տեսնի:

Ճար չկա, դուրս ենք եկել՝ կավիճ գտնելու նպատակով: Վերջապես մի դպրոցից մի քանի կտոր կավիճ ձեռք բերեցինք: Եկել ենք հյուրանոց, սեղանին աթոռ դրած՝ հազիվ հասնում ենք առաստաղին: Հատիկ-հատիկ կաթիլները կավիճով ներկելու գործը Վանոյի և ինձ վրա էր, քանի որ Վահրամի համեմատ՝ մենք երկուսս ավելի բարձրահասակ էինք, իսկ Վահրամը ներքևից միայն հուշում էր, թե էլ որտեղ էին բալի շամպայնի հետքեր մնացել:

Ներկարարական այս աննախադեպ աշխատանքին մի քանի ժամ լծված մնալուց հետո հասկացանք, որ սա նույնիսկ մի ամբողջ օրվա գործ չէ, և որոշեցինք մեկ այլ լուծում գտնել: Հյուրանոցում, բացի այդ կնոջից, մի վարսավիր էլ կար: Սա միջնորդեց, որ կառավարիչը եղածով բավականանա և մեր անձնագրերը վերադարձնի:

Վերջապես ստացանք մեր անձնագրերն ու բանտից ազատվածների մնան երջանիկ դուրս թանք այդ չարաբաստիկ հյուրանոցից: Սակայն արդեն երեկոյան կողմ է, և այլև դեպի Չարդախլու (այսինքն՝ Շամխորի ուղղությամբ) որևէ ավտոբուս չի երևում: Նույնիսկ սկսում է մթնել, և էլի ոչ մի փոխադրամիջոց: Ինքս զարգանդում էի այն մտքից, որ կարող է ի վերջո ստիպված լինենք նույն հյուրանոց վերադառնալ: Վերջապես հացի մի բեռնատար կանգ առավ: Մինչ ուրախությունից շփոթված՝ ռուսերենով փորձում են համոզել, որ մի ձևով մեզ էլ հետը վերցնի, վարորդը հայերենով հարցնում է.

– Տղերք, հա՞յ եք:

Կարծես աշխարհը հանկարծ մեզ նվիրեցին: Մեր ուրախությանը չափ չկար: Երևում է, որ բեռնատարի վարորդը բարեհաճ անձնավորություն է, բայց և ասում է.

– Կողքիս միայն մեկ հոգու տեղ կա: Մետաղական ընդարձակ փակ բեռնախցիկն էլ, ճիշտ է, ազատ է, սակայն մշտապես ալյուր փոխադրելու պատճառով այնտեղ մաքուր չէ:

Մեր կողմից վստահեցնում ենք, որ ամեն պայմանի համաձայն ենք, միայն թե մեզ վերցնի:

Հայ վարորդը, ուները բոթվելով, որ նշան էր, թե «Դուք գիտեք, ես ձեզ գոռվացրի», համաձայնում է մեզ վերցնել: Վահրամն ակնթարթորեն իրեն տեղավորում է վարորդի կողքին, դե՛, մենք էլ բարձրանում ենք այրափոշով պատված անպատուհան թիթեղյա տուփի մեջ: Մոտ մեկ ժամվա ճանապարհից հետո բեռնատարը կանգ է առնում:

– Չարդախյու ենք հասել,– ասում է վարորդը և բացում երկաթյա դուռը:

Մենք, ոտքից գլուխ սպիտակած, շնորհակալությամբ հրաժեշտ ենք տալիս մեզ հայաշխարհի հասցրած բեռնատարի վարորդին և այլուրից մի լավ թափ տալիս մեզ:

Արդեն մթնել էր, ինքս նախկինում երկու անգամ եղել էի գուտ հայաբնակ և հայաշատ Չարդախյու գյուղում, սակայն առիթ չէի ունեցել որևէ մեկի հետ ծանոթանալու և այդ ուշ ժամին համաձայն չէի որևէ հայ ընտանիքի դուռը թակել և անհանգստություն պատճառել, մինչդեռ հարևան Ջագիր գյուղում ծանոթ ունեի և առաջարկեցի կարճ ճանապարհով արագ հասնել Ջագիր:

Ընկերներս համաձայն էին, սակայն երբ հասանք երկու գյուղերի միջնամասով ձգվող ոչ խոր ձորակի պոնկին, Վահրամը սկսեց.

– Ես այս ձորը չեմ մտնի:

Վանոյի հետ փորձում ենք համոզել, բան դուրս չի գալիս: Առաջարկում եմ.

– Դե՛, եկեք հենց այստեղ էլ գիշերենք...

Դրան էլ համաձայն չէ: Ավելին, ասում է.

– Ես հետ՝ Չարդախյու եմ գնում:

Բաժան-բաժան լինելու տիպիկ իրողությունից խուսափելու համար, հակառակ մեր կամքին, հետևում ենք Վահրամին: Հազիվ մի քանի րոպե քայլել էինք, երբ ամբողջ գյուղի լույսերը մարեցին: Գյուղի մի ծայրին վառ մնացած միայն մի լույս էր երևում: Վահրամը, թե՛ դեպի հենց այդ լույսն էլ գնանք: Գնում ենք, հասնում, պարզվում է՝ գյուղի փոռն է: Վահրամն ասում է.

– Այլուրի մեքենայով եկողը հազի՛վ էլ փոռն ընկներ:

Փռում գիշեր անցկացնելու հնարավորություն չկար, ուստի դուրս ենք գալիս այնտեղից և անորոշ քայլում ենք գյուղամիջյան փողոցներից մեկով: Երկու կողմերում դարպասներով պարսպապատերից ներս տներ են: Որոշ մասում նշարում ենք նավթավառի աղոտ լույսերը:

Հանկարծ Վահրամը կանգ է առնում դարպասից այն կողմ երևացող մի երկհարկ տան առջև և ասում.

– Մի տեսե՛ք, ի՛նչ մեծ տուն է, այստեղ հաստատ մեզ համար մի սենյակ կճարվի:

Վանոն ու ես ասում ենք, որ այս ժամին, այն էլ լույսերը մարած վիճակում մենք մարդու դուռը չենք թակի, եթե այդքան երես ունես, ապա դա ինքդ կանես:

Վահրամը թակում է դարպասը:

Նկատում ենք, որ նավթավառը ձեռքին՝ տնից մի մարդ երկրորդ հարկից վար է իջնում և բացում է դարպասի փոքր դուռը:

Վահրամը բարևում է և բացատրում իրավիճակը, սակայն այդ ամենի մասին խոսում է եզակի դեմքով և այնպիսի տպավորություն ստեղծում, թե ինքը մեն-միայնակ է: Մարդը համեցի՛ր էլ ասում և փորձում է ծածկել դուռը:

Երեսը ճարահատ պնդացրած՝ վերջին պահին ձեռքով դուռը պահում է Վանոն ու մարդուն քիչ անակնկալի բերում: Մեր հյուրասեր չարդախյուեցին, սակայն, նաև Վանոյին է սիրով հրավիրում, ապա փորձում դարպասի մեջ բացված փոքր դուռը վերջապես փակել: Այստեղ ես էլ, ամոթս մի կողմ դրած, Վանոյի նման վերջին պահին պահում եմ դուռը և հասկացնել տալիս, որ ախր մեկն էլ կա: Տանտերը ինձ էլ է ներս հրավիրում, բայց դրանից հետո ինքն է դուրս ելնում ու նավթավառը ձեռքին աջ ու ձախ նայում՝ պարզելու համար, թե սրանցից դեռ ինչքա՞ն կան արդյոք...

Չարդախյուեցու հյուրընկալ հարկի ներքո գիշերն անցկացնելուց հետո առավոտյան շնորհակալությամբ հրաժեշտ ենք տալիս և բռնում Ջագիր գյուղի ճամփան:

Ջագիրում Վահրամի հետ կապված մեզ ևս մի տարօրինակ կացություն էր սպասվում: Այստեղ մինչ Վանոյի օգնությամբ եկեղեցու հատակագիծն էի չափազորում, մեկ էլ գյուղի երեխաներից մեկը հասնում է մեզ և ասում.

– Չեր ընկերը ձեզ է կանչում:

Հետևում ենք երեխային, որը մեզ առաջնորդում է մի տան բակ: Բակում տեսնում եմ դժգոհ, իրենց բախտից փոշմանած տանտերերին՝ պապին, տատին, ովքեր դժկամությամբ են պատասխանում բարևին: Նույն ժամանակ տան ներսից ինչ-որ ձայներ են լսում: Երեխան մեզ ներս է հրավիրում, և ի՛նչ տեսնեմ: Վահրամը փորձում է նկարելու համար դուրս բերել տան մեծ սենյակի հատակին փռված գորգը, որի վրա դրված են սեղանը, աթոռները, բազմոցը: Այդ ամենը մեն-մենակ իրար է տալիս, քաշքշում: Ի՛նչ արած, օգնում ենք, գորգը դուրս հանում: Վահրամը նկարում է, և էլի նույն կերպ գորգը տեղն ենք դնում և տան կահույքը վերադասավորում:

Այնուհետև Բարսում և Բարում գյուղերն անցնելով՝ կածանով իջնում ենք Բարումշեն կամ Գառնակեր գյուղ:

Գառնակերում էր բնակվում ողջ շրջանում հայտնի մի մարդ՝ Աղաջանյան Հայկազը: Աշխատանքային հերոսի շքանշանակիր էր, ուստի ամբողջ շրջանում ավելի հայտնի էր Գերոյ (հերոս) անվամբ: Նրա հետ ծանոթ էի դեռևս 1980 թվականից: Այս անգամ էլ մի բարև ասելու համար եկեղեցու հարևանությամբ գտնվող նրա տուն այցելեցի:

Երեկոյան խմբվել ենք սեղանի շուրջ: Աղաջանյան Հայկազը դուրս է բերել զանազան մեղալներով լի մի տուփ և փորձում է մեզ ներկայացնել դրանցից յուրաքանչյուրին արժանանալու պատմությունը: Սակայն Վահրամի երգելը բռնել է: Ջզում եմ, որ մարդը համբերատար սպասում է, թե Վահրամը երբ իր ձայնը կկարի, որ կարողանա իր պատմությունները շարունակել: Մի երգից հետո Հայկազ պապը հազիվ է հասցնում մի քանի նախադասություն փոխանցել, երբ դարձյալ հնչում է հերոս պապի խոսքն ընդհատող Վահրամի հերթական երգը: Հետևում եմ այս անդուր իրակա-



Վանո Դադոյանը (հետևում՝ Զագիրի հայտնի գորգը) և Զագիրի Սբ. Աստվածածին եկեղեցին (ուս.՝ Ս. Կարապետյանի, 1985 թ.)

նուրբանը և անվերջ մտածում, թե ի՞նչ ահավոր բան է, երբ մարդուն պակասում են հարկավոր նրբանկատությունն ու հասկացողությունը: Վահրամի երգն ու երգարվեստն անձամբ ինձ համար հաճելի էին, բայց ես դա չէի կարող ընդունել այնպիսի իրավիճակում, երբ հյուր ես մի մարդու տանը, ում համար ոչ միայն բնավ ընկալելի չեն այդօրինակ երգերը, այլև ընդամենը մի քանի ծերերով բնակեցված գյուղում հյուրընկալ տանտերն ակնհայտորեն ցանկություն ունի հյուրերին փոխանցել իր կյանքի կարևոր հանգրվանների մասին տեղեկություններ: Վերջապես այդ մարդուց միայն լսելիք ու սովորելիք ունեինք, որը ցավալիորեն չէր հասկանում իմ տաղանդաշատ ավագ ընկերը:

Հերոս Հայկազ պապի՝ քիրաջով պատված ու սպիտակեցված տան ներսում՝ պատին, միմյանց կից երկու գորգ կար կախված: Մենյակը, իհարկե, մթոտ էր, բայց այդ որակի շարվածքով պատին մեխած գորգն էլ դուրս բերելը, իրոք, վտանգավոր էր: Ծեր տանտիրուհին Վահրամին խնդրեց հրաժարվել գորգը պատից հանելու մտքից, քանի որ քիրաջե որմերը կարող էին քանդվել հենց մեխերը դուրս քաշելու պահին, բայց ո՞ւմ ես ասում: Վահրամը դուրս քաշեց գորգը պահող մեխերը, և յուրաքանչյուրի հետ պատի մեջ մի-մի խռոչ բացվեց: Գորգը հանեց դուրս, նկարեց և ծեր կնոջն ասաց.

– Մայրիկ ջան, չմտածես, հիմա նույն ձևով կմեխես:

Տունը վերջնականապես փլատակվելու վտանգից ազատելու մտքով աննկարագրելի քաղաքավարի և համեստ տանտիրուհին ասաց.

– Չէ՛, բալեն, հարկավոր չի, համ էլ շա՛տ վաղուց թափ չէի տվել, հիմա լավ առիթ եղավ, ի՛նձ թող, թափ կտամ, հետո կկախես:

Գառնակերից հետո ևս մի քանի գյուղեր անցանք, և մեր այդ ճամփորդությունը եզրափակվեց:

Այդ ճամփորդության ընթացքում հասկացա, որ այլևս երբեք չեմ կարող Վահրամ Թաթևյանի հետ ճամփա կտրել և հակառակ բազմաթիվ առիթների՝ բավական երկար՝ ուղիղ 20 տարի, պահեցի որոշումս:

2005 թ., այսինքն՝ մեր համատեղ վերջին ճամփորդությունից ուղիղ 20 տարի անց, մի սխալ ևս գործեցի՝ անսալով Արևմտյան Հայաստան մեր ճամփորդությանը միանալու Վահրամի թախանձանքներին, սակայն դա արդեն եղավ իրապես վերջինը, քանի որ գոնե ինձ համար այն պարզեց, որ մարդը չի փոխվում:

Միում եմ և չափազանց բարձր եմ գնահատում երգահան Վահրամին և նրա երգարվեստը, նրա բացառիկ տաղանդը, ընդունում եմ այնպես, ինչպես որ կա, քանի որ անիմաստ է, ավելին՝ հիմարություն է Վահրամից այլ կերպար ակնկալել: Նման կեցվածքի համար Վանոն ու ես երևի այդ ճամփորդության ընթացքում մի հարյուր անգամ պիտի լքելինք նրան, բայց դա չարեցինք, որովհետև հասկանում էինք, որ մարդուն պետք է ընդունելինք այնպիսին, ինչպիսին որ է...

ԿՅԱՆՔԻՍ ԿՈՐՅՐԱ՞Շ, ԹԵ՞ ԳՏԱԾ ԺԱՍԱՆԱԿԸ

1991 թ. վերջն էր: Էլեկտրականություն չկար կամ համարյա չկար, գազ՝ նույնպես (դե՛, վրացիների եղբայրական հոգածության ներքո Հայաստան մտնող գազամուղը շաբաթը մեկ պայթում էր): Մարդիկ տաքանալու համար այրում էին այն ամենը, ինչ պատահեր, ինչը հնարավոր էր այրել:

Մինչդեռ անձամբ ես երջանիկ էի, քանի որ ընդամենն ամիսներ առաջ, օգտվելով սուֆիստեցի ծանոթիս բարյացակամ վերաբերմունքից, փոխադրվել էի արդեն չաշխատող Ժամացույցի գործարանի հարևանությամբ գտնվող և հարմարավետությամբ բանգլադեշյան նախորդ բնակարանիս ամեն ինչով գերազանցող նոր վարձով բնակարան:

Այդ օրերին էր, երբ մեծահարգ ավագ ընկերս՝ Հակոբ Սամաասարյանը (այդ շրջանում բավական հաճախակի էի այցելում նրան), ծայրահեղ մտահոգ ասաց.

– Չգիտես՝ մեղադրե՞ս, թե՞ ոչ, բայց ներկա իրավիճակում մենք մշակութային աներևակայելի չափերի կորուստներ ենք կրում: Մարդիկ համատարած այրում են ամեն ինչ, դրանց թվում՝ անհաշիվ քանակությամբ տարատեսակ գրականություն:

Խոսքի մեջ նաև ցավով հիշեց, որ տեղյակ է՝ կոնկրետ մի վայրում նաև հին մասնով են այրում: Խնդրանքիս ընդառաջ՝ Հակոբն ինձ փոխանցեց այդ հասցեն:

Որոշեցի հաջորդ օրն իսկ գտնել այդ մարդկանց, ճշտել տեղեկությունը և փորձել ինչ-որ բան անել: Գտա բնակարանը, այն գտնվում էր Վրացական փողոցով դեպի ներկայիս Ամերիկյան համալսարան տանող ճանապարհին: Տասնհինգհարկանի շենքի առաջին հարկում էր: Տանտերն անձանոթիս առջև բացեց դուռը, լսեց ինձ, ներս հրավիրեց, բնավ առանց քաշվելու հաստատեց տեղեկությունը, խնդրեց 1-2 րոպե սպասել, որից հետո մտնլաթե հաստ, ծանր ու մեծ մի պարկ, մի ծայրից բռնած, սկսեց սենյակից սենյակ քարշ տալ: Ասաց.

– Կարող ես ծանոթանալ:

Սկսեցի քջջել և պարկի միջից հեռո՞վ դուրս բերեցի մասնույի միավորները: Դրանցից մի քանիսը գրեթե ամբողջական լրակազմեր էին: Համարյա ամբողջական էր «Մշակ»-ի 1900 թվականի լրակազմը: Պակասում էին միայն հաստ կազմերն ու սկզբնամասի 13 համարները, որոնք արդեն վառարանի բաժին էին դարձել: Թերի էր 1885 թվակաի «Նոր-Դար»-ը, ամբողջական՝ 1904-ի «Кавказское слово» պարբերականը: Կային 1890-ականների վերջերի պատկերազարդ «Տարագ»-ների քրքրված լրակազմեր: Գրեթե ամբողջական էին Պոլսում հրատարակված «Հայաստան» շաբաթաթերթի՝ 1849, 1850, 1851 թթ. լրակազմերը, որոնց՝ կրակն ավելի երկար պահող հաստ կազմերն արդեն այրված էին:

Ողջ կյանքումս չեմ հիշում երկրորդ մի դեպք, որ այդ աստիճան ինձ կորցրած լինեի: Հարազատներ և անգին ընկերներ են կորցրել, բայց իրապես չեմ հիշում, որ երբևէ հուզմունքն ինձ հաղթած լինե: Չգիտեմ, չեմ կարող ասել՝ ինչ կատարվեց հետո: Շունչս կտրվում էր, և հագիվ կարողացա արտաբերել այս բառերը.

– Խնդրո՞ւմ եմ, շա՛տ եմ խնդրում, էլ չայրե՛ք, սրանց փոխարեն ձեզ մանրատախտակ կբերեմ:

Ասացի և դուրս թռա այդ տնից: Վազբով հասա տուն: Պատշգամբի մի անկյունում տան նորոգումից հետո տանտերը, չգիտեմ ինչ նպատակով, հավաքել, իրար վրա էր դարսել հին մանրատախտակը: Իհարկե, ոչ մի իրավունք չունեի զգալի մասով ձթապատ այդ հին մանրատախտակն օգտագործելու, բայց մտածեցի, որ հետո մի կերպ կարողաբանամ: Երեխեքիս սահնակը դուրս բերեցի, վրան շարեցի մանրատախտակի մի քանակություն, կապկպեցի, գրկած իջա առաջին հարկ ու ձյունների միջով բռնա հապճեպ տեղ հասցրի: Գործարքը մարդուն հաճելի թվաց, և մտնլաթի ողջ պարունակությունն ինձ հանձնեց: Մի կերպ տեղավորելով սահնակի վրա՝ արդեն անշտապ տուն հասա:

Սկսեցի դասավորել, կարգի բերեցի նույն միավորի քրքրված, իրարից անջատված մասերը և անհամբերությամբ սկսեցի քաղել-քարտագրել գործիս տեսանկյունից կարևոր նյութերը: Շատերի վրա կնիք կար, վրան գրված էր «Յովհաննես Մերեթրակեանց. Հաշտարխան»: Կարծես Ազգային գրադարանի մի փոքր հարստություն հայտնվել էր տանս մեջ: Հափշտակված էի հատկապես «Հայաստան» շաբաթաթերթի հողվածաշարերով՝ «Նկարագրություն Կեսարիոն հայաբնակ գիւղերի», «Նկարագրութիւն Արեւելեան Շիրակ գաւառի գիւղերի», «Հռոռնոս վանքի վիմագրերը» և այլն... և այլն...

Անչափ ուրախ էի դիպվածաբար փրկածս հնօրյա պարբերականների համար, սակայն միևնույն ժամանակ անհանգիստ էի. չէ՞ որ նման որքան հարստություն, որի գոյությունից տեղեկություն չունեի, հենց այդ պահին այրվում էր:

Արդեն շատ տարիներ յուրաքանչյուր տարվա ձմեռային ամիսները գրեթե ամբողջովին հատկացնում էի տվյալ տարվա ընթացքում իրականացրածս ճամփորդությունների ընթացքում հավաքած նյութերի մշակմանը: 1991 թվականին մի քանի, յուրաքանչյուրը՝ 2-3 շաբաթ տևողությամբ, ճամփորդություն էի կատարել դեպի Վրաստանի Բոլնիսի, Մառնեուլի և Թեթրի-Շղարոյի շրջաններ: Հարյուրներով երևակելիք, ապա արխիվավորելիք ժապավեններ էին կուտակվել, մաքրագծելիք և տուշելիք մեծաքանակ չափագրություններ (դե՛, Արխիկադ և մյուս ծրագրերով ներկայիս համակարգիչներն այն օրերին գոյություն չունեին), դրանց գումարած՝ արխիվային և գրադարանային ուսումնասիրությունները: Այդ աշխատանքները հենց ձմեռային շրջանի պարտականություններս էին:

Վերոնշյալ դեպքից երեք, թե չորս շաբաթ անց՝ արդեն 1992 թվականի հունվարին (հիմա արդեն չեմ հիշում, թե ումից), լուր ստացա, որ Թումանյան փողոցում գտնվող Հայկական սովետական հանրագիտարանի խմբագրության աշխատակիցները հենց իրենք այրում են տասնամյակների ընթացքում խմբագրության պահոցներում ամբարված պարբերականները: Այս լուրը ժամ առաջ ուզեցի ճշտել և ամմիջապես ճամփա ընկա դեպի խմբագրատուն: Այդ օրը մենակ չէի, ինձ ընկերակից էր Ազգային դիվանի ընթերցարարի աշխատակիցներից մեկը՝ Անահիտ Մարգարյանը:

Այն պահին, երբ ձյունը թափ տալով՝ պիտի մտնեիք շենք, մեզնից առաջ փայտե մեծ դուռը ներսից բացեցին մի կին և մի պատանի: Երկուսի ձեռքին էլ՝ երկուական կապոց թերթեր: Երևացող թերթերին կարդացի անունը՝ «Մարմարա»: Որ ճիշտն ասեմ, աչքերս հետները գնացին, բայց կարծես համարձակությունս չհերիքեց, որ հարցնեմ՝ ո՞վ եք, ի՞նչ իրավունքով, ո՞ր եք տանում այս թերթերը:

Ենթին կանգնած՝ մի քանի ակնթարթ կարծես հայացքով ճանապարհեցի ծանր բեռի տակ դժվարությամբ քայլող անձանց, ապա մտանք շենք: Հարցումներով ճարեցիք այն մարդկանց, ովքեր տեղյակ էին այդ ամենից: Երևի բարկությունս չկարողացա զսպել, որից էլ ազդված՝ պատասխանատու կանայք, իբր արդարացում, ասացին, թե մինչև հիմա միայն ուսերեն թերթերն են այրել՝ «Պրավդա»-ներ և այլն: Միայն այսօր առաջին անգամ հերթը հասել է հայերեն պարբերականներին: Ասացի, որ հայերեն թերթերին որևէ մեկն այլևս չհամարձակվի դիպչել, դրանք բոլորն առաջիկա օրերին են պիտի տեղափոխեն ապահով վայր, որից հետո պահանջեցի խմբագրության շենքին հանդիպած և «Մարմարա»-ները տուն տանող կնոջ հասցեն: Առանց դժկամելու կանայք փոխանցեցին իրենց աշխատակցուհու հասցեն: Իսկույն դուրս եկանք շենքից և հասանք այն պահին, երբ կինն ու պատանին երկի հագիվ մի րոպե առաջ էին տեղ հասել և միջանցքում կանգնած՝ դեռ հեռու էին: Առանց երկար բացատրության բռնագրավեցի «վառելիքը», և Անահիտի հետ մի կերպ հասցրինք ժամացույցի գործարանի մոտ գտնվող իմ տուն:

Հաջորդող օրերն ամբողջությամբ հատկացրի Հայկական սովետական հանրագիտարանի խմբագրատան հայ պարբերական մամուլի հավաքածուների «թալանին»: Տրանսպորտի միակ միջոցը երեխեքիս՝ խորհրդային տարիներից ավանդված սահնակն էր: Մովորաբար օրը մեկ «ռեյս» էի անում, բայց երկու անգամ հաջողվեց մեկ օրում երկու «ռեյս» անել: Չեմ հիշում, թե որերորդ օրն էր, պահակը մեջ ընկավ, թե այս ո՞ր իրավունքով: Իրավունքն անմիջապես ստացա, երբ նրա գրպանում հայտնվեց թերևս իր ամսական աշխատավարձից ավելի գումարը:

Երեքսենյականոց ժամանակավոր բնակարանիս մեկ սենյակը բոլորովին դատարկ էր: Հենց դա էլ դարձավ հայ պարբերական մամուլի՝ փրկածս միավորների պահեստարանը: Սկսեցի ըստ անունների և ըստ տարիների դասավորել թերթերը, հատուկ ցանկերում յուրաքանչյուր տարվա պակասող համարները դուրս գրել: Հետաքրքիր էր, որ շատերի վրա գաղտնիության մասին ազդարարող կնիք կար (օրինակ, «Մարմարա», «Ասպարեզ», «Հայրենիք», «Ազատ օր», «Ազդակ» և դաշնակցական այլ մամուլի), որից ենթադրելի էր, որ խորհրդային տարիներին դրանք ամեն մարդ ընթերցել չէր կարող:

Սկսեցի ընկերական շրջապատում պատմել նոր «հիվանդությանս» մասին, և նրանք, ովքեր տանը թեկուզ փոքր քանակով թերթեր ունեին, ինձ բաշխեցին: Չգուցե էի, որ կամաց-կամաց «հիվանդանում էի» մամուլ հավաքելու մոլուցքով, և հասկանալով՝ դա մի կյանքի գործ է և ձեռքի հետ անել չի ստացվի, այնուամենայնիվ, անտարբեր մնալ էլ չէի կարողանում:

1992 թ. վերջին վախճանվեց ակադեմիկոս Սուրեն Երեմյանը: Դեռ 1982 թվականին մի անգամ գիտնականի հրավերով եղել էի նրա տանը և ներկայացրել Արցախին վերաբերող սահիկներս: Երեմյանի աշխատասենյակից գատ՝ անչափ տպավորվել էի հենց միջանցքում դարսված մամուլի ահռելի քանակությունից: Երբ երախտաշատ գիտնականի մահվան լուրն առա, մտաբերեցի 10 տարի առաջ տեսածս և որոշեցի մի այցով պարզել, թե ի՞նչ է լինելու կուտակված մամուլի ճակատագիրը: Երեմյանի այրին և կրիչնայական դարձած որդին ջերմորեն ողջունեցին խնդրանքս: Մեկ շաբաթվա աշխատանքից հետո տունն ազատեցի ավերորոշյունից, որի համար վերջին օրը՝ հրաժեշտի պահին, որդին ինձ շնորհակալություն հայտնեց՝ ասելով.

– Պիտի աղբահավաք բեռնատար վարձելի, դու ինձ ազատեցիր:

Այդ շրջանում էր, երբ «հիվանդությանս» մասին պատմեցի վաղեմի ընկերոջս՝ Հովհաննես Չաքարյանին: Քանի որ նրա հայրը երկար տարիներ եղել էր «Հայրենիքի ձայն» թերթի խմբագիրը, հարցրի, թե կարո՞ղ է ավելորդ միավորներ ունենան: Ասաց.

– Ավելի լավ է՝ այդ հարցը հենց հորս տաս:

Միասին գնացինք Չաքարյանենց տուն: Լևոն Չաքարյանի պատասխանը հետևյալն էր.

– Սփյուռքահայության հետ կապի կոմիտեի շենքը, որտեղ մաս մեր խմբագրության սենյակն էր, հրդեհվել է, գնացեք, տեսեք, եթե հրդեհը մեր սենյակին չի հասել, ինչ-որ պիտանի համարեք, հավաքեք, տարեք:

Հովհաննեսի հետ գնացինք նշյալ շենքը, որտեղ, բարեբախտաբար, կրակը չէր հասել «Հայրենիքի ձայն» թերթի խմբագրասենյակին: Վերցրի այն, ինչ և ինչքան կարող էի, առաջին հերթին՝ հենց նշյալ թերթի, ինչպես նաև լիբանանահայ որոշ թերթերի («Կանչ» և այլն)՝ բազմաթիվ տարիների պատրաստի լրակազմերը: Բոլորը, բոլորը...

Անկուշտի պես... ոչինչ չթողեցի և իշաբեռս մի կերպ հասցրի տուն:

Անկեղծ ասած՝ ինքս իմ բռնած գործից շվարել էի: Արդեն 15 տարի զբաղվելով միակ սիրածս գործով՝ կամա-ակամա խրվել էի մեկ այլ գործի մեջ, որն անվերջ խժռում էր բուն աշխատանքիս հատկացնելիք ժամանակը: Նույնիսկ արդեն լրջորեն մտածում էի գսպել և վերջ դնել այս նորեղուկ մոլուցքիս: Չէ՞ որ ի վերջո ես նույնիսկ սեփական բնակարան չունեի, և ի՞նչ էր լինելու վիճակս, երբ մի օր այս տանտերս էլ մի որևէ պատճառով առաջարկեք ազատել բնակարանը: Արդեն իսկ մի որևէ նոր բնակարան փոխադրվելս ինձ համար ծանր գործ էր, քանի որ սովորական կենցաղային իրերից գատ՝ ամեն անգամ ստիպված էի առանձնահատուկ զգուշությամբ տեղափոխել մաս մեծածավալ բոլոր արխիվներս և արդեն այդ ժամանակ ավելի քան 2000 կտոր մասնագիտական գրականությամբ գրադարանս: Ուստի այս ֆունին բռնածս գործը երբեմն պարզապես անհեթեթություն էր թվում, մանավանդ երբ պատկերացնում էի, որ մի օր հեթեթական բնակարանը փոխելիս ստիպված էի լինելու նաև տոննայով կուտակված մամուլի հավաքածուները փոխադրել:

Իմ չար բախտից, սակայն, 1992 թ. վերջերին պատահած երկու նոր դրվագ կյանքս շատ ավելի բարդացրեց: Առաջինը, որ Մատենադարանի ընթերցասրահի վարիչներից մեկը՝ տիկին Ռուզանը, մի անգամ ասաց, թե Մատենադարանը նյութական տղության պատճառով միայն 4 անուն պարբերական էր ստանում: Դրանք էին «Հայաստանի Հանրապետություն», «Հայք», «Ազգ» և, եթե հիշողությունս չի խամրել, «Երկիր» թերթերը: Հետո էլ ավելացրեց՝ թերթերի խմբագիրներն ու հրատարակիչներն իրենք պետք է հասկանան, որ պատմության մեջ մնալու համար տպված միավորից գոնե մեկական օրինակ պիտի փոխանցեն Մատենադարանին (միջանկյալ ասեմ, որ հենց այդ շրջանում առնվազն 15 անուն պարբերական էր լույս տեսնում):

Արդեն երկար ժամանակ հենց Մատենադարանի ընթերցասրահում ուսումնասիրում էի հատկապես նախախորհրդային տարիների պարբերական մամուլը և գոնե ես գիտակցում էի, թե որքան կարևոր է պարբերականների հավաքածուները պատշաճ մակարդակով սերունդներին փոխանցելու գործը:

Երկրորդ դրվագը, որն ավելացավ վերոնշյալին, հետևյալն էր: Մտածեցի թերևս ինձ մամուլի հավաքածուներս կամ գոնե դրանց այն հատվածը, որ պակասող համարի կարգավիճակում էր Ազգային գրադարանում, փոխանցել նրանց: Այս մտքով մի անգամ որոշեցի այցելել գրադարանի այդ օրերի տնօրենին՝ մեծահարգ Ռաֆայել Իշխանյանին: Նա լսեց առաջարկս և հպանցիկ ասաց, թե գրադարանը դրանք բոլորն էլ ունի (խոսքը մասնավորապես Կ.Պոլսում հրատարակված «Հայաստան» շաբաթաթերթի մասին էր): Այս պատասխանին հաջորդ հարցս տվեցի.

– Իսկ գուցե գրադարանի հավաքածուներում պակասող համարնե՞ր կան: Թեկուզ այդ մասով պատրաստ եմ օգտակար լինել:

Այս վերջին հարցումիս Իշխանյանն իր սենյակ հրավիրեց գրադարանի ֆոնդապահներից մեկին և հանձնարարեց ճշտել, թե «Հայաստան» շաբաթաթերթի 1849-1851 թթ. համարներից արդյոք գրադարանը պակասող համարներ

ունի՞, թե՞ ոչ (ինձ էլ պատվիրեց քիչ սպասել՝ պատասխանը ստանալու համար): Մի 15 րոպե անց կիմը ներկայացավ և ասաց.

– Պարոն Իշխանյան, շաբաթաթերթի նշյալ տարիներն ընդհանրապես գոյություն չունեն գրադարանում:

Իշխանյանին կարծես զարմացրեց պատասխանը: Շուտ զարթոյն իմ կողմը՝ բացարձակապես առանց ոգևորության նշանների, կարծես ի միջի այլոց ասաց.

– Դե լավ, ուրեմն դրանք բոլորն էլ բեր:

Գրադարանից դուրս եկա անասելի մտահոգ. այս ինչպե՞ս կարելի է չունենալ, մինչև անգամ չիմանալ, որ չունեն այդ թերթը: Չէ՞ որ դա հայ պարբերական մամուլի հնագույն նմուշներից էր, չէ՞ որ հրատարակության տարիներին դեռ ամբողջ Կովկասում (Թիֆլիս, Բաքու, Երևան, Շուշի և այլն) ոչ մի հայերեն պարբերական լույս չէր տեսնում:

Շվարանքս բառիս բուն իմաստով պաշարել էր ինձ: Ահա այդ իրավիճակում 1992 թվականի վերջին կայացրի հետևյալ որոշումս՝ 1993 թ. սկզբից սկսել հավաքել օրվա հրատարակությունները, իսկ մինչ այդ հավաքածներս էլ այլևս որևէ հաստատության չփոխանցել (թաքուն երազելով, որ մի օր կիմնեն հայ պարբերական մամուլի մասնավոր գրադարան):

Օտտայ Բենդերն ասում էր. «Չգիտեմ՝ ինչով, չգիտեմ՝ ինչպես, բայց կհասնենք»:

Ամիսներ առաջ շատերի նման ես էլ էի ազատվել արդեն իսկ սուկ ձևական բնույթով գրանցված աշխատանքիցս: Չունեի սեփական տանիք, կայուն աշխատանք: Փոխարենն ունեի 9 և 7 տարեկան զանձիկներ և նվիրված ու համբերատար կին: Ունեի նաև միտքս ու շունչս վաղուց նվաճած և իմ պարագայում առաքելության պես մի բան դարձած պաշտելի աշխատանք և դրան առնչվող քայլ-քայլ իրագործվող աննորմալ ծավալների հանդուգն ծրագրեր:

Այս ամենն իրականում ինձ բավական էր, որ կյանքս շարունակեի ընթանալ աշխատանքային գերհագեցած ռիթմով: Սակայն որոշումս անբեկանելի էր: Հանձն էի առել մի գործ, որը Մատենադարանի պես հաստատությունը նյութականի պատճառով (անկեղծ ասած՝ երևոյթն ինքս ավելի գիտակցության պակասին էի վերագրում, քան նյութական դժվարության, որովհետև, եթե դա կարող էր անել ոմն Սամվել, ապա աշխարհահռչակ հաստատության համար օրական շուրջ 2000-3000 դրամի ծախսը վստահ անհամեմատ ավելի դյուրին հաղթահարելի պիտի լիներ): Ել չեմ խոսում այն մասին, որ երկրի նախագահն էլ հենց այդ հաստատության նախկին գիտաշխատող էր, չէ՞ որ նրա համար մնան խնդիր լուծելը, անշուշտ, ոչինչ էր:

Ինչևիցե, սկսվեց 1993 թվականը: Ի սկզբանե կարողացա զսպել այսորժակս և ծրագրիցս դուրս թողեցի հայաստանյան ռուսերեն մամուլը: Չներառեցի նաև ժամանցային, բուլվարային պարբերականները: Արդեն օրվա միայն հայերեն հրատարակություններն ինձնից կլանում էին միջինը 1500-2000 դրամ: Դրանից զատ՝ ձեռք էի բերում նաև արցախյան և վրաստանյան պարբերականները: Օրվա թերթերը գնում էի տանս ամենամոտ՝ Կամոյի դպրոցի հարևանությամբ գտնվող կանգառի կրպակից, որի առջև այդ շրջանում ամեն օր հերթ էր լինում: Բարեբախտաբար, մի կարճ ժամանակ անց հարգարժան կրպակավարուսին ըմբռնեց կացությունը և իմ թերթերը սկսեց առանձնացնել հենց մամուլը ստանալու պահին: Դրանք վերցնում էի օրվա ավելի հանգիստ ժամերին:

1993 թ. սկզբից լույս տեսնող թերթերի հավաքումից բացի՝ որոշեցի փորձել ամբողջացնել այն պարբերականների հավաքածուները, որոնք սկսել էին լույս տեսնել ընդամենը 1-2 տարի առաջ: Այդ խնդիրը լուծելու համար նախ այցելեցի «Ազատամարտ» թերթի խմբագրություն՝ այդ շաբաթաթերթի նախորդ երկու տարիներին հրատարակված օրինակներից հնարավորության դեպքում ձեռք բերելու հույսով: Ցավոք, կրպակներից վերադարձած հին համարներն արդեն հանձնել էին մակուլատուրա, բայց փոխարենն այստեղ ինձ մեկ այլ անակնկալ էր սպասում: Պարզվեց՝ շենքի ամբողջ երրորդ հարկաբաժնի հատակը պատված էր համարյա մեկ թիզ հաստությամբ ՀՅԴ կուսակցության՝ արտասահմանյան տարբեր երկրներում լույս տեսնող պարբերականների՝ իրար վրա նետված միավորներով, շատերը՝ նույնիսկ ընդհանրապես չբացված մոմլաթե ծրարներով: Թերթերը սրախ ուզածի չափ հավաքելու և տանելու թույլտվությունն ամմիջապես ստացա (ասեմ, որ այս թերթում արդեն իսկ հողվածներ էի տպագրում, ուստի խմբագրության աշխատակիցները, ինձ լավ ճանաչելով, խնդիրքս շատ արագ և սիրով լուծեցին):

Սկսվեց և համարյա 10 օր շարունակվեց սահնակային նոր երթուղիս՝ Չարենցի փողոցում գտնվող «Ազատամարտ»-ի խմբագրությունից դեպի Ժամացույցի գործարան: Լավ հիշում եմ, որ հեռավորության պատճառով միայն մի օր ինձ հաջողվեց 2 «ռեյս» անել: Նաև չեմ մոռանում ճանապարհին պատահող մարդկանց՝ «վառելիքիս» հառած նախանձկոտ հայացքները:

Տասն օր անց «Ազատամարտ»-ի խմբագրատան երրորդ հարկի հատակը մեկ թիզ հաստությամբ ծածկված մամուլն արդեն անհետացել էր: Աշխատանքիս ավարտին թեկուզ գոհ էի ինձնից, բայց հոգուս վրա մի ծանր քար էր ավելացել: Դա նրանից էր, որ ներքուստ չէի համակերպվում այն փաստի հետ, որ ինձ վիճակվել էր փրկել նաև դաշնակցական մամուլը հենց դաշնակցականների ձեռքից...

1993-ի հունվար-փետրվարյան թիրախներիցս էր նաև «Երկիր» թերթի խմբագրությունը (այն խմբագրությունը, որի համակարգիչները 3-րդ հարկի լուսամուտներից դուրս թափեցին ՀՅԴ կուսակցության կասեցումից անմիջապես հետո): Խմբագիրն ամենայն բարյացակամությամբ ցույց տվեց վերադարձած համարներով լեցուն երկու մեծ պահարան: Այստեղ արդեն պատրաստ ունեի օրաթերթից ինձ մոտ պակասող համարների ցանկերը, ուստի ավել բեռ չկրելու նպատակով հենց տեղում ճշտելով՝ վերցրի միայն անհրաժեշտ համարները՝ հուրախություն ինձ, մի նշանակալի չափով լրացնելով թերի լրակազմերը: Նույն նպատակով այցելեցի մի շարք այլ խմբագրություններ, որոնք բոլորն էլ եզրափակվեցին տարբեր ծավալների իմ «ավարառություններով»:

Գուցե մինչև 2000 դրամը օրական հավելյալ ծախսի իմաստով (բացի ինձ համար «երջանիկ» կիրակի և երկուշաբթի օրերից, երբ թերթեր լույս չէին տեսնում) այնքան էլ մեծ գումար չէր, բայց դա էապես մեծացրել էր տնտեսական լարվածությունս: Հարցն այն էր, որ գումար ունեի կամ ոչ, միևնույն է, օրվա մամուլն իրավունք չունեի բաց թողնելու, այլապես դրանք տարբերվելու պիտի համարվեին պակասող համարների ցանկերը և նոր որոնումների պատճառ դառնային, իսկ չգտնվելու դեպքում գրանցվեին լրակազմի ճակատին՝ նսեմացնելով հավաքածուի արժեքը:

Հիմա նույնիսկ ամաչում եմ խոստովանել, բայց լինում էին դեպքեր, երբ ունեցածս դրամը կա՛ն օրվա հացին ու կաթնամթերքին պիտի ուղղելի, կա՛ն էլ օրվա պարբերականներին, և ես՝ երկու զավակների հայրս (երրորդս ծնվեց 1994 թվականի մայիսին), վերջին դրամներս ամեն անգամ տալիս էի թերթերին, ապա ընկնում հողվածներով ու հողվածաշարերովս պաշարած խմբագրությունները՝ բախտի բերմամբ գոնե մի տեղից հոնորար ստանալու: Ի՞նչ ասեմ, ինչպես մոլի ծխողն է հացի փոխարեն նախապատվությունը տալիս ծխախոտին, այնպես էլ ես՝ չգիտեմ բարոյական ո՞ր իրավունքով՝ թերթերին: Բայց պիտի նշեմ, որ ամեն անգամ կարծես աներևույթ մի խրախույս մի դուռ էր բացում՝ կարծես հուշելով ինձ՝ շարունակի՛ր...

1993 թ. ապրիլին մերոնք ազատագրեցին Քարվաճառը, ապա շարունակաբար նաև մյուս շրջանները: Ծարտարապետ Արմեն Հախնազարյանը մայիսին եկավ Երևան: Արդեն 4-րդ տարին էր, որ անձնապես ճանաչում էի և նրա առաջարկով անդամագրվել էի իր իսկ հիմնած և 1982 թ. Գերմանիայում գրանցված Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հասարակական կազմակերպությանը: Իմացավ, որ ուշքս ու միտքս ազատագրված շրջաններում ուսումնասիրություններ սկսելն էր: Արդեն ինքն էլ դրա մասին էր մտածում: Որոշեցինք, որ պիտի ընդհատեմ Վրաստանում շարունակվող դաշտային աշխատանքներս և քանի դեռ հնարավորություն կար, նույն գործը պիտի իրականացնեմ ազատագրված շրջաններում: Նախատեսվող ճամփորդություններիս համար Հախնազարյանը մի որոշ գումար հատկացրեց, որը, իհարկե, ամենից նվազ չափով գործածեցի հենց այդ նպատակով: Այն առավել ուղղեցի նրան, որ օրվա մամուլն առանց պարտքերի կուտակման կրպակից կարողանամ ստանալ (իրարահաջորդ ճամփորդություններիս ընթացքում ամեն անգամ որոշակի կանխավճար էի թողնում կրպակատիրոջը՝ մինչ վերադարձս թերթերը կուտակելու համար):

Մոտավորապես այդպես անցան հաջորդող մի քանի տարիները: Համենայն դեպս, 1996 թ. վերջին, ըստ էության, մի որոշ մակարդակով ամփոփեցի ազատագրված շրջաններում պահպանված պատմական հուշարձանների՝ հնարավորություններիս սահմաններում իրականացվող ուսումնասիրական աշխատանքները:

Արդեն 1990-ական թթ. վերջերին պատկան կառույցներում էլ կարծես նյութական ճգնաժամն անցել էր (անշուշտ, եթե ճգնաժամը միայն նյութական էր...), և նրանք էլ էին սկսել կանոնավոր հավաքել օրվա պարբերականները: Այդ փաստն անչափելի ուրախություն և թեթևություն էր ինձ համար և առաջին հերթին՝ հնարավորություն՝ ժամանակս ավելի սիրածս աշխատանքին տրամադրելու իմաստով: Հիշում եմ, որ վերջին անգամ մամուլի նշանակալի քանակություն ձեռք բերեցի «ՌԷՀ»-ի քարտուղար Նուրե Դերոյանի շնորհիվ: Նա ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի վախճանվելուց հետո ինձ հրավիրեց հանգուցյալի բնակարան և հրամայեց հենց ինձ համար առանձնացված մամուլի պատկառելի քանակություն: Դա 1999-ի տարեվերջն էր:

Շարադրանքիս այս հատվածն ամփոփելով՝ նշեմ, որ գանազան հասցեներից մամուլի հավաքչական աշխատանքներս ի վերջո ամփոփվեցին 2000-ական թթ. սկզբներին, որի ընթացքում մոտ 60 ամուն պարբերականների հարուստ հավաքածուներ գոյացան: Դրանցից անթերի (առանց պակասող համարներով) լրակազմերը սկսեցի կամաց-կամաց հանձնել կազմարարության, քանի որ պահպանության, ինչպես նաև հետագայում օգտվելու խնդիրը միայն այդ կերպ կարելի էր լուծել: Անլուծելի էր մնում, սակայն, մեծաթիվ պակասող համարներով լրակազմերի խնդիրը: Այդ վիճակում, այսինքն՝ այդպես կիսատ, ձեռքս չէր գնում կազմելու տալ, սակայն մյուս կողմից էլ չկազմած հավաքածուները ժամանակի ընթացքում որոշ չափով վնասվում էին:

Արդեն 2000-ականների վերջերին ինձ համար պարզ դարձավ, որ հավաքածս մամուլի մի մեծ քանակություն թողնելու էի չկազմած: Դրանք ժամանակի մեջ փչանալու վտանգից ազատելու մտահոգությամբ հանդիպեցի Ազգային գրադարանի հարգարժան տնօրենին: Տեղեկացրի հավաքածուներիս գոյության և դրանք գրադարանին նվիրելու մտադրությանս մասին՝ այն ցանկությամբ, որ դրանց շնորհիվ գրադարանը կարող էր համարյա իր՝ առկա նույն միավորների պակասող համարներով կազմված կամ չկազմված լրակազմերը:

Գրադարանին պատկանող բեռնատար մեքենան երկու «նեյտով» միայն կարողացավ փոխադրել ամբարածս մամուլի չկազմած հավաքածուներս: Հիշում եմ, երբ երկրորդ անգամ բեռնատարը ճամփա ընկավ, հեռացող մեքենային հայացքով հետևելիս ակամա մտաբերեցի Ռոբինզոն Կրուզոյի պատմությունը ներկայացնող հայտնի ֆիլմի հայերեն կրկնօրինակի վերջին դրվագում հնչող խոսքերը, երբ բրիտանական փրկարար նավով հեռացող Ռոբինզոնը, նայելով կղզուն, ասում է, որ ինքը հեռանում է այն կղզուց, որտեղ թողել էր իր երիտասարդ տարիները:

Ես էլ նայում էի հեռացող բեռնատարին ու մտածում 100-ից ավելի մամուլի այն միավորների մասին, որոնց փրկության, դասավորման, պակասող համարների դուրսգրման և այդ համարները ժամանակի ընթացքում հնարավորինս լրացնելու համար ոչ միայն չէի խնայել երիտասարդ տարիներս, այլև էապես ճգնել-սահմանափակել էի ուսումնասիրություններիս շրջանակը:

Վերջաբանի փոխարեն... որպեսզի չասեմ՝ համոզված եմ, ընդամենը նշեմ, որ առնվազն ենթադրում եմ՝ 1990-ականներին ինձ հաջողվեց անվերապահ կորստից ազատել հայաստանյան և սփյուռքահայ պարբերականների վիթխարի քանակություն, որը, ըստ ամենայնի, գոնե 1991-1996 թթ. կտրվածքով իր ամբողջականությամբ, կարծում եմ, եզակի է ողջ աշխարհում: Պատշաճ կազմարարությամբ նաև կարողացա ապահովել դրանց հարատևությունը և մատչելիությունն ապագա ուսումնասիրողի համար: Միակ մեծ ափսոսանքս՝ ցարդ համապատասխան ամենահամեստ մակերեսի չգոյության պատճառով այդ եզակի ժառանգությունը մնացել է շրջանառությունից դուրս:

Ինչ էլ որ լինի, դեռ հույսս չի մարել, իսկ թե առաջիկա տարիներին էլ երազանքս մնա երազանք, ոչինչ, երևի մի 10 բեռնատարով եղածն էլ կձանձիմեմ Ազգային գրադարան, որտեղից նախորդիվ կատարած նվիրատվությանս համար թեկուզ ձևական մի թղթի կտոր՝ շնորհակալագրի չարժանացա (սա՛ առավել քան ի միջի այլոց): Ի վերջո փորձն ունեմ, եթե ձևադրացա անխուսափելի ոչնչացումից սահնակով կամ շալակով փրկածս 2 բեռնատար մամուլի հավաքածուներս հայացքով ճանապարհել, կարծում եմ՝ 10-ն էլ կարող եմ:

Միայն թե այսօր՝ այսքան տարի անց, իրապես չեմ գտնում և կարծես չպիտի էլ գտնեմ պատասխանն այն հարցիս, թե ուժով, ավյունով, ոգևորությամբ լեցուն կյանքիս երիտասարդ տարիներից առնվազն 6-7-ը մոլագարի պես հայ պարբերական մամուլի փրկության գործին նվիրելուց հետո կորցրի՞, թե՞ գտա այդ ժամանակը...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԻՑ, ՍԱՐ ՈՒ ՁՈՐԻՑ ԲԱՑԻ՝ ԻՆՁ ՈՒՐԻՇ ՈՉ ՄԻ ԲՆՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒՄ

– Բարև, Սամվել, ո՞նց ես, – արդեն կես տարի է՝ ամեն զանգելիս նույն հարցն էի տալիս: Վերջին անգամ հարցիս պատասխանեց, որ լավ է զգում, սկսել է ապաքինվել, ախորժակը բացվել է, շնչառությունը՝ հեշտացել...

Մեկ շաբաթ անց՝ փետրվարի 28-ին, լսեցի նրա մահվան բոթը: Չկա Մեծ Հայը: Երկու օր անց Երևանում էի: Մասնակցեցի թաղմանը: Հաջորդ օրը ևս ընտանիքի և գործընկերների հետ գերեզմանոցում էինք: Ծա՛նր ապրումներ էին: Չկար Նվիրյալը: Չկար Մեծ Հայրենասերը: Չկար իմ 35 տարվա ընկերը: Երկու օր շփվելով գործընկերների՝ այդ հավատարիմ համախոհների խմբի հետ՝ հասկացա, որ կա Սամվելի գործը, կա նրա ընկերների նվիրվածությունը, ուրեմն կա նաև Սամվելը, ուրեմն նա ապրում է և արարում...

22-23 տարեկան տղաներ էինք, որ ծանոթացանք: Չգիտեինք՝ ինչպես է դասավորվելու մեր ապագան: Հասակակիցներ էինք, բայց Սամվելի հետ ծանոթությունից հետո ես նրանից սովորում էի հայագիտություն, հայրենասիրություն, ազնվություն, խղճի հետ գործարքի մեջ չմտնելու հատկություն: Նա իսկապես մեծ էր: Նա միշտ ինձ համար ուղեցույց էր, իմ մեծ ընկերը՝ Սամվել Կարապետյանը:

Առաջին հանդիպումը 1984 թ. աշնանն էր: Արդեն մի տարի էր՝ աշխատում էի Իսմայիլյի շրջանի իմ ծննդավայրի՝ Ազայիշենի ութամյա և հարևան Ուշտալ գյուղի միջնակարգ դպրոցներում: Մեր գյուղի դպրոցում մնացել էր միայն մեկ՝ ութերորդ դասարան՝ 6 աշակերտով, ուստի շաբաթվա մեծ մասը լինում էի Ուշտալի դպրոցում:

Այդ օրը, երբ դասավանդում էի մեր գյուղում, ինձ հայտնեցին, որ երեկ դպրոց էր եկել Հայաստանից մի երիտասարդ, հետաքրքրվել դպրոցով, գյուղի պատմությամբ, նկարել էր աշակերտներին, ինչպես նաև դպրոցի ճակատին ագուցված սրբատաշ վիմագիր քարը՝ *Այիք Բեն Ազայ շեն, 1907*:

Իհարկե, շատ ամոսասցի, որ չեմ հանդիպել: Չանցած մի քանի ժամ՝ դասերից հետո, երբ արդեն տանն էի, զանգում է հարևան Ղալակա գյուղի ռուսական դպրոցի պատմության ուսուցիչ Ջառայան Կարենը (միասին ավարտել ենք Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը, շատ մտերիմ ընկերներ ենք մինչ օրս) և ասում.

– Պատրաստվիր, գալիս եմ, տեղ ենք գնալու:

Շուտով Կարենն իր մեքենայով տեղ հասավ և ինձ ծանոթացրեց իր ուղևորի հետ: Սամվելն էր՝ բարձրահասակ, ակնոցով, սև և մի քիչ երկար մազերով: Պարզվեց, որ երեկ նա մեր գյուղից գնացել էր Ղալակա, նկարել էին գերեզմանոցը, գյուղում պատահաբար ծանոթացել էր Բաղդասարյան Վլոդյայի հետ, գիշերել նրանց տանը, իսկ այսօր նրա որդու՝ Միշայի և Կարենի հետ գնում են մեր շրջանի մեկ այլ հայկական գյուղ՝ Ղուդինշեն:

Ես միացա նրանց: Մոտ 20 կմ ճանապարհ անցնելուց հետո հասանք Ղուդինշենի կամ Նորշենի մոտ՝ դարավոր հսկա կաղնիների հովանու տակ գտնվող Ծիլիփ սրբավայր: Դճանապարհին Սամվելը պատմում էր մեր շրջանի գյուղերի մասին, տարբեր հետաքրքիր տեղեկություններ հայտնում, որոնց մասին մենք բոլորովին գաղափար չուներինք: Ասացի, որ ուսանող ժամանակ մեր դասախոսներից մեկն ինձ մեկ օրով տվել էր Մակար եպիսկոպոս Բարխուտարյանցի «Աղուանից երկիրը և դրացիք» աշխատությունը՝ հրատարակված Թիֆլիսում 1893 թ., և ես այնտեղից տառ առ տառ արտագրել եմ մեր երեք գյուղերի՝ Ուշտալի, Ազայիշենի և Ղալակայի մասին ամբողջ նյութը: Նա ոգևորված նշեց, որ ինքը հիմնականում առաջնորդվում է հենց այդ գրքով:

Սամվելը շատ հետաքրքիր էր պատմում, և մենք կլանված լսում էինք: Պետք էր տեսնել, թե ի՞նչ զգուշությամբ և ուշադիր էր գնում Ծիլիփի միջնադարյան այդ կոթողը (իրար վրա հավաքած երեք քարաբեկորներ էին՝ խաչի և տարբեր խորհրդանիշների փորագրություններով, որը, ցավոք, անմխիթար վիճակում էր): Մեր օգնությամբ մեքենայից վերցրեց հսկա ուսապարկը, հանեց լուսանկարչական սարքը, մի մեծ տետր, չափումների համար տարբեր պարագաներ: Հետաքրքրությամբ հետևում էինք նրան: Մեզ ամենից շատ զարմացրել էին ուսապարկի մեծությունը և ծանրությունը, իսկ Սամվելը ծիծաղելով ասում էր.

– Հավատացե՛ք, պայուսակում միայն շատ անհրաժեշտ առարկաներն են, և արդեն մի քանի տարի է՝ իմ ճամփորդությունների անբաժան ընկերն է:

Սամվելը սկսեց ուսումնասիրել կոթողը և հրմթացս բացատրում էր մեզ, որ խաչը հավանաբար 5-7-րդ դարերին է վերաբերում, իսկ այդ խորհրդանիշները 12 առաքյալներն են և այլ նրբություններ... Ես հաս-

կացա, որ պատմության ֆակուլտետն ավարտած ուսուցիչս ոչ մի բան չգիտեմ այդ ամենի մասին: Իսկ Սամվելը կլանված աշխատում էր: Երբ նկարելն ու չափագրելն ավարտեց, պատրաստվեցինք ճաշելու (Կարենն ուտելիք էր վերցրել): Մի թերթ փռեցինք հենց մեքենայի վրա և շարեցինք ուտելիքը: Այդ ընթացքում մեզ մոտեցավ վերոնշյալ Նորշեն գյուղի վերջին հայ բնակիչներից մեկը, եթե չեմ սխալվում, Միսակ անունով: Հաղթանդամ, ալեհեր, հաստ, սպիտակ բեղերով, կոստյումով ու գավազանով մի ծերունի էր: Նա միացավ մեր ճաշին, պատասխանեց Սամվելի՝ գյուղի վերաբերյալ բոլոր հարցերին: Վերջում Սամվելը բոլորիս միասին լուսանկարեց:

Ճաշից հետո Սամվելն ասաց, որ այստեղ ինքը բաժանվելու է մեզնից և շարժվելու է դեպի հայկական մյուս գյուղեր: Երբ սկսեցի հավաքել ուտելիքի մնացորդները, որ փաթաթեմ թերթի մեջ, նա խնդրեց, որ պանիրն ու թոնրահացը առանձին փաթաթեմ և տամ իրեն, ճանապարհին դրա կարիքը կզգացվի: Ձևակառույցումներից գերծ նրա անմիջականությունն ինձ ցնցեց:

Ամոթի զգացումն ինձ չէր լքում. ես գրեթե ոչինչ չգիտեի ծննդավայրիս պատմության մասին, մինչդեռ ահա ինձ նման մի երիտասարդ, հարյուրավոր կիլոմետրեր հաղթահարելով, տարբեր գրկանքներ կրելով, երբեմն անոթի մնալով, պատահական մարդկանց մոտ գիշերելով, սար ու ձորերով այդ հսկա ուսապարկը քարշ տալով, փորձում է գտնել և վերականգնել ծննդավայրիս, տեղի հայության պատմության բեկորները: Խնդրեցի նրա հասցեն, և սկսած 1984 թվականից՝ մեր միջև նամակագրական կապ հաստատվեց:

Սամվելի բոլոր նամակները պահում էի: Երբ 1988-ի դեկտեմբերին մեզ բռնի տեղահանեցին, նամակներն իմ գրադարանի հետ հասան Հայաստան, իսկ հետագայում չգիտեմ, թե ինչպես կորցրի: 2016 թ. սեպտեմբերին, երբ Երևանում վերջին անգամ հանդիպեցի Սամվելին, ասաց, որ իմ բոլոր նամակներն ինքը պահում է: Ամոթով խոստովանեցի, որ ես կորցրել եմ:

– Կարևորը՝ մեր ընկերությունն ենք պահպանել, – ասաց Սամվելը:

...Ճիլիի մոտ բաժանվեցինք: Նա շարունակեց իր ճանապարհը, իսկ մենք, խորապես տպավորված այդ հանդիպումից, վերադարձանք գյուղ:

Մեր երկրորդ հանդիպումը տեղի ունեցավ Երևանում 1985 թվականին: Որոշել էի մասնակցել Մեծ եղեռնի 70-ամյա տարելիցի արարողությանը Ծիծեռնակաբերդում: Գալով Երևան՝ տեղավորվեցի «Արաբկիր» հյուրանոցում: Ապրիլի 24-ին՝ ամբողջ օրը, Սամվելի հետ միասին էինք: Առավոտյան շարժվեցինք Էջմիածին, մասնակցեցինք Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի մատուցած պատարագին, այցելեցինք Սբ. Գայանե եկեղեցու բակում գտնվող Խենթի և Մախլուտոյի շիրիմներին, եղանք Չվարթնոցում, հետո վերադարձանք Երևան և ժողովրդի հոծ բազմության հետ բարձրացանք Ծիծեռնակաբերդի հուշահամալիր: Հանդիպումը կարճ էր, բայց շատ տպավորիչ: Հաջորդ օրը վերադարձա տուն: Մեկ ամիս անց՝ դպրոցներում վերջին զանգից հետո, ես ու Կարենը երկու ավտոբուսով 80 աշակերտի համար քառօրյա էքսկուրսիա կազմակերպեցինք Հայաստան: Մի ավտոբուսում Ղալախայի, մյուսում՝ Ուշտալի և Ագախիշենի 8-10-րդ դասարանների աշակերտներն էին: Մի ամբողջ օր անցկացրինք Սամվելի հետ. նա և՛ էքսկուրսավարի դերն էր ստանձնել, և՛ լուսանկարչի: Եղանք Էրեբունիում, Էջմիածնում, Չվարթնոցում, Կոմիտասի անվան Պանթեոնում: Սամվելն իր հիշարժան լուսանկարներով օրն ավելի անմոռանալի դարձրեց: Ուշագրավ էր մանավանդ մեր աշակերտների նկարը Հովի. Շիրազի գերեզմանի մոտ (այն ժամանակ դեռ գերեզմանաքար չկար, և մի մեծ պատտառ էր՝ բանաստեղծի նկարով):

Սամվելը պայմանավորվել էր երեկոյան աշակերտների համար պրոյեկցիոն սարքի միջոցով սահիկներով (սլայդներով) մի դահլիճում ցուցադրել Կուրի ձախափնյակի հայկական պատմական հուշարձանների իր լուսանկարները: Մակայն միջոցառումը տեղի չունեցավ երևանաբնակ մեր համագյուղացիների պատճառով, որոնք, նախօրոք տեղյակ լինելով, որ գյուղերի աշակերտները գալու են Երևան, հավաքվել էին հրապարակում: Շա՛տ սրտառուչ տեսարան էր: Հրապարակը լցվել էր մեր աշակերտներով և նրանց ուսանող քույր-եղբայրներով, քեռի-մորաքույրերով: Այնպիսի տպավորություն էր, կարծես մեր 3 գյուղերի բնակչությունն այդտեղ էր: Սամվելը ևս որոշ ժամանակ մնաց մեզ հետ, հետո բաժանվեցինք: Նա կատակեց՝ ասելով, որ իր առաքելությունն ավարտված է, և այլևս այստեղ անելիք չունի: Հրաժեշտից առաջ ինձ մի քանի տուփի մեջ ամփոփված սահիկներ տվեց՝ գյուղում ցուցադրելու համար, իսկ մենք ի սրտե վայելեցինք այդ անմոռանալի երեկոն: Այդ օրը մայիսի 28-ն էր, խորհրդային տոնացույցով Սահմանապահների օրն էր նշվում: Երեկոյան՝ ժամը 22-ին, հրապարակում տոնական հրավառություն էր: Փառահեղ տեսարան էր: Նման բան մեր աշակերտներն առաջին անգամ էին տեսնում:

Կարճ ժամանակ անց՝ հունիսին, Սամվելը նորից մեր գյուղում էր: Մենք հանդիպեցինք արդեն որպես լավ և հին ընկերներ: Նա հյուրընկալվեց մեր տանը, և այդ մի քանի օրը տոն էր մեզ համար:

Շատ արդյունավետ էին այդ օրերի ուսումնասիրությունները: Այցելեցինք Ուշտալի դպրոց, նորից եղանք մեր երեք, ինչպես նաև Խոշավատ և Բոզավանդ գյուղերի գերեզմանատներում: Ասենք, որ վերջին երկու գյուղերը 1918 թվականի կոտորածներից հետո չէին վերականգնվել: Հաջորդ բնակավայրը Ռուշանն էր: Սամվելն այստեղ եղել էր 1984 թ. աշնանը, լուսանկարել և ուսումնասիրել հին գերեզմանոցները և եկեղեցին: Վերջինս, սակայն, ներսից նկարել չէր կարողացել, քանի որ այն վերածվել էր ցորենի պահեստի և լցված էր բերքով: Նույն վիճակն էր նաև Ղալակայի եկեղեցում: Այս անգամ նրան հաջողվեց ներսից շատ գեղեցիկ լուսանկարներ անել, ինչպես նաև եկեղեցու հատակագիծը: Ահա մենք Ռուշանում ենք, որտեղ ապրում էր մորաքույրս՝ Օլյան: Նրանց տանը ճաշեցինք, ապա մորաքույրս հարևանի երեխային ուղարկեց՝ պահեստապետին կանչելու, որ գա և բացի պահեստ-եկեղեցին: Սամվելի ուրախությամբ չափ չկար. ինքնամոռաց աշխատում էր, չափագրումներ անում, լուսանկարչական սարքն ամրացնելով շտատիվի վրա՝ զգուշությամբ նկարում էր փայտյա տանիքը պահող փայտե սյուների գեղեցիկ, քանդակագարդ խոյակները: Իսկ պահեստապետը դժգոհում էր, թե ի՞նչ կա նկարելու, որ դեռ անցյալ տարի էլ են եկել Հայաստանից ու նկարել: Սամվելը խորամանկ ժպտում էր.

– Արթ՜ր, անցյալ տարի էլ ես էի, հիմա չի ճանաչում:

Երբ Սամվելն աշխատանքն ավարտեց, պահեստապետը շտապ փակեց դուռը և բողբոջելով՝ թե անտեղի ժամանակ վատնեց, շտապեց վարչություն՝ «կարևոր գործերով»: Մենք գյուղամիջով շարժվեցինք դեպի տուն: Մեզ հետաքրքրեց ճամփեզրին գտնվող հին, լքված, բայց լավ պահպանված, սրբատաշ անկյունաքարերով երկհարկանի գեղեցիկ մի տուն: Պարզվեց՝ այն կառուցվել է 1886 թ.: Սկսեցինք լուսանկարել. Սամվելը մի քանի ֆոտոապարատ ուներ, մեկն էլ ես վերցրի ու փորձեցի մի քանի կադր անել: Այնքան էինք տարվել, որ ուշադրություն չդարձրինք քիչ անց մեր կողքին հայտնված սպիտակ գույնի «Ժիգուլի» մեքենային: Այնտեղից դուրս եկան երկու հոգի, մեկը՝ քաղաքացիական հագուստով, մյուսը՝ մայրի ուսադիրներով, իսկույն ճամփեզրից վերցրին մեր պայուսակները և զցեցին մեքենայի մեջ: Մենք դժգոհ մոտեցանք, ես աղոթեցանք հարցրի, թե ինչ է կատարվում: Նրանք հետաքրքրվեցին մեր ինքնությամբ: Երևի պատասխանս չբավարարեց, քանի որ առաջարկեցին գնալ գյուղի վարչություն՝ այնտեղ ամեն ինչ պարզելու: Ստիպված էինք հետևել նրանց, որովհետև պայուսակները մեքենայի մեջ էին: Վարչությունում պարզվեց, որ քաղաքացիական հագուստովը շրջանի ինչ-որ ֆինանսական կազմակերպությունից է, եկել են գյուղխորհրդի ֆինանսական գործերը ստուգելու, ճանապարհին նկատել են մեզ՝ բեռնված հսկա ուսապարկով, շտատիվով: Գյուղխորհրդում հետաքրքրվել են, «կարևոր գործով» վարչություն հասած պահեստապետն էլ «զեկուցել է», որ Հայաստանից են, եկել և նկարում են եկեղեցին հերիք չէ, իրեն էլ չեն թողնում՝ հանգիստ աշխատի: Վարչությունում գյուղխորհրդի քարտուղարի ներկայությամբ, որը ճանաչում էր հորս, նորից սկսվեց հարցաքննությունը: Ես բացատրեցի՝ ով եմ, որտեղից եմ և որպես պատմության ուսուցիչ՝ որոշել եմ մեր շրջանի հայկական պատմական հուշարձանները նկարել և դպրոցում ստեղծել դրանց նվիրված անկյուն: Քանի որ ծանոթ չեմ լուսանկարչական գործին, խնդրել եմ ընկերոջս՝ Սամվելին, որ Երևանում է ապրում, արձակուրդին գալ և օգնել ինձ այդ հարցում: Նրանք ինձ համարեցին ստախոս՝ ասելով, որ ինձ նման «միամիտները» ընկնում են հայաստանցի Սամվելի նման հակասովետական էլեմենտների ազդեցության տակ, և քանդված ու պահեստների վերածված եկեղեցիների նկարները հայտնվում են արտասահմանյան ամսագրերի էջերում՝ որպես ԽՍՀՄ հակակոռուսկական պայքարի օրինակներ: Իսկ գյուղխորհրդի քարտուղարը սկսեց մեղադրել ինձ տհասության ու քաղաքական անպատասխանատվության մեջ: Որոշվեց մեզ տանել շրջանային ոստիկանություն: Ես խնդրեցի քարտուղարին, որ զանգի հորս և հայտնի այս միջադեպի մասին: Դանապարհին նորից էի փորձում համոզել, որ մեզ բաց թողնեն. ամոթ է, հյուրիս մոտ ինձ ու իրենց խայտառակ են անում, բայց... իզուր:

Շրջանային ոստիկանությունում մեզ իսկույն տարան պետի աշխատասենյակ: Միջանցքում թուրք ոստիկանի այն հարցին, թե ովքեր են, հետևեց մեզ ուղեկցողի անբարտավան պատասխանը.

– Հայաստանցի են՝ Վազգենի լրտեսները:

Աշխատասենյակ մտանք թիկնապահների մի մեծ ունակի առաջնորդությամբ: Ոստիկանապետը հոգնած տեսքով, հաղթանդամ, սպիտակահեր, արտաքուստ հանգիստ մարդ էր: Գրասենյակին նկատեցի Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի՝ 1985 թ. ռուսերեն հրատարակությունը (այդ գրքից ես էլ ունեի և գնել էի հենց մեր շրջկենտրոնի գրախանութից): Գրքի առկայությունը մեզ հուսադրեց, որ գործ ունենք կիրթ մարդու հետ: Նոր հարցաքննությունից ոչինչ չփոխվեց ո՛չ մեր ցուցմունքներում, ո՛չ նրանց ենթադրություններում: Այդ ընթացքում թալանի սովոր «իրավապահները» սկսեցին ուսումնասիրել ուսապարկի պարունակությունը: Մինչ ֆոտոապարատները ձեռքից ձեռք էին անցնում, հանկարծ նրանցից մեկի ձեռքին հայտնված անգլիատառ «Ջենիթ» անվանումով ապարատը զավեշտալի «գյուտի» առիթ տվեց: Հայտնի չէ՝ ինչից ենթադրելով, թե ապարատը ճապոնական է, նա փայլուն եզրահանգում արեց.

– Ուրեմն լրտեսակա՛ն է...

Այդ ունակի մեջ մեկ էլ նկատեցի Իվանովկա և մեր հայկական երեք գյուղերի՝ Ազալիչենի, Ուշտալի և Գալակայի տեղամասի ոստիկանին՝ Աղամադին: Դիմեցի նրան, որ հաստատի իմ ինքնությունը, որովհետև ճանաչում էր և՛ ինձ, և՛ հորս: Բայց նա ևս ինձ մեղադրեց քաղաքական տհասության մեջ՝ ակնարկելով, որ դարձել եմ արտասահմանյան լրտես: Դեռ ավելին՝ հորս զանգելու խնդրանքս էլ ցուցադրաբար մերժեց (հետագայում հորս բողոքում էր, որ իր բարևներին չեմ պատասխանում: Վերջին հանդիպումը նրա հետ 1988 թ. աշնանն էր, երբ մեր գյուղերը բռնի տեղահանում էին, մարդիկ իրենց անասուններն ու գույքը ստիպված շատ էժան գներով վաճառում էին: Աղամադն Ուշտալի դպրոցի հարևանությամբ մի տնից համարյա ձրի հնդկահավեր էր գնել: Տանտիրուհին գումարը ստանալուց հետո հնդկահավերը բակից քշել էր փողոց և դարպասը փակել: Մա էլ իր կարճահասակ ու ցմփոր հալին ոստիկանի համազգեստով, քափքրտինքի մեջ կորած, ժողովրդի միահամուռ քրքիջի ներքո հնդկահավերին բռնելու հույսով վազվզում էր նրանց հետևից):

Նախքան ոստիկանապետը որոշում կկայացներ, մեզ տեղավորեցին մի առանձին սենյակում, պատվիրեցին իրար հետ չխոսել և դուռը բաց թողեցին, որ իրենց տեսադաշտում լինենք: Սկսեցինք ցածրաձայն խոսել՝ իրար չնայելով, և Մամվելը պատմեց, որ ինքը մի քանի անգամ հայտնվել է նման իրավիճակներում: Գիտի՛ գաղտնի հատուկ հրահանգ կա, որ արգելեն նկարել Ադրբեջանում գտնվող հայկական եկեղեցիները, հին գերեզմանոցները և պատմական այլ հուշարձաններ: Ես գիտեի, որ Մամվելն աշխատում էր Հայաստանի հուշարձանների պահպանության գլխավոր վարչությունում: Նա բացատրեց, որ ճամփորդություններն Ադրբեջանի տարածքում իրականացնում է անձնական նախաձեռնությամբ: Առաջադրանք ստանալով Հայաստանի տարածքում ուսումնասիրել, նկարել և չափագրել որևէ հուշարձան, ասենք, մեկ շաբաթվա ընթացքում՝ նա գործն ավարտում էր 2 օրում և շարժվում դեպի Արցախ կամ Կուրի ձախափնյա շրջաններ:

Այն սենյակը, որտեղ մենք էինք, գտնվում էր հերթապահական կետի դիմաց, և այդ պահին հեռուստացույցով ցուցադրվում էր ադրբեջաներեն «Գըղըլ քիրվա» պիեսը, որը գրել էր 20-րդ դարի սկզբի իրենց լիբերալ հեղինակներից մեկը (անունը չեմ հիշում): Ջավեշտականն այն էր, որ պիեսը հայ-ադրբեջանական բարեկամության մասին էր: Մենք դիտում էինք, ես Մամվելի համար թարգմանում էի: Հանկարծ ականջիս հասավ հերթապահի հեռախոսագրույցը, որից պարզ դարձավ՝ մեզ ուղարկում են հարևան Կուտկաշենի շրջան, որտեղ գտնվում էր ԿԴԵ-ի (ՊԱԿ) վարչությունը: Խոսակցությունից հասկացա, որ այնտեղից առաջարկում են հարցը տեղում լուծել, բայց մեր «հերոսները» պնդում են, որ «միջազգային լրտեսներով» իրենք չեն կարող զբաղվել: Փաստորեն ո՛չ «Վարդանանքը», ո՛չ հայ-ադրբեջանական բարեկամության ոգով պիեսը մեզ չկարողացան փրկել, և երկու ոստիկանի ուղեկցությամբ շարժվեցինք Կուտկաշեն: Մեր «լեզենդը» մույնն է՝ նկարները դպրոցի թանգարանի համար են: Միակ բանը, որ վարչությունում կարող էին մեղադրել (ինչն էլ մեզ անհանգստացնում էր), այն էր, որ Բոզավանդում գեղեցիկ բնությունը, Կովկասյան լեռնաշղթան նկարելու ժամանակ կարող էր կադրերի մեջ պատահաբար հայտնված լինել Կուտկաշենում տեղակայված ռազմական ռադիոլուկացիոն բազայի շենքը, որը մեր գյուղերից լավ երևում էր: Բայց դրա համար նրանք պիտի մշակեին բոլոր ֆոտոժապավենները, որոնք մի քանի օրվա աշխատանքից հետո զգալի քանակ էին կազմում և առաջվա պես գտնվում էին մեզ համար դեռևս անհասանելի ուսապարկերի մեջ:

Կուտկաշեն հասանք, երբ աշխատանքային օրն ավարտվել էր: Հերթապահը հանդիմանեց մեզ ուղեկցողներին, որ «լրտեսներին» չբերելու իրենց առաջարկն ականջի հետևն են զցել: Երկար ժամանակ սպասեցինք, մինչև տնից բերել տվեցին մի աշխատակցի: Մա մի ծեր, շատ խորամանկ ու անընդհատ ժպտացող մարդ էր: Սկսվեց հարցաքննությունը, որի ընթացքում նա ինչ-որ մշումներ էր անում և երկար, բարակ մատներով անընդհատ շրջում էր մեր ուսապարկից հանած մի քանի ֆոտոժապավենները: Խոսում էինք ռուսերեն: Այն հարցին, թե ո՞ւմն են լուսանկարչական սարքերը, Մամվելը հաստատեց, որ իրենն են:

– Եթե խնդրեմ, կարո՞ղ ես ինձ լուսանկարել,– դիմեց Մամվելին և խորամանկ կկոցեց աչքերը:

– Կարող եմ,– պատասխանեց Մամվելը:

– Եվ ես անմիջապես կստանա՞մ նկարներս,– թեքվելով առաջ՝ ավելի կկոցեց աչքերը՝ ուղիղ նայելով Մամվելի աչքերին՝ կարծես ուզում էր ասել՝ ա՛յ հիմա կբռնվես խաբեության մեջ:

– Ո՛չ, ժապավենները պետք է մշակվեն, իսկ դրա համար ժամանակ է պետք,– հանգիստ պատասխանեց Մամվելը:

Ես անընդհատ հետևում էի քննիչի մատների շարժումներին. հանկարծ չբացի ժապավենի պարկուճները, որով կոչնչացներ մի քանի օրվա մեր աշխատանքը:

Ամեն ինչ ավարտվեց նրանով, որ նա գրանցեց մեր հասցեները և ազատ արձակեց: Ի դեպ, մեզ ուղեկցող ոստիկաններն այդ ընթացքում միշտ մեր կողքին էին և հիասթափված մեզ հետ դուրս եկան շենքից: Մոտեցանք մեքենային ու պատրաստվում էինք տեղավորվել, բայց սրանք ասացին, որ իրենք բնակվում են Կուտկաշենում, և մենք պետք է ինքնուրույն վերադառնանք: Հետդարձի ճանապարհին Սամվելը պատմեց, որ մի քանի անգամ հայտնվել է այդպիսի վիճակներում և ծիծաղելով հիշեց, որ ընդհանրապես առաջին «ձերբակալությունը» դպրոցական հասակում էր: Իմանալով, որ պապն Արևմտյան Հայաստանից է, քարտեզում գտել է նրա ծննդավայրը և որոշել այցելել: Մեծ դժվարություններով հասել է սահման, որտեղ էլ սահմանապահները կանգնեցրել են: Երբ նրան մեղադրել են սահմանը խախտելու հանցանքի մեջ, զարմացած ասել է.

– Մի՞թե պապի ծննդավայր գնալը հանցագործություն է...

Օրն արդեն մթնել էր, և պատահական մեքենայով կեսգիշերին հասանք տուն:

Ծնողներս անհանգիստ սպասում էին: Պատմեցիք եղելությունը: Սամվելը որոշեց շուտ վերադառնալ Երևան, որպեսզի, եթե ՊԱԿ-ը ծանուցում ուղարկի Հայաստան, ինքն այնտեղ լինի: Առավոտյան հայրս նրան մեքենայով տարավ մեր շրջանի մեկ այլ գյուղ՝ Քյալբանդ, անձամբ ծանոթացրեց մտերիմ բրիգադավարի հետ: Հաջորդ օրն այդ գյուղում ավարտելով պլանավորած աշխատանքները՝ Սամվելը մեկնեց Երևան:

1986 թ. օգոստոսն էր: Մեր տանը հյուրընկալվել էին բաքվեցի մեր բարեկամ-հովկերները: Բակում ճաշում էինք խաղողի թառմայի տակ, երբ հանկարծ դարպասը բացվեց, և բակ մտավ Սամվելը՝ ժպտերես և իրեն հատուկ լայն քայլերով: Երջանիկ պահ էր: Ասաց, որ մենակ չէ, ընկերները դպրոցի բակում են: Գնացիք նրանց հետևից: Ուրախ էինք, թեքն իրար ուսի գցած քայլում ու գրուցում էինք:

– Բայց լավ էր չէ՞, որ առանց նախապես գոուշացնելու, առանց դուռը ծեծելու բացեցի ու մտա բակ, ոնց որ իմ տուն, – ոգևորված ասաց Սամվելը:

Դպրոցի բակում, կանաչ խոտերի վրա նստած, հանգստանում էին Սամվելի ուղեկիցները՝ Ռոբերտն ու Հովիկը: Ծանոթացանք: Վերցնելով ծանր ուսապարկերը՝ շարժվեցինք դեպի տուն:

Սամվելը ներկայացրեց առաջիկա օրերի անելիքները, իսկ երեկոյան, երբ պատրաստվում էինք քնելու, երևի նկատի առնելով, որ մեր տանն այլ հյուրեր էլ կային, Ռոբերտն առաջարկեց՝ իրենք կգիշերեն դաշտում՝ վրանների տակ: Ես նեղացա.

– Ի՞նչ կմտածեն իմ մասին գյուղում, եթե իմ հյուրերը դաշտում քնեն:

– Ախր Երևանից մինչև այստեղ ենք հասել, շատ տեղեր ենք եղել, բայց ոչ մի տեղ չի հաջողվել գիշերել դաշտում, – ասաց Ռոբերտը, – էլ ինչո՞ւ ենք այս քնապարկերը հետներս քարշ տալիս:

– Լսե՛ք, անցյալում երբ դերվիշներն ուզում էին մեկին խայտառակել, հրաժարվում էին մտնել նրա տուն և տան առաջ վրան էին խփում ու մնում այնտեղ, – ասացի ես, – հո՞ չեք խայտառակելու ինձ:

Մի քանի օր մնալով մեր տանը՝ քնապարկերի մասին այլևս խոսք չեղավ: Սամվելը տարերքի մեջ էր: Նորից եղանք Ղալակայում: Հարավային կողմից նկարեց գյուղի տարբեր մասերը, որոնք հետագայում իրար միացնելով՝ ստացվեց գյուղի ամբողջական պատկերը ծայրից ծայր: Նույնն արվեց մեր գյուղում: Անչափ հետաքրքիր էր այդ աշխատանքի ողջ ընթացքը: Սամվելը տարված էր իր գործերով՝ չափազրեց, նկարել, մատիտով գծել, դասամատյանի մեծության չափ մի տետրում նշումներ անել: Ռոբերտը՝ մոտ 50 տարեկան, ալեխառն մազ-մորուքով, շատ ուրախ և կայտառ մարդ էր: Գասախոսում էր Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում (կարծեն միկրոէլեկտրոնիկա): Նա հիացած էր բնության գեղեցկությամբ: Կբարձրանար մի բլրի վրա և ամբողջ ձայնով կբացականչեր՝ բարի լո՛ւ՛ւ՛յս...

Հովիկը երեսունին մոտ, շատ հանգիստ ու քախտա տղա էր: Աշխատում էր Աշտարակի ֆիզիկայի ինստիտուտում: Բնության մեծ սիրահար էր: Իր ֆոտոապարատով սիրում էր հատկապես դաշտային ծաղիկներ նկարել: Հիշում եմ, թե ի՞նչ հիացմունքով ու ոգևորությամբ էր նույն ծաղիկն անմահացնում բազմաթիվ կադրերով:

Այս անգամ ևս այցելեցինք Ղուղենշեն կամ Նորշեն գյուղի մոտ գտնվող Ծիլիփ սրբավայր: Մեծ բավականությամբ էի հետևում Սամվելին աշխատանքի պահին, հատկապես այն ժամանակ, երբ նա մատիտով մանրակրկիտ գծանկարում էր ուսումնասիրվող օբյեկտը. չէ՞ որ ֆոտոխցիկը կարող է ամենայն մանրամասնությամբ չվերարտադրել հուշարձանի կամ գերեզմանաքարի քանդակները:

Այդ օրերին մենք այցելեցինք մեր շրջանի ամենախոսիսային լեռնային գյուղերից մեկը՝ Լահիճ, որը 50 կմ հեռու էր մեր գյուղից: Նախ հասանք Իսմայիլի շրջկենտրոն, այնտեղից վարձեցինք «Վիլիս» մակնիշի ավտոմեքենա: Բավական անմխիթար վիճակում գտնվող լեռնային ճանապարհներով հասանք Լահիճ, որից այն կողմ սկսվում էին Կովկասյան լեռների արոտավայրերը, և այլևս բնակավայրեր չկային:

Դեռ նոր էինք ծանոթանում գյուղին, երբ մեզ մոտեցավ մոտ 30-35 տարեկան մի տղամարդ, ներկայացավ որպես տեղի դպրոցի ուսուցիչ և իմանալով մեր այցի նպատակը՝ պատրաստակամությամբ հայտնեց ուղեկցել մեզ: Կարծես միջնադար էինք ընկել. գյուղի փողոցները շատ մեղ էին՝ սալարկված սովորական քարերով: Տները համարյա բոլորը երկհարկանի էին: Բնակչությունը (մենք նրանց լսեցինք էինք կոչում) հիմնականում զբաղվում էր պղնձագործությամբ ու գորգագործությամբ: Երկհարկանի բոլոր տների առաջին հարկերը զբաղեցնում էին պղնձագործական արհեստանոցները՝ հին փուքս-քուրաներով ու մրտոված պատերով: Շրջեցինք գյուղում, եղանք գերեզմանոցում, Սամվելը մի քանի կադր արեց: Հայության ոչ մի հետք չկար: Լավ հիշում եմ տեղացի ուսուցչի ասածը.

– Ժամանակին այստեղ հայկական գյուղ է եղել, և այն ճանապարհը, որով մտել ենք գյուղ, անցնում է նախկին հայկական գերեզմանոցի տարածքով:

Ճնշված այդ լուրից՝ վերադարձանք գյուղ: Առավոտյան Սամվելը շուտ արթնացավ և ակնատես եղավ, թե մայրս ինչպես է խնոցի հարում (գյուղի բոլոր տներում կային կավե մեծ խնոցիներ): Նա ուշադրությամբ հետևում էր մորս շարժումներին, թե ինչպես է հանում եղեգնյա փոքրիկ փողը, որին մենք պոնք էինք ասում, խնոցու վերևի մասում գտնվող անցքից և նայում՝ տեսնելու՝ յուրը հավաքվել է, թե՞ ոչ, թե ինչպես է յուղախառն քանը խնոցուց լցվում կաթսաների մեջ: Մորս հարցին՝ մի՞թե երբեք չի տեսել այս արարողությունը, Սամվելը պատասխանեց.

– Որտե՞ղ տեսնեի, ասֆալտի վրա մեծացած տղա եմ:

Իմ հայրենի գյուղում դա մեր վերջին հանդիպումն էր Սամվելի հետ: Նա շարունակեց իր հայրենանվեր գործունեությունը տարբեր շրջաններում, իսկ ես դպրոցական ձմեռային և ամառային արձակուրդներին Երևանում էի, և մեր հանդիպումները շարունակվում էին:

1988 թ. դեկտեմբերի 6-ին տեղահանվեցին մեր երեք գյուղերը՝ Ղալական, Ագայիշենը և Ուշտալը: Մեր շրջանի վերջին հայկական գյուղերը հայաթափվեցին: Դեկտեմբերի 7-ի առավոտյան մեր խղճուկ բեռները թափված էին Իջևանի Ազատամուտ գյուղի մատույցներում՝ Ադրբեջանից Հայաստան մտնող ճանապարհի երկու կողմերում: Հենց այստեղ էլ զգացինք երկրաշարժի ցնցումները: Մի քանի օր անց Վարդենիսի շրջանի Կոշաբուլաղ (Շատջրեք) գյուղում տեղավորվեց մեր երեք գյուղերի բնակչության մեծ մասը:

Գյուղում տեղավորվելուց հետո ես գնացի Երևան՝ Սամվելին հանդիպելու: Հանդիպեցինք հրապարակի շրջակայքում գտնվող իր աշխատավայրում՝ Հուշարձանների պահպանության վարչությունում: Տխուր հանդիպում էր: Գրկախառնվեցինք:

- Եկա՞ք...
- Եկա՞նք...

Արդեն Հայաստանում էի, և մեր հանդիպումները հաճախակի էին դարձել: Հայաստան գալուց մի քանի ամիս անց հերթական հանդիպումն էր Սամվելի հետ: Նա ոգևորված պատմեց իր նոր գործերի մասին: Կազմել ու տպագրել էր «Բուն Աղվանքի պատմական հուշարձաններ» նկարագրող քարտեզը: Ահագին կապոց հանձնեց ինձ, որ այդ քարտեզները տարածեն մեր փախստական գյուղացիների մեջ:

Տարիներ շարունակ շփվելով Սամվելի հետ՝ ես տեղյակ էի նրա գերաշխատասիրությանը, որը, սակայն, շատ քիչ էր գնահատվում այդ տարիներին: Նա միշտ նյութական կարիքի մեջ է եղել, մի վարձու բնակարանից մյուսն էր տեղափոխվում, ընտանեկան հոգսերը շատ դեպքում շեղում էին ակտիվ գործունեությունից: Եվ ես որոշեցի այդ քարտեզները ոչ թե բաժանել, այլ վաճառել: Դպրոցի աշակերտներին բաժանեցի քարտեզները, և նրանք մի քանի օրում վաճառեցին 3-5 ռուբլով: Հավաքվեց մոտ 300 ռուբլի: Այն ժամանակ դա ուսուցչի երկու ամսվա աշխատավարձն էր: Այդ փողը հանձնեցի Սամվելին և ասացի՝ որտեղից է: Նա այլալվեց.

- Ո՞նց ես համարձակվել փախստականներին քարտեզները վաճառել:
- Երեք ռուբլին մի մեծ բան չէ, հատկապես, որ փողով առածը լավ կպահպանեն, իսկ դու դրա կարիքը շատ ունես, քո գործը պիտի շարունակվի:

Որոշ ժամանակ անց՝ 1991 թ. ԽՍՀՄ-ի կազմալուծվելուց հետո, մենք նորից անդրադարձանք այդ թեմային: Սամվելը պատմեց, որ գրախանութներից շատ էժան գնել է ԽՍՀՄ Կոմկուսի քաղբյուրոյի անդամների՝ ֆինանսական թղթի վրա տպագրված գունավոր նկարները և դրանց հետևում անգլերեն տպել Արցախի Հանրապետության քարտեզը: ԱՄՆ-ում այդ յուրահատուկ քարտեզները վաճառվում էին 3, իսկ Գորբաչովինը՝ 5 դոլարով:

– Դե՞հ, որ ժամանակին դու քարտեզներ ես վաճառել, քեզ նվիրում եմ հինգդոլարանոց Գորբաչովի:

1993 թ. ցուրտ ձմռանն էր, երբ հերթական հանդիպման ժամանակ Սամվելն առաջարկեց գնալ, եթե չեմ սխալվում, «Շիրակ» հյուրանոց՝ մի շատ հետաքրքիր անձնավորության հետ հանդիպելու: Այդ երեկո ես

ծանոթացա ճարտարապետ Արմեն Հախնազարյանի հետ: Նա պատմեց, որ հրապարակի հարևանությամբ մեծ եկեղեցի է կառուցվելու: Նախագծերի մրցույթ է հայտարարված: Ինքը հանձնաժողովի նախագահն է, և այդ օրն ընտրել են 12 նախագիծ, որոնցից ապագայում պիտի ընտրվի ամենալավը: Մեզ ցույց տվեց դրանցից մի քանիսը: Աղոտ հիշում եմ, որ խոսվեց այն մասին, թե ինքն ինչպես է Գերմանիայից Հայաստան եկել Իրանով, որտեղից էլ տեղափոխել է երկու ֆիդայիների աճյունները և վերաթաղել Գառնի գյուղում, ինչպես նաև խոսք եղավ Արևմտյան Հայաստանում նրա բուռն գործունեության մասին, թե ինչպես է մի քանի անգամ բանտարկվել (մեջքին դեռ երևում էին կտտանքների հետքերը): Երկու նվիրյալները՝ Արմենն ու Սամվելը, ոգևորված գրուցում էին, իսկ ես կլանված ունկնդրում էի: Արմենին հրաժեշտ տվեցինք ու զիջեցինք: Տունդարձի ճանապարհին Սամվելը դեռ ոգևորված խոսում էր ընկերոջ հայրենանվեր գործունեության մասին:

Հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ ես ստիպված էի տեղափոխվել Ռուսաստան՝ աղոտ հույս փայփայելով, որ մի 2-3 տարի հետո կվերադառնամ: 1993 թ. նոյեմբերին հրաժեշտ տվեցի Սամվելին: Երբ 1997 թ. դեկտեմբերին երկու օրով եկա Հայաստան, նրան նախկին հասցեով չգտա, իսկ Հուշարձանների պահպանության վարչության շենքում ջրային տնտեսության ինչ-որ կազմակերպություն էր: Սամվելի հետ կապը կտրվեց:

2007 թ. ինձ նվիրում են «Անիվ» ամսագրի 2006 թ. 5-րդ (8) համարը, որի հենց կազմի վրա Սամվելի նկարն է: Ամսագրում տպված հարցազրույցից պարզեցի աշխատավայրի հասցեն, հայաստանաբնակ բարեկամին խնդրեցի հանդիպել Սամվելին և ինձ հայտնել հեռախոսահամարը:

Եվ ահա 14 տարի անց խառը (անմեկնելի) զգացումներով հավաքում եմ հեռախոսահամարը: Շատ հուզված էինք: Իմ հարցին, թե ո՞նց է տրամադրությունը, Սամվելը պատասխանեց.

– Այսօր հորս քաղումն էր:

Այսպես մենք նորից գտանք իրար և անընդհատ կապի մեջ էինք: Ես իմացա Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող (ՀՃՈՒ) կազմակերպության (հետագայում՝ հիմնադրամ) մասին: «RAA. Գիտական ուսումնասիրություններ» խորագրով հրատարակվել են Սամվելի մի քանի հատորներ, որոնցից առաջին հատորը՝ «Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը», լույս է ընծայվել դեռևս 1997 թ., որի մեջ տեղ են գտել նաև բազմաթիվ նյութեր իմ հայրենի Ազալիշեն գյուղի մասին:

2012 թ. սեպտեմբերին Սամվելը փոքրիկ արշավախմբով (նրա հետ էին հավատարիմ գործընկերն ու կինը՝ տ. Էմման, Անուշը և վարորդը՝ Նիկոլը) եկավ Ռուսաստան: Նպատակ ունեին ուսումնասիրել Հյուսիսային Կովկասի հայկական գաղթօջախների հուշարձաններն ու գերեզմանոցները: Վերջնական և կարևոր նպատակակետը Դերբենտն էր: Նախօրը գիտեի այցելության մասին: Հենց ռուս-վրացական սահմանին նրանց դիմավորեցին ուշտալեցի երկու եղբայրները՝ Կոլյա և Էրիկ Հովհաննիսյանները, որոնք ապրում են Վլադիկավկազ քաղաքում: Ես Կրասնոդարից կապվել էի Կիզլյար, Դերբենտ քաղաքներում բնակվող տարբեր մարդկանց հետ, որ Սամվելին դիմավորեն և ուղեկցեն: Օրը մեկ-երկու անգամ զանգում էի՝ իմանալով՝ որտե՞ղ են, ամեն ինչ նորմա՞լ է, թե՞ ոչ: Երբ մի անգամ էլ զանգեցի, Սամվելը պատասխանեց, որ Դերբենտի գերեզմանոցում են, ահագին գործ են արել, ապա ոգևորված ասաց.

– Մի լավ լուր եմ ստացել. աղջիկս՝ Անին, Բելյուրից զանգեց և հայտնեց, որ շուտով պապի՛կ եմ դառնալու:

Արդեն պայմանավորվել էինք, որ երբ վերադառնան Վլադիկավկազ, հանդիպելու ենք: Մի քանի օր անց՝ վաղ առավոտյան, Սամվելը Կոլյայի հետ ինձ դիմավորեց Վլադիկավկազի կայարանում: Երկա՛ր սպասված հանդիպում: Երջանիկ էինք: Մի ամբողջ օր միասին էինք: Կոլյայի հյուրընկալ օջախում նախաճաշի նստեցինք և տարվեցինք հուշերով: Ինչ վերաբերում էր ճամփորդությանը, Սամվելը հատուկ նշեց, որ և՛ աշխատում էին, և՛ հանգստանում: Ասաց, որ երբ Արևմտյան Հայաստանում են լինում, անընդհատ լարված վիճակում են, նույնիսկ լինում են դեպքեր, երբ գաղտնի հետևում են իրենց, իսկ այս մի քանի օրը շատ հանգիստ էին զգում: Կոլյան առաջարկեց գնալ մերձակայքի գեղատեսիլ վայրերից մեկը, բայց Սամվելը կտրուկ մերժեց.

– Հայաստանի բնությունից, սար ու ձորից բացի՝ ինձ ուրիշ ոչ մի բնություն չի հետաքրքրում:

Սամվելը պատմեց, որ Ստավրոպոլի երկրամասում գտնվող Շոխիա գյուղում հանդիպել է ազալիշենցի մեր համագյուղացիներից մեկին (ես գիտեի, որ այնտեղ ուսուցիչ է աշխատում մեր գյուղի դպրոցի նախկին տնօրեն Ալեքսանդր Օհանյանը) և ասաց, որ նախկին տնօրենն իրեն հիշում էր 1984 թ. դպրոց այցելելու պահից:

Ամբողջ օրը միասին էինք: Երեկոյան կողմ Կոլյայի և Էրիկի հետ միասին Սամվելին իր խմբով ուղեկցեցի մինչև ռուս-վրացական սահմանային անցակետը: Հետդարձի ճանապարհին դիտում էի համարյա



Սամվել Կարապետյանը, Արթուր Թամրազյանը և Ռոբերտ Դաշոտյանը Նորշենի Ծիլիփ սրբավայրում (լուս.՝ 1984 թ.)

ուղղահայաց թեքությամբ լեռնալանջերը և վերհիշում ընկերոջս խոսքերը. «Հայաստանի բնությունից, սար ու ձորից բացի՝ ինձ ուրիշ ոչ մի բնություն չի հետաքրքրում»:

2016 թ. սեպտեմբերին Երևանում մեկ շաբաթ անցկացրի Սամվելի և Էմմայի հյուրընկալ օջախում: Այդ օրերին նորովի ճանաչեցի նրան: Ես տեսա մի ահռելի տարբերություն ծանր ուսապարկը շալակած, սար ու ձոր ընկած երիտասարդ տղայի և այսօր մի ազդեցիկ գրասենյակ ղեկավարող, համախոհներով շրջապատված, ազգանվեր գործի լծված այդ մարդու միջև: Տեսա, թե ինչքա՞ն է ծանրաբեռնված և ինչպե՞ս է աշխատում: Շատ դեպքերում և՛ զրուցում էինք, և՛ աշխատում էր համակարգչի առաջ: Ժամանակը չէր հերիքում:

Սամվելի հետ հանդիպելուց բացի՝ ես Երևան էի գնացել նաև մեկ այլ նպատակով: Ինչպես վերևում նշել եմ, 1988 թ. դեկտեմբերի 6-ին մեր երեք գյուղերը տեղահանվեցին: Երբ դեկտեմբերի 7-ի առավոտյան հայ-ադրբեջանական սահմանին՝ Ազատամուտ գյուղի մատույցներում՝ ճանապարհային ուստիկանությամբ անցակետի մոտ, բեռնաթափեցինք մեր գույքը և մտորում էինք հետագա անելիքների մասին, նկատեցինք, որ մի ջահել տղա տեսախցիկով նկարահանում է մեզ: Ես սկսեցի զրուցել այդ տղայի հետ: Պարզվեց, որ նա ամեն օր այստեղ հերթապահում է և նկարահանում Ադրբեջանից եկած փախստականներին: Մի քանի ժամ անց մենք զգացինք, թե ինչպես է հողը ցնցվում մեր ոտքերի տակ, իսկ հետո իմացանք Սպիտակի երկրաշարժի մասին: Օպերատոր տղային այլևս չտեսա: Մինչև այսօր էլ ինձ չեմ ներում, որ այդ տղայի ո՛չ անունն իմացա, ո՛չ հասցեն: Երբ գիտեի, որ ինչ-որ մի տեղ կան մեր գյուղերի, մեր ժողովրդի այդ օրհասական պահի վերաբերյալ ֆոտոժապավեններ, այդ միտքն ինձ հանգիստ չէր տալիս: Որոշել էի փնտրել այդ տղային: Սամվելին ասացի նպատակս: Նա համակարգչով կապվեց ծանոթ օպերատորների հետ և խնդրեց օգնել: Իսկ ես գնացի Ազատամուտ, տարբեր մարդկանց հանդիպեցի: Շատերն էին հիշում այդ երիտասարդին, բայց ոչ մեկը ո՛չ անունը գիտեր, ո՛չ հասցեն: Ոչինչ չստացվեց:

Սամվելը պատրաստվում էր հրատարակել Բուն Աղվանքի վերաբերյալ նոր, սովորաժամալ մի հատոր ևս: Ես փորձում էի իմ պասիվ օգնությունը հասցնել նրան: 2016 թ. սեպտեմբերին մեր վերջին հանդիպումն էր: Հրաժեշտի օրը Սամվելը որոշեց բաժակաճառ ասել իմ պատվին:

– Այն, որ Բուռի ձախափնյակի մի քանի շրջանների 10-12 հազար հայությունից միայն դու ես հետաքրքրվում այդ հատորի հրատարակությամբ, այդ դեռ հասկանում եմ, բայց որ եկել ես՝ մոտ 30 տարվա վաղեմության նկարահանումներ փնտրելու, դա բառիս լավ իմաստով գծություն է: Եվ ես ուրախ եմ, որ այդ գիծն իմ ընկերն է:

– Սամվել՛, ես հպարտ եմ, որ այդ գծությամբ վարակվել եմ քեզնից՝ Ամենամեծ Գժից:

Երանի՛ Սամվելի Գժությամբ շատ ու շատ, հազար-հազար հայեր վարակվեին, երանի՛ ...

ՆՐԱ ԿՐՈՆԸ, ՀԱՎԱՏՔՆ ՈՒ ՊԱՇՏԱՍՈՒՄԵՔ ԶԱՅՆ ԷՐ, ՆՐԱ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՈՒ
ԳԻՏԱԿԱՆ ԿՈՒՎՆ ԷԼ՝ ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ

Առաջին անգամ նրան տեսա դեռևս հեռավոր և ճակատագրական 88-ին:

Նոր սերնդի համար 1988-ը հնչում է ճիշտ այնպես, ինչպես մեր թվարկությունից առաջ: Մեր թվարկությունից առաջ էր, քանզի Հայու թվարկությունը սկսվեց 1991-ին, երբ քարտեզի վրա, թեկուզ շատ մանր տառատեսակով, աշխարհի տարբեր ծեզերում, շատերի համար՝ մեկ այլ մոլորակի վրա, բայց իրականում աշխարհի սրտում կրկին տպագրվեց՝ ՀԱՅԱՍՏԱՆ:

Իրականում Նա Աստվածաշնչյան այն երեք մոզերից մեկն էր, որ պիտի ավետեր ՄԵՐ՝ Հայու թվարկությունը:

Նա հեղափոխական չէր, անգամ ազատամարտիկ չէր, բայց Նա մեր ինքնությունն էր, մեր հոգին, ինքնագիտակցությունը և արդեն դարձել էր մեր ազգի խիղճը, բայց...

Իմ ծննդավայր Ախլցխայից ցատեցի Երևան ուղևորվող ավտոբուսը, որ գամ՝ ուսումնաշարունակելու, իսկ հոգու խորքում ավելի շատ Արցախյան հարցի շուրջ ավելի խտացող իրադարձություններից դուրս չմնալու համար:

Հանկարծ ավտոբուս բարձրացան երկու հոգի: Նրանից մեկը գրավեց իմ ուշադրությունը. կարծես թե այնքան էլ Հայի նման չէր...

Ես հետո պիտի հասկանայի, որ Նա ուղղակի ոչ սովորական հայ էր: Նա որևէ չափանիշի մեջ ընդհանրապես չտեղավորվող և չենթարկվող Հայու տեսակն էր: Նա Հայու ցավից ամեն օր ժայթքող իր հոգուց էր ինքն իր համար չափանիշներ արարում, Հայ լինելու, Հայուն ծառայելու չափանիշներ, որոնք ավելի ու ավելի էին դառնում մեր ժամանակաշրջանի Հայու նկարագրի չափանիշներ:

Նա, անկասկած, ախլցխացի չէր, և միանգամից հետաքրքրեց, թե ի՞նչ առաքելությամբ է իմ հայրենի քաղաքում, և ինչո՞ւ վերջին պահին նրանք հասցրին ներխուժել ավտոբուս:

Պարզվեց՝ այս տարօրինակ մարդն ընկերոջ հետ ծայտյալ հեռանում էր Ախլցխայից, քանզի այն ժամանակվա Վրաստանի իշխանությունները հետապնդում էին նրան և սպառնալիքներով պարտադրել էին հեռանալ: Այնպիսի տպավորություն է, որ խորհրդային ժամանակների Վրաստանում իշխանությունները չեն փոխվել, քանզի բոլոր ժամանակների, բոլոր իշխանությունների համար Նա անցանկալի անձ էր, ինչի մասին տարիներ անց պաշտոնապես հայտարարեց վրացական իշխանությունը՝ արգելելով նրա մուտքը Վրաստան: Նրա ստվերն անգամ սարսափելի էր ճիշտ այնպես, ինչպես գողի համար մոտեցող ցանկացած ստվեր, որն ուղղակի բացահայտելու էր շարունակական գողությունը:

Իսկ գողո՞ւնը... գողո՞ւնը Հայոց ճարտարապետությունն էր, Հայոց պատմությունն ու Հայու ինքնությունը, Հայու շինարարական, հոգևոր և արարչական հանճարը և որոշ տարածքներում նաև հող Հայրենիի մի բեկորի նկատմամբ Հայու պատմական իրավունքները: Ե՛վ ԽՈՐԱՆագողի համար, որ եկեղեցիների խորաններն էր քանդում, և՛ վիճակի արձանագրություններն իրենց բռի հոգու բրիչներով ոչնչացնողի, և՛ պատրաստի եկեղեցիներ գողացողի, «դավանափոխ» անողի համար Նա, իրոք, սարսափելի էր և անցանկալի անձ:

Սամվել Գևորգի Կարապետյան...

Խոնարհ ճակատ, բայց ընթուստ միտք ունեցող մերօրյա մեծագույն ՀԱՅԸ: Հետպատերազմյան ժամանակահատվածում Հայոց հոգևոր, գաղափարական և ոգեղեն երկնակամարը պահող հզորագույն սյուներից մեկն էր Նա՝ մեր ժամանակների հերոսը:

Հուշարձանագետ, պատմաբան, ճարտարապետության մեծագույն ուսումնասիրող ու գիտակ, ճարտարապետության հզոր տեսաբան և...

Եվ ուղղակի իր արյան յուրաքանչյուր կաթիլով ՀԱՅ, կյանքի վերջին հատվածում իրեն այդքան տկարացրած արյան յուրաքանչյուր կաթիլով, սրտի ամեն զարկով ՀԱՅ մարդ: Նեղճակատ և խավարամիտ կրոնամուլների համար անհասկանալի մի ձևակերպում ևս. Սամվելը հավատքով էլ ՀԱՅ էր, և նրա կրոնը Հայու նկատմամբ ունեցած իր հավատամքն էր: Հայու հոգևոր արժեհամակարգին խոնարհաբար ծառայող, բայց ոչ նվաստաբար, երբեմն նաև ընթուստացած ու սթափեցնող, անհավանաբար ժամին ազգի հոգևոր ուժացումի թմբիկից հանող զանգի լեզվակն էր ՆԱ՝ զանգին հանգիստ չտվող, խավարամիտ կրոնավորների թարախը երակներում սառեցնող, բայց և ազգին սթափեցնող: Ազգի արյունն ու Հայու ոգին եռացնող ու ազնվացնող, Հայոց ազնվականությունն արթնացնող մերօրյա Հայոց հոգևոր պատարագն էր ՆԱ:

Տեսակով Հայեր շատ կան, անճնագրով Հայեր՝ առավել ևս, բայց հավատքով Հայերը եզակի են, ովքեր Հայոց հոգևոր երկնակամարն են պահում: Հենց այդ եզակիներից էր Սամվելը: Ցավոք, շատ քիչ առկայծեց Հայոց երկնակամարում և շտապեց միանալ Հայոց մյուս երախտավորներին...

Մահը շտապեց, բայց աններելիորեն ուշացավ, որպեսզի ի գորու լիներ նրանից խելու անմահությունը:

Անանճական կյանքով ապրած մի մարդ, որն իր անճն ի սպաս դրեց ազգային ոգուն, գաղափարին, գիտությանը և այդ ամենը՝ ի սպաս ազգին, ազգի հոգևոր հանճարին և արժանապատվությանը: Նա իր կյանքն ու անճը դարձրեց պատվանդան՝ ազգի հրաշագործումն ու հանճարը հենց ազգին ավելի տեսանելի դարձնելու համար:

Իրենք իրենց արձան կերտողների ազգը շատ է տեսել, բայց ազգի արձանի համար ինքն իրենից պատվանդան կերտողներ՝ հազվադեպ:

Սամվելը բոլորեց ընդամենը 58 գարուն, գարնանամուտին էլ գնաց միանալու անմահների երթին: 58 գարուններից 45-ը նվիրված էին ազգի ժառանգությանը և դրա միջոցով ազգն ու ինքն իրեն բացահայտելուն: Չորսուկես տասնամյակ՝ ազգային նվիրումի, ինքնության հրաշակերտման, Հայու իրական տեսակի վերածնման և բյուրեղացման:

Սամվել Կարապետյանը գիտահետազոտական մեկ, շատերի կարծիքով՝ մի քանի ինստիտուտի գործ էր անում: Ճիշտ են, թեկուզ հինգ ինստիտուտի գործի հետ համեմատեն: Կասեի, միևնույնն է, համեմատությունը հոգուտ Սամվելի է, առավել ևս, որ շատերի գործունեությունը դատարկ կրակոցների է մնան, որոնք միայն ձայն են արձակում...

Սակայն եթե կշեռքի տարբեր նժարներին դնեինք նրա մասնագիտական ողջ առաքելությունն ու այդ անսահման ծավալի աշխատանքը, իսկ մյուս նժարին՝ նրա քաղաքացու տեսակը, ազնվականի նկարագիրն ու ազգի սրտացավ, սկզբունքային և անսակարկ նվիրումով զավակի կերպարը, ապա վստահաբար ավելի ծանրակշիռ կլիներ նրա քաղաքացու տեսակը, նրա Ազնվագույն ու Ազնվական Հայու տեսակը: Նրա կորստից առաջացած մասնագիտական դատարկությունը տարիների, տասնամյակների մեջ հավանաբար կլցվի, նրա սաները կփակեն այդ բացը: Սակայն նրա տեսակի կորստից առաջացած դատարկությունը դեռ երկա՛ր է պահպանվելու ազգային հանրության մեջ:

Նա հուշարձանագիտության Կոմիտասն էր, բայց և Հայոց ինքնության, ինքնագիտակցության և ինքնաճանաչման Նարեկացին, ազգային տկարությունների, թերացումների դեմ պայքարի ոգու մերօրյա Նժդեհը...

Սամվելը լրջագույնս գիտակցում էր նաև Բաֆֆու մարգարեությունը. Հայրենիքը սիրելու համար այն ճանաչել է պետք, և դրա համար երկրորդում էր, որ անհնար է ասֆալտի վրա հայրենասեր դառնալ: Անընդհատ փորձում էր ոչ միայն գիտական, այլ նաև երիտասարդության համար հայրենաճանաչ արշավներ կազմակերպել, որոնց բուն նպատակը նոր սերնդի հայրենաճանաչությունն էր, հայրենաճանաչության միջոցով իմաստավորված հայրենասիրությունն ու ինքնաճանաչումը, որոնք էլ պիտի ծնեին արժանապատիվ հայրենատիրություն:

Հիշում եմ, Քարվաճառի ազատագրումից հետո օդում պտտվող ահասարսուռ լուրերից, որ ազատագրված տարածքները վերստին հանձնվելու են թշնամուն, Սամվելն օր առաջ փութաց Քարվաճառ: Երբ դեռ հնչում էին կրակոցները, նա գյուղ առ գյուղ, տաճար առ տաճար, հուշարձան առ հուշարձան չափագրում էր, նկարում, վերծանում վիճագրերը և փորձում էր փրկել յուրաքանչյուր մասունք: Նա վերակնքում էր Քարվաճառի Հայկական լինելու անձնագիրը: Հերոսություն էր նրա առաքելությունը ոչ պակաս, քան մարտի դաշտում հերոսացողներինը:

Հայկական լեռնաշխարհում թերևս չմնաց փոքրիկ մի հողակտոր, որտեղ չքայլեց Սամվելը, ուր մինչ օրս պահպանվել են նրա ոտնահետքերը, չմնաց մի հուշարձան, հուշակոթող, որն իր վրա չի պահպանել նրա մատնահետքերը և բացահայտող ու զննող, ուսումնասիրող, բայց և հարազատ ու կարոտած հայացքը:

Ամենայն Հայոց գորավար Անդրանիկն աչքերը հավերժորեն փակելուց առաջ սառչող շուրթերով շնջաց.

– Մահս չե՛մ հոգար, այլ Գործս, որ կե՛ս մնաց...

Թերևս նույն ակնթարթը զգալով՝ Սամվելն ասել էր, որ իրեն կյանք է պետք՝ բազմաթիվ գործեր ավարտին հասցնելու համար...

Ցավո՛ք...

Ցավո՛ք, Սամվելի գործերն էլ կես մնացին ճիշտ այնպես, ինչպես անավարտ տաճարն օձման ենթակա չէ...

Սամվելի կերտվող տաճարը պիտի օձվի, օձվի և իր ազգային աղոթքով դարձի բերի իրենց ինքնությունից երես թեքած հայերին:

Ինչպիսի՛ ակնածանքով էր պատրաստվում նշելու ՀՃՈՒ հիմնադրամի Երևանյան գրասենյակի բացման 20-ամյակը: Ցավո՛ք...

Ես հիշում եմ գրասենյակի բացումը հեռավոր 2000 թվականին միայն մտերիմ մարդկանցով, միայն հարազատներով և իր ավագ ընկերոջ՝ լուսահոգի Արմեն Հախնազարյանի գործը գնահատող մարդկանցով...

Երբ կարծես թե պաշտոնական մասն ավարտվեց, և վերջապես նրա կերպարը, տեսակն ու առաքելությունը գնահատող մարդիկ կամենում էին կենաց բարձրացնել, ակնածանքն ու հիացմունքն արտահայտել, նա ներողամտություն հայցող հայացքով ասաց.

– Եթե այլ բան չկա, ապա պիտի խնդրեմ, որ թողնեք՝ այսօրվա կիսատ թողած գործերս հասցնեմ ավարտել...

Սամվելը ոչ միայն համեստագույն մարդ էր, այլև գովասանքից, իր անձի փառաբանումից խուսափող, գաղափարի ու գործի մարդ, և եթե ժամանակ առ ժամանակ նաև խո-

սում էր, ապա ոչ թե նրա համար, որ խոսքի մարդ էր, այլ որովհետև նրա խոսքը հաճախ ոգեշնչող էր, հաճախ դաստիարակող, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև սաստող ու ձաղկող...

Դարի մեծագույն հայերից մեկը, որը մի քանի ինստիտուտի գործ էր անում, այդքա՛ն լուրջ և այդքա՛ն խոհուն, օժտված էր նաև սրամիտ ու իմաստուն հումորով: Տարիներ առաջ հրատարակեց «Թիֆլիսի քաղաքագլուխները» աշխատությունը, որն իրականում բացահայտում էր վրացական մայրաքաղաքի պատմական ազգային ճշգրիտ պատկերը, քանզի պատմության մեջ՝ առաջին հիշատակումներից մինչև բոլշևիկյան հեղափոխություն (1917 թ.) և մեկ տարի անց դրան հաջորդող Վրաստանի անկախություն, Թիֆլիսի (Տփլիս) 48 քաղաքագլուխներից 46-ն ազգությամբ Հայ են եղել, և նրանցից ոչ մեկի գերեզմանն ինչ-ինչ «հրաշքով» չի պահպանվել, իսկ միակ վրացական ազգանունով Ղիփիանիի գերեզմանն այսօր էլ փառավոր տեսք ունի Թիֆլիսի վրացական պանթեոնում՝ ի տարբերություն Խոջիվանքի և կից հայկական պանթեոնի, որոնք վերածվեցին Թիֆլիսի վրացական կենտրոնական եկեղեցու, իսկ Հայոց մեծերի պանթեոնից ընդամենը երեք շիրմաքար փրկվեց: Գրքի լույս տեսնելուց հետո Հայաստանում Վրաստանի դեսպանն անմիջապես զանգել էր բատոնո (վրացերեն՝ պարոն) Սամվելին և խայթող ձայնի երանգով հայտնել «ԲԱՐԻ լուրը», որ ինքը սիրով ձեռք է բերել այդ գրքի ողջ տպաքանակը: Ավելին պատկերացնել, քան Սամվելի պատասխան շնորհակալական խայթոցն էր, անհնար է. «Պարո՛ն դեսպան, գիրքը վաճառվում էր ինքնարժեքի կրկնակի գնով, այնպես որ անչափ շնորհակալ եմ Ձեզ: Ձեր գնումների շնորհիվ մենք գիրքը կվերահրատարակենք կրկնակի տպաքանակով» հասկացնելով դեսպանին, որ պետք է սեփական պատմությունը կերտել և ոչ թե կեղծել իրական պատմությունը:

Մենք թերացանք, մենք իրավունք չունեինք կորցնելու Սամվելին: Նա այսքան շուտ չպետք է հեռանար: Նա իրականում պատժեց մեզ իր հեռացումով, քանզի մեզնից շատերս արժանի չէինք նրա նման ՀԱՅ կոչվելու, պատժեց, որ սթափվեցք և արժանի լինեցք ՀԱՅ կոչմանը:

Նա պատժեց մեզ, իսկ մենք մեր անգործությամբ, որի հետևանքն էլ նաև նրա մահն էր, ուրախացրինք թուրքերին, ադրբեջանցիներին և, իհարկե, վրացի վայ-պատմաբաններին, պատմությունագող և ԽՈՐԱՆաքանդ գեղծարարներին....

Ամենազարմանալիս այն է, որ իր արած գործի, իր առաքելության ողջ նյութը Սամվելը գիտեր այնպես, ինչպես մեզնից շատերը միայն սեփական անուն-ազգանունն են իմանում...

Նա մեր Հայրենիքի, մեր ինքնության և հուշարձանագիտության, ճարտարապետության և Հայոց պատմության մասին գիտեր այնքան, որ թերևս չէր տեղավորվի հզոր օպերատիվ հիշողություն ունեցող մի քանի համակարգչի մեջ (եթե հիշողության մրցույթ լիներ, հավանաբար հզորագույն համակարգիչները կպարտվեին):

Քայլող հանրագիտարա՞ն... Շատ մե՛ղմ է ասված Սամվելին նկարագրելու համար կամ, կարելի է ասել, գրեթե ոչինչ չի ասված:

Հիշում եմ՝ Խորեն Պալյանի հուղարկավորության ժամանակ ինչ-որ մեկը բարձրաձայնեց, թե մոտ 2000 շարական նա անգիր գիտեր և դեռ չէր ձայնագրվել: Այդ բոլորը Պալյանի հետ մենք թաղեցինք:

Սամվելի հետ ինչե՛ր թաղեցինք...

Գագիկ Գինոսյան

Վերջաբանի փոխարեն

Մամվել Կարապետյանն այն բացառիկ անհատականություններից է, որոնք ողջ գիտակցական կյանքը նվիրել են հայ ժողովրդի պատմամշակութային արժեքների ուսումնասիրման և պահպանման գործին: Իմ խորին համոզմամբ՝ այդ անխոնջ և խիզախ հետազոտողի կյանքը կատարյալ սխրանք է, որը դեռ պիտի ուսումնասիրվի և ըստ արժանվույն գնահատվի:

Ալեքսան Կիրակոսյան, 1998 թ.

Յուրաքանչյուր ժողովրդի ապրելատարածք ազգային դիմագիծ է ստանում, Հայրենիք է դառնում ազգային մշակույթով: Առանց ազգային մշակույթի ո՛չ ազգ կարող է գոյություն ունենալ, ո՛չ էլ Հայրենիք:

Հետևաբար անվիճելի է այն հիմնադրույթը, որ ժողովուրդների ճակատագիրը որոշվում է ոչ միայն ռազմի դաշտում, այլև մշակութային հուշարձանները ոչնչացնելու կամ յուրացնելու, մշակույթի պատմությունը կեղծելու բոլոր տեսակի փորձերի դեմ մղվող պայքարում: Նման պայմաններում հայ զինվորը և հայ գիտնականը նույն դերն են կատարում, առաջինը՝ զենքով, երկրորդը՝ գրչով: Ո՛չ առաջին դեպքում և ո՛չ էլ երկրորդ՝ զիջումներ չեն կարող լինել: Երկու դեպքում էլ նահանջը կամ լուծությունն ազգային դավաճանություն է, կռիվը՝ հերոսություն:

Հանձին Մամվել Կարապետյանի՝ մենք գործ ունենք Գիտնական-Հերոսի հետ, որն իր կյանքը նվիրել է հայ մշակույթի հուշարձանները հարևան ժողովուրդների կողմից ոչնչացնելու կամ յուրացնելու քաղաքականության դեմ մղվող պայքարին:

Լենդրուշ Խուրշուդյան, 1998 թ.

Նա Հայոց անդուլ աշխատավոր էր մանկուց:

Նա իր հայրենիքի ու ազգի անսասան հավատավորն էր:

Նա մի քանի սերունդների ուսուցիչ էր:

Նա եզակի հայագետ էր:

Նա ազգային մեծագույն գաղափարախոս էր:

Նա անհաղթ հերոս էր՝ խիզախ հետախույզ գավթիչ թշնամու թիկունքում:

Նա իր Հայրենիքի մտավորական քաջագույն մարտիկն էր:

Ուզած ազգ կերագեր երբևէ այդպիսի գավակ ունենալ:

Բազմահազարամյա հայ ազգ, դու ունեցար քո հրաշքին, անմնացորդ նվիրյալին, իր տեսակով ՄԻԱԿ ԵՐԱԽՏԱՎՈՐԻԳ, ամենաարժանավոր զարմերիցդ մեկին:

Լաուրա Մանուկյան, 2020 թ.

Օրինյալ է ծնունդդ, Մամվել Կարապետյան, քո ամեն մի քայլը Հայոց ճանապարհներին, որտեղ էլ ոտք դնեիր, որ անկյունն էլ քննելիս ու չափազրելիս լինեիր, մեր անթաղ Պատմությունն էիր ջանում ժառանգել գալոց՝ այն սերունդներին, որոնց համար հայրենյաց տարածքները համարում էիր նվաճելի: Նվաճել էիր այդ տարածքները տասնամյակներ շարունակ քրտնաջան, անկորնչելի ոգով, մեն-մենակ, հանդրգնորեն և ինքնագիտակից: Քո նախնյաց, Բաղդասար պապի և Գևորգ հոր՝ Վան-Վասպուրականի տոհմականչին էիր միշտ ունկնդիր ոգեսնող արշավների լուսաբացներին ու մայրամուտներին, Վանա ծովի համբերությամբ լեցուն, միշտ ականջալուր Ազալաքարի խորքերից լսվող Փոքր Սիերի ձայնին: Դու լսում էիր նրա ձայնը, դու եզակի սպասյալն էիր Սիերի դռան, քեզ համար գարին մասուր էր դարձել, մասուրի հոտավետությունը զգում ու շնչում էիր, այդ աստվածային բուրմունքը մեզ հորդորող հայացքով էիր ուղղորդում՝ քեզ բնորոշ համեսությամբ ու անվեհեր վստահությամբ շնջալով. «Վաղը ուշ, շա՛տ ուշ կլինի, եթե հիմա... չենք ուշացել»: Մի՛շտ շտապում էիր, իմ թա՛նկ եղբայր, շտապում էիր նույնիսկ մահվանդ ընդառաջ գնալու, աներկյուղ գիտեիր «գործը մնայ յիշատակող» պատգամի անխոցելիության ճշմարտությունը: Հիմա Դու մշտաբար ներկա ես լինելու քո հետմահու բոլոր արշավներին՝ հուշարձաններ ու բնակավայրեր հայտնաբերելու համար Մշո դաշտում, Կուռտիկ լեռն ի վար, Արածանիի ավերիկն, Կարսա բերդի անկյունադարձերին, Մարիդամիչի, Բինգյուլի անտառներում, Պարսկահայքի ոլորաններին, Արցախ աշխարհի եկեղեցադուռն արահետներին: Քո օրինյալ ոտնահետքերն անցնջելի են որպես լայնահուն բացված հուսո ճանապարհներ: Դու այնքա՛ն կատարելապես ես նույնացել ամենուր հանդիպող ժայռախոտջ ու լեռնավայրերում բխող աղբրակներին, որ ամեն տեղ թողել ես մի-մի Մամվելի Աղբյուր. սա քո թողած ժառանգությունն է. սերունդներն անհագուրդորեն պետք է խմեն ու չհագենան...

Արթուր Անդրանիկյան, 2020 թ.



Photo: iStockphoto.com

1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29
30
31
32
33
34
35
36
37
38
39
40
41
42
43
44
45
46
47
48
49
50
51
52
53
54
55
56
57
58
59
60
61
62
63
64
65
66
67
68
69
70
71
72
73
74
75
76
77
78
79
80
81
82
83
84
85
86
87
88
89
90
91
92
93
94
95
96
97
98
99
100

ՉՉ Ուխտագահ Արձեւն Սարգսյան

Խոր ցավով տեղեկացա անվանի պատմաբան, հուշարձանագետ Սամվել Կարապետյանի անժամանակ մահվան մասին:

Աշխարհով մեկ սփռված մեր կանգուն, կիսավեր և խոնարհված պատմամշակութային ժառանգությունը Սամվել Կարապետյանի ջանքերով հայի և հայության ներկայության մասին բազմալեզու խոսուն վկայագիր է դարձել: Նրա արժեքավոր ուսումնասիրությունները Հայոց աշխարհի հիշատակարաններ են, դասագիրք- այսօրվա և վաղվա համար:

ՉՉ վարչապետ Նիկոլ Փաշինյան

Խոր ցավով տեղեկացա հայ անվանի հուշարձանագետ, պատմաբան, բանահավաք, Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի Երևանյան գրասենյակի նախագահ Սամվել Կարապետյանի անժամանակ մահվան մասին:

Սամվել Կարապետյանն իր գործունեության ընթացքում հետազոտել է Պատմական Հայաստանի հայ ճարտարապետության հազարավոր նմուշներ: Նրա թողած փաստազրական նյութերը հարուստ ժառանգություն են մեր երկրի համար: Բարձր զնահատանքի է արժանի անվանի հուշարձանագետի հետևողական աշխատանքը Թուրքիայում և Ադրբեջանում հայկական հուշարձանների ոչնչացման քաղաքականության դեմ: Խորին ցավակցություն են հայտնում Սամվել Կարապետյանի հարազատներին և գործընկերներին ու կիսում նրանց վիշտը:

ՉՉ ԿԳՄՍ նախարար Արայիկ Հարությունյան

Իմ խորը վշտակցությունն են հայտնում հուշարձանագետ, պատմաբան, բանահավաք, Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի Երևանյան գրասենյակի նախագահ Սամվել Կարապետյանի մահվան կապակցությամբ:

Անզնահատելի են Սամվել Կարապետյանի ներդրումն ու տարիների նվիրյալ աշխատանքը մեր պատմական արժեքների ուսումնասիրման և պահպանման գործում: Նրա գործունեության աշխարհագրական տարածքն ընդգրկում է ոչ միայն հայաստանյան, այլև արտերկրում գտնվող հուշարձանների ուսումնասիրումն ու փաստազրույցը: Լիաժույս են հուշարձանների ոլորտի գիտակ մարդու՝ Սամվել Կարապետյանի թողած դպրոցը կշարունակի նրա գործը:

ՉՉ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյան

Խորապես վշտացած են Սամվել Կարապետյանի ականավոր պատմաբանի և միջնադարյան ճարտարապետության ու հայկական պատմական հուշարձանների հետազոտողի կորստով: Նրա Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամը նշանակալի ներդրում ունի մեր ազգային ժառանգության ընկալման և արժևորման գործում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԱԿԱՆ
ՖԱՐՄԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՏՐԱՎՈՒԹՅԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒ
ՉԱՆՈՒՄ
ԿՈՒՐՄԱԿԱՆ
ՔՈՆՍԵՐՎԱԿՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՍՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԾԱՆԳ-
ԿՈՄԻՏԵՆ
ԳՐԱԿԱՆ
ՎԱՅՈՒՄԿՐԵՅՈՒՄ



ԻՐԱԱ
ԳՐԱԿԱՆ
ՎԱՅՈՒՄԿՐԵՅՈՒՄ
ՈՒՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԱ
RESEARCH ON
ARMENIAN
ARCHITECTURE

ԵՐԵՎԱՆ - YEREVAN
2020

ISSN 1829-2003

2 0 0 1 3



0 4771829200001